

Եվրոպական միության «Արդարադատության
մոնիթորինգ» ծրագիր Հայաստան

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՈԼՈՐՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՆՐՈՒԹՅԱՆ
ԿԱՐԻՔՆԵՐԸ ԵՎ
ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

*Մոնիթորինգի արդյունքների
վերաբերյալ զեկույց*

Ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից



Ծրագիրն իրականացվում է PAi-ի կողմից
«Եվրոպական սահմանադրական իրավունքի

© «Արդարադատության մոնիթորինգ» ծրագիր,

EuropeAid/1137012/DH/SER/AM, 2017

Իրականացվել է PAI-ի կողմից CECIL-ի և «Ի ԷԼ ԷԼ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ» հետ համատեղ

Այս Ձեկույցում ներկայացված հետազոտությունն իրականացվել է 2016թ. մայիսից մինչ 2016թ. դեկտեմբերը:

Ձեկույցի լրամշակումները հետագայում հասանելի կլինեն Արդարադատության մոնիթորինգի կայքում. justicemonitoring.am:

Վերահրապարակման դեպքում անհրաժեշտ է հղում կատարել աղբյուրին՝ բացառելով առևտրային նպատակներով օգտագործումը:

Եվրոպական միության մասին լրացուցիչ տեղեկություններ հասանելի են համացանցում (<http://europa.eu>).

28 Փետրվար 2017

*Հաշվետվությունը պատրաստվել է ծրագրային փորձագետների կողմից՝
Ծրագրի փորձագիտական խմբի ղեկավար՝ Էրիկ Սվանիձե,
Ծրագրի հիմնական փորձագետ՝ Հայկուհի Հարությունյան,
Ծրագրի փորձագետ՝ Տաթևիկ Մատինյան:*

Տպագրված է հայերենով և անգլերենով:

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Արդարադատության մոնիթորինգ» ծրագիրը, և այն որևէ ձևով չի արտահայտում Եվրոպական միության տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ, ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	7
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	9
ՆԱԽԱԲԱՆ	11
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	13

ԳԼՈՒԽ I

ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐՆ ՈՒ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԸ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ

Մասնագիտական կարծիքի ուսումնասիրություն

1. ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ.....	21
2. ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	26
2.1. Անկախություն	26
2.1.1. Դատավորների նշանակման կարգը որպես նրանց անկախության երաշխիք, դատավորների անկախության և նշանակման փոխկապակցվածությունը.....	26
2.1.2. Դատավորների նշանակման հանրության կողմից նախընտրելի կարգը որպես դատավորի գործունեության լիակատար անկախության երաշխիք	32
2.1.3. Հայաստանում դատավորների գործունեության անկախության հիմնական խոչընդոտները	37
2.1.4. Դատավորների անկախության մեծացման ուղիները	44
2.2. Հաշվետվողականություն	51
2.2.1. Հաշվետվողականության անհրաժեշտությունը և հաշվետվությունն ընդունող/նախընտրելի կառույցը/անձը	51
2.2.2. Հաշվետու լինելու համար ենթադրվող հարցերի շրջանակը.....	57
3. ԴԱՏԱԻՐԱԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ.....	64
3.1. Որ մարմիններն/ ինստիտուտներն են ունենում առավելագույն ազդեցություն	64
3.2. Որ մարմինները/ինստիտուտները պետք է իրականացնեն վերահսկողությունը	69
4. ԻՐԱԿԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԱՐ ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ.....	72
4.1. Դատարանի կողմից կողմերի նկատմամբ հավասար վերաբերմունքի դրսևորումը	72
5. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՏԵՍԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ	77
5.1. Օրենքի միատեսակ կիրառումը նմանատիպ իրավիճակներում.....	77
5.2. Դատարանի որոշումների կանխատեսելիությունը	81
6. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ.....	87

6.1. Դատարան դիմելու տրամադրվածությունը և վերջին մեկ տարվա փորձը	87
7. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ	94
7.1. Որքանով են դատարանի որոշումներն արդար, հասկանալի քաղաքացիների համար և որքանով են լուծում խնդիրը	94
7.2. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշումների բողոքարկումները .	99
7.3. Դատական համակարգի հետ առնչության փորձի գնահատականը	102
8. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՎԱՏԸ ԵՎ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ	111
8.1. Որքանով է հանրությունը վստահում դատարանին	111
8.2. ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ ՎԵՐՋԻՆ 5 ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ	116
9. ԾՐԱԳՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	125
Դատարանների վերաբերյալ	125
1. Անկախություն	125
2. Իրավահավասարություն, մրցակցություն և արդար դատական քննության այլ հատկանիշները	132
3. Արդարադատության կանխատեսելիություն	133
4. Արդարադատության ծառայությունների մատչելիությունը	134
5. Արդարադատության ծառայությունների արդյունավետություն	136
6. Արդարադատություն իրականացնող ինստիտուտների նկատմամբ հավատ եվ վստահություն .	139

ԳԼՈՒԽ II

ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐՆ ՈՒ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԸ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՑ

Մասնագիտական կարծիքի ուսումնասիրություն

1. ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ	144
1.1. Քննիչների անկախության երաշխիքները և դրանց բարելավումը: Նշանակման կարգը և դրա ազդեցությունն անկախության վրա	144
1.2. Դատաիրավական համակարգի խնդիրները: Հայաստանում քննիչների գործունեության անկախության հիմնական խոչընդոտները	149
2. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	153
2.1. Հաշվետվողականության անհրաժեշտություն և հաշվետվությունն ընդունող նախընտրելի կառույցը/անձը	153
3. ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ	157
4. ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԵՏ ԱՌՆՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ	162

5. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՎԱՏԸ ԵՎ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ.....	165
6. ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ, ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴԱՐ ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԱՌՈՒՄՆԵՐԸ ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ	169
7. ԾՐԱԳՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	172

ԳԼՈՒԽ III

ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐՆ ՈՒ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԸ

ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅՈՒՆՆԻՑ

Մասնագիտական կարծիքի ուսումնասիրություն

1. ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ.....	177
1.1. Դատախազների նշանակման կարգը որպես նրանց անկախության երաշխիք. Դատախազների անկախության և նշանակման կարգի փոխկապվածությունը	177
1.2. Դատախազների նշանակման հանրության կողմից նախընտրելի կարգը որպես դատախազի գործունեության լիակատար անկախության երաշխիք	179
2. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	180
2.1. Հաշվետվողականության անհրաժեշտությունը եվ հաշվետվությունն ընդունող նախընտրելի կառույցը/անձը	180
3. ԴԱՏԱԽԱՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ: ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅՈՒՆ ԴԻՄԵԼՈՒ ՏՐԱՄԱԴՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐՋԻՆ ՄԵԿ ՏԱՐՎԱ ՓՈՐՁԸ	182
4. ԾՐԱԳՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	183

ԳԼՈՒԽ IV:

ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐՆ ՈՒ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻՑ

Հանրային կարծիքի ուսումնասիրություն

1. ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԵՏ ԱՌՆՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԸ	187
2. ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ՏՐԱՄԱԴՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐՋԻՆ ՄԵԿ ՏԱՐՎԱ ՓՈՐՁԸ	197
3. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ.....	205
4. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ.....	219
5. ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ.....	228

6. ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ, ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴԱՐ ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԱՌՈՒՄՆԵՐԸ ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ..... 233

7. ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՄԱԿԱՐԴԱԿԸ 240

8. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՎԱՏԸ ԵՎ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ..... 255

9. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ..... 268

10. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՏԵՍԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ..... 280

11. ԱՄՓՈՓՈՒՄ..... 291

12. ՀԱՎԵԼՎԱԾ..... 293

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ, ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

	«Արդարադատության մոնիթորինգ» ծրագրի շրջանակներում արդարադատության ոլորտում մարդկանց կարիքների ու փորձի վերաբերյալ հավաքագրված և վերլուծված քանակական և որակական տվյալներ
Հետազոտություն	Որոշակի վիճակի կամ պայմանի ապահովման վիճակի վերահսկողության, որակի գնահատման նպատակով դիտարկում
մոնիթորինգ, մշտադիտարկում	Հասարակական կարծիքի պատասխանների մաթեմատիկական համադրում
քանակական տվյալ	Մասնագիտական կարծիքի ուսումնասիրության արդյունքներ
որակական տվյալ	Սոցիոլոգիական հարցումների միջոցով քաղաքացիներից հավաքագրված տեղեկություն
հանրային կարծիքի ուսումնասիրություն	Ոլորտի մասնագետների հետ իրականացված ինքնազնահատում և ֆոկուս խմբային քննարկումներ
խորքային հարցազրույց	Մասնագետների փոքր խմբի հետ (5-9 մարդ) առանձնացված հարցերի շուրջ մասնագիտական քննարկում՝ վերջիններիս կարծիքների ու դիտարկումների հավաքագրման նպատակով
ֆոկուս-խմբային քննարկում	Մասնագետի կողմից (սույն ուղեցույցի շրջանակներում՝ դատավորների) իրենց մասնագիտական գործունեության վերաբերյալ մանրամասն հարցազրույցի իրականացում, որի նպատակն է հավաքագրել վերջինիս գործունեության ոլորտի վերաբերյալ գնահատականը
ինքնազնահատում	Հարց որը չի նախատեսում պատասխանների տարբերակներ և հարցվողն ուղղակիորեն շարադրում է իր մտքերը
բաց հարց	Հարց որն ունի պատասխանի տարբերակներ և հարցվողն ընտրում է որպես պատասխան իրեն առաջարկված տարբերակներից առավել նախընտրելին
փակ հարց	Անձ, ով պատասխանում է հարցազրուցավարի հարցերին
ոեսպոնդենտ, հարցվող	Անձ, ով հարցաշարով մշակված հարցերն ուղղում է հարցվողին և նրանից ստացված պատասխանները գրանցում հարցաթերթում
հարցազրուցավար	Համակարգչային հատուկ ծրագիր, որի մեջ մուտքագրելով սոցիոլոգիական տվյալները, իրականացվում է վերջինիս մշակում
SPSS համակարգ	

դատաիրավական համակարգ	Տվյալ հետազոտության շրջանակում ՀՀ դատարանները, դատախազությունն ու քննչական կոմիտեն
շահառու	Անձ, ով առնչություն ունի տվյալ հաստատության հետ
դատաիրավական համակարգի հետ առնչություն ունեցող	Անձ, ով երբևէ գործ է ունեցել (դիմել և որևէ այլ կարգավիճակում մասնակցել դատական նիստի) դատարանում, դիմել է դատախազություն կամ քննչական կոմիտե կամ կանչվել էն տվյալ հաստատություններ
դաշտային աշխատանք	Բուն հարցումների իրականացման փուլ
գործիքակազմ	Այն փաստաթղթերի ամբողջականությունը, որոնց միջոցով իրականացվում է հետազոտությունը, մասնավորապես հարցաշարեր, մեթոդաբանություն, ուղեցույցեր և այլն
միաչափ աղյուսակ	Հարցումների արդյունքների ամփոփման այնպիսի աղյուսակ, որը պատկերում են միայն մեկ հարցի քանական պատասխան
երկչափ տվյալ	Հարցումների արդյունքների ամփոփման այնպիսի աղյուսակ, որը համադրում է մի քանի հարցերի պատասխաններ
անանուն հարցում	Հարցում, որի ժամանակ հարցվողի անձը չի հրապարակվում
ընտրանք	Հարցման համար առանձնացված թիրախային խումբ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդարադատության ոլորտի պատշաճ գործունեությունը պետության կենսագործունեության լավագույն ցուցիչն է: Այն մի կողմից բնորոշում է երկրում առկա մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի մակարդակը, մյուս կողմից՝ մարդու իրավունքների խախտումները կանխելու պետության կարողությունը: Այս տեսանկյունից արդարադատությունը որպես գործունեություն առանձնահատուկ կարևորություն ունի հանրային կարիքների և ակնկալիքների համար :

2016 թվականի փետրվարից 2017 թվականի նոյեմբեր ամիսների ընթացքում «Ի ԷԼ ԷԼ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» իրավաբանական գրասենյակը Public Administration International (London)-ի և «Եվրոպական սահմանադրական իրավունքի կենտրոնի» հետ համատեղ ԵՄ ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Արդարադատության մոնիթորինգ» ծրագրի շրջանակներում արդարադատության ոլորտում մարդկանց կարիքների ու փորձի վերաբերյալ ամբողջական և ծավալուն քանակական և որակական տվյալների հավաքագրում է իրականացրել:

Քանակական տվյալները հավաքագրվել են հանրության շրջանում իրականացված հարցման միջոցով, իսկ որակական տվյալները՝ խորքային հարցազրույցների միջոցով, որոնք իրականացվել են ինքնագնահատման և ֆոկուս խմբային քննարկումների միջոցով:

Հավաքագրված տվյալները հիմք են հանդիսացել դատաիրավական համակարգում առկա խնդիրների և առավել կարևոր հարցերի վերհանման և բացահայտման համար, և ներկայացնում են արդարադատության ինստիտուտներից հանրության կարիքներն ու ակնկալիքները: Նման մեթոդաբանությամբ հետազոտություն Հայաստանում իրականացվում էր առաջին անգամ՝ ներառելով թե քանական, թե որակական տվյալների համադրություն:

Հավաքագրված արդյունքները ներկայացվել են առանձին գլուխներով տեսքով՝ սույն մեկ հաշվետվության մեջ՝ ամփոփելով քանակական և որակական տվյալները:

Քանակական հաշվետվության առանձնահատկություններից մեկը կայանում է նրանում, որ տվյալներ հավաքագրվել են ոչ միայն դատաիրավական մարմինների հետ առնչություն ունեցողներից, այլ նաև այն մարդկանցից, ովքեր երբևէ առնչություն չեն էլ ունեցել այդ համակարգի հետ, սակայն համակարգի առնչությամբ ձևավորել են պատկերացումներ:

Որակական հաշվետվության արժեքավորությունը կազմում է նաև այն հանգամանքը, որ վերջինս չի ներկայացնում որևէ փորձագետի սուբյեկտիվ կարծիք, այլ հիմնված է

դատաիրավական համակարգի տարբեր բևեռներ ներկայացնող կառույցների մասնագետների մեկնաբանությունների վրա, ովքեր հանդես են գալիս տարբեր դիրքերից և հաճախ ունեն հակադրվող տեսակետներ:

Ընդհանուր առմամբ սույն հաշվետվությունն արդյունավետ գործիք է հանդիսանում Հայաստանում փաստերի վրա հիմնված քաղաքականության մշակման համար և ոլորտի հետագա բարեփոխումների իրականացման ուղղությունները հետազոտության արդյունքներով հաստատված լինելու համար:

ՆԱԽԱԲԱՆ

Սույն վերլուծական հաշվետվությունը ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունում 2016 մայիս-դեկտեմբեր ամիսներին իրականացված արդարադատության որակի և ոլորտի ծառայությունների մատուցման ընթացակարգերի լայնամասշտաբ հետազոտության և գնահատման ընդհանրական արդյունքները, որպես արդարադատության մոնիթորինգի արդյունքներ:

Այն նպատակ ունի ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում արդարադատության ինստիտուտների գործունեությունից հանրության ակնկալիքներն ու կարիքները, շեշտադրել արդարադատության համակարգի բարեփոխումների ամենաարդիական ու առաջնային հիմնախնդիրները, թե՛ մասնագիտական, թե՛ համակարգի շահառու հանդիսացող և այդ ծառայություններից ուղղակիորեն օգտվող քաղաքացիների մատնանշմամբ:

Հաշվետվությունը կառուցված է արդարադատության որակի և արդարադատության ինստիտուտների, մասնավորապես՝ դատարանների գործունեության հանրային ընկալման և միաժամանակ մասնագիտական գնահատականների համադրման արդյունքների վրա: Կարևորվել է նաև, թե՛ ինչպես են արդարադատության որակական հատկանիշները ընկալվում արդարադատությունն իրականացնողների /ծառայություն մատուցողների/ կողմից, թե՛ ինչպես են վերջիններս դրսևորում իրենց օրենքը կիրառելիս և մասնագիտական պարտականություններն իրականացնելիս:

Արդարադատության հանրային ընկալումն ուրվագծել է, թե՛ ինչպես է արդարադատությունը և արդարադատության ոլորտում ծառայության մատուցումն ընկալվում քաղաքացիների կողմից՝ լայն առումով, և օգտվողների կողմից՝ նեղ առումով: Սա հնարավորություն է տվել պարզելու հասարակության ընդհանուր վերաբերմունքը, վստահությունն արդարադատության համակարգի նկատմամբ: Միաժամանակ, դատական համակարգի նկատմամբ հանրային վստահությունը և արդարադատության որակի բարելավումն ապահովելու համար հաշվի են առնվել նաև արդարադատության ոլորտում ծառայություն մատուցողների և արտաքին այլ դերակատարների՝ ոլորտի տեսաբանների և պրակտիկ մասնագետների տեսակետները:

Արդարադատության մոնիթորինգը ներառել է հետևյալ հիմնական ոլորտները.

- անկախություն և հաշվետվողականություն,
- հավասարություն, մրցակցություն և արդար դատաքննության այլ սկզբունքներ,

- արդարադատության կանխատեսելիություն,
- արդարադատության ծառայությունների մատչելիություն,
- արդարադատության ծառայությունների արդյունավետություն,
- հավատ և վստահություն:

Նշված ոլորտները հնարավորություն են տվել անդրադառնալ արդարադատության առավել անհատական և ոչ ինստիտուցիոնալ որակական հատկանիշների վրա՝ մասնավորապես արդար դատաքննության իրավունքի չափանիշներին: Արդարադատության ինստիտուցիոնալ հատկանիշները, ինչպիսիք են կառավարումը և ղեկավարումը, արդարադատության ոլորտի ռազմավարությունները և քաղաքականությունը, բյուջեն և այլն, այս մոնիթորինգի համար թիրախային չեն եղել:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Վերոհիշյալ ոլորտների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումն իրականացվել է հետևյալ մեթոդներով.

- հանրային հարցում, որն ընդգրկել է ՀՀ բոլոր մարզերը:
- ոլորտի տեսաբանների և պրակտիկ մասնագետների մասնակցությամբ ֆոկլու-խմբային քննարկումներ:
- ինքնագնահատում՝ ծառայություն մատուցողների հետ խորքային հարցազրույցներ:

Հասարակական կարծիքի ուսումնասիրության շրջանակներում Հայաստանի Հանրապետության ողջ տարածքով 2016 թվականի հունիս-օգոստոս ամիսներին հարցվել են 1060 քաղաքացիներ, որից հետո բացահայտված խնդիրներն ու հանրային ընկալումները ներկայացվել են փորձագիտական խմբերին (թվով 7)՝ դրանց վերաբերյալ մասնագիտական փաստարկներ, հիմնավորումներ և առաջարկություններ հավաքագրելու համար:

Մասնագիտական ֆոկլու-խմբային հարցում իրականացնելու համար օգտագործվել է ձևակույտի (Դելֆի) մեթոդը, ինչի արդյունքում յուրաքանչյուր խմբի յուրաքանչյուր անդամ ներկայացնում է բացահայտված խնդրի պատճառն իր կարծիքով: Այնուհետև մյուս մասնակիցները հայտնում են իրենց համաձայնությունը կամ անհամաձայնությունը: Խմբային հաղորդակցության այս մեթոդը հնարավորություն է ընձեռում համաձայնության հանգել խմբի ներսում կոնկրետ հարցի շուրջ:

Ի հավելումն ֆոկլու-խմբային քննարկումների՝ իրականացվել են նաև խորքային հարցազրույցներ բացառապես դատավորների հետ՝ նպատակ ունենալով հնարավորություն ընձեռել վերջիններիս իրենց գործունեության ինքնագնահատման համար: Նման փորձը բացահայտել է դատական համակարգի խնդիրներն անմիջականորեն արդարադատության ծառայություն մատուցողների ընկալմամբ, որի արդյունքներն այնուհետև համադրվել են հանրության ընկալումների հետ:

Արդյունքում ձևավորվել է Հայաստանի Հանրապետությունում արադարադատության ոլորտից հանրային կարիքների և ակնկալիքների ընդհանուր պատկեր, որը գնահատված է նաև մասնագիտական փորձառությամբ:

Արդարադատության մոնիթորինգի առաջին փաղաղրիչը կազմում է **հանրային կարծիքի ուսումնասիրությունը** ողջ հանրապետության տարածքում, որի արդյունքում վեր են հանվել արդարադատության համակարգի վերաբերյալ հանրային վերաբերմունքը, վստահության մակարդակն ու ակնկալիքները: **Հետազոտության ընտրանքը**. Գլխավոր համախմբության համար հիմք են Հայաստանի 2015թ.-ի վիճակագրական տվյալները: Ընտրանքային համախմբության ծավալը որոշվել է վիճակագրական բանաձևի միջոցով (

$$n = \frac{k_{\alpha}^2 \sigma_{\max}^2 N}{\Delta^2 N + k_{\alpha}^2 \sigma_{\max}^2}$$

)՝ արդյունքների 95% միջակայքում, $\pm 3\%$ սխալի մեծության դեպքում


ընտրանքային համախմբությունը կազմել է 1060 հոգի:

Այնուհետև իրականացվել է ընտրանքային համախմբության շերտավորում. շերտավորման հատկանիշ հանդիսացել է մարզը, իսկ յուրաքանչյուր մարզի ներսում շերտերը տրոհվել են ըստ բնակավայրերի: Յուրաքանչյուր մարզում հարցվողների թիվը ներկայացված է ստորև՝ աղյուսակ 1-ում: Յուրաքանչյուր համայնքում իրականացված հարցազրույցների թիվը ներկայացված է հավելվածում՝ աղյուսակ 1:

Աղյուսակ 1. Հարցազրույցների թիվը՝ ըստ մարզերի

Մարզ	Մարզում հարցազրույցների թիվ	Մարզում հարցազրույցների թիվը՝ արտահայտված %-ով
Արարատ	40	3,8
Արմավիր	45	4,2
Արագածոտն	40	3,8
Կոտայք	50	4,7
Գեղարքունիք	40	3,8
Լոռի	80	7,5
Վայոց Ձոր	35	3,3
Սյունիք	45	4,2
Տավուշ	35	3,3
Շիրակ	90	8,5
Երևան	560	52,8
Ընդամենը	1060	100,0

Գծ. 1. Հարցազրույցների տոկոսային բաշխվածությունը՝ ըստ բնակավայրի



Յուրաքանչյուր համայնքում ընտրվել է երկու մեծ փողոց, որտեղ շենքերի և սեփական տների ընտրության համար կիրառվել է յուրաքանչյուր 3-րդ շենքի/տան սկզբունքը: Բնակարանների ընտրության քայլը տարբեր է՝ կախված շենքերի հարկից. մինչև 5 հարկանի շենքեր՝ 5, 5 և ավել հարկանի շենքեր՝ 10: Հարցվողի ընտրությունը կատարվել է «ծննդյան օրվա» սկզբունքով՝ ում ծննդյան օրը մոտ է եղել հարցման օրվան: Հարցմանը մասնակցել են 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիներ: Դաշտային աշխատանքները վերահսկվել են խմբավարների, այնուհետև՝ որակի ստուգողների կողմից:


Հետազոտությունն իրականացվել է 2016 թ. հուլիս ամսվա ընթացքում:

Տվյալների վերլուծությունը կատարվել է SPSS վիճակագրական փաթեթի միջոցով, հաշվարկվել են հաճախականություններ, փոխկապվածություններ, կատարվել է խաչաձև, գործոնային վերլուծություն և այլն:

Հարցման մասնակիցների սոցիալ-ժողովրդագրական տվյալները


Հարցմանը մասնակցել են 34,8% արական և 65, 2% իգական սեռի ներկայացուցիչներ:

Գծ. 2. Հարցվողների սեռը




Հարցվողների տարիքային բաշխումը և կրթական մակարդակի նկարագիրը՝

ՊՃ. 3. Հարցվողների տարիքը




ՊՃ. 4. Հարցվողների կրթությունը




Հարցվողների զբաղվածության կարգավիճակի և միջին ամսական եկամտի մասին տեղեկատվությունը ներկայացված է գծապատկեր 5 և 6-ում:

ՊՃ. 5. Հարցվողների զբաղվածության կարգավիճակը



ԳՑ. 6. Հարցվողների միջին ամսական եկամուտը



Ֆոկուս խմբային քննարկումներ:

Ֆոկուս խմբային քննարկումների ժամանակ մասնակիցներին ներկայացվել են ընտրված մի քանի հարցերի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրման արդյունքները՝ նպատակ հետապնդելով ոչ միայն հաստատել կամ հերքել հանրային կարծիքի արդյունքում դուրս բերված խնդիրները, այլ ստանալ մասնագիտական փաստարկներ ու տեսակետներ, թե հանրության շրջանում ինչու է ձևավորվել այս կամ այն կարծիքը, կարծրատիպը կամ պատկերացումը յուրաքանչյուր առանձին հարցի վերաբերյալ և ինչ կարելի անել ստեղծված իրավիճակի բարելավման համար:

Ֆոկուս խմբային քննարկման համար մշակվել էր բաց հարցաշար, որին կցված էին հասարակական կարծիքը ներկայացնող սոցիոլոգիական հետազոտության արդյունքներն ամփոփող և քննարկվող հարցերին վերաբերելի գծապատկերներ: Բաց հարցաշարը ենթադրում է, որ մասնակիցները ազատ շարադրում են իրենց տեսակետները և ոչ թե ընտրում են որևէ հնարավոր պատասխան: Ֆոկուս խմբի մասնակիցների թիվը միջինը եղել է 6-7, յուրաքանչյուր քննարկման ընդհանուր տևողությունը՝ 45-90 րոպե, հարցերի քանակը՝ ոչ ավել, քան 12, որոնցից 1-2-ը մուտքային, 7-8-ը՝ հիմնական/բովանդակային և 1-2-ն ամփոփիչ:

Մասնագիտական ֆոկուս-խմբային հարցումն իրականացվել է ձևակույտի մեթոդով (Դելֆիի մեթոդը), ինչը ենթադրում է, որ յուրաքանչյուր խմբի յուրաքանչյուր անդամ ներկայացնում է բացահայտված խնդրի պատճառն իր կարծիքով: Այնուհետև մյուս մասնակիցները հայտնում են իրենց համաձայնությունը կամ անհամաձայնությունը: Այս մոտեցումը մշակված է որպես

խմբային հաղորդակցության մեթոդ, որը հնարավորություն է ընձեռում համաձայնության հանգել խմբի ներսում կոնկրետ հարցի շուրջ:

Հարցազրույցների անհրաժեշտ քանակը համարվել է լրացված՝ հաշվի առնելով երկու կարևոր հանգամանք.

1. Երբ ստացված տեղեկատվությունը կրկնվել է կամ նոր տեղեկություններ չեն ստացվել,
2. Երբ նոր հարցվողների վերաբերյալ տվյալներ չեն ստացվել կամ կրկնվել են նույն անձանց վերաբերյալ տեղեկությունները:

Ֆոկուս խմբային քննարկումներ են կազմակերպվել հետևյալ մասնագիտական խմբերում.

- ՀՀ փաստաբանների պալատի անդամ փաստաբաններ, հանրային պաշտպանի գրասենյակի պաշտպաններ (քրեական, քաղաքացիական և վարչական ուղղվածությամբ),
- Իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ,
- Զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ,
- Դատախազներ,
- Քննիչներ,
- Ընդհանուր իրավասության դատարանի դատավորներ (քրեական, քաղաքացիական և վարչական գործեր քննող դատավորներ՝ Երևան քաղաքի հինգ վարչական շրջանների՝ Աջափնյակ, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն և Նորք Մարաշ ընդհանուր իրավասության դատարաններից),
- ՀՀ վերաքննիչ դատարանների նախագահներ և դատավորներ:

Ինքնագնահատում: Հասարակության լայն շրջանակի հարցման հետ մեկտեղ ընդգծվել է նաև շահագրգիռ կողմերի կարծիքի բացահայտման կարևորությունը: Կարևոր է իմանալ, թե ինչպես են արդարադատության որակական հատկանիշները ընկալվում արդարադատությունն իրականացնողների/ծառայություն մատուցողների կողմից, և ինչպես են վերջիններս իրենց զգում օրենքը կիրառելիս և մասնագիտական պարտականություններն իրականացնելիս: Ինքնագնահատումը հնարավորություն է տվել դատավորներին, դատախազներին, քննիչներին գնահատել իրենց գործունեությունն արդարադատության բնագավառում պաշտոնական լիազորություններն իրականացնելիս: Այս փորձը հիմնավորել է, որ դատական համակարգի անկախության ընկալման հարցումները դատավորների և

բնակչության շրջանակում տարբերվում է համադրման արդյունքներով: Այսպիսով, դատավորները գնահատում են իրենց փաստացի անկախությունը, որը հնարավոր է դարձնում երկու խումբ տվյալների համեմատություն՝ հանրային ընկալում և շահագրգիռ կողմերի ընկալում: Արդյունքների համադրումը հնարավորություն է տալիս մատնանշել այն բացերը, որտեղ արդարադատության որակը պետք է ամրապնդվի:

Ինքնագնահատման նպատակով խորքային հարցազրույցներ են իրականացվել հետևյալ ընդհանուր իրավասության դատարանների նախագահների և դատավորների հետ.

- Լոռու մարզի,
- Տավուշի մարզի,
- Շիրակի մարզի,
- Արմավիրի մարզի,
- Աշտարակի մարզի,
- Գեղարքունիքի մարզի,
- Կոտայքի մարզի,
- Սյունիքի մարզի,
- Արարատի և Վայոց Ձորի մարզերի,
- Մալաթիա-Սեբաստիա,
- Արաբկիր և Քանաքեռ,
- Շենգավիթ,
- Ավան և Նորք Մարաշ:



ԳԼՈՒԽ I

ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐՆ ՈՒ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԸ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ

Մասնագիտական կարծիքի
ուսումնասիրություն

1. ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ա. Ինքնագնահատման արդյունքներն ու մեկնաբանությունները

Ինքնագնահատման շրջանակներում դատական համակարգի ներկայացուցիչների և համակարգին առնչվող այլ մասնագետների կողմից նույնականացվել են նաև դատական համակարգի ընդհանուր խնդիրները: Այդ խնդիրները հիմնականում մեկնաբանվել են դատավորի գործունեության վրա ազդեցության տեսանկյունից. այդ խնդիրներով պայմանավորված դատավորի աշխատանքն ավելի է դժվարանում, ինչը խոչընդոտ է արդարադատության արդյունավետ իրականացման համար:


Ինքնագնահատման արդյունքներով մատնանշվել են օրենսդրական և իրավակիրառ պրակտիկայի, նյութական, ֆինանսական և տեխնիկական ռեսուրսների անբավարարության, ծանրաբեռնվածության և այլ խնդիրներ: Ինքնագնահատման փոքր թվով մասնակիցների կողմից դատական համակարգի որևէ խնդիր չի նույնականացվել:

Համակարգի խնդիրներն այնուհետև քննարկվել են և դրանց հղում է կատարվել նաև դատավորի գործունեության անկախության խոչընդոտների համատեքստում:

Ծանրաբեռնվածությունը և գործերի մեծ թիվը որպես արդարադատության որակի վրա ազդող գործոն

- Դատարան ներկայացվող հայցերի թիվն անհամարժեք է դատավորների քանակին, դատավորին օժանդակող անձնակազմի ռեսուրսներին: Նման անհամարժեքության առկայության դեպքում անհնար է դառնում մասնագիտական գործունեության, հետևաբար նաև արդարադատության բարձր որակ ապահովել:

- Ժամանակը չի բավարարում պատշաճ աշխատանքի համար, որի հետևանքով դատական ակտերի որակը չի գոհացնում:

 Ես նախանձում եմ այն դատավորին, ով կկարողանա նման ծանրաբեռնվածության պայմաններում որակյալ դատական ակտեր կազմել:

Ֆինանսական, նյութական և տեխնիկական ռեսուրսների անբավարարությունը որպես արդարադատության իրականացման խնդիր

- Կան դատարանի նստավայրեր, որոնք համապատասխան շենքային պայմաններով ապահովված չեն՝ վերանորոգում չկա, դահլիճների թիվը քիչ է: Նման տեխնիկական

պայմանների հետևանքով, օրինակ՝ դատական նիստերը հնարավոր չի լինում սկսել նշանակված ժամին:

- Առավել արդյունավետ աշխատանքի համար դատարաններն ապահովված չեն համապատասխան նյութական ռեսուրսներով՝ համակարգիչներ, տպիչներ: Մահմանափակ են նաև դատարանի ծախսերը, օրինակ՝ ծանուցումների ժամանակ առաքումները խնդիր են առաջացնում:

- Մարզային դատարանների որոշ նստավայրերում դատական նիստերի էլեկտրոնային ձայնագրման համակարգն ապահովված չէ, և նիստերի արձանագրությունն իրականացվում է պարզ-թղթային տարբերակով:

- Դատավորի սոցիալական ապահովության աստիճանը ցածր է, սահմանված աշխատավարձը համարժեք չէ աշխատանքի ծավալին: Ավելին՝ դատավորների կենսաթոշակը նվազեցվել է՝ 70 տոկոսից 55 տոկոս:

- Դատավորին օժանդակող անձնակազմի աշխատավարձերի չափը շատ փոքր է:

Օրենսդրական բացերը և չկարգավորված հարցերը

- Քրեական օրենսգրքի, քրեական դատավարության օրենսգրքի շրջանակներում դեռևս կան դրույթներ, որոնք տարատեսակ մեկնաբանությունների տեղիք են տալիս: Բացի այդ կան հարաբերություններ, որոնք օրենսդրությամբ ամբողջությամբ կարգավորված չեն:

- Օրենսդրական բացերը լրացնելու համար թեև կայացվել են նախադեպային որոշումներ, այնուամենայնիվ, արհեստական դժվարություններ են ստեղծվում:

- Օրենսդրական կարգավորումներով ներդրված հրապարակային ծանուցումների կարգը գործնականում խնդիր է առաջացնում կողմերի մասնակցությունն ապահովելու տեսանկյունից:

Հանրային իրավագիտակցության պակասը որպես արդարադատության իրացման խոչընդոտ

- Հասարակության իրավագիտակցության ցածր մակարդակը խոչընդոտում է արդարադատության հանրային ընկալման և նաև կոնկրետ գործի շրջանակում դատական գործընթացի կազմակերպմանը:

- Իրավագիտակցությամբ է պայմանավորված, թե որքանով դատարանի կողմից կայացվող վերջնական որոշումը կգոհացնի քաղաքացուն: Եթե հայցի միջոցով դատարան ներկայացվող պահանջը ճիշտ չէ կամ կանոնները չեն պահպանվել, դատարանը չի կարող իր նախաձեռնությամբ շտկումներ անել: Նույնը վերաբերում է նաև փաստաբանական ներկայացուցչությանը: Դատարանը չի կարող փոխարինել կողմի փաստաբանին և միջամտել արդարադատության իրականացմանը:

Դատարանի գործունեության նկատմամբ հանրային վերաբերմունքը որպես արդարադատության օբյեկտիվ ընկալման խնդիր

- Ընդհանուր առմամբ, հանրության մոտ առկա է նիհիլիստական հոգեբանական վերաբերմունք, որը չի նպաստում դատավորի արդյունավետ աշխատանքին:
- Դատական համակարգի գործունեության նկատմամբ հասարակությունն ունի բացասական վերաբերմունք, որի հետևանքով դատավորի աշխատանքը չի խրախուսվում:
- Մամուլի առավելապես ոչ օբյեկտիվ գործունեության հետևանքով դատարանի նկատմամբ ձևավորված հանրային բացասական վերաբերմունքը հանգեցնում է ընդհանուր միջավայրի լարվածության և դատարանի գործունեությունից դժգոհության:

✚ Դա իշխանությունների կամքն է, եթե ուզում են, որպեսզի իրենց դատական համակարգը լինի օբյեկտիվ, լինի անկախ, ապա դա կարողանում են անել և էդ մասին խոսում են: Լինում են դեպքեր, որ անում են, բայց էդ մասին չեն խոսում: Այսինքն՝ շատ ձեռնտու է միշտ պահել փայտի տակ:

✚ Իմ աշխատած ժամանակահատվածում ասեմ, որ ինչ-որ խնդիրների եմ առնչվել, որը իմ համար թվացել է անլուծելի, դա բացառված է:

✚ Էսօր դատարանը ամենաթույլ ու անպաշտպան օղակն է: Մի դատավոր քննում է 2000-3000 գործ:

✚ Մեր մոտ պրոբլեմը նաև այն է, որ շատերին ձեռնտու չէ անկախ դատարան ունենալը, որովհետև նրանք ամեն անգամ փորձում են ինչ-որ միջնորդություններ անել, իսկ մերժում ստանալուց էլ ասում են՝ էս ինչ վատն են էս դատավորները:

Բ. Եզրակացություն

Ինքնագնահատման միջոցով դատական համակարգի խնդիրների վերհանումը համակարգի ծառայություն մատուցողների կողմից խիստ կարևոր է, առավել ևս, երբ այդ խնդիրները

մեկնաբանվում են արդարադատության որակի վրա դրանց անմիջական ազդեցության տեսանկյունից: Ինքնագնահատման միջոցով վեր են հանված այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են ֆինանսավորման գործընթացը, դատավորի սոցիալական երաշխիքները, ծանրաբեռնվածությունը, ռեսուրսների անբավարարությունը: Այդ խնդիրները այնուհետև ներկայացվում և քննարկվում են արդարադատության որակական այլ ասպեկտների վրա ազդեցության տեսանկյունից: Սա վկայում է այն մասին, որ նույնականացված խնդիրները համակարգային նշանակություն ունեն և հատվածային լուծումները համակարգի ընդհանուր բարեփոխում չեն կարող ապահովել: Նույնականացված խնդիրները հնարավորություն են տալիս համադրման արդյունքում հստակ եզարահանգում կատարել, թե ինչպես, օրինակ՝ դատարանի տեխնիկական ռեսուրսների պակասը կարող է հանրային անվտանգության ձևավորման պատճառ հանդիսանալ կամ, օրինակ՝ ինչպես է դատավորի ծանրաբեռնվածությունը նազեցնում դատական ակտի որակը:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ ինքնագնահատման արդյունքները թիրախավորում են հիմնականում տեխնիկական բնույթի խնդիրներ, և արդարադատության բովանդակային այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են անկախության, արդարադատության իրացման գործում ներքին և արտաքին ազդեցության, պատասխանատվության կարգերի հարցերը, որոնք ավելի շատ մատնացույց են արվել հանրության կողմից, ինքնագնահատման շրջանակներում որպես համակարգի խնդիր, շրջանցվել են:

Գ. Մոնիթորնգի մասնակիցների առաջարկությունները

Դատական համակարգի խնդիրները հասցեագրելու համար անհարժեշտ է դրսևորել համակողմանի և համակարգային մոտեցում, ինչը հնարավորություն կտա նաև ապահովել փոփոխությունների տեսանելիությունը:

Ինքնագնահատման շրջանակներում վեր հանված խնդիրների լուծման համար ներկայացվել են նաև հետևյալ հիմնական առաջարկությունները.

ա) Դատավորների ծանրաբեռնվածությունը

- Ներդնել և իրականացնել դատարանների գործունեության (սա չի նույնականացվում դատավորի անհատական գնահատման հետ) գնահատում՝ ըստ վարչական շրջանների և դատարանների նստավայրերի, քանի որ ծանրաբեռնվածությունը կարող է ոչ միայն գործերի

քանակի և դատավորների թվի անհամապատասխանության, այլև ընդհանուր իրավասության դատարանի աշխատանքի պլանավորման և կառավարման խնդրի դրսևորում լինել:

- Իրականացնել ըստ դատարանի սպասարկման տարածքի, ներկայացվող հայցադիմումների, այլ գործերի քանակի և դատավորների թվաքանակի համապատասխանության գնահատում՝ ապահովելով մեկ դատավորի համար գործերի քննության հնարավոր ծավալ:

- Նպաստել ծանրաբեռնվածության նվազեցմանը՝ դատավորին օժանդակող անձնակազմի մեծացման, վերջիններիս կարողությունների շարունակական զարգացման միջոցով:

բ) Ֆինանսական, նյութական և տեխնիկական ռեսուրսների անբավարարությունը

- Ապահովել դատարանի ծախսերի, այդ թվում դատավորների և դատավորին օժանդակող աշխատակազմի աշխատավարձի համարժեքությունն իրականացվող աշխատանքի ծավալներին:

- Պետական բյուջեի պլանավորման շրջանակում գնահատել և արտացոլել դատարանի նյութատեխնիկական ապահովության խնդիրը:

գ) Օրենսդրական բացերը և չկարգավորված հարցերը

- Իրականացնել դատավորների և դատական համակարգի գործունեության և իրավակիրառական պրակտիկայի խորքային գնահատում՝ գործունեության օրենսդրական խոչընդոտները բացահայտելու համար:

- Ներդնել և ապահովել դատական իշխանության ինքնակառավարման մարմինների կողմից օրենսդրական նախաձեռնություններով հանդես գալու պրակտիկան:

- Դատավորի և դատարանի գործունեությանն առնչվող օրենսդրական նախագծերի մշակմանը մասնակից դարձնել դատավորներին և ապահովել վերջիններիս լիկարժեք մասնակցությունը նախագծի մշակման գործընթացում:

2. ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2.1. Անկախություն

Անկախության վերաբերյալ հանրային ընկալումը, ինչպես նաև դրա արդյունքների հիման վրա ինքնագնահատման մասնագիտական ընկալումներն ու մեկնաբանություններն ներառել են հետևյալ խնդիրները.

1. Դատավորների նշանակման կարգը որպես նրանց անկախության երաշխիք,
2. Դատական համակարգի խնդիրները,
3. Դատավորների անկախության խոչընդոտները և դրանց հաղթահարման երաշխիքները:

2.1.1. Դատավորների նշանակման կարգը որպես նրանց անկախության երաշխիք, դատավորների անկախության և նշանակման փոխկապակցվածությունը

Ա. Հանրային ընկալումը

Դատավորների նշանակման գործող կարգի վերաբերյալ հանրային իրազեկվածությունը համեմատաբար ցածր է, և, ըստ էության, այս գործընթացը հանրության համար տեսանելի չէ: Այս մասին վկայում է այն հանգամանքը, որ հանրային հարցմանը մասնակիցների մոտ 22%-ը դժվարացել է պատասխանել նշանակման կարգի վերաբերյալ հարցադրմանը, իսկ 18%-ը կարծիք է հայտնել, որ նշանակումներն արվում են ոչ ֆորմալ ձևով: Նշանակման մեխանիզմի վերաբերյալ օրենսդրական գործող մեխանիզմի վերաբերյալ ճիշտ պատասխան տվել է հարցման մասնակիցների մոտ 30%-ը:

Ինչպե՞ս են նշանակվում դատավորները	
Տարբերակներ	Տոկոսային քաշիվածություն
Նշանակվում են նախագահի կողմից	29.7%
Նշանակվում են համայնքի ղեկավարի կողմից	1.7%
Ընտրվում են տվյալ համայնքի բնակչության կողմից	4.9%
Նշանակվում են Ազգային ժողովի կողմից	15.1%
Նշանակումներն արվում են ոչ ֆորմալ ձևով	17.7%
Նշանակվում են կառավարության կողմից	0.4%
Դժվարանում է պատասխանել	21.7%

Դատավորների նշանակման գործող կարգի, դրա ազդեցության և նախընտրելի նշանակման կարգի վերաբերյալ հանրային ընկալման արդյունքների համադրումն ու դրանց վերլուծությունը վկայում է, որ դատավորների նշանակման կարգի ազդեցության վերաբերյալ ճիշտ պատկերացում ունեցող խումբը՝ մոտ 30%-ը, պահպանում է կայունություն և գրեթե նույն չափով դրսևորվում է դատավորների անկախության վրա ընտրության կարգի գնահատման, իսկ այնուհետև նախընտրելի տարբերակ առաջարկելու պարագայում:

Նման հարաբերակցությունը ենթադրում է, որ հարցվողներից առնվազն յուրաքանչյուր երրորդը գիտակցված մոտեցում է դրսևորում:

Հարցվողների մոտ 1/3 մասը կարծում է, որ դատախիրավական մարմինների ընտրվելու կամ նշանակվելու կարգերը միանշանակ ազդում են նրանց անկախության վրա:

Ընդհանուր հարցման արդյունքների 68%-ը (միանշանակ ազդում է կամ որոշ չափով ազդում է տարբերակների հանրագումար), գտնում է, որ նշանակման կարգն ազդում է անկախության վրա:

Ընտրության կարգերի ազդեցության մակարդակը դատավորների անկախության վրա	
Տարբերակները	Տոկոսային բաշխվածություն
Միանշանակ ազդում են	35.1%
Բացարձակ չեն ազդում	20.5%
Որոշ չափով ազդում են	32.7%
Դժվարանում է պատասխանել	11.7%

Անձնական կամ ընտանիքի անդամների առնչության փորձից ելնելով՝ հարցվողների մեծ մասը կարծում է, որ դատախիրավական մարմինների անկախության վրա միանշանակ ազդող գործոն է նրանց ընտրելու կամ նշանակելու կարգը: «Դժվարանում եմ պատասխանել» տարբերակի կշռի կրճատման հաշվին մեծանում է նաև «որոշ չափով ազդում է» տարբերակի հաճախականությունը («որոշ չափով ազդում է»՝ 40%, **տե՛ս** գծապատկեր 27):

Բնակավայրի ցուցանիշի հետ կապի վերլուծության արդյունքներով՝ դատավորների նշանակվելու/ընտրվելու կարգը՝ որպես նրանց անկախության վրա միանշանակ ազդող գործոն, ավելի շատ պնդել են մարզերի քաղաքների, գյուղերի բնակիչները՝ 37,6%, իսկ ավելի քիչ՝ Երևան քաղաքի՝ 32,9%:

Բ. Ինքնագնահատման արդյունքներն ու մեկնաբանությունները

Դատավորների նշանակման կարգի և դատավորների գործունեության անկախության վրա նշանակման կարգի ազդեցության առնչությամբ ինքնագնահատման մոտեցումներն արմատապես տարբերվում են հանրության մոտեցումներից:

Ինքնագնահատման արդյունքներով կարծիքները բաժանվում են. մի մասը պնդում է, որ դատավորների նշանակման կարգը որևէ ազդեցություն չի ունենում դատավորների անկախության վրա: Ազդեցության բացառման հիմնական փաստարկն այն է, որ նշանակման գործընթացն ապահովում է համակողմանիություն և երաշխիքներ է ստեղծում անկախության համար: Դատավորի գործունեության անկախության վրա ազդեցություն են ունենում ոչ թե նշանակման կարգերը, այլ անձնական հատկանիշները: Անձնական հատկանիշների և որոշում կայացնելու կարողության հարցի քննարկման շրջանակներում ինքնագնահատման արդյունքներով հաստատվում է գործող այն պրակտիկան, երբ որոշում կայացնելիս պաշտոնատար անձը միջամտում է կամ դիմում է դատավորին:

Ինքնագնահատման այն խումբը, որը պնդում է, որ նշանակման կարգն ազդում է դատավորի գործունեության անկախության վրա, մատնանշում է հիմնականում նշանակման ընթացակարգային խնդիրները:

Նման կարծիքների համար ինքնագնահատման շրջանակում ներկայացվում են համապատասխան հիմնավորումներ:

Դատավորների նշանակման գործող կարգի համակողմանիությունը որպես անկախության երաշխիք

- Դատավորի նշանակման գործող կարգը հավասարակշռված է և համակողմանի: Հավակնորդներն անցնում են մասնագիտական ստուգում, այնուհետև՝ ուսուցում, ընտրվում են թեկնածուները, ներկայացվում՝ հանրապետության նախագահին: Նախագահը ուսումնասիրում և իրականացնում է նշանակումը: Այս կարգից դուրս անկախության այլ երաշխիք չի կարելի ակնկալել:

- ՀՀ Սահմանադրության փոփոխություններով դատավորի նշանակման նոր կարգեր են ներդրվում՝ նշանակումը տեղափոխվում է քաղաքական դաշտ, այսինքն՝ Ազգային ժողովն է նշանակելու դատավորին:

✚ «... ասեմ Ձեզ, այստեղ ուրիշ բան կա, ընդհանուր առմամբ ով նշանակում է, նա էլ չպետք է աշխատանքից ազատի, աշխարհում ցանկացած տեղ, եթե ուզում ես ինչ-որ մի բան անկախ լինի, ով նշանակում է, նա իրավունք չպետք է ունենա ազատելու, այսինքն՝ եթե մի տեղ նախագահը նշանակում է, սենատն ազատում, ապա ապահովվել է անկախության երաշխիքը: Նշանակողը կարող է լինել մեկ մարդ, ազատողը պետք է լինի կոլեգիալ: Հիմա մեր երկրում, որպես ազատող կոլեգիալ մարմին ընտրել են արդարադատության խորհուրդ, որը շատ լավ էլ աշխատում է»:

Դատավորի անձնային հատկանիշները որպես անկախության երաշխիք

- Խնդիրը ոչ թե անկախությունն է, այլ դատավորի ինքնուրույնությունը, այն է՝ ինքնուրույն որոշում կայացնելու ունակությունը, ինչն անկախության հետ կապ չունի:
- Դատավորի անկախության երաշխիքն ավելի հաճախ պայմանավորվում է տվյալ դատավորի անձնական հատկանիշներով:

✚ ...շատ կոլեգաներ կան, որ եթե էդ աստիճանի պաշտոնատար անձը հանկարծ զանգի, իրեն խնդրի, չի կարող մերժել: Սա ընդամենը էն վիճակն է, թե մարդը՝ ինքը, պատրաստ ա ուրիշի խնդրանքը ընդունել, թե չընդունել, և ինքը ինքնուրույն ա էդ որոշումը կայացնում, թե էդ գործոնների ազդեցության տակ:

✚ Ներազդելու իրավական բան էլ չկա, քանի որ Հայաստանը փոքր երկիր է, համարյա բոլորը իրար ճանաչում են, իսկ դատավորի հիմնական գործունեությունն էլ սովորույթներով է: Դա լավ է, թե վատ՝ չեմ կարող ասել, կարևորը ժողովրդի համար լավ լինի:

✚ Եթե ինչ-որ մի տեղ հլը մեղմ վարվելու համար խնդրեն, մի տեղ կհասկանաս, բայց որ խնդրեն՝ անմեղին դատես, դա էս չեմ հասկանում: Այդ պատճառով՝ դատավորի անկախություն կոչվածը իմ համար գոյություն չունի:

✚ Տենց ապրիորի դնել դատավորի կախյալության կանխավարկած ու անընդհատ խոսել, որ, այ, դու անկախ եղի՛ր, անկախ եղի՛ր, դրա մասին բացարձակ խոսք չկա: Խնդիրը կոնկրետ վեճը լուծելուց դու լուծիր, ոչ թե ուրիշը՝ քո փոխարեն: Իսկ սա անկախության հետ բացարձակ կապ չունի: ...նշանակման պրոցեսը սրա հետ գրեթե կապ չունի: Էնպես չի, որ ինձ, ասենք, էսօր նշանակել է ՀՀ նախագահը, իմ գործերով ինչ-որ պտի զանգի ինձ ասի՝ էս գործը էսպես լուծի և այլն: Նման բան չկա, դա բացառվում է: Ինքնուրույն որոշում կայացրու:

✚ ...եկե՛ք շեշտադրում դնենք՝ դատավորը պետք է որոշումը կայացնի ազատ, ինքնուրույն: Ինքը ունի՞ համարձակություն՝ կայացնել որոշում, որը կարող է մի ամբողջ համակարգի դեմ գնալ: Էտի անկախության հետ կապ չունի: Ես տեսնում եմ նման կոլեգաների, որոնք իրենք են փորձում, օրինակ՝ զանգեմ մի հատ վճռաբեկ դատարան հարցնեմ՝ էս վեճը սենց լուծեմ, ճիշտ ա, թե՞ չէ:

Դատավորների ազատման և պատասխանատվության կարգը որպես անկախության

երաշխիք

- Անկախության երաշխիքների շարքում կարևոր է ազատման կարգն ու իրական գործընթացը: Դատավորների պատասխանատվության և ազատման համար որոշում կայացնողներն հենց իրենք են՝ դատավորները: Սահմանդրության փոփոխություններով Բարձրագույն դատական խորհրդի կազմում կլինեն ոչ միայն դատավորներ, և դատավորների գերակայության հարցը կվերանա:

Դատավորների նշանակման կարգը որպես անկախության խոչընդոտ

- Նշանակման կարգի յուրաքանչյուր փուլում խնդիր կա՝ սկսած քննական առաջադրանքները ներկայացնելուց, ստուգման հանձնաժողովներից, վերստուգող հանձնաժողովներից, այն հարցում մոտեցումներից, թե այդ դիմորդները ինչպես են պատասխանել: Դիմորդը պետք է «անգիր իմանա» Վճռաբեկ դատարանի նախադեպերը, որ կարողանա խնդիրը լուծել, մինչդեռ դիմորդը պետք է հայտնի իր տեսակետը, իսկ այնուհետև ակադեմիայում ուսանելիս կարող է ուսումնասիրել նախադեպերը:

- Դատավորների նշանակման գործընթացում որակավորման ստուգման փուլը երկու մասից է բաղկացած: Առաջինը՝ գրավոր փուլը, համեմատաբար օբյեկտիվ է, իսկ երկրորդը՝ հարցազրույցը, միայն սուբյեկտիվ է՝ բացառելով օբյեկտիվ որևէ չափանիշ:

Գ. Եզրակացություն

Հանրության պատկերացումներով դատավորների նշանակման կարգի և դատավորի գործունեության անկախության միջև առկա է ուղղակի կապ: Չնայած դատավորի նշանակման գործող կարգն ամբողջությամբ տեսանելի չէ հանրությանը, քանի որ հանրության կողմից առաջարկվող նշանակման գործընթացի ամենանախընտրելի տարբերակը թափանցիկ մրցույթի միջոցով ընտրության կազմակերպումն է: Հատկանշական է, որ ինքնագնահատման և մասնագիտական խմբերի գնահատման արդյունքներով՝ դատավորի նշանակումը հենց այդ կարգով էլ իրականացվում է, և հիմնական խնդիրը, ինչպես համակարգի մյուս բոլոր հարցերի առնչությամբ, հանրության իրավագիտակցության պակասն է, ինչով պայմանավորված հանրությունը նման մոտեցում է արտահայտում:

Հատկանշական է, որ հարցվածներից յուրաքանչյուր երրորդը՝ (ընդհանուրի մոտ 30%) վստահ է, որ դատավորի նշանակման կարգն անմիջական ազդեցություն ունի նրա

գործունեության անկախության վրա: Այս տեսակետն ամրապնդվում է նաև դատարանից օգտվողների մոտեցումներով՝ կազմելով մոտ 40%: Ավելին՝ գնահատելով դատավորի գործունեության վրա տարբեր կառույցների ազդեցությունը՝ հանրության գրեթե մեկ երրորդը նորից հակված է պնդելու, որ նշանակող մարմինը իր վարչակազմով՝ հանրապետության նախագահի աշխատակազմ, ամենամեծ ազդեցությունն է ունենում դատավորի գործունեության անկախության վրա:

Հանրային և համակարգի ծառայություն մատուցողների ընկալումների միջև առկա է ընդգծված հակասություն: Համակարգի ծառայություն մատուցողների ինքնագնահատման արդյունքներով ավելի փոքր խումբն է հակված այն տեսակետին, որ գործող նշանակման կարգը կարող է ազդեցություն ունենալ դատավորների գործունեության անկախության վրա:

Թեև համակարգի ծառայություն մատուցողների ինքնագնահատման և ընկալման արդյունքները չեն կարող անտեսվել, այնուամենայնիվ, անհրաժեշտ է, որ հանրության համար դատավորի նշանակման գործընթացը և հետագա գործունեությունը դառնա ավելի թափանցիկ, տեսանելի:

Դ. Մոնիթորինգի մասնակիցների առաջարկությունները

- ՀՀ Սահմանադրության 2015 թվականի փոփոխությունների հիման վրա սպասվում են նաև օրենսդրական համապատասխան փոփոխություններ: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ նախընտրելի է, որ նախատեսվող բարձրագույն դատական խորհրդի գործունեության համար սահմանվեն և պահպանվեն հետևյալ սկզբունքները.

1. Բարձրագույն դատական խորհրդի գործունեության թափանցիկության և հասանելիության ապահովում: Ցանկալի է, որ պասիվ իրազեկման կարգերի փոխարեն ներդրվեն և կիրառվեն հանրության համար մասնագիտական տեղեկատվության մեկնաբանության մեխանիզմները, որոնց միջոցով այդ տեղեկությունը մատչելի կդառնա հանրությանը:

2. Բարձրագույն դատական խորհրդի գործունեությանը հանրային մասնակցության ապահովում: Հանրային մասնակցությունը չի ենթադրում բացառապես որոշումների կայացման գործում քվեարկությանը մասնակցություն, այլև՝ գործընթացին հետևելու և մշտադիտարկելու կարողություն:

2.1.2. Դատավորների նշանակման հանրության կողմից նախընտրելի կարգը որպես դատավորի գործունեության լիակատար անկախության երաշխիք

Ա. Հանրային ընկալումը

Հանրային հարցման արդյունքների համաձայն՝ դատավորների նշանակման նախընտրելի տարբերակների մեջ առավելագույն գնահատականը, մոտ 35%-ը բաց թափանցիկ նշանակումների և բնակչության կողմից դատավոր ընտրելու կարգի տարբերակներն են կազմում: Հարցվողների մոտ 34,2%-ը կողմնակից է բնակչության կողմից դատավորների ընտրության կարգին:

Դատավորների ենթադրվող և նախընտրելի նշանակումների համեմատական պատկեր		
	<i>Ենթադրվող</i>	<i>Նախընտրելի</i>
ՀՀ Նախագահի կողմից	29.7%	7.7%
Ոչ ֆորմալ ձևով, բաց, թափանցիկ	34, 7%	17,4%
Ազգային ժողովի կողմից	15.1%	9.1%
Գործընկերների կողմից	8.8%	5.4%
Համայնքի բնակչության կողմից	4.9%	34.2%
Համայնքի ղեկավարի կողմից	1.7%	2.1%
Այլ	0,4%	0,8%
Դժվարանում է պատասխանել	21,7%	6,0%

Բ. Մասնագիտական գնահատման արդյունքներն ու մեկնաբանությունները

Դատավորների նշանակման հանրության կողմից նախընտրելի մեխանիզմների և դատավորների գործունեության անկախության վրա ազդեցության առնչությամբ մասնագիտական խմբերի մոտեցումները տարբերվում են ոչ միայն հանրության մոտեցումներից, այլև հենց խմբի ներսում:

Հիմնական և առավել ընդհանրացված մոտեցումների համաձայն՝ հանրության կողմից նախընտրելի՝ բնակչության կողմից ընտրվելու տարբերակը, կտրականապես մերժվում մասնագետների կողմից: Հիմնական փաստարկն այն է, որ ներպետական տարբեր ընտրական գործընթացների խախտումների փորձը կտեղայնացվի նաև դատավորների

ընտրության հնարավոր գործընթացում: Բացի այդ, նման կարգի արդյունքում որոշում կայացնելիս դատավորն անմիջականորեն կաշկանդված կլինի հանրային կարծիքով:


Մասնագիտական խմբերում առավել հազվադեպ, բայց ներկայացվել է նաև այն մոտեցումը, որ բնակչության կողմից ընտրվելու տարբերակի առաջաշումը պայմանավորված է հանրային պահանջատիրության մեծացմամբ: Սա դիտարկվել է նաև որպես ցուցիչ, որ հանրությունը պատրաստակամություն է ստանձնում դատական իշխանության անկախության համար պատասխանատվություն ստանձնել: Թեև հանրության կողմից առաջարկված անմիջական ընտրության կարգի փորձարկումը ներկայիս Սահմանադրական կարգավորումների շրջանակում հնարավոր չէ, այնուամենայնիվ, անհրաժեշտ է առաջարկել այնպիսի կարգ, որում հանրային մասնակցությունն ու ներգրավվածությունն ապահովված կլինի:

Դատավորների նշանակման իրենց կողմից առաջ քաշված տարբերակների համար մասնագիտական խմբերը ներկայացրել են նաև նման մասնագիտական փաստարկներ և հիմնավորումներ, ինչպես նաև մեկնաբանել են հանրային ընկալման դրդապատճառները:

Համայնքի բնակչության կողմից ընտրվելու տարբերակի հանրային նախապատվության դրդապատճառները

- Բնակչության կողմից ընտրվելու մեխանիզմի հանրային ակնկալիքն այն է, որ ընտրելուց հետո բնակիչը հասանելիություն ունենա դատավորին՝ խնդիրները լուծելու և իր օգտին որոշում կայացնելու համար:

- Այս հարցը նախապատմություն ունի, քանի որ սովետական միության ժամանակ դատավորները ընտրվում էին շրջանային խորհուրդների /սովետների/ ժողովրդական պատգամավորների ընտրության ժամանակ: Այդպիսով, ժողպատգամավորների և ժողդատավորների ընտրությունները համատեղված էին:

 Բայց սովետական միության ժամանակ բոլոր ընտրությունները ֆիկցիա էին, որովհետև այն մարդը, որը ուզում էր դատավոր դառնալ, առաջին հերթին գնում էր կոմերիտական կուսակցության շրջանային կոմիտե, առաջին քարտուղարի մոտ, խոսում էին, նա խոսում էր, ասում էր հա, ես քո հետ խոսել եմ, դու լավ տղա ես, համ էլ ահագին, լիքը-լիքը դրական կողմեր ունես, դու հաստատ դատավոր կաշխատես:

- Ժողովուրդը կողմնակից է անմիջական ժողովրդավարության սկզբունքին, կարելի է տարբերակված մոտեցում դրսևորել այնպես, որ առաջին ատյանի դատարանի

դատավորներն ընտրվեն: Դա կառաջացնի ընտրողների առջև պատասխանատվություն, եթե նրանց վճիռները կամ որոշումները բեկանվեն, դատավորը պատասխանատու կլինի նույն բնակչության առջև: Ներկայիս կարգը պատասխանատվություն չի առաջացնում, քանի որ դատավորները նշանակվել են հանրապետության նախագահի կողմից:

- Դատավորների ընտրական կարգը քաղաքացիների մասնակցության կարևոր ինստիտուտ է, և դրական ազդեցություն կունենա:
- Հանրային վերահսկողության ընդհանուր պահանջարկը բավականին մեծ է, ինչը վկայում է, որ քաղաքացիները տեսնում են որոշումների կայացման գործում իրենց կարևորությունը:

*Իրավագիտակցության պակասը որպես բնակչության կողմից ընտրվելու տարբերակի
դրդապատճառ*

- Հանրությունը չի գիտակցում իր կողմից առաջարկած կարգի էությունը, քանի որ Սահմանդրության հանրաքվեով արդեն իր դիրքորոշումը հայտնել է՝ համաձայնություն տալով առաջարկվող փոփոխություններին:
- Դատավորի նշանակումը ներկայումս իրականացվում է բաց, թափանցիկ մրցույթի ձևով, որից հանրությունը տեղյակ չէ, դրա համար էլ առաջարկում է այլ տարբերակ:

*Հանրային դժգոհությունը որպես բնակչության կողմից ընտրվելու տարբերակի
դրդապատճառ*

- Բնակչության կողմից ընտրվելու տարբերակը պայմանավորված է հանրային դժգոհություններով: Ակնկալվում է, որ բնակչության կողմից ընտրությունը կլուծի խնդիրը:

*Հանրության կողմից նախընտրելի ընտրական կարգի բացառումը որպես
դատավորի գործունեության անկախության բարձրացմանը նպաստող գործոն*

*Ընտրական կարգը կվերարտադրի և կարտացոլի այլ ընտրական գործընթացների
թերություններն ու խնդիրները*

- Դատավորի ընտրության կարգի ներդրումը գոյություն ունեցող կոռուպցիոն ռիսկերը տասնապատիկ-հարյուրապատիկ անգամ կբարձրացնի: Հետևաբար, նման ընթացակարգով ընտրված դատավորը չի կարող լինել ավելի անկախ:

- Այն կարգը, որով այս պահին նշանակվում են դատավորները, ամենաընդունելի տարբերակն է: Հայաստանյան իրավիճակում ընտրությունների հետ կապված քառասյին իրավիճակ է՝ ընտրեմ իմ ծանոթին կամ ընկերոջը կամ բարեկամին: Դատավորի ընտրությունները կվերաբարտադրեն ընտրական գործընթացի առկա խնդիրները:

- Դատավորը չի կարող ընտրվել բնակչության կողմից, քանի որ բնակչությունը միշտ ընտրում է խնամի, ծանոթ, բարեկամ սկզբունքից ելնելով, և առայժմ անաչառ ընտրություն չի իրականացվել: Հետևաբար, դատավորի ընտրությունը ևս անաչառ չի լինի:

- Հերթական կոռուպցիայի աղբյուր է: Համայնքի բնակիչները կարող են համայնքի ղեկավար ընտրել, բայց դատավոր ընտրել:

- Ընտրությունները հնարավոր է կեղծել, ինչպես շատ այլ ընտրություններ, այն կեղծելը ևս դժվար չի լինի:

- Համայնքում, որտեղ բոլորն իրար ծանոթ են, ընտրությունը, չի կարող լինել անաչառ, իսկ հետո ընտրվածը չի կարող համայնքի համար աշխատել անաչառ ու անկախ, քանի որ նրա օգտին քվեարկած բնակիչը նրան պահանջներ է ներկայացնելու: Այս կարգն արդեն արդարություն և անաչառություն չի ենթադրում:

Բնակչության կողմից ընտրվելու հանգամանքը կձևավորի դատավորի գործունեության վրա ազդեցության լրացուցիչ լծակներ

- Դատավորի անկախությունը չի կարող պայմանավորվել այն հանգամանքով, որ ընտրատարածքի բնակիչն իր ձայնն է տվել: Հակառակը, դատավորը չպետք է կապ ունենա ընտրատարածքի հետ, որպեսզի չսերտաճի տվյալ վարչական տարածքի գեներալների, հեղինակությունների, գործարարների, օլիգարխների և այլոց հետ: Ավելին՝ ռոտացիայի կարգով դատավորը պետք է մի սպասարկվող տարածքից մյուսը տեղափոխվի:

- Ընտրվելու համար հարկավոր է պոպուլիստական գործողություններ ծավալել և զբաղվել քաղաքականությամբ, ինչն անընդունելի է:

- Դատավորներին հասարակության կողմից վերահսկելու կարգերը հնարավորինս պետք է նվազեցվեն, դատավորները չպետք է մատչելի լինեն ընտրության համար: Ընտրական կարգը կաշկանդող հանգամանք կդառնա ցանկացած դատավորի համար, քանի որ օրենքի վրա հիմնված դատավորի գործունեությունը 90%-ով դուր չի գալիս մարդկանց:

- Գնահատումներով չպետք է վախեցնել դատավորին. դատավորը նշանակվելիս ամենաձանր փուլն է անցնում, իսկ նշանակվելուց հետո պետք է շատ վստահելի լինի: Մինչև

դատավոր նշանակվելու կարգերի վրա պետք է շատ աշխատել, դժվարացնել, բարդացնել, բայց դատավոր դառնալուց հետո որևէ ազդեցության կարգ չպետք լինի:

Գ. Եզրակացություն

Դատավորների անկախության մեծացման համար հանրության կողմից նախընտրելի տարբերակը՝ բնակչության կողմից ընտրվելն է, որը, սակայն մասնագիտական խմբերի կողմից հավանության չի արժանացել: Հատկանշական է, որ մասնագիտական խմբերը բնակչության կողմից ընտրվելու տարբերակի բացառման համար առավելապես ներկայացրել են «ձևական» փաստարկներ՝ ընտրական գործընթացների գոյություն ունեցող բացասական դրսևորումները: Նման մոտեցման հետևանքով բովանդակային քննարկման հնարավորությունը նվազել է, և ընտրությունների տարբերակի առաջադրման հիմնական դրդապատճառների վերացման ուղղությամբ առաջարկները չեն զարգացվել: Այս մասին է վկայում այն հանգամանքը, որ մասնագիտական խմբերի կողմից առաջ է քաշվել վարկած, որ գոյություն ունեցող խնդիրների անհամարժեք լուծումներն ու հանրային ընդհանուր դժգոհությունն են բնակչության կողմից դատավոր ընտրելու տարբերակի առաջադրման պատճառը: Դատավորին ընտրելու կարգի առաջարկով հանրությունը միաժամանակ պատասխանատվություն է ստանձնում իր կողմից նույնականացված խնդիրների լուծման համար: Այս տարբերակը, թեև առավել հավանական է թվացել, այնուամենայնիվ, այն ևս հերքվել է հետագա այլ փաստարկների միջոցով: Սրան զուգահեռ՝ դրսևորվել է այն ծանրակշիռ փաստարկը, որ հանրային իրավագիտակցության պակասը և դատավորի գործունեության վերաբերյալ հստակ պատկերացումների բացակայությունը հիմք է դարձել նման տարբերակի առաջադրման համար: Արդյունքում, մասնագիտական խմբերի մոտեցումներում ավելի շատ հակվածություն է դրսևորվել դատավորների նշանակման գործընթացում հանրային մասնակցության հնարավորությունները բացառելու, քան զարգացնելու ուղղությամբ:

Դ. Մոնիթորնգի մասնակիցների առաջարկությունները

Դատական իշխանության ձևավորման և մասնավորապես՝ դատավորների անմիջական ընտրության կարգը թեև փորձարկված և ընդունելի է, այնուամենայնիվ, ՀՀ Սահմանադրության փոփոխություններով այս պահին այն նախատեսված չէ: Հաշվի առնելով սահմանադրական ներկայիս կարգավորումները և միաժամանակ հիմնվելով հանրության

ակնկալիքների վրա՝ անհրաժեշտ է, որպեսզի դատական օրենսգրքի շրջանակում ներդրվի այնպիսի կարգ, որը հնարավոր կդարձնի հանրային մասնակցությունը դատավորի նշանակման գործընթացում, թե՛ տեղական, թե՛ կենտրոնական մակարդակում: Այս առնչությամբ մասնագիտական խմբերը ներկայացնում են հետևյալ հնարավոր լուծումը՝

- Դատավորի նշանակման գործընթացում ապահովել հանրության շրջանում հեղինակություն ունեցող ոլորտի լավագույն մասնագետների մասնակցությունը՝ ստեղծելով նրանցից կազմված խորհուրդ: Համապատասխան գիտելիքները ստուգելուց հետո դատավորի թեկնածուների վերաբերյալ կարծիք կարող է արտահայտել նաև այս խորհուրդը:

2.1.3. Հայաստանում դատավորների գործունեության անկախության հիմնական խոչընդոտները

Ա. Հանրային ընկալումը

Այս հարցի վերաբերյալ հանրային ընկալումները տարբեր են երկու առանձին խմբերում՝ քաղաքացիների պատկերացումներում ընդհանուր առմամբ, և արդարադատության համակարգի հետ առնչություն ունեցած քաղաքացիների տեսակետներում: Քաղաքացիների ընդհանուր պատկերացումներով հիմնական խոչընդոտներ են համարվում 1) պատասխանատվության կարգերի թերացումը՝ 29,6%, 2) գործունեության վերահսկողության պակասը՝ 27,5%, 3) հաշվետվողականության պակասը՝ 15% (տե՛ս քանակական տվյալների հաշվետվության գծապատկեր 28): Առնչություն ունեցող քաղաքացիները և/կամ նրանց ընտանիքի անդամները կարծում են, որ 1-ին հիմնական խոչընդոտը դատավորների գործունեության վերահսկողության պակասն է՝ 28,6%, 2-րդը՝ պատասխանատվության կարգերի թերացումը՝ 24%, իսկ 3-րդ խոչընդոտ համարում են դատավորների սոցիալական վիճակը՝ 14,9% (տե՛ս քանակական տվյալների հաշվետվության գծապատկեր 29):

Համակարգի հետ առնչության փորձ ունեցող քաղաքացիները մոտ երկու անգամ ավելի շատ են հակված այն տեսակետին, որ դատավորների անկախ գործունեության համար խոչընդոտներ չկան (3,4% 1,8%-ի համեմատությամբ):

Բ. Ինքնագնահատման արդյունքներն ու մեկնաբանությունները

Դատավորների գործունեության անկախության խոչընդոտների վերաբերյալ ինքնագնահատման արդյունքները վեր են հանում տարբեր խնդիրներ: Նյութական ռեսուրսների անբավարարությունը, օրենսդրական խնդիրները, որոնք ներկայացվել էին նաև որպես դատական համակարգի խնդիրներ, կրկնվում են: Միաժամանակ առաջ են քաշվում նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք են միջնորդությունները և մարդկային գործոնը, ֆինանսավորման գործընթացը, քաղաքականության անկայունությունը և այլն:

Հանրային ընկալմամբ նույնականացված խնդիրներն ինքնագնահատման մոտեցումներով հիմնականում բացառվել են, այն փաստարկով, որ քաղաքացիները բավարար իրավագիտակցություն չունեն, և դատավորների գործունեության անկախության խոչընդոտներ չեն կարող առաջադրվել, ավելին՝ հանրությունը չի կարող առաջարկել նաև այդ խոչընդոտների վերացման տարբերակները:

Միջնորդությունները և մարդկային գործոնը որպես դատավորի անկախ գործունեության խոչընդոտ

- Դատավորների կողմից կայացվող որոշումների համար ներկայացվում են «միջնորդություններ», որոնց դեմ դատավորները փորձում են պայքարել՝ խնդրելով, որ չդիմեն կամ միջնորդություն չներկայացնեն:

- «Միջնորդությունների» դեմ պայքարն ավելի շատ անհատական բնույթ է կրում և պայմանավորված է դատավորի անձով՝ դատավոր կա, ով իր բնույթով չի կարող անկախ լինել, և ավելի հակված է բավարարել «միջնորդությունները»: Այս առումով, մասնագիտական գիտելիքներից հետո դատավորի համար երկրորդ կարևոր հատկանիշը համարձակությունն է:

Ֆինանսավորման գործընթացը որպես դատավորի գործունեության անկախության խոչընդոտ

- Նյութական ռեսուրսների ձեռքբերման առումով դատավորները կախման մեջ են գործադիր իշխանությունից: Օրինակ՝ եթե օդորակիչ կամ այլ նյութական ռեսուրսներ են անհրաժեշտ դատավորին, դրանք կարող են ձեռք բերվել, եթե գործադիրը համապատասխան ֆինանսներ հատկացնի:

Օրենսդրական խնդիրները որպես դատավորի գործունեության անկախության խոչընդոտ

- Դատական իշխանության անկախությունը պետք է երաշխավորված լինի օրենսդրական մակարդակում, որը պետք է բացառի իշխանության այլ ճյուղի ազդեցությունը դատական իշխանության վրա: Այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրության փոփոխություններով Վճռաբեկ դատարանի նախագահը նշանակվելու է Ազգային ժողովի կողմից, օրենսդրական մակարդակում դատական իշխանության անկախությանը խոչընդոտող իրավակարգավորում է:

Սոցիալական երաշխիքների և ռեսուրսների անբավարարությունը որպես դատավորի գործունեության անկախության խոչընդոտ

- Դատավորների սոցիալական երաշխիքներն անմիջական և ուղղակի ազդեցություն ունեն նրանց գործունեության անկախության վրա:
- Դատարաններում գործերի թիվը մեծ է և ըստ մարդկային ռեսուրսների բաշխվածությունն անհամաչափ է:

Մասնագիտական կարողությունների պակասը որպես դատավորի գործունեության անկախության խոչընդոտ

- Մասնագիտական պատրաստվածության պակասը դատավորի գործունեության խոչընդոտ է:

Արդարադատության ոլորտի քաղաքականության կայունության բացակայությունը որպես դատավորի գործունեության անկախության խոչընդոտ

- Կադրային փոփոխությունն ու հոսունությունը գործադիր մարմնում, մասնավորապես՝ Արդարադատության նախարարների հաճախակի փոփոխությունները, ազդեցություն են ունենում դատական իշխանության ծրագրված բարեփոխումների ընթացքի վրա: Օրինակ՝ տևական ժամանակ քննարկվում է մի նախագիծ, հետո նախարարը փոխվում է, նույն քննարկումները վերաբացվում են: Մա լրացուցիչ աշխատանք և ժամանակ է պահանջում, և նվազեցնում է արդյունավետությունը:
- Հայաստանում դատական իշխանության անկախության կայացման համար ժամանակ է պետք: Մա իր մեջ ներառում է նաև մտածելակերպի փոփոխությունը: Օրինակ՝ Սովետական Միության ժամանակ դատախազությունը եղել է դատարանին հսկող մարմին:

Նման կարգավորման պարագայում արդարադատության իրացման մասին խոսելը բացառվում է:

Հանրային կարծիքը որպես դատավորի գործունեության անկախության խոչընդոտ

• Դատական իշխանության գործունեության անկախության համար կարևոր է նաև հասարակական կարծիքի ազդեցությամբ որոշումներ կայացնելու պրակտիկայի բացառումը:

✚ ... «Չէ» ասելը այդքան էլ հեշտ բան չի, բայց այդ չէ ասելը եթե որևէ մեկը չկարողացավ, ապա նա իրավունք չունի ոչ միայն դատավոր աշխատելու, այլ պետական ծառայության մեջ...

✚ Դատավորն իր կողմից կայացվելիք որոշման շուրջ քննարկումների մեջ պիտի չմտնի:

✚ Էդ նույն քաղաքացիներին Դուք ուրիշ հարց պետք ա տայիք՝ Դուք պետք է հարց տայիք, որ Դուք գործ ունեիք դատարանում, ինչո՞ւ էիք գնում ամեն անգամ ինչ-որ դատավորի մոտ, փորձում իրան տեսնել, ինչ-որ մարդկանց եք ուղարկում, որպեսզի իրան տեսնի:

✚ ...երբ որ ես նշանակվեցի, իմ ընկերները ելնում, իմ կենացն էին խմում, շնորհավորում էին, ասում էին՝ այ, քո նման ազնիվ, արդար, անկախ, էս, էս: Եվ մի օր մեկը զանգել, ինձ բան ա խնդրում, ասում ա՝ կլինի էսինչին չհրավիրես վկա՝ հարցաքննելու: Ասում եմ՝ ինչի՞: Դե, խնդրում եմ, բան: Ասում եմ՝ այ տղա, էն օրը չէիր իմ կենացը խմում: Դե, հա, ցավդ տանեմ, սա Հայաստանն է, բան...

Դատավորի գործունեության անկախության համար խոչընդոտներ չկան

• Այսօր Հայաստանում դատավորի անկախությունը սահմանափակող ինստիտուցիոնալ որևէ պատճառ չկա:

• Օրենսդրական մակարդակում ևս խնդիրներ չկան, որոնք կարող են մատնանշվել որպես դատավորի գործունեության անկախության խոչընդոտ:

• Դատավորի աշխատանքային պրակտիկայում գործունեության անկախության որևէ խոչընդոտ չի զգացվում, եթե առաջնորդվում են իրավագիտակցությամբ:

Գ. Մասնագիտական գնահատման արդյունքներն ու մեկնաբանությունները

Մասնագիտական այլ խմբերի մոտ դատավորների գործունեության անկախության խոչընդոտների առնչությամբ առկա են տարբեր մոտեցումներ: Մի դեպքում մասնագիտական խմբերը կիսում են հանրության կարծիքն այն մասով, որ հանրային վերահսկողությունը կարող է դատավորների գործունեության անկախության մեծացմանը նպաստող գործոն հանդիսանալ: Միննույն ժամանակ, վերահսկողությունը որպես դրական երևույթ չի գնահատվում բոլոր այն դեպքերում, երբ այն նույնականացվում է կամ մեկնաբանվում է որպես

որոշումների կայացման վրա ազդեցություն: Մինչդեռ, թափանցիկ գործունեության բարելավումը կարող է նպաստել անկախության ապահովմանը:

Դատավորի գործունեության անկախության վրա ազդող այնպիսի գործոնները, ինչպիսիք են մարդկային գործոնը, սոցիալական երաշխիքների բացակայությունը, կրկնվում են: Միաժամանակ ներկայացվում են նաև այնպիսի խոչընդոտներ, ինչպիսիք են վերադասի ազդեցությունը, ինչպես նաև պատշաճ վերահսկողության բացակայությունը և այլն:

Մարդկային գործոնը որպես դատավորի գործունեության անկախության խոչընդոտ

- Դատավորների գործունեության անկախության խոչընդոտը ներքին անկախության բացակայությունն է: Եթե անձն ունի ներքին անկախություն, որն է այլ խոչընդոտ չի կարող ներագրել, և հակառակը՝ ներքին անկախության պարագայում վերահսկողության տարբեր կարգերի առկայությունը ոչինչ չի փոխի:

- Երկար տարիների աշխատանքի փորձառություն ունեցող դատավորներն ավելի քիչ անկախ են, քանի որ, օրինակ՝ նախկինում «պատվերներ են կատարել» ու շարունակում են նույն տրամաբանությամբ: Այսինքն՝ խնդիրը ավելի խորքային է: Այդ խումբ դատավորները ոչ գրագիտության պակաս ունեն, ոչ էլ սպասում են, որ կաշառք տան, նրանք ուղղակի վախենում են իրենց կատարած գործերի համար:

- Միշտ չէ, որ դատավորի վրա անմիաջական ազդեցություն կամ ճնշման, ազդեցության լծակ կա՝ նրանց չեն զանգում, որն է կերպ չեն միջնորդում, պարզապես այդ խումբ դատավորները չեն կարող ուրիշ բան անել:

- Դատարանի գործունեության անկախության հիմնական խոչընդոտներից մեկը մեր ազգային մտածելակերպն է՝ ցանկացած դատավորի համար միշտ էլ գտնվում է առնվազն մեկ ծանոթ, ում մարդիկ խնդրում են միջնորդել իրենց համար:

Սոցիալական երաշխիքների բացակայությունը որպես դատավորի գործունեության անկախության խոչընդոտ

- Ֆինանսական փոխհատուցման ծավալը չի արտացոլում իրական աշխատանքն ամբողջությամբ: Դատավորներն այսօր աշխատում են 24 ժամ՝ շաբաթ և կիրակի օրերը ներառյալ: Ֆինանսական բավարար միջոցներն այս պարագայում ներքին անկախության ապահովման համար մեծ դեր են խաղում:

- Մեր երկրում կաշառակերությունը բխում է սոցիալական վիճակից, և այս հանգամանքը դրսևորվում է ոչ միայն դատավորների առնչությամբ: Օրինակ՝ բժիշկը գումար է վերցնում, քանի որ բավարար չափով չի վարձատրվում:

Վերադասի ազդեցությունը որպես դատավորի գործունեության անկախության խոչընդոտ

- Ներկայումս կան դատավորներ, ովքեր ունեն իրենց դիրքորոշումը և որոշման վերաբերյալ հիմնավորումները, սակայն գիտեն նաև, որ վերդաս ատյանների կարծիքն այլ է: Միննույն է, եթե դատավորն իր դիրքորոշումը կիրառի, վերադաս ատյանը կբեկանի դատական ակտը: Սա ինքնին կաշկանդվածություն է վերադաս ատյանից:

✚ *Մեր վերադաս դատական ատյանների շատ և շատ դատավորներ, ասում են, թե ի՞նչ էք դրել խորացել մանրուքների մեջ: Այ դա պետք է վերացվի, որովհետև պետք է խորանալ ցանկացած մանրուքի մեջ: Եթե մենք եկել ենք փոխելու, եկել ենք լավացնելու, ուրեմն պետք է սկսենք փոխել ամենափոքր և մանր բաները: Ու ինչքան դատավորը ազատ լինի այդ մանրուքներում, թեկուզ ստեղծագործական մոտեցումը, թեկուզ մեկանբանությունը... Այդ ամեն մի մեկնաբանումը ինքը ստեղծագործական մոտեցում է, դա շատ բարդ մտավոր աշխատանք է: Մի նորմը հազար ձևով կարող է մեկնաբանվել, հազար ձևի կարծիք և տեսակետ կարելի է արտահայտել դրա վերաբերյալ: Այս ամենը դատավորը ի վերջո սինթեզում է մեկ վճռի տեսքով: Այսինքն՝ պետք է թողնել ազատ մտածել, ազատ ստեղծագործել, չկաշկանդել: Դեսպոտիայով ոչ մի բանի չենք հասնի:*

Պատշաճ վերահսկողության և համակարգային պատասխանատվության բացակայությունը որպես դատավորի գործունեության անկախության խոչընդոտ

- Դատավորների գործունեության սխալների շտկման համար հետևողականությունը բացակայում է: Եթե ավելի արդյունավետ վերահսկողություն լինի և սխալ որոշումները վերանայվեն, շտկվեն, ապա դատավորները հետագայում ավելի քիչ ճնշումների և ազդեցության կենթարկվեն:

- Վերահսկողությունն անարդյունավետ է, քանի որ այսօրվա «վերահսկողները» իրենք էլ օգտվում են կոռուպցիոն ռիսկերից, օրինակ՝ եթե կա կաշառք, ապա կաշառքի մի մասն իրենցն է:

- Հաշվետվողականության պակասը կամ գործունեության վերահսկողության պակասը, ինչը մատնանշվել է, պետք է գործի ինստիտուցիոնալ տարբերակով: Այսինքն՝ սա պետք է

լինի ոչ միայն ֆորմալ զեկույցների ներկայացման տարբերակով, այլ պետք է կայանա բովանդակային քննարկում և դա պետք է տեղի ունենա հանրային քննարկման միջոցով: Պատասխանատվությունը չի ենթադրում բացառապես կարգապահական վարույթով պայմանավորված պատասխանատվություն, այլ նաև իր գործունեության մասին հաշվետվություն ներկայացնելու պարտականություն:

Դ. Եզրակացություն

Դատավորների գործունեության անկախության խոչընդոտների վերաբերյալ հանրային ընկալումները նույնականացնում են այնպիսի խնդիրներ, որոնց հասցեագրման գործում հանրությունը տեսնում և կարևորում է իր անմիջական մասնակցությունը: Հանրային մոտեցումները, այնուամենայնիվ, համակարգի ծառայություն մատուցողները և մասնագիտական խմբերն արտաքնապես ամբողջությամբ չեն կիսում, սակայն բովանդակային առումով ձևավորում են համաձայնություն: Այս մասին է վկայում այն հանգամանքը, որ ինքնագնահատման միջոցով համակարգի ծառայություն մատուցողներն առաջադրում են գրեթե այն բոլոր խնդիրները՝ միջնորդություններ, մարդկային գործոն, արդարադատության ոլորտի քաղաքականության կայունության բացակայություն, որոնք հանրությունը դիտարկում է ածանցյալ իր կողմից առաջադրված վերահսկողության, հաշվետվողականության բացակայության համար: Հատկանշական է, որ ինքնագնահատման ու մասնագիտական խմբերի գնահատման արդյունքները մեծ մասամբ համընկնում են և հաստատում են անկախության համար առկա խնդիրների անմիջական ազդեցությունը: Մասնագիտական խմբի գնահատականը հաստատում է վերադասի ազդեցության, պատշաճ վերահսկողության և համակարգային վերահսկողության անարդյունավետության վերաբերյալ հանրային մտահոգությունները, որոնց վերացման գործում հանրությունը կարևորում է իր մասնակցությունը: Նման հարցերի քննարկումները մատնանշում են նաև անկախության առնչությամբ պատասխանատվության դրսևորումներն ու հիմնական դերակատարներին:

Այն հանգամանքը, որ դատավորի գործունեության անկախության խոչընդոտները գրեթե նույնական կերպով տեսանելի են թե՛ հանրության համար, թե՛ համակարգի մասնագետների ինքնագնահատումներով, թե՛ մասնագիտական խմբերի գնահատականներով, կարող է հանդիսանալ անկախության խնդիրը արդարադատության ոլորտի խնդիրների մեջ առաջնային ճանաչելու ցուցիչ:

Ե. Մոնիթորինգի մասնակիցների առաջարկությունները

Դատավորի գործունեության անկախության մեծացումը համակողմանի և ընդգրկուն ջանքեր է պահանջում, որտեղ յուրաքանչյուրի մասնակցությունն առանցքային նշանակություն ունի: Նման ընդգրկվածությունն ապահովելու համար առաջարկվում է հետևյալը.

- Իրականացնել դատավորի դերի, գործառույթի վերաբերյալ հանրային իրազեկման արդյունավետ միջոցառումներ՝ դատավորի անկախ գործունեությանն աջակցելու հանրային մասնակցությունը մեծացնելու համար:
- Ներդնել դատավորների կողմից իր գործունեության «անօրինական միջնորդության» դեպքերի վերաբերյալ հաղորդում ներկայացնելու կարգեր:
- Մեծացնել համակարգային պատասխանատվության կարգերի արդյունավետությունը՝ բացառելով համակարգի խնդիրների համար դատավորին պատասխանատվության ենթարկելու կամ հայեցողական մոտեցմամբ դատավորների պատասխանատվության բացառման պրակտիկան:

2.1.4. Դատավորների անկախության մեծացման ուղիները

Ա. Հանրային ընկալումը

Դատարանների գործունեության անկախության մեծացման համար հանրության կողմից ներկայացված առաջարկությունները համապատասխանում են այդ խնդիրների վերաբերյալ հանրային կարծիքների բաշխվածության չափաբաժիններին: Այստեղ դատավորների անկախության մեծացման համար առաջարկվող քայլերից ամենամեծ բաժինը՝ 28.1%-ը կազմում է դատավորների գործունեության նկատմամբ հանրային վերահսկողության ձևավորման առաջարկը, իսկ այնուհետև 26.2% դատավորների պատասխանատվության կարգերի արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկը: Ընդ որում, պատասխանատվության կարգերի առաջարկից մոտ 7%-ը կոնկրետ մատնանշել է պատասխանատվության կարգերի վերացման պահանջը:

Դատարանների անկախությունը մեծացնելու քայլեր

Տարբերակներ	Տոկոսային բաշխվածություն
Ձևավորել դատավորների գործունեության նկատմամբ հանրային վերահսկողություն	28.1%
Բարելավել դատավորների պատասխանատվության կարգերի արդյունավետությունը	19.6%
Նպաստել դատավորների հաշվետվողականության բարձրացմանը	19.6%
Փոխել դատավորների նշանակման/ընտրության կարգը	17.1%
Վերացնել պատասխանատվության կարգերը	6.6%
Բարձրացնել դատավորների աշխատավարձը	5.9%
Այլ պատասխան	0.5%
Դժվարանում է պատասխանել	2.7%

Կարծիքների նման բաշխվածությունը վկայում է, որ դատավորների գործունեության խոչընդոտների և դրանց վերացման համար ներկայացված առաջարկությունների համար առկա է գիտակցված տարբերակում և ընկալում (*դատարանի գործունեության հաշվետվողականության բաժնում ներկայացվում են նաև հանրության կողմից հաշվետվողականության ապահովման նպատակները*):

Բ. Ինքնագնահատման արդյունքներն ու մեկնաբանությունները

Ինքնագնահատման արդյունքներով հանրության կողմից որպես դատավորների անկախության մեծացմանը նպաստող այնպիսի գործոնները, ինչպիսիք են հանրային վերահսկողության սահմանումը, պատասխանատվության մեխանիզմների բարելավումը և հաշվետվողականության բարձրացումը, կտրականապես մերժվել են:

Խիստ բացասաբար էր ընկալվել դատարանի գործունեության վերաբերյալ վերահսկողության և պատասխանատվության կարգերի ուժեղացման հանրային պահանջը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ցանկացած վերահսկողություն կամ պատժիչ մթնոլորտ բերում է անկախության անկման, իսկ դատական համակարգում վերահսկողական գործառույթը օրենքով տրված է եռաստիճան դատական համակարգին, որտեղ ստորադաս դատարանի ակտը կարող է վերանայվել կամ բեկանվել վերադասության կարգով:

Նման կառույցակարգերն անկախության մեծացման համար դիտարկվել են անարդյունավետ մի շարք հիմնավորումներով:

Ինքնագնահատման արդյունքների համաձայն՝ հանրային վերահսկողության և հանրային կարծիքի ճնշման հասկացությունները նույնականացվել են, և այդ հանգամանքը դիտարկվել է որպես դատավորի գործունեության անկախության վրա բացասական ազդեցություն:

Ինքնագնահատման ավելի փոքր արդյունքներով վերահսկողությունը դիտարկվել է նպաստող գործոն, այնուամենայնիվ, դրա իրացման կարգերը մտահոգություններ են առաջացրել:

Հանրային վերահսկողության անհրաժեշտության բացակայությունը

- Դատական իշխանության կազմում արդեն իսկ գործում են ինքնակառավարման մարմիններ, որոնց միջոցով վերահսկողությունն իրականացվում է: Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը ևս իրականացնում է վերահսկողական գործառույթ:

- Արդարադատության խորհրդի նիստերը, որոնք քննարկում է դատավորների գործունեության վերաբերյալ բողոքները, արդեն դռնբաց են, բայց քաղաքացիները երբեք այդ նիստերին չեն մասնակցում: Վերահսկողության այլ կարգեր չեն կարող ներդրվել:


- Դատարանների գործունեությունն արդեն գտնվում է հանրային վերահսկողության ներքո՝ datalex.am դատական տեղեկատվական կայքում հրապարակվում են գրեթե բոլոր գործերի վերաբերյալ տեղեկությունները, և դա բավարար է հանրային վերահսկողությունն ապահովելու համար: Բացի այդ, դատական նիստերի մեծ մասը դռնբաց է, հանրային մասնակցության համար կա հնարավորություն, այլ կարգի ներդրումն անօգուտ է:

- Ի համեմատություն նախորդ հինգ տարիների՝ ներկայումս հանրային լայնածավալ վերահսկողություն է ապահովվում լրագրողների շնորհիվ:

- Այն անձինք, ովքեր առնչվում են դատարանի հետ և չեն գոհանում, այնուհետև բողոքում են դատարանի գործունեությունից, արդեն իսկ իրացնում են հանրային վերահսկողություն:

- «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը հնարավորություն է տալիս յուրաքանչյուրին իրեն անհրաժեշտ տեղեկատվության համար դիմել դատարան և ստանալ այդ տեղեկատվությունը:

- Վերահսկողության լիազորությունը պատկանում է բացառապես վերաքննիչ և վճռաբեկ դատարաններին, այլ վերահսկողություն իրականացնելու անհրաժեշտություն չկա:

 *Էդ էն դատավորներին ա վերաբերվում, որոնք որ ինչ-որ խնդիրներ ունեն տարբեր բնագավառներում, իրանք չեն կարող մաքուր աշխատել, ինչ-որ անօրինական որոշումներ են կայացնում և այլն, էդ վախի ազդեցության տակ հետո դառնում են իրանց կայացրած որոշման գերի ամբողջ կյանքի ընթացքում: Ու էդ կատեգորիայի համար միգուցե այ էս մեխանիզմները պետք ա*

լինի, որպեսզի ինքը էդ որոշման ազդեցության տակ գերի չդառնա, նաև հասարակական ճնշումը բերի նրան, որ բոլորին վերջին հաշվով ձգի:

✚ «Առանձին ստեղծել վերահսկող կառույց անիմաստ է: Որովհետև երբ որ վերաքննիչ դատարանը կամ վճարբեկ դատարանը վերանայեց և ակնհայտ կոպիտ սխալ գտավ, արդեն իսկ տեսանելի է լինում և այդ դատավորին կարող են ցանկացած պատասխանատվության ենթարկել այլ ձևերով, էլ ինչի մի հատ էլ վերահսկողական մեխանիզմ ստեղծեն»:

Հանրային վերահսկողությունը որպես անկախությանը խոչընդոտող գործոն

- Հանրային վերահսկողությունը չի կարող դատավորի անկախության մեծացմանը նպաստող գործոն հանդիսանալ, քանի որ դատարանն իր գործունեությամբ անկախ է և հանրության վերաբերմունքով կաշկանդված չէ: Եթե ձևավորվի հանրային վերահսկողություն, ապա դատավորը կգործի հարմարվելով հանրության կարծքին:
- Հանրային վերահսկողության դեպքում դատավորը կաշկանդվում է, գործում է հանրային ճնշման ազդեցության ներքո:

Հանրային վերահսկողությունը որպես անկախությանը նպաստող գործոն

- Դատական նիստերի դահլիճում կողմերից բացի, այլ անձանց ներկայությունը կարևոր է ոչ միայն դատավորի, այլ նաև կողմերի համար: Դատական նիստերին մասնակցությունը դատավորի գործունեության անկախության բարձրացման միջոց կարող է հանդիսանալ:
- Հանրային վերահսկողությունը և հանրային հաշվետվողականությունը դրական երևույթ են, այնուամենայնիվ, պետք է ներդնել դրանց իրացման կարգերը:

✚ ...օրինակ ի՞նչ ի նկատի ունեն: Ենթադրենք 6 ամիսը մեկ պետք է դատավորը գա քաղաքի կենտրոնական հրապարակում կանգնի և այդ հանձնաժողովը ասի ինչ է իրենից ներկայացնու՞մ:

✚ ...միգուցե հանրության մեջ ստեղծվի մի մարմին, որը կվերլուծի, կոնկրետ կընտրի թիրախ, թիրախային խումբ: Կուսումնասիրի գործունեությունը, գործերի, քննության ժամկետների ձգձգում, կողմերի հետ շփումների բացառում, ասենք ընդհանուր կուսումնասիրի: Հետո մամուլի միջոցով տեղյակ կլինեն ամեն ինչին, խնդրեմ: Բայց ով է խանգարում անել դա հիմա:

Գ. Մասնագիտական գնահատման արդյունքներն ու մեկնաբանությունները

Հանրային վերահսկողության առնչությամբ մասնագիտական մոտեցումներն ավելի շատ արտացոլում են ինքնագնահատման մոտեցումները՝ բացառելով հանրային

վերահսկողության դերակատարումը դատավորի գործունեության անկախության մեծացման գործում: Նման տեսակետի համար հիմնականում ներակայացվում է այն փաստարկը, որ վերահսկողությունն ինքնին կաշկանդող գործոն է:

Մասնագիտական մոտեցումների այն փոքրաթիվ խումբը, որը հակված է հանրային վերահսկողությունը որպես դրական և դատավորի գործունեության անկախությանը նպաստող գործոն դիտարկել, պնդում է, որ այլ գործոններից դատավորի հնարավոր կախվածությունն այդ դեպքում կբացառվի: Բացի այդ, հանրային մասնակցության և վերահսկողության պարագայում գործընթացները հանրության համար ավելի ընկալելի կդառնան:

Հանրային վերահսկողությունը որպես անկախությանը խոչընդոտող գործոն

- Վերահսկողության առկայության պարագայում դատավորն առաջնորդվում է հետևանքի նկատմամբ իր անձնական, մասնագիտական պատասխանատվությունը բացառելու սկզբունքով, և նախապատվությունը տալիս է հանրության պահանջները բավարարելուն, եթե նույնիսկ դրանք մասնագիտական մոտեցումներով պաշտպանված չեն:

- Եթե դատավորն իր կայացրած որոշման համար պատասխանատվության ենթարկվի կամ պատժվի, ոչ ոք դատավոր չի աշխատի, քանի որ հանրությունը դատավորից արդարություն է սկսնկալում, իսկ դատավորը մատուցում է թե՛ արդարություն, թե՛ արդարադատություն:

- Ցանկացած տեսակի վերահսկողություն կաշկանդող գործոն է, հետևաբար ինչքան վերահսկողությունը նվազի, այնքան դատավորն ավելի անկաշկանդ կաշխատի:

- Դատարանի գործունեության նկատմամբ հանրային վերահսկողությունը նույնն է, ինչ վերահսկողությունը, օրինակ՝ բժշկի գործունեության նկատմամբ, թե ինչպես է բժիշկը վիրահատություն իրականացնում: Մա անընդունելի է:

- Հաշվետվողականության պակաս չկա, քանի որ 6 ամիսը մեկ անընդհատ հաշվետվություններ են պատրաստվում:

✚ «Ախր ես չեմ կարողանում հասկանալ, դատավորը ու՞մ պետք է հաշվետու լինի: Իր գործունեության հաշվետվությունը ամեն 6 ամիսը մեկ ամփոփվում է, դեպարտամենտը ամփոփում է որ ասենք քննվել է 60 գործ, բեկանվել է 3-ը, օրինակ, այսքան բողոք չի բավարարվել, հաշվետվություն գործողության համար: Բհարկե դա կարող է դեր խաղալ, տեսնի եթե մարդը քննել է 150 գործ կամ քրեական գործերից 35 գործ է քննել, 15 հատ բեկանում ունի, ասեն ախպեր 50%

բեկանում ունենալու, կամ նորմալ եւ աշխատում, կամ էլ չես տիրապետում մասնագիտությանդ՝ իրավաբանությանը: Բսկ մնացած, եւ չեմ կարող ասել, ու՞մ հաշվետու լինեն, հենց հաշվետու եղար մեկին, ուրեմն կախված եւ իրենից»:

Հանրային վերահսկողությունը որպէս անկախությանը նպաստող գործոն

- Եթէ դատավորը կախվածություն ունի իր վերադասից կամ կաշկանդվածություն այլ գործոններից, հանրային վերահսկողության դեպքում դրանցից ավելի պաշտպանված կլինի, քանի որ վերադասի կամ այլ անհարկի ազդեցության պարագայում կարող է արդարացված բացատրություն ունենալ, որ այլ կերպ գործել չի կարող: Այնուամենայնիվ, վերահսկողությունը չպետք է նույնականացվի կամ ընկալվի որպէս անմիջական ազդեցություն կամ ներգործություն:

- Անձնական հարց ունենալու պարագայում բոլորը փորձում են ազդել դատավորի գործունեության վրա, իսկ հանրային վերահսկողության առկայության պարագայում դա կարող է նվազել:

- Հանրային վերահսկողության առկայության պարագայում հանրության համար գործընթացներն ավելի պարզ ու ընկալելի կլինեն, հետևաբար, լավ է, որ հանրությունը վերահսկողություն իրականացնի:

Լրացուցիչ վերահսկողության անհրաժեշտությունը բացակայում է

- Խնդիրը, ըստ էության, լավագույնս լուծված է դատական տեղեկատվական կայքի՝ datalex.am-ի միջոցով, որտեղ համացանցի միջոցով կարելի է վերահսկել դատարանների գործերի քանակը, կայացված ակտերի որակը և այլն: Այլ հարց է, թե որքան ժամանակ է պահանջվում դատարաններից, որպէսզի datalex.am համակարգ մուտքագրվեն դատարանի որոշումները և որքանով է համացանցը հասանելի Հայաստանի ողջ բնակչության համար:

- 2015 թվականից հետո ցանկացած անձի, պաշտոնյայի ազդեցություն դատավորի վրա բացառվելու է, քանի որ դրա համար Սահմանադրության փոփոխություններով ներդրվել են իրական հիմքեր: Բարձրագույն դատական խորհրդում դատավորներն ունենալու են հինգ ներկայացուցիչ, այլ հարց է, թե դատավորները կկարողանան ազդեցիկ լինել՝ ներկայացնելով Բարձրագույն դատական խորհրդում այնպիսի դատավորներ, ովքեր կկարողանան ներկայացնել դատավորների շահերը: Այսինքն՝ ամեն ինչ դատավորներից է կախված լինելու:

Դ. Եզրակացություն

Դատավորի գործունեության անկախության մեծացման հարցում հանրության, ինքնագնահատման և մասնագիտական գնահատման մոտեցումները ընդհանուր առմամբ համընկնում են: Այն դեպքերում, երբ որոշում կայացնելու համար դատավորն ունի կաշկանդվածություն վերադասից կամ այլ անձանցից, հանրային վերահսկողությունը համարվել է լավագույն միջոցը դատավորին պատշպանելու համար: Այնուամենայնիվ, ինքնագնահատման և մասնագիտական գնահատման մոտեցումներով հանրային վերահսկողությունն ինքնին դիտարկվել է որպես դատավորի գործունեությունը կաշկանդող հանգամանք, ավելին՝ այն գնահատվել է որպես իր կողմից կայացվող որոշման և գործունեության հետևանքների նկատմամբ ներքին պատասխանատվությունից ազատվելու հնարավորություն:

Ինքնագնահատման արդյունքների վերլուծությունը վկայում է, որ համակարգի ծառայություն մատուցողները հանրային վերահսկողության նոր կարգերի ներդրումն անհրաժեշտ չեն համարում, քանի որ իրավական համապատասխան կարգերն արդեն ներդրված են: Այնուամենայնիվ, ընդգծվում է նաև, որ հանրությունն այդ կառույցակարգերից չի օգտվում, քանի որ դրանց գործնական կիրառման արդյունավետ հնարավորություններ չկան: Այս հանգամանքը հաստատում է, որ վերահսկողության կարգից հանրային ակնկալիքն արդարացված է և այն բարեփոխումների, հանրային ավելի կայուն և իրավական ներգրավվածության ապահովման կարիք ունի:

Ե. Մոնիթորնգի մասնակիցների առաջարկությունները

Դատավորի գործունեության անկախության մեծացման համար առաջարկությունները ներառում և զարգացնում են դատական համակարգի առնչությամբ ներկայացված առաջարկությունները, մասնավորապես.

- Նպաստել դատական իշխանություն-հանրություն համագործակցության արդյունավետ կարգերի ձևավորմանը: Մա ենթադրում է, որ դատավորը հանրությանը դիտարկի որպես արդարադատության իրականացման գործընկեր և հակառակը՝ հանրությունը գիտակցի, որ իր մասնակցությամբ օժանդակում է դատավորի աշխատանքին:

- Մեծացնել դատական իշխանության ինքնակառավարման մարմինների դերը դատական համակարգի վերաբերյալ կայացվող որոշումներում (օրենսդրական և քաղաքականության մշակման գործընթացներ):

- Միջոցառումներ ձեռնարկել օրենսդրական և պրակտիկ մակարդակում դատավորի գործունեության ոչ պաշտոնական միջամտությունները և միջնորդությունները կանխելու համար:

- Բարձրացնել դատարանների նկատմամբ հանրային վերահսկողության կարգերի արդյունավետությունը և այդ ուղղությամբ հանրային իրազեկման աշխատանքներ իրականացնել:

2.2. Հաշվետվողականություն

Հաշվետվողականության վերաբերյալ հանրային կարծիքի ամփոփումն ու վերլուծությունը ներկայացրել է հանրության ակնկալիքներն ու կարիքը դատարանների գործունեության հաշվետվողականության վերաբերյալ, հետևյալ հարցերի վերլուծության միջոցով՝

- ✓ հաշվետվողականության անհրաժեշտությունը,
- ✓ հաշվետվությունը ընդունող նախընտրելի կառույցները/անձիք,
- ✓ հաշվետու լինելու համար ենթադրվող հարցերի շրջանակը:

2.2.1. Հաշվետվողականության անհրաժեշտությունը և հաշվետվությունն ընդունող/նախընտրելի կառույցը/անձը

Ա. Հանրային ընկալումը

Հանրային հարցման մասնակիցների 82,5%-ը գտել է, որ դատարանների գործունեության վերաբերյալ հաշվետվողականությունը խիստ անհրաժեշտ է (տես գծապատկեր 35): Ընդհանուր վերցրած միայն շատ փոքր զանգվածն է կարծում, որ անհրաժեշտ չէ, որպեսզի դատաիրավական մարմինները հաշվետվու լինեն իրենց գործունեության համար՝ 3,7%:

Հաշվետվողականության խիստ անհրաժեշտության մակարդակն ավելի է մեծանում, երբ հարցին մոտենում ենք դատաիրավական մարմինների հետ *առնչություն ունեցողների*

տեսանկյունից: Նրանք դրա անհրաժեշտությունը կարևորում են ավելի շատ դատավորների համար՝ 86,3%-ը (*տե՛ս* գծապատկեր 36): Այս խմբում բացակայում են հարցի մասին կարծիք չունեցողները:

Հանրային հարցման արդյունքները վկայում են, որ հանրային ընկալմամբ դատավորներն իրենց գործունեության համար պետք է հաշվետու լինեն հանրությանը՝ 34,2%, որը շատ մոտ է իրենց վերադասին հաշվետու լինելու տարբերակին՝ 34,8%-ը:

Այնպիսի ինստիտուտների առջև, ինչպիսիք են ՀՀ Նախագահը, ՀՀ Ազգային Ժողովը, դատարանների կողմից հաշվետու լինելու ակնկալիքը հանրության շրջանում ավելի փոքր է՝ ՀՀ նախագահ՝ 10,8%, և Ազգային Ժողով՝ 8,8%:

Որոշ քաղաքացիներ (դատավորների օրինակով՝ 1,8%)՝ մոտավորապես 100-ից երկուսը, կարծում են, որ դատաիրավական մարմինները ոչ մեկի/ օղակի պարտավոր չեն հաշվետու լինել:

Հատկանշական է, որ հաշվետվողականության առնչությամբ հանրությունը դրսևորում է պահանջատիրություն և հետևողական է իր կողմից առաջադրած տարբերակները պաշտպանելու հարցում:

Բ. Ինքնագնահատման արդյունքներն ու մեկնաբանությունները

Ինքնագնահատման արդյունքների հիմնական մասը պնդում է, որ հաշվետվողականության և առավել ևս հանրային հաշվետվողականության անհրաժեշտությունը բացակայում է: Դատավորի հաշվետվողականությունն արդեն իսկ առկա է հանձինս դատավորի կողմից կայացված որոշումների հրապարակայնության, և հաշվետվողականության լրացուցիչ կարգերի անհրաժեշտություն չկա: Բացի այդ, դատավորի հաշվետվողականությունը ենթադրում է հաշվետու լինել միայն օրենքի առջև, իսկ հաշվետվողականության այլ կարգի առկայությունը հանգեցնում է անկախության սահմանափակման: Նույն խմբի համոզմամբ, քանի որ հաշվետու լինելու խնդիր չկա, հետևաբար, որևէ մարմին կամ ինստիտուտ չի կարող ներկայացվել, որի առաջ այդ հաշվետվողականության սկզբունքը հնարավոր կլինի իրագործել:

Ինքնագնահատման իրականացման արդյունքում ակնհայտ է դարձել, որ ավելի փոքր խմբի կողմից հանրության առաջ քաշված հանրային հաշվետվողականության պահանջը հավանության է արժանացել: Այս խումբը համոզված է, որ հաշվետվողականությունը կմեծացնի նաև հանրության կողմից համակարգի ճանաչելիությունը:

Հանրային հաշվետվողականությունը որպես դատավորի գործունեության վրա

բացասական ազդեցություն

- Դատավորի հաշվետվողականության կարգ գոյություն չունի, դրա նպատակահարմարությունը բացակայում է, քանի որ հաշվետվողականությունը հանգեցնում է կախվածության:

- Դատավորների գործունեության հաշվետվողականության և անկախության միջև պետք է հավասարակշռություն ապահովել, պետք է հնարավորինս սահմանափակ լինի միջամտությունը դատավորի անկախությանը: Այս առումով, դատավորի գործունեության պարբերական ստուգումները, գնահատման կարգերի ներդրումն անընդունելի է: Դատավորի գործունեության հաշվետվողականության պահանջը չի բխում անկախ դատական համակարգ ունենալու սկզբունքից:

- Դատավորները պետք է հաշվետու լինեն միայն օրենքին և ուրիշ ոչ ոքի:
- Դատավորը նախ և առաջ պետք է հաշվետու լինի ինքն իր առջև:

Հանրային հաշվետվողականությունը որպես դատավորի գործունեության վրա դրական

ազդեցություն

- Դատական իշխանության գործունեության համար սահմանված հաշվետվողականության ներկայիս կարգերը սպառիչ են: Առավել ևս, երբ դրանք ներդրվել են հաշվի առնելով առաջադեմ երկրների փորձը:

- Դատավորներն իրենց կողմից կայացրած դատական ակտերով արդեն իսկ հաշվետու են համապատասխան հանձնաժողովների և դատական իշխանության ինքնակառավարման մարմինների առջև, օրինակ՝ արդարադատության խորհուրդը քննում է քաղաքացու բողոքը, դատավորի նկատմամբ վարույթ է հարուցում: Այս կարգը բավարար է, և հաշվետվողականության այլ դրսևորումների անհրաժեշտություն չկա, օրինակ՝ դատավորը կարիք չունի մամուլի ասուլիս հրավիրել, բացատրություններ ներկայացնել:

- Դատավորների գործունեությանն առնչվող օրենսդրության համաձայն՝ դատավորներն արդեն հաշվետու են Վճռաբեկ դատարանի նախագահին, և դա արդարացված է, քանի որ այդ վերահսկողության բացակայության պարագայում կգործի անօրինականությունը:

- Դատավորները պետք է իրենց գործունեությամբ հանրության առջև հաշվետու լինեն: Հանրային հաշվետվողականության խնդիրն այն է, որ համակարգը հաշվետու լինի, որպեսզի հասարակությունը ճանաչի դատավորին, հասկանա, թե ով է դատավորը: Այս պարագայում

հանրության մոտ վստահություն է ձևավորվում դատավորի և դատական համակարգի նկատմամբ:

- Եթե հանրային հաշվետվողականության խնդիրն առաջ է քաշվել հասարակության կողմից, ուրեմն պետք է բաց լինել հանրության առջև:

Գ. Մասնագիտական գնահատման արդյունքներն ու մեկնաբանությունները

Մասնագիտական խմբերի մոտեցումները գրեթե կրկնում են ինքնագնահատման մոտեցումները՝ ներկայացնելով հանրային հաշվետվողականության ազդեցության վերաբերյալ թե՛ դրական, թե՛ բացասական կարծիքներ: Բացասական ազդեցությունը դիտարկվում է որպես դատավորի անկախության սահմանափակման գործոն, իսկ դրական ազդեցությունը՝ որպես ժողովրդավարության սկզբունքներից բխող պարզ կարգի իրացման պահանջ:

Հանրային հաշվետվողականության անհրաժեշտությունը բացառվել է այն պարագայում, երբ այն բովանդակային առումով նույնականացվել է վերահսկողության կամ հրահանգներ տալու հետ: Այս դեպքում դատավորի ներքին համոզմամբ և սեփական պատասխանատվությամբ որոշում կայացնելու հնարավորությունը վերացվում է, քանի որ դատավորը գործում է այն անձի կամ մարմնի ցուցումներով, որին հաշվետու է: Բացի այդ, հիմնավորվել է նաև, որ դատավորի անհատական հաշվետվողականությունն արդեն իրականացվում է, և խնդիրը համակարգային հաշվետվողականության ապահովումն է:

Հանրային հաշվետվողականությունը որպես դատավորի գործունեության վրա բացասական ազդեցություն

- Դատավորի նկատմամբ հաշվետվողականություն սահմանելու պարագայում նա կգործի այնպես, ինչպես ցուցում կամ հրահանգ կտա հաշվետվություն ընդունող անձը կամ կառույցը:

- Դատավորը վերադաս չունի, հետևաբար վերադասին հաշվետվողականության պահանջը չի կարող իրատեսական լինել:

Հանրային հաշվետվողականությունը որպես դատավորի գործունեության վրա դրական ազդեցություն

- Հանրության ակնկալիքը՝ լինել հաշվետու և՛ վերադասի, և՛ հանրության առջև, իրատեսական է, և դա ժողովրդավարության իրացման պարզ կարգ է:

Հաշվետվողականության գործող մեխանիզմների արդյունավետության հիմնավորումներ

- Անհրաժեշտ է տարանջատել դատավորի հաշվետվողականությունը և դատարանների՝ ինստիտուցիոնալ հաշվետվողականությունը: Այս պարագայում դատավորի հաշվետվողականությունն ամբողջությամբ ապահովված է գործունեության թափանցիկությամբ՝ դատական գործը, դատական ակտերը, պատճառաբանություններն ամբողջությամբ հասանելի են: Այսինքն՝ դատավորի գործունեության վերջնական արդյունքի՝ դատական ակտի, հասանելիությունը դատական տեղեկատվական կայքի՝ datalex.am-ի գործիքների միջոցով զարգացվեց. դատական ակտերը ավելի հեշտ հասանելի դարձան: Դա ապահովեց նաև գործունեության թափանցիկությունը. դատավորի աշխատանքի արդյունքի հասանելիությունը հանգեցնում է դատավորի գործունեության թափանցիկության:

- Հանրային հաշվետվողականությունն ու վերադասին հաշվետու լինելու պահանջներն արդեն իրացվում են, քանի որ դատավորի գործունեությունը բաց է և թափանցիկ:

- Դատավորների գործունեության վերաբերյալ արդեն բավարար հաշվետվողականություն կա՝ բացահայտված գործեր, չբացահայտված գործեր, Եվրոպական դատարանի կողմից կայացված որոշումներ, դրանք ներկայացվում են հանրությանը:

Դ. Եզրակացություն

Դատավորի գործունեության հաշվետվողականության վերաբերյալ հանրային ակնկալիքներն ու կարիքները վերլուծելիս՝ ակնհայտ է, որ հաշվետվողականության համար հանրությունն առավելագույն պահանջատիրություն է դրսևորում: Այս հանգամանքը վկայում է այն մասին, որ մեծ է նաև դատարանների գործունեությունից հանրության ակնկալիքները, առավել ևս, երբ տարբեր հարցերի քննարկման շրջանակներում հասատատվել է, որ քաղաքացիները դիմում են դատարան որպես վերջին միջոց՝ իշխանության այլ մարմինների անօրինական գործունեության շտկման կամ խախտումների վերացման ակնկալիքով:

Չնայած այս հանգամանքին՝ համակարգի ծառայություն մատուցողների ինքնագնահատման և մասնագիտական խմբերի գնահատման արդյունքներով հանրային

հաշվետվողականության նպատակահարմարությունը բացակայում է, քանի որ մի դեպքում հաշվետվողականությունը դիտարկվում է որպես դատավորի գործունեության ճնշման լրացուցիչ լծակ, մյուս դեպքում՝ դրա անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ համակարգի ներսում դատավորներն արդեն հաշվետու են: Մինևույն ժամանակ, առաջադրվում է համակարգային հաշվետվողականության ներդրման պահանջը, ինչը դիտարկվում է որպես թե՛ դատավորի գործունեության, թե՛ համակարգի վերաբերյալ տեղեկատվության տարածման արդյունավետ միջոց:

Ե. Մոնիթորնգի մասնակիցների առաջարկությունները

Դատավորի գործունեության և համակարգի հաշվետվողականության խնդիրը կարևոր է, անուամենայնիվ պետք է ճշգրիտ հավասարակշռում ապահովել հաշվետվողականության պահանջի և անկախության սկզբունքի պաշտպանության համար: Այս նպատակով, ներկայացվում են հետևյալ առաջարկությունները.

- Բարելավել դատական տեղեկատվական datalex.am համակարգը՝ դրանում ներառելով ավարտված քրեական գործերով դատական հսկողության շրջանակներում մինչդատական վարույթի ընթացքում կայացված դատարանի որոշումները: Դատական ակտերի հրապարակումից բացի, կրկնվող քրեական, քաղաքացիական, վարչական գործերով հրապարակել նաև հանրությանը մատչելի մասնագիտական մեկնաբանություններ:
- Պաշտոնական տեղեկատվական կարգերից բացի սահմանել և ներդնել նաև դատավորի, դատավորին օժանդակող անձնակազմի հետ հանդիպումների համակարգված հնարավորություններ, օրինակ՝ դատարաններում ունենալ բաց դռների օր, որի ժամանակ քաղաքացիները կարող են այցելել դատարանի շենք, հարցեր տալ դատավորներին՝ արդարադատության իրականացման վերաբերյալ:

2.2.2. Հաշվետու լինելու համար ենթադրվող հարցերի շրջանակը

Ա. Հանրային ընկալումը

Հաշվետվողականության համար հարցերի շրջանակը մեծ է և բազմազան, սակայն քաղաքացիներն ամենաշատը պահանջում են, որ դատավորները հաշվետու լինեն ստորև ներկայացվող բոլոր հարցերի վերաբերյալ միաժամանակ:

Հաշվետու լինել ... վերաբերյալ		Դատա- րան
1.	Բոլոր հարցերի	23,7
2.	Գործի ընթացքում կիրառած կարգերի, ապացույցների, դատական որոշումների հիմքերի	7,5
3.	Արդար և ազնիվ, ոչ սխալ աշխատանքի	6,8
4.	Բաց և թափանցիկ աշխատանքի	4,3
5.	Հասարակությանը օգտակար լինելու, մարդկանց շահերը պաշտպանելու	4,3
6.	Գործի վարման ընթացքի, սահմանված ժամկետում ավարտելու, մինչև վերջ բացահայտելու	3,0
7.	Կանոնավոր, պարտաճանաչ, արդյունավետ աշխատանքի	2,3
8.	Քրեական աղմկահարույց գործերի	2,1
9.	Հասարակությանն իրենց իրավունքներին և պարտականություններին ծանոթացնելու	2,1
10.	Օրենքների փոփոխությունների մասին հանրությանը տեղյակ պահելու	2,0
11.	Վերին օղակներից չհովանավորվելու, անկախ, չծախված լինելու, կոռուպցիայի բացակայության	1,6
	Դժվարանում է պատասխանել	36,1
	Ոչ ադեկվատ պատասխաններ	4,2
	Ընդամենը	100

Առաջարկված կոնկրետ հարցերի մեջ ամենամեծ կշիռը ստանում է այն տարբերակը, որը վերաբերում է դատական գործի ընթացքում կիրառած իրավական ակտերին, ապացույցներին, դատական որոշումների հիմքերին (դատավորների դեպքում, օրինակ՝ 7,5%):

Հատկանշական է նաև, որ հարցված քաղաքացիները բացահայտել և ներկայացրել են հանրային հաշվետվողականության անհրաժեշտության նպատակներն ու հիմնավորումները: Այստեղ հանրության հիմնական ակնկալիքը դատարանի գործունեության արդար օբյեկտիվ, օրինական աշխատանքի ապահովումն է:

Հաշվետվողականության նպատակներ		%
1.	Արդար, օբյեկտիվ աշխատելու համար	23,5
2.	Օրինական, ճիշտ աշխատելու համար	22,6
3.	Կոռուպցիոն ռիսկերից խուսափելու համար	15,4
4.	Աշխատանքի որակը բարձրացնելու, թերությունները վերացնելու համար	13
5.	Դատական համակարգը բարձիթողի, անկառավարելի վիճակից դուրս բերելու համար	7,8
6.	Հասարակության վստահությունը, գոհունակությունը մեծացնելու համար	3,7
7.	Հավատ չկա, վերահսկողությունն անիմաստ է	1,4
8.	Դատական գործերը ժամանակին, մինչև վերջ բացահայտելու համար	0,3
Դժվարանում է պատասխանել		11,6
Ոչ ադեկվատ պատասխաններ		0,7
Ընդամենը		100

Բ. Ինքնագնահատման արդյունքներն ու մեկնաբանություններ

Ինքնագնահատման արդյունքները բաժանվում են գրեթե համաչափորեն: Մի մասը պնդում է, որ հանրությանը հետաքրքրող տեղեկատվությունն արդեն իսկ հասանելի է, և այդ տեղեկությունները քաղաքացիներին հասցնելու համար հավելյալ ջանքեր գործադրելու կարիք չկա:

Գործող դատական տեղեկատվական կայքը՝ datalex.am, արդեն հրապարակում է քաղաքացու կողմից ակնկալվող տեղեկությունները: Համապատասխան տեղեկատվություն է առկա նաև ընդհանուր դատարանի գործունեության վերաբերյալ: Ընդհանուր իրավասության դատարաններում քաղաքացիների համար հասանելի են նաև համապատասխան դիմումների, հայցադիմումների ձևանմուշները:

Ինքնագնահատման արդյունքների մեկ այլ խումբ կիսում է հանրային ընկալմամբ հաշվետվողականության անհրաժեշտության առնչությամբ առաջադրված մոտեցումները: Բացի այդ, այս խումբը ներկայացնում է լրացուցիչ հարցերի շրջանակ կամ կարգեր , որոնք անհրաժեշտ է ներկայացնել հանրությանը հետաքրքրող հարցերը հասանելի դարձնելու համար:

Հանրության կողմից ակնկալվող տեղեկատվությունը արդեն հասանելի է

- Դատական տեղեկատվական datalex.am կայքն արդեն ներկայացնում է այն տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է հանրությանը կոնկրետ գործի վերաբերյալ: Այդ կայքում հրապարակվող դատական ակտը ներկայացնում է ամբողջական տեղեկություն, եթե քաղաքացին հարցեր ունի դրա վերաբերյալ, կարող է ակտը տանել-գնալ փաստաբանի մոտ, բացատրություններ ստանալ: Բացի datalex.am տեղեկատվական կայքից, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայքը ևս բավականին մատչելի է, իսկ քանի որ միջազգային դատարանների կայացրած ակտերը մեր իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են կազմում, կարող է նաև այդ դատական ակտերին հասանելիություն ունենալ:

- ՀՀ Վճռաբեկ դատարանը հրապարակում է համապատասխան հաշվետվություններ՝ քանի հայց է ներկայացվել, դատարանները ինչ ծանրաբեռնվածությամբ են աշխատել, քանի արդարացման որոշում է եղել և այլն: Այսինքն՝ դատական համակարգի առկա իրավիճակի վերաբերյալ տեղեկացվածության բարձրացման համար քայլեր ձեռնարկվում են:

- Դատարանի վարչական շենքերի միջանցքներում սեղանների վրա դրված են դիմումների, հայցադիմումների օրինակելի ձևերը, որոնց միջոցով ներկայացվում են դատարան դիմելու կանոնները: Բացի այդ, դատարանի շենքում քաղաքացուն ուղեկցում են, բացատրում ուր գնա, ինչպես դիմի:

- Օրինակելի ձևաթղթերի օգտագործման առնչությամբ նախկինում խնդիրներ են արձանագրվել, մասնավորապես՝ եղել են դեպքեր, երբ դատարանի աշխատակիցներն օգնել են քաղաքացիներին լրացնել ձևաթղթերը և այդ հանգամանքը հետագայում շահարկվել է, երբ քաղաքացու դիմումը, հայցադիմումը մերժվել է:

- Դատարան դիմելու կանոնների վերաբերյալ տեղեկությունները կարող են ներկայացնել փաստաբանները, առավել ևս կան փաստաբաններ, ովքեր նման ծառայություններն անվճար են մատուցում: Նույն սկզբունքով հասանելի են նաև հասարակական կազմակերպությունները:

Հարցեր, որոնց վերաբերյալ հաշվետվողականությունն անհրաժեշտ է

- Դատարանների գործունեության վերաբերյալ օբյեկտիվ տեղեկատվություն ներկայացնելն անհրաժեշտ է՝ ինչպես է աշխատում դատարանը, ինչ աշխատանք է կատարում, որքանով են մարդիկ գոհ կամ դժգոհ: Դա ավելի կհեշտացնի դատավորի աշխատանքը, քանի որ իրազեկված քաղաքացու հետ աշխատելն ավելի դյուրին է:

Դատարան դիմելու կանոնները կարևոր են, քանի որ ամեն մարդ պետք է իմանա և կարողանա պաշտպանել իր իրավունքները: Սա նույնիսկ անհրաժեշտ է ուսուցանել դպրոցից:

- Անհրաժեշտ է, որպեսզի լինեն դատարանի գործունեությունը, կառուցվածքը, անձանց իրավունքներն ու պարտականությունները ներկայացնող տեղեկատվական թերթիկներ:

- Անհրաժեշտ է նաև, որպեսզի ներկայացվի դատարանի գործունեության վերաբերյալ դրական փորձը:

✚ ...պատրաստ ենք ցանկացած ժամանակ միջազգային կառույցների հետ համագործակցել՝ թեկուզ բրոշյուրների նման ինչ-որ նյութեր պատրաստենք ու տարածենք ժողովրդի մեջ:

✚ ...կարող ենք տեղեկացնել դատական նիստերի ընթացքում վարվեցողության կանոնների մասին:

✚ Օրինակ՝ արտերկրում բաց դռների օր է հայտարարվում՝ հարց ու պատասխան է կազմակերպվում, քաղաքացիները ծանոթանում են աշխատասենյակներին, շփվում են դատավորի հետ: Կարծում եմ, որ այդ անմիջական կապն էլ որոշակի դրական փորձ է:

✚ Արտերկրում փորձ կա, նաև, որ օրինակ՝ դատարաններում ցուցահանդես են կազմակերպում: Մարդիկ գալիս են դատարան՝ ծանոթանալու արվեստի գործերի հետ, բնականաբար, էդ ընթացքում իրանք կամա թե ակամա առնչվում են կողմերի հետ, ովքեր եկել են դատարան, սպասում են ինչ-որ նիստի:

✚ ...ուսանողները գալիս են, նստում են դատական նիստերի դահլիճում, մենք արդեն հասկանում ենք, որ իրանք ուսանող են: Քաղաքացին չի գա, նստի էլի: Ինքը պարապ չի էլի: Ինչքան էլ պարապ լինի, իրան հետաքրքիր չի, գա նստի դատարանում ինչ-որ մի նիստ լսի, չէ:

- Դատավորի գույքի, եկամուտների վերաբերյալ հաշվետվողականությունն անհրաժեշտ է, և նման տեղեկությունները պետք է ներկայացնել հանրությանը:

- Անհրաժեշտ է տեղեկություն ներկայացնել դատավորի ընդհանուր գործունեության վերաբերյալ՝ ինչով է զբաղվում դատավորը, ինչ գործառույթ է իրականացնում: Ավելի շուտ դատավորի անձի, քան համակարգի հաշվետվության խնդիրն է, որպեսզի հասարակությունը ճանաչի դատավորին, որպեսզի հասարակությունն ընկալի, թե ով է դատավորը:

- Ցանկալի է, որ որոշումների հետ միաժամանակ հրապարակվեն օրենքների մեկնաբանություններ, որպեսզի հանրային ընկալումը մեծանա:

Հանրության կողմից առաջադրված հարցեր, որոնց վերաբերյալ հաշվետվողականությունն անհրաժեշտ չէ

- Դատավորին պատասխանատվություն ենթարկելու մասին տեղեկատվությունը հանրությանը չպետք է ներկայացվի, չնայած այդ տեղեկատվությունը ևս court.am կայքում հասանելի է: Այս հարցը դատական ակտի հետ կապ չունի: Հանրությունն այդ տեղեկատվության համար պահանջ է ներկայացնում՝ բամբասանքի համար: Դատավորներին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ տեղեկատվությունը լսելով՝ հանրությունը միգուցե բավականություն ստանա, որովհետև կկարդա, որ ի վերջո պատժվեց դատավոր, ով այս կամ այն գործողությունն է իրականացրել:

Գ. Մասնագիտական գնահատման արդյունքներն ու մեկնաբանությունները

Հանրային ընկալման և դատարանի, դատավորների գործունեության վերաբերյալ տեղեկությունների ներկայացման առնչությամբ մասնագիտական խմբերի մոտեցումները համընկնում են ինքնագնահատման արդյունքների հետ այն մասով, որ ակնկալվող տեղեկատվությունն արդեն համարում են հասանելի: Բացի այդ, առավել շատ համընկումներ են առկա նաև անհրաժեշտ տեղեկատվության ծավալի և տեսակների առնչությամբ: Մասնագիտական որոշ խմբեր, օրինակ՝ գտնում են, որ անհրաժեշտ է տեղեկություններ ներկայացնել դատավորի գործունեությունը կարգավորող օրենսդրության վերաբերյալ և բացատրություններ ներկայացնել քաղաքացիներին հետաքրքրող հարցերի վերաբերյալ:


Հանրության կողմից ակնկալվող տեղեկատվությունն արդեն հասանելի է

- Դատական տեղեկատվական կայքը՝ datalex.am արդեն ապահովում է դատական համակարգի նշված գործառույթների վերաբերյալ բավականաչափ թափանցիկությունը ու տեղեկատվությունը: Տեղեկատվություն ստանալու հանրային նման պահանջը պայմանավորված է հասարակության շրջանում առկա մշտական դժգոհությամբ:

Հարցեր, որոնց վերաբերյալ հաշվետվողականությունն անհրաժեշտ է

- Անհրաժեշտ է հանրությանը տեղեկացնել դատավորի աշխատանքի, դատավորի գործունեությունը կարգավորող օրենսդրության, այդ թվում նաև դատավորի վարքագծի կանոնների վերաբերյալ:

- Քաղաքացիներն իրավական բնույթի հարցեր ունեն, որոնք անհրաժեշտ է պարզաբանել, բացատրել:

 *Եթե ժողովրդին ընկալելի լեզվով ցույց ես տալիս դատարանը, ժողովուրդը արագ հասկանում է, թե ինչ է դատարանը:*

- Հանրության համար այդ տեղեկությունները ներկայացնելն անհրաժեշտ է, քանի որ հաճախ քաղաքացիները դատական նիստերի վերաբերյալ պատշաճ չեն իրազեկվում, այսինքն՝ դատական իշխանության գործունեությունը հաճախ է որակվում ոչ պատշաճ:

Դ. Եզրակացություն

Հաշվետվողականության հարցերի շրջանակի, ինչպես նաև տեղեկատվության հասանելիության և բնույթի վերաբերյալ հանրային ընկալումները, համակարգի ծառայություն մատուցողների կողմից ինքնագնահատման, մասնագիտական գնահատման արդյունքներով ընդգծվում է, որ գործող հաշվետվողականության և տեղեկատվության հասանելիության ապահովման մեխանիզմը քիչ արդյունավետ է: Թեև դատարանի գործունեության վերջնական արդյունքները՝ դատական ակտերի տեսքով, հիմնականում բաց է, հասանելի և հրապարակային, սակայն հանրությանը դա տեսանելի և ընկալելի չէ: Մաքացատրվում է այն հանգամանքով, որ հանրության համար որպես հաշվետվողականության առարկա, կարևորվում է ոչ միայն դատարանի վերջնական ակտի հասանելիությունը, այլ նաև ընթացակարգային հարցերի և որոշումների կայացման գործընթացը: Նման տեղեկություններն են, որ հանրային վստահության ձևավորմանը նպաստող գործոն են: Դատավորի կողմից կայացված որոշման առնչությամբ բացատրություններ ներկայացնելու հանրային ակնկալիքը վկայում է, որ քաղաքացու համար գործի շրջանակներում պատճառահետևանքային կապն ընկալելի չէ: Թեև օբյեկտիվորեն նման գործառույթ չի կարող իրականացվել, այնուամենայնիվ, դատական իշխանության ինքնակառավարման մարմինները և դատարանին սպասարկող կառույցները պատասխանատվություն պետք է ստանձնեն նման դերակատարությունն ապահովելու համար: Այն դեպքում, երբ տեղեկատվության հասանելիության, հաշվետվողականության ակնկալվող տարբերակը չի ապահովվում կազմակերպված, համակարգային գործունեության սկզբունքով, այդ դերը ստանձնում են զանգվածային լրատվության միջոցները: Վերջիններիս գործունեությունն այդ ուղղությամբ երբեմն կարող է ոչ մասնագիտական մոտեցումներ դրսևորել կամ ընտրողաբար

մոտենալ գործերի լուսաբանմանը, որի հետևանքով համակարգի գործունեության համակողմանիությունը հանրության համար մատչելի չի դառնում:

Հանրության կողմից հաշվետվողականության համար առաջադրված հարցերն ուղղակիորեն վկայում են, որ հաղորդակցության գործող ֆորմալ կարգերն արդարացված չեն: Ավելին՝ դատական համակարգի ծառայություն մատուցողներն իրենք ևս հակված են, որ իրենց գործունեության վերաբերյալ տեղեկությունները և ընթացակարգերը հանրությանն ավելի մատչելի դառնան, ինչով պայմանավորված դատավորների աշխատանքը ևս առավել դյուրին կդառնա:

Ե. Մոնիթորինգի մասնակիցների առաջարկությունները

Հաշվետվողականության հարցերի շրջանակի և անձանց վերաբերյալ ներկայացված առաջարկությունները վերարտադրում են ընդհանուր հաշվետվողականության վերաբերյալ ներկայացված առաջարկությունները՝ ընդգծելով դրանց առանձնահատկությունները:

- Բարելավել դատական տեղեկատվական datalex.am կայքի և դատարանի գործունեության վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ տրամադրող court.am կայքի գործունեությունը: Ապահովել յուրաքանչյուր վարչական շրջանի դատարանի գործունեության վերաբերյալ մանրամասն և հանրությանը մատչելի տեղեկատվություն՝ հնարավորություն տալով քաղաքացիներին նաև այլ հարցեր բարձրացնել և քննարկել:
- Սահմանել և ապահովել առանձին գործերի վերաբերյալ պարբերական հաշվետվություններ և կազմակերպել դրանց շուրջ հանրային քննարկումներ:
- Ներդնել և ապահովել դոնբաց դատական նիստերի ուղիղ հեռարձակման պրակտիկա, որի հիման վրա այնուհետև կիրականացվեն մասնագիտական քննարկումներ:
- Մշակել հանրային հաշվետվողականության կարգ՝ հավասարակշռելով անկախության սկզբունքի պաշտպանությունը:

3. ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Դատախարակական համակարգի նկատմամբ ներկայումս իրականացվող վերահսկողության կարգերը և դրանց ցանկալի եղանակի համադրությունը՝ հանրային ընկալմամբ բացահայտելու նպատակով, սույն ոլորտի ուսումնասիրությունը բաժանվել էր երկու մասի.

- ✓ Որ մարմիններն/ինստիտուտներն են, որ այսօր ունեն առավելագույն ազդեցություն դատախարակական համակարգի վրա,
- ✓ Որ մարմինները/ինստիտուտները պետք է իրականացնեն վերահսկողություն:

Այս երկու խումբ հարցերն առանձին ուղղվել են հանրությանը և դրանց արդյունքներն առանձին-առանձին քննարկվել են ինքնագնահատման ժամանակ ու մասնագիտական խմբերում: Ստորև ներկայացվում են այդ հարցերն ըստ ենթավերնագրերի:

3.1. Որ մարմիններն/ ինստիտուտներն են ունենում առավելագույն ազդեցություն

Ա. Հանրային ընկալումը

Հանրային ընկալման արդյունքները ցույց են տալիս, որ, ըստ հարցվողների, ներկայումս դատավորների գործունեության վրա ազդեցություն ունեցող կառույցների ցանկում գտնվում են դատախազությունը 39,9%, այնուհետև փոքր տարբերությամբ նախագահի աշխատակազմը 37,8%, գործադիր իշխանությունը 32,3%, ապա՝ օրենսդիր իշխանությունը 31,2%:

Հանրային ընկալմամբ՝ միջազգային կազմակերպությունների, դեսպանատների, հասարակական կազմակերպությունների և ՋԼՄ-ների ազդեցությունը դատարանների գործունեության նկատմամբ շատ փոքր է:

Բ. Ինքնագնահատման արդյունքներն ու մեկնաբանությունները

Ինքնագնահատման ընկալումներով՝ դատարանների գործունեության վրա որևէ ազդեցություն չկա, առավել ևս հանրային հարցման արդյունքներով մատնանշված կառույցներ կողմից: Ավելին՝ ինքնագնահատման արդյունքներով բացատրություններ են ներկայացվել այն մասին, թե ինչու է հանրությունը դատարանների գործունեության նկատմամբ նման ազդեցություն ընկալում: Այունամենայնիվ, այս հարցի շուրջ հավաքագրած կարծիքները կարելի է պայմանականորեն բաժանել 2 հիմնական խմբերի:

Դատարանների գործունեության նկատմամբ որևէ ազդեցություն չկա

- Դատարանի գործունեության վրա որևէ անձի կամ կառույցի ազդեցություն չկա, հանրության կողմից նման ընկալումը հիմնված է ասեկոսենների վրա, առավել հստակ՝ մամուլի հրապարակումների և լուսաբանումների վրա:
- Դատարանների գործունեության նկատմամբ ազդեցության նման ընկալումն իրականության հետ որևէ առնչություն չունի: Եթե նման ազդեցություն լիներ, ապա արդարացման դատավճիռները գնալով կնվազեին, ոչ թե կաճեին:

Դատախազության ենթադրյալ ազդեցության վերաբերյալ հանրային ընկալման շարժառիթները

- Դատական քննության ընթացքում դատախազությունը գործում է որպես դատավարության մի կողմ, ով ավելի արհեստավարժ է իրականացնում իր գործառույթները և քաղաքացիների համար այդ գործունեությունն ընկալվում է որպես ազդեցություն:
- Պատահում է, որ դատախազության մեկ-երկու աշխատակից հրապարակային խոսում են դատական համակարգի կոռումպացվածության մասին, և նման ելույթներն ընկալվում են որպես դատարանի գործունեության վրա հնարավոր ազդեցություն:

<ul style="list-style-type: none">✚ Դատախազությունը մի ժամանակ կարող էր, հիմա չի կարողանում:✚ ... հնում կարողանում էր օգտագործել էն տեխնոլոգիաները, ասենք, եթե ժամանակին մեկը ինչ-որ բան էր արել, աչք էին փակել, հետո սկսում էին էդ անձին շանտաժի ենթարկել, և այլն և էդպես ճնշման ենթարկել:✚ Հյուսիսային պողոտայի գործեր կամ Սասնա ծռեր, մարտի 1-ի դեպքեր կամ չգիտեմ ինչ դեպքեր, եթե ասենք նմանատիպ քաղաքականացված ինչ-որ հարցեր ա լինում, բոլորի մոտ էն տպավորությունն ա, որ վերջ՝ հանրապետության նախագահը որոշումը կայացրել է, մնացածը կատարում են:✚ ... եթե ինչ-որ բան փոխվում ա, մենք ենք դա միայն տեսնում, հասարակությունը դա չի տեսնում:

... եթե կան փորձեր ազդեցություն ունենալու, ինչն ա լինելու էր ազդեցությունը չանելու հետևանքները էլի: Այսինքն՝ էլի գալիս ենք իմ ասածին, որ դատավորն ինքը ներքին անկախություն պիտի ունենա, թե չէ տենց կարող ա գյուղապետից էլ կախված լինի դատավորը, եթե տենց մեկնաբանենք էլի:

Գ. Մասնագիտական գնահատման արդյունքներն ու մեկնաբանությունները

Մասնագիտական կարծիքներն այս հարցի շուրջ խիստ տարբերվող և երբեմն իրարամերձ են, այնուամենայնիվ կան մի շարք դիրքորոշումներ, որոնք վերահաստատվեցին տարբեր մասնագիտական խմբերում՝ ներկայացնելով հավաքական պատկերացում այն մասին, թե դատախազությունը, գործադիր իշխանությունն ու ՀՀ նախագահը որքան ազդեցություն են ունենում արդարադատության իրականացման վրա:

Դատախազության ազդեցության հանրային ընկալման վերաբերյալ

- Հանրային ընկալմամբ ազդեցությունը համընդհանուր է, քանի որ հանրության կողմից իշխանության ճյուղերի նկատմամբ վստահության մակարդակը ցածր է:
- Քրեական դատավարության ոլորտում դատախազությունը ջանում է ազդեցություն ունենալ, և դա բնական է, քանի որ դատախազությունը «մրցակից կողմ է»: Դատախազության ցուցումով իրականացվում է նախաքննություն, այնուհետև գործն ուղարկվում է դատարան: Դատարանը ստուգում է կատարված նախնական քննությունը, և դատախազությունը պնդում է, որ քննությունն ամբողջությամբ ճիշտ է, և դատարանը պետք է կոնկրետ մատնանշված կերպով գործի: Հանրության ընկալմամբ դա ազդեցության դրսևորում է:
- Քրեական դատավարության ոլորտում դատախազությունը կարևոր ազդեցություն ունի, քանի որ քննիչն աշխատում է դատախազության ցուցումով:
- Դատարանի գործունեության նկատմամբ դատախազության ազդեցությունը դրսևորվում է այնքանով, որ դատարանում մեղադրանք պաշտպանող դատախազը կարող է այնուհետև բողոքարկել դատական ակտը: Բացի այդ, դատախազությունը հետևողական է, որ օրենքը կիրառվի ամբողջությամբ և տառացիորեն:
- Հանրային ընկալումը ճշգրտությամբ վերարտադրում է իրականությունը, պարզապես հանրության համար տեսանելի չէ այն, որ դատախազը, դատավորը հատուկ օրեր ունեն, երբ գործերի վերաբերյալ զեկուցում են հանրապետության նախագահին:

Դատարանների գործունեության նկատմամբ այլ կառույցների հնարավոր ազդեցության վերաբերյալ

- Դատարանի գործունեությունը գործադիր իշխանությունից շատ բանով է կախված: Օրինակ՝ բյուջեն, որի շրջանակներում սահմանվում են դատական իշխանության ծախսերը, անմիջական ազդեցություն է ունենում արդարադատության իրականացման աշխատանքի կազմակերպման վրա:

- Նախագահի աշխատակազմի ազդեցություն չի կարող լինել, պարզապես հանրային ընկալումը ենթադրում է, որ նախագահի աշխատակազմը պարտադրում է դատավորներին կոնկրետ որոշումներ կայացնել:

- Դատավորի գործունեության նկատմամբ նախագահի աշխատակազմի ազդեցության քաղաքացիների ընկալումը պայմանավորված է այն հանգամանքով, որ քաղաքացիները մեծ քանակությամբ դիմումներ են ներկայացնում նախագահի վերահսկողական ծառայություն:

- Դատավորի գործունեության նկատմամբ կոնկրետ գործերով հանրապետության նախագահն անձնական ազդեցություն է ունենում:

- Դատավորի գործունեության շրջանակներում ոչ թե իրավական նորմերն են որոշիչ, այլ սուբյեկտիվ նորմերը, որոնք դրսևորվում են ծանոթի միջնորդության, ազդեցության միջոցով:


- Դատավորի գործունեության վրա նախագահի աշխատակազմն ուղղակիորեն չի ազդում, դա ավելի շատ դրսևորվում է այլ միջնորդ օղակների միջոցով:


- Օրենսդիր իշխանությունը կարող է ազդեցություն գործել օրենսդրական ակտերի ընդունման միջոցով:

- Դատախազության գործունեությունն այնքանով, որքանով այն դատարանում մեղադրանք է պաշտպանում, գուցե ընկալվի որպես ազդեցություն:

- Դատավորի գործունեության վրա առավելապես ազդեցություն ունի դատավորի վերադասը, օրինակ՝ դատավորն իր վարույթում գտնվող գործը քննարկում է վերադասի հետ:

- Գործադիր իշխանության ազդեցությունը դրսևորվում է նաև «ծանոթների» համար միջնորդություններով:

 Այսօր չկա դատավոր, որ այսպիսի արտահայտություն չանի. «Չեն թողնում, որ աշխատենք»:

 Բարեփոխումները դեռ ժողովրդին չի հասել: Տեսանելի կլինի:

Դ. Եզրակացություն

Այսպիսով, սույն հարցի քննարկման ընդհանրացման արդյունքում կարելի է նկատել, որ հասարակության ավելի մեծ հատված այս հարցի վերաբերյալ տեսակետ է հայտնել առ այն, որ դատախազությունը, գործադիր իշխանությունն ու ՀՀ նախագահն ունեն մեծ ազդեցություն արդարադատության համակարգի վրա, սակայն մասնագիտական կարծիքները՝ մասնագիտական խմբերի և ինքնագնահատում իրականացնողների, խիստ հակասական էին և իրարամերժ, ինչի արդյունքում հասարակության արտահայտած տեսակետը հաստատվեց և հիմնավորվեց միայն մասնագիտական խմբերում, սակայն ամբողջությամբ հերքվեց ինքնագնահատման արդյունքում:

Ինքնագնահատման արդյունքում հաստատական հնչում էր միատեսակ կարծիք առ այն, որ հանրային այն տեսակետը, թե դատախազը, երկրի նախագահը կամ գործադիր իշխանությունն ազդեցություն ունեն դատական համակարգի գործունեության վրա՝ պայմանավորված է հանրության տեղեկացվածության ցածր մակարդակով, այնինչ մյուս մասնագիտական խմբերում կարծիքներ հնչեցին, որ երկրի նախագահն ազդեցություն է ունենում դատական համակարգի վրա հիմնականում քաղաքական հնչողություն ունեցող գործերով, իսկ դատախազությունն ամեն ջանք գործադրում է պաշտպանելու իր կողմից հիմնավորված մեղադրանքը «ցանկացած գնով»:

Ե. Մոնիթորինգի մասնակիցների առաջարկությունները

Առանցքային է, որ ինքնագնահատման արդյունքում բարձրացված խնդիրների լուծումները ևս առաջարկում են դատավորները, ովքեր ստեղծված իրավիճակից որպես լավագույն ելք տեսնում են հանրության հետ առավել սերտ ու թափանցիկ աշխատանքը՝ հանրային կապերի մասնագետների և հատուկ ռազմավարության մշակման միջոցով, ինչն առավել հասանելի ու տեսանելի կդարձնի հանրության համար դատական համակարգի դերն ու անկախությունը:

3.2. Որ մարմինները/ինստիտուտները պետք է իրականացնեն վերահսկողությունը

Ա. Հանրային ընկալումը

Դատաիրավական մարմինների անկախ և հաշվետու գործունեության ապահովման հետ մեկտեղ կարևոր է, որպեսզի վերջիններիս աշխատանքի նկատմամբ իրականացվի վերահսկողություն: Հանրային ընկալումները ներկայացնում են, թե ինչքանով է անհրաժեշտ, ինչու և ինչ օղակների միջոցով պետք է իրականացվի այդ վերահսկողությունը:

Հանրային հարցման մասնակիցների գերակշիռ մասը համարում է, որ անհրաժեշտ է խիստ վերահսկողություն իրականացնել դատավորների գործունեության նկատմամբ՝ մոտ 86%-ը, և միայն շատ քիչ հատվածն է կարծում, որ վերահսկողության անհրաժեշտություն չկա՝ 1,6%-ը:

Դատարան դիմաձևերը վերահսկողության անհրաժեշտություն չեն տեսել 2,8%-ը, ինչը մոտ 1,2%-ով ավել է չօգտվողների ներկայացրած պահանջից:

Հանրության կողմից նաև առաջադրվել են այն կառույցները, որոնք, ըստ հանրային ընկալման, պետք է վերահսկողություն իրականացնեն դատավորների գործունեության նկատմամբ:

Կառույցներ/անձիք		
1.	Հանրությունը/ՀԿ-ները	27,0%
2.	Կառավարությունը	18 %
3.	Հանրապետության նախագահը	17,3 %
4.	Ազգային ժողովը/պատգամավորները	14,2 %

Ըստ հանրության՝ դատավորների գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու ամենահիմնական նպատակը արդար, օբյեկտիվ աշխատանքի ապահովումն է՝ 23,5%, իսկ երկրորդ տարբերակը՝ օրինական, ճիշտ աշխատելը:

Բ. Ինքնագնահատման արդյունքներն ու մեկնաբանությունները

Ինքնագնահատման ընկալումները բացարձակ անհամաձայնություն են արտահայտում հանրության կողմից դատավորների գործունեության նկատմամբ վերահսկողության վերաբերյալ: Չհամաձայնվելու հիմնական փաստարկն այն է, որ դատավորների գործունեությունը բավարար թափանցիկ է և վերահսկողության անհրաժեշտություն չկա:

... Իշխանությունների տարանջատման սկզբունքն արդեն իսկ գործում է, դատական իշխանությունը որևէ մեկին հաշվետու չէ, առավել ևս, չի կարող վերահսկողության ենթարկվել մեկ այլ իշխանության ճյուղի կողմից:

Այնուամենայնիվ, դատավորները, փորձելով հասկանալ նման հանրային պահանջարկի ձևավորման հիմքերը, առաջ են քաշել մի շարք հանգամանքներ, որոնք կարող էին պատճառ հանդիսանալ նման անհրաժեշտության առաջացման համար:

- Դատարանի գործունեությունը բավականին թափանցիկ է և հանրության վերահսկողության համար կան բոլոր անհրաժեշտ նախապայմանները, այլ հարց է, թե որքանով է քաղաքացին նախաձեռնող ու հետաքրքրված ստանալու համար այդ տեղեկատվությունը:
- Դատական նիստերը դռնբաց են, լրագրողները հնարավորություն ունեն մասնակցել և լուսաբանել դատական նիստերը, ինչպես նաև ցանկացած քաղաքացի կարող է ներկա գտնվել ցանկացած դռնբաց դատական նիստի, այնուհետև այդ տեղեկատվությունը տարածվում է համացանցով, այսինքն՝ արդեն կա բավարար վերահսկողություն, այլ հարց է թե որքանով է այդ տեղեկատվությունը բավարարում հանրային հետաքրքրասիրությունը:
- Հանությունը տեղյակ էլ չի իշխանությունների հավասարկշման և փոխզույգման կարգերի առկայության մասին, ինչի արդյունքում ցանկանում է անձամբ վերահսկել դատարաններին:

Գ. Եզրակացություն

Հանրության շրջանում լայն պահանջարկ գտած տեսակետն առ այն, որ անհրաժեշտ է իրականացնել խիստ վերահսկողություն դատական համակարգի նկատմամբ՝ կտրականապես մերժվեց դատական համակարգի ներկայացուցիչների կողմից՝ այդ հարցն ուղղակիորեն կապելով իրենց անկախության սահմանափակման հետ և բացառելով՝ հանրության որպես իրենց գործատուների նկատմամբ հանրային վերահսկողական կարգի դիտարկումը: Սակայն հարկ է նկատել, որ հասարակական պահանջարկը վերահսկել իր վճարված հարկերի միջոցով ձևավորված և հենց հանրությանն արդարադատության ծառայություններ մատուցող մարմնի գործունեությունը, բավականին բնական է և այժմ էլ առկա են որոշակի օրենսդրական երաշխիքներ հասարակական վերահսկողական

գործառույթի իրականացման համար, օրինակ՝ հասարակական մշտադիտարկումը (monitoring): Այնուամենայնիվ, հանրության համար դրանք բավարար չեն:

Ո՞ր մարմինները պետք է իրականացնեն վերահսկողություն դատական համակարգի նկատմամբ հարցը խիստ քննադատական արձագանք գտավ հատկապես դատավորների շրջանում, ովքեր կտրականապես մերժում են որևէ վերահսկողության հնարավորությունը կառավարության կամ երկրի նախագահի կողմից՝ դիտարկելով այն որպես նրանց անկախության ուղղակի սահմանափակում և իշխանությունների փոխզսպման և համասարակշռման սկզբունքի խախտում: Հանրության հանդեպ հաշվետու լինելու սկզբունքին, որպես կանոն, շատ ազատական են վերաբերվում երիտասարդ սերնդի դատավորները, սակայն ընդգծելով, որ դա միակ վերահսկողական օղակը կարող է հանդիսանալ դատական համակարգի՝ որպես անկախ իշխանության ճյուղի, նկատմամբ:

Դ. Մոնիթորինգի մասնակիցների առաջարկությունները

Հասարակության շրջանում դատաիրավական համակարգում տեղի ունեցած բարեփոխումներն առավել տեսանելի և հասկացված դարձնելու համար անհրաժեշտ է.

- Դատական նիստերի ուղիղ հեռարձակում, ինչը հասարակական առավել լայն հասանելիության ու հանրային վերահսկողության հնարավորություն կապահովի:
- Միջոցներ ձեռք առնել և բացառել դատարանի նկատմամբ վերադաս դատարանների վերահսկողական գործառույթը (գործնականում):
- Դատարանների գործունեության նկատմամբ վերահսկողական գործառույթը հարկավոր է պատվիրակել կազմակերպչական բնույթ ունեցող և արդյունավետ գործունեություն ծավալող դատարանների ինքնակառավարմամբ են մարմնին:

4. ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԱՐ ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Իրավահավասարության, մրցակցության և արդար դատական քննության այլ հատկանիշների առնչությամբ հանրությանն առաջադրվել է կոնկրետ հարց՝ թե որքանով է նրանց կարծիքով դատարանի կողմից ապահովվում կողմերի իրավահավասարության սկզբունքը:

4.1. Դատարանի կողմից կողմերի նկատմամբ հավասար վերաբերմունքի դրսևորումը

Ա. Հանրային ընկալումը

Հանրային ընկալումների համաձայն՝ հարցվողների 57%-ը համոզված է, որ դատարանի կողմից կողմերի նկատմամբ հավասար վերաբերմունք չի ապահովվում: Մոտ 3%-ն է գտնում, որ դատարանի կողմից լիովին ապահովվում է կողմերի նկատմամբ հավասար վերաբերմունքը:

Կողմերի նկատմամբ հավասար վերաբերմունքի ապահովման մակարդակը	
Տարբերակներ	Տոկոսային բաշխվածություն
Դժվարանում է պատասխանել	7,6%
Բացարձակ ոչ	57,0%
Ավելի շուտ ոչ	15,8%
Ավելի շուտ այո	16,9%
Լիովին այո	2,7%

Կողմերի նկատմամբ անհավասար վերաբերմունքի առկայության վերաբերյալ հանրային ընկալումն առավել մեծանում է դատարանի հետ առնչություն ունեցողների պարագայում: Դատարանի հետ առնչություն ունեցող քաղաքացիների մոտ 66%-ը գտնում է, որ դատարանները կողմերի նկատմամբ հավասար վերաբերմունք բացարձակ չեն դրսևորում: Միաժամանակ առնչություն ունեցողների 1,3%-ը գտնում է, որ կողմերի նկատմամբ լիովին ապահովվում է իրավահավասարությունը:

Կողմերի նկատմամբ ոչ հավասար վերաբերմունքի դրսևորումներից հանրության կողմից ամենահաճախը հիշատակվել է «գործի փաստերը ներկայացնելու հնարավորությունից զրկելու» տարբերակը՝ 16%:

Իրավիճակներ	Դատավորներ
1. Գործի փաստերը ներկայացնելու հնարավորությունից զրկելու դեպքում	16,0
2. Միայն մի կողմի հետ առանձին հանդիպման դեպքում	12,3
3. Միջնորդություններ ներկայացնելու հնարավորությունից զրկելու դեպքում	11,7
4. Ելույթներ ունենալու հնարավորության մերժման դեպքում	8,0
5. Իր գործը ներկայացնելու համար ժամանակ տրամադրելու մերժման դեպքում	5,3
6. Մյուս կողմի փաստաթղթերին ծանոթանալու հնարավորության մերժման դեպքում	4,8
Դժվարանում է պատասխանել	41,9
Ընդամենը	100

Բ. Ինքնագնահատման արդյունքներն ու մեկնաբանությունները

Ինքնագնահատման արդյունքներով հանրային ընկալումը՝ կողմերի նկատմամբ ոչ հավասար վերաբերմունքի դրսևորման առումով, բացառվում է: Ինքնագնահատման մոտեցումները պնդում են, որ հանրային ընկալումը չի արտահայտում իրականությունը: Ավելին՝ գործում են օրենսդրական համապատասխան կարգավորումներ, որոնցով դատավորը կաշկանդված է, և նման վարքագիծ չի կարող դրսևորել:

Ինքնագնահատման շրջանակներում ներկայացված փաստարկներով՝ հանրային նման ընկալումը պայմանավորված է մրցակցային դատավարության շրջանակներում կողմերի փաստարկները ներկայացնելու կարողությամբ: Եթե կողմը իրավական բավարար կարողություններ չի դրսևորում և քաղաքացիական գործերով իր փաստարկները չի կարողանում ներկայացնել, ապա կարող է տպավորություն ստանալ, թե դատարանը հավասարության սկզբունքը չի պահպանում:

Օրենսդրական և իրավակիրառ պրակտիկան, որը բացառում է կողմերի նկատմամբ անհավասար վերաբերմունքի դրսևորումը

- Դատարանի գործունեությունը թափանցիկ է, հրապարակային, յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի և կարող է ծանոթանալ գործին առնչվող նյութերին: Դատաքնության մի կողմի հետ առանձին հանդիպումը կարգապահական

պատասխանատվության հիմք է, և պատասխանատվության հիմքով բացառվում է նման վարքագծի դրսևորումը:

- Կողմերի նկատմամբ ոչ հավասար վերաբերմունքի դրսևորումը, ինչպես նաև դատավորի կողմից անաչառության վերաբերյալ կասկածը դատավորին ինքնաբացարկ հայտնելու հիմք է, հետևաբար նման վարքագիծ դատավորը չի կարող դրսևորել:

- Կողմերի իրավահավասարության սկզբունքը բավականին զարգացել է, և կողմը, ում իրավունքները խախտվում են, անմիջապես բողոքարկում է:

- Երբ կողմերն օգտվում են իրենց դիրքորոշումը և փաստարկները ներկայացնելու իրավունքից, դատավորը չի կարող ընդհատել դա կամ արգելել օգտվելու այդ իրավունքից:

- Քրեական դատավարությունում կողմերի իրավահավասարության սկզբունքի խախտումը բացառվում է, քանի որ գործն ամբողջ ծավալով ներկայացվում է դատարանում:

- Կողմերի նկատմամբ ոչ հավասար վերաբերմունքի դրսևորումը բացառվում է նույնիսկ տեխնիկական առումով՝ դատարանի շենք մուտք գործելիս դատավորի հետ առանձին տեսակցության հնարավորությունները սահմանափակ են:

«... վերջին տարիներին արձագանքները գուցե էդքան չեն ստանում, բայց քաղաքացիական դատավարությունում էդ լրիվ բաց ա, այսինքն՝ երկու կողմերն էլ ազատ են: Համոզված եմ, որ ոչ մի քաղաքացիական գործով նման խոչընդոտ չի ստեղծվում էլի, որովհետև ոնց կարա ապացույցը բերի, դատավորն ասի՝ չէ, չեմ ընդունում»:

«... ունի՞ փաստ ու չի կարողանում ներկայացնել դատարան: Ես դա արժանահավատ չեմ համարում: Եթե նույնիսկ նիստի ընթացքում դատարանը չընդունի իրան, կարելի է դուրս գալ, մի հատ գրասենյակով հանձնել դատարանին էլի: Կա նաև հետևյալը, որ ասենք, եթե գործի հետ առնչություն չունեցող 5 ժամանոց էլույթներ են ուզում ունենալ, հնարավոր է, որ դատավորը միջամտի, ասի՝ հարգելի՛ս, մի քիչ կարճ, սեղմ ներկայացրա: Էտ ա ընդամենը»:

Կողմերի նկատմամբ ոչ հավասար վերաբերմունքի հնարավոր դրսևորումները

- Քաղաքացիական գործերով գուցե կողմերի նկատմամբ դատարանի վերաբերմունքն ընկալվի ոչ հավասար, քանի որ մրցակցային սկզբունքին համապատասխան՝ յուրաքանչյուր կողմ պետք է ներկայացնի իր փաստարկները, իսկ նման հնարավորության բացակայության դեպքում հավասարությունը խախտվում է:

- Կողմերի նկատմամբ հավասար վերաբերմունքը խախտվում է, երբ դատավորը դատախազի հետ առանձին հանդիպում է ունենում, ինչը կարող է պատահել մեր պրակտիկայում, թեև դա կոռուպցիոն ռիսկ է:

- Կողմերի նկատմամբ հավասար վերաբերմունքի խախտումը՝ դատավոր-դատախազ առանձին հանդիպման դրսևորմամբ, բարձրացվել է պաշտպանական կողմից, փաստաբանների կողմից, սակայն առնվազն 3-4 տարի առաջ:

Կողմերի նկատմամբ ոչ հավասար վերաբերմունքի դրսևորման հանրային ընկալման դրդապատճառները

- Կողմերի իրավահավասարության կամ զենքերի հավասարության սկզբունքի խախտման հանրային ընկալումը հնարավոր է՝ հիմնված է այն դրսևորումների վրա, երբ մրցակցային դատավորությունում փաստաբանը համարժեք գիտելիքներ չի դրսևորում:

✚ ...հաճախ ա լինում, որ զանգում, ասում են՝ մի հատ դատավորին կտաք, խոսամ հետը, բան ունեմ ասելու, կամ նիստի ժամանակ ասում են՝ կարանք Ձեզ մի հատ առանձին բան ասենք, չենք ուզում էն կողմը լսի էլի: Էտ նան երևի հասարակության ընկալման համար է, բայց ես անձամբ ոչ մեկի հետ չեմ հանդիպում:

Գ. Եզրակացություն

Դատարանի կողմից կողմերի հավասարության սկզբունքի պահպանման առնչությամբ հանրային ընկալումները մատնանշում են, որ մեծամասնության համար այդ սկզբունքը խախտվում է: Ընդ որում, հավասարության սկզբունքի խախտումների վերաբերյալ պնդումների թիվն ավելի է մեծանում դատարանի հետ առնչություն ունեցողների պարագայում: Որպես նման խախտման դրսևորումներ՝ հանրությունն ինքնուրույն ներկայացնում է այն դրսևորումները, որոնց վրա հիմնվելով հանգել է նման եզրակացության: Հանրության համար դատավորի՝ կողմի հետ առանձին հանդիպումը, գործի փաստերը ներկայացնելու հնարավորությունից զրկելը դիտարկվում են որպես զենքերի հավասարության հիմնական խախտումներ: Ի տարբերություն հանրության պնդումներին՝ համակարգի ինքնագնահատողները համոզված են, որ իրավահավասարության սկզբունքը դատարանների կողմից չի խախտվում, սակայն ընթացակարգային որոշ կարգավորումներ կարող են հանրության համար նման ընկալում ձևավորելու հիմք հանդիսանալ: Մրա հիմնական պատճառը մրցակցային դատավարությունում վիճաբանությունների և իր դիրքորոշումների ներկայացման ժամանակ կողմերի կարողությունն է: Եթե անձն իրավական

պատշաճ ներկայացվածություն չի ապահովում, ապա նրա ընկալմամբ իրավահավասարության սկզբունքը խախտվում է: Իրավահավասարության սկզբունքի պահպանումը, ըստ ինքնագնահատումների, երաշխավորված է օրենքով, հետևաբար խախտումների համար պատասխանատվությունը դատավորի համար նման վարքագիծը կանխարգելող միջոց է:

Հատկանշական է, այնուամենայնիվ, որ քրեական գործերի շրջանակներում դատախազության նկատմամբ տարբերակված վերաբերմունքի և այդ հիմքով իրավահավասարության սկզբունքի խախտման դրսևորումների համար ինքնագնահատման շրջանակներում հիմնականում հղում է կատարվում անցյալում գործող պրակտիկային: Միաժամանակ, ընդգծվում է, որ վերջին տարիներին նման պրակտիկան ևս իսպառ վերացված է: Կողմերի նկատմամբ իրավահավասարության պահպանման վերաբերյալ հանրության և համակարգի ծառայություն մատուցողների մոտեցումների տարբերությունը վկայում է, որ արդար դատական քննության իրավունքի արդյունավետ ապահովման և երաշխավորման համար անհրաժեշտ է լրացուցիչ ջանքեր ներդնել:

Դ. Մոնիթորինգի մասնակիցների առաջարկությունները

Արդար դատական քննության կարևորագույն բաղադրիչ հանդիսացող կողմերի իրավահավասարության սկզբունքի արդյունավետ ապահովման և երաշխավորման համար առանցքային է համարվում հետևյալ միջոցառումների իրականացումը.

- Խթանել և բարձրացնել պետության կողմից տրամադրվող անվճար իրավական աջակցության որակը, ընդլայնել ծավալները:
- Դատավորների և դատավորին օժանդակող անձնակազմի համար իրականացնել կողմերի նկատմամբ հավասար վերաբերմունքի դրսևորման դասընթացներ:
- Ներդնել և ապահովել կողմերի նկատմամբ հավասար վերաբերմունքի դիտարկումների, այդ հիմքով հաղորդումներ ներկայացնելու, քաղաքացիներին հասանելի և արդյունավետ կարգ:
- Բարելավել դատավորի էթիկայի նորմերը՝ բացառելով անկողմնակալ վերաբերմունքի հնարավոր դրսևորման որևէ հնարավորություն:

5. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՏԵՍԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Արդարադատության կանխատեսելիության վերաբերյալ հանրային ընկալումները և գնահատումը ներառել է հետևյալ հիմնական խնդիրները.

- ✓ նմանատիպ իրավիճակներում օրենքի միատեսակ կիրառումը,
- ✓ դատարանի որոշումների կանխատեսելիությունը:

5.1. Օրենքի միատեսակ կիրառումը նմանատիպ իրավիճակներում

Ա. Հանրային ընկալումը

Դատարանի կողմից օրենքների կիրառելիության մասին հանրության պատկերացումները և այն քաղաքացիների կարծիքները, ովքեր առնչություն են ունեցել դատական համակարգի հետ, տարբեր են: Առաջին դեպքում հարցվողներն ամենաշատը կարծում են (35,9%), որ օրենքները կիրառվում են կոնկրետ իրավիճակին համապատասխան, իսկ առնչության փորձի արդյունքում քաղաքացիներն այլ կարծիք են ձևավորել: Նրանց 41,6%-ը գտնում է, որ նույն իրավիճակում կիրառվում են տարբեր օրենքներ: Երկու խմբերի մոտ էլ նույն իրավիճակում նույն օրենքների կիրառելիության մասին տեսակետն ամենափոքր կշիռն է ստացել (ընդհանուր՝ 10,3%, առնչություն ունեցող՝ 7,4%):

Տարբերակներ	Տոկոսային բաշխվածություն
Նույն իրավիճակում կիրառվում են նույն օրենքները	10.3%
Նույն իրավիճակում կիրառվում են տարբեր օրենքներ	31.3%
Օրենքները կիրառվում են համապատասխան կոնկրետ իրավիճակին	35.9%
Դժվարանում է պատասխանել	22.5%

Բ. Ինքնագնահատման արդյունքներն ու մեկնաբանությունները

Ինքնագնահատման արդյունքներով ընկալումն իրականությունից կտրված է, և չի կարող օբյեկտիվ տեղեկույթ դիտարկվել: Ինքնագնահատման մոտեցումները պնդում են, որ գործող օրենսդրությունը և իրավակիրառական պրակտիկան բավարար երաշխիք են օրենքի միատեսակ կիրառելիությունն ապահովելու համար: Հետևաբար, հանրային նման ընկալման հիմքը ոչ թե օբյեկտիվ իրականության մեջ դրսևորվող պրակտիկան է, այլն դատարանի գործունեության նկատմամբ անվստահությունը և իրավագիտակցության պակասը:

Ինքնագնահատման արդյունքների ավելի փոքր մասը համաձայնություն է դրսևորել օրենքների կիրառելիության վերաբերյալ քաղաքացիների արտահայտած դիրքորոշման հետ: Նման պնդումների հիմքը մասնագիտական հարթությունում դրսևորվող անհամաձայնություններն ու կարծիքների տարբերություններն են, որը կարող է արտահայտվել նաև դատարանի կայացրած որոշումներում:

Հանրային ընկալումը որպես իրականության վերարտադրություն

- Տարբեր դատավորների հետ քննարկումների ժամանակ նույն փաստական հանգամանքներ ունեցող գործերով տարբեր կարծիքներ են դրսևորվում, և այդ տարբեր կարծիքները կարող են արտահայտվել նաև դատարանի որոշումներում:

- Քաղաքացիական իրավունքի շրջանակներում նման խնդիր կարող է դրսևորվել, քանի որ քաղաքացիական իրավունքի ոլորտում խուսանավելու հնարավորություններ կան, իրավունքի մեկնաբանման դաշտն ավելի ընդարձակ է, մեկնաբանությունների հնարավորությունը՝ մեծ:

Անվստահությունը որպես հանրային նման ընկալման հիմք

- Քաղաքացու կողմից դատարանի գործունեության նկատմամբ առկա է անվստահություն, հավատը բացակայում է, հետևաբար քաղաքացին հակված է պնդել և բողոքել, որ իր նկատմամբ այս օրենքը չկիրառվեց, բայց մեկ այլ քաղաքացու նկատմամբ կիրառվեց:

Իրավագիտակցության պակասը որպես հանրային նման ընկալման հիմք

- Քաղաքացին գործերն ամբողջ ծավալով չի կարողանում գնահատել, հետևաբար ենթադրում է, որ իրավիճակները միատեսակ են, բայց դրանց նկատմամբ տարբեր իրավական կարգավորումներ կիրառվեց:

- Քաղաքացիների կողմից նման գնահատականի հիմքում ընկած է անտեղյակությունը, քանի որ նույն իրավիճակի առնչությամբ տարբեր իրավական լուծումներ կիրառելը բացառվում է: Նման գործերը կարող են բողոքարկվել վերադատության կարգով, և ենթադրյալ սխալը կուղղվի:

- Քաղաքացին չի կարող տիրապետել գործի փաստական հանգամանքներին նույն կերպ, ինչ դատարանը, քանի որ դատարանը հարցին մասնագիտորեն է մոտենում:

Քաղաքացին որոշակի ընկերական, բարեկամական շրջանակներում է եզրահանգումներ անում, որը հիմնավորված չէ: Վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշումների կիրառման հետևանքով ձևավորվեց պրակտիկա, որը կարող է քաղաքացու կողմից ընկալվել որպես միատեսակ մոտեցման բացակայություն: Օրինակ՝ խուլիգանության հանցակազմի առնչությամբ վճռաբեկ դատարանը նախադեպային որոշում կայացրեց, որի հետևանքով դատական պրակտիկայում «խուլիգանություն» հանցագործության համար դատապարտվողների թիվը մոտ 40%-ով կրճատվեց: Գուցե քաղաքացու համար Վճռաբեկ դատարանի նախադեպը տեսանելի չէ, բայց դրա կիրառման արդյունքում հանցագործությունների որակման հիման վրա նրանց մոտ ձևավորվում է կարծիք, որ խուլիգանության համար մեկին պատժում են, մյուսին՝ ոչ:

Գործող օրենսդրությունը և իրավակիրառական պրակտիկան որպես օրենքների միատեսակ կիրառման երաշխիք

- Դատարանի գործունեության ընթացքում չեն կարող տարբեր օրենքներ կիրառվել, քանի որ 2005 թվականի սահմանադրական փոփոխություններից հետո օրենքի միատեսակ կիրառելիությունն ապահովելու համար 2008 թվականից դատական պրակտիկան կառուցվում է Վճռաբեկ դատարանի նախադեպերի հիման վրա: Այդ նախադեպերը հասանելի են նաև քաղաքացիներին:

- Դատարանի գործունեության ընթացքում միատեսակ իրավական լուծումներն ուղղորդված են Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներով:

- Դատարանի գործունեության միատեսակության վերաբերյալ հանրային ընկալումը սուբյեկտիվ մոտեցման արդյունք է:

Գ. Եզրակացություն

Այս հարցի վերաբերյալ հանրային ընկալումները վկայում են, որ օրենքի միատեսակ կիրառելիության վերաբերյալ ակնկալիքներն ավելի բարձր են: Սա կարևոր հանգամանք է ոչ միայն հանրության, այլև հենց համակարգի ծառայություն մատուցողների համար՝ ապահովելով նաև վերջիններիս գործունեության արդյունավետությունը: Այնուամենայնիվ, համակարգի ծառայություն մատուցողների համար այդ խնդիրն ավելի փոքր կարևորություն ունի, քանի որ նրանց ընկալումներով օրենքի միատեսակ կիրառելիության խնդրի վկայակոչումը չի արտահայտում իրականությունը: Ինքնագնահատման շրջանակներում

հակափաստարկները հիմնականում հիմնված են գործող օրենսդրական և իրավակիրառական պրակտիկայի երաշխիքների վրա, դրանք դիտարկելով որպես բավարար կարգեր միատեսակ կիրառելիությունն ապահովելու համար: Այնուամենայնիվ, փաստ է նաև, որ օրենքի միատեսակ կիրառելիության վերաբերյալ ինքնագնահատման խմբի համոզմունքներն ավելի շատ հիմնված են ձևականացված մոտեցումների վրա, ինչի հետևանքով հանրության համար այն բովանդակային դրսևորում չի ստանում:

Դ. Մոնիթորինգի մասնակիցների առաջարկությունները

Օրենքի միատեսակ կիրառելիությունն իրավունքի գերակայության կարևորագույն սկզբունքներից մեկն է, և այն պետք է արտահայտվի ոչ միայն ձևական ընթացակարգային, այլև բովանդակային առումներով: Այս նպատակով առաջարկվում է.

- բարելավել դատական համակարգում օրենքի միատեսակ կիրառման պրակտիկան,
- խթանել դատավորների շրջանում Վճռաբեկ դատարանի որոշումների տարածումը՝ կազմակերպելով դրա շուրջ մասնագիտական քննարկումներ,
- խթանել Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի որոշումների կիրառելիությունը ներպետական դատարանների կողմից,
- ներդնել առերևույթ նմանատիպ հանգամանքներում կիրառված տարբեր օրենքների վերաբերյալ մեկնաբանությունների ներկայացման և հանրային քննարկումների պրակտիկա:

5.2. Դատարանի որոշումների կանխատեսելիությունը

Ա. Հանրային ընկալումը

Հանրային ընկալման արդյունքների համաձայն հարցվողների գերակշիռ մասը՝ 88,1%-ը, կարևորում է կանխատեսումը՝ նախքան դատական գործընթաց նախաձեռնելը: Կանխատեսելու կարևորությունն ավելի է մեծանում համակարգի հետ առնչության փորձ ունեցող քաղաքացիների պատասխաններում՝ 91.9%:

Այնուամենայնիվ, հարցվողների մոտ 36%-ի համոզմամբ հնարավոր է կանխատեսել դատարանի կայացվելիք որոշումները, իսկ 22%-ի համոզմամբ՝ երբեք հնարավոր չէ կանխատեսել դատարանի որոշումը:

Դատական գործի վերջնական արդյունքի կանխատեսման հնարավորությունը	
Տարբերակներ	Տոկոսային բաշխվածություն
Միշտ հնարավոր է կանխատեսել	7.5%
Հաճախ հնարավոր է կանխատեսել	28.8%
Հազվադեպ է հնարավոր կանխատեսել	29.6%
Երբեք հնարավոր չէ կանխատեսել	22.4%
Դժվարանում է պատասխանել	11.7%

Վերջնարդյունքը կանխատեսելու հնարավորության դեպքում առնչություն ունեցողները, ի համեմատ ընդհանուր պատասխանների, ավելի մեծ տարբերությամբ հանդես են գալիս «միշտ հնարավոր է կանխատեսել դատական գործի արդյունքը» տարբերակում՝ տարբերությունը 1,9% (տե՛ս գծապատկեր 85):

Հանրային ընկալման արդյունքները ցույց են տալիս, որ երկու խմբերում էլ թե՛ առնչություն ունեցողների, թե՛ ընդհանուր քաղաքացիների, ամենամեծ համամասնությունը կազմում է «հազվադեպ է հնարավոր կանխատեսել տարբերակը»՝ ընդհանուր՝ 29,6%, առնչություն ունեցող՝ 30,9%: Ամենացածր հավանականության դաշտում է գտնվում «միշտ» կանխատեսելու հնարավորությունը՝ ընդհանուր՝ 7,5%, առնչություն ունեցող՝ 9,4%:

Այնուհետև հանրային ընկալումների շրջանակներում ներակայացվում են նաև այն գործոնները, որոնք ապահովում կամ չեն ապահովում դատարանի որոշումների կանխատեսելիությունը: Գործոնների ցանկում տոկոսային հարաբերակցությամբ ամենամեծ տեղը զբաղեցնում է կաշառակերության, ոչ ֆորմալ միջոցների կիրառման, հովանավորչության ազդեցությունը՝ 12.2-%:

Գործունեք		%
1.	Կաշառակերության, ոչ ֆորմալ միջոցների կիրառման, հովանավորչության կասկածներ/վտանգ	12,2
2.	Անօրինակության, անարդարության օրինակներ, օբյեկտիվության բացակայությունը	10,5
3.	Գործի ընթացքի անորոշ լինելը, ընթացքում չբացահայտված փաստերի ի հայտ գալը, իրավիճակային ընթացքը	8,8
4.	Դատարանի, դատավորների նկատմամբ անվստահությունը	7,8
5.	Օրենքի իմացությունը	7,4
6.	Օրենքին, արդարությանը հետամուտ լինելը, վստահելը	5,6
7.	Օրենքներից, իրավական ոլորտից անտեղյակությունը	2,9
8.	Փաստաբանների աշխատանքը	2,2
9.	Անկանխատեսելի վճիռներ, անկայուն դատարան	2
10.	Ի սկզբանե կանխատեսելի վճիռներ, հարցերին լուծում գտնելու անխուսափելիությունը	1,3
11.	Դատարանի, դատավորների առաջ անգործության զգացումը	1,2
12.	Օրենքների երկիմաստությունը, ճկունությունը	0,5
Դժվարանում է պատասխանել		37,6

Բ. Ինքնագնահատման արդյունքներն ու մեկնաբանությունները

Ինքնագնահատման արդյունքներով դատարանի որոշումների կանխատեսելիության վերաբերյալ մոտեցումները բաժանվում են՝ մի խումբը ժխտում է կանխատեսելիության վերաբերյալ հանրային ընկալումները, երկրորդը՝ դատարանի որոշումները մասնակի է համարում կանխատեսելի, երրորդ խմբի պնդմամբ՝ դատարանի որոշումները կանխատեսելի չեն: Որոշումների կանխատեսելիության վերաբերյալ պնդումների համար հիմնական փաստարկը դատարանների գործունեության պրակտիկան է՝ հիմնված նախադեպային որոշումների վրա: Մասնակի կանխատեսելիության վերաբերյալ մոտեցումը հակված է այն տեսակետին, որ հանրային իրավագիտակցությունն է որոշում կանխատեսելիության վերաբերյալ ընկալումը:

Երրորդ խումբը գտնում է, որ դատարանի որոշումների ոչ կանխատեսելի լինելու վերաբերյալ պնդումները հիմնավոր են, քանի որ այդ որոշումները կայացվում են դատավորի ներքին համոզմամբ՝ վերջինիս մասնագիտական կարողությունների համաձայն:

Դատարանի որոշումները կանխատեսելի են

- Դատարանի որոշումները կանխատեսելի են քաղաքացիների համար, քանի որ գրեթե յուրաքանչյուր իրավիճակի համար կան նախադեպային որոշումներ, եթե քաղաքացին ունի բավարար իրավագիտակցություն, դա խնդիր չէ:

- Դատարանի որոշումների կանխատեսելիության աստիճանը գնալով մեծանում է, քանի որ Վճռաբեկ դատարանը որոշումներ է կայացնում տարբեր հարցերի վերաբերյալ, և լուծումներ է առաջադրում:

- Դատարանի որոշումները կանխատեսելի են, քանի որ ներպետական օրենսդրությունը մեկնաբանության է արժանացել նաև Եվրոպական դատարանի որոշումների շրջանակներում: Այդ գործոնի ազդեցությամբ նախադեպային իրավունքն ավելի է հարստանում, իրավական խնդրի վերաբերյալ միատեսակ պրակտիկա է ապահովվում, հետևաբար՝ դատարանի որոշումների կանխատեսելիությունը մեծանում է:

- Վճռաբեկ դատարանի որոշումների նպատակը միատեսակ իրավակիրառական պրակտիկայի ձևավորումն է, հետևաբար դատարանի որոշումները կարող են ն՝ կանխատեսելի, և՛ միատեսակ լինել:


Դատարանի որոշումները մասնակի կանխատեսելի են

- Դատարանի որոշումները որոշ չափով կանխատեսելի են, պարզապես դա պայմանավորված է նաև մարդու չիմացությամբ: Դատարանի որոշումները չեն կարող բացարձակ կանխատեսելի լինել նույնիսկ դատավորի համար, քանի որ գործի հանգամանքներն են որոշում դրա ելքը:

- Իրավական որոշակիության, այսինքն՝ օրենսդրական նորմի որոշակիությամբ է պայմանավորված: Եթե օրենսդրական նորմը որոշակի լինի, բնականաբար, ակտն էլ կանխատեսելի կլինի:

Դատարանի որոշումները կանխատեսելի չեն

- Դատարանի որոշումները կանխատեսելի չեն, քանի որ յուրաքանչյուր դատավոր օրենքը յուրովի է մեկնաբանում, և կախված այն բանից, թե գործը որ դատավորին է մակագրվում, որոշումներն արտահայտում են այդ դատավորի մեկնաբանությունը:

 Դատարանի որոշումների կանխատեսելիությունը պայմանավորված է փաստաբանի մասնակցությամբ: Եթե քաղաքացին փաստաբան չունի, գործը չի կարող կանխատեսելի լինել: Մի

հինգ տարի առաջ ավելի քիչ կանխատեսելի էր, դրանից առաջ ընդհանրապես կանխատեսելի չէր, թե ինչ կարող էր լինել: Իսկ հիմա ամեն մի հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանը սկսում է ասել՝ այ, էս հարցը էսպես, էս հարցը էսպես ու ըստ այդմ Բարձրացնում է նաև կանխատեսելիության մակարդակը միանշանակ:

✚ ... էն, որ վճռաբեկի որոշումը պարտադիր է ու ինքը կանխատեսելի է դարձնում վեճի լուծումը, դա միանշանակ:

✚ ...արդարադատությունը պետք ա կանխատեսելի լինի: Դա իմ ամենասիրած բանն ա էլի: Սյունիքի մարզում միևնույն արարք կատարած անձը և Երևանի կենտրոնում նույն փաստական հանգամանքներով դեպքով մենք կարողանանք նույն լուծումը տալ:

✚ Ի՞նչ է նշանակում կանխատեսելի լինի, այսինքն, շատ հետաքրքիր բան է, եթե բոլորի համար խնդրի լուծումը հասկանալի լինի, ոչ մի քաղաքացիական գործ չենք ունենա, մարդը կեսից կասի՝ «ինձ համար պարզ է, հայցս հետ եմ վերցնում»:

Գ. Մասնագիտական գնահատման արդյունքներն ու մեկնաբանությունները

Մասնագիտական խմբերի մոտեցումներով հիմնականում հաստատվում են ինքնագնահատման արդյունքները, և այդ մոտեցումները բաժանվում են խմբերի՝ որպես կանխատեսելի, մասնակի կանխատեսելի, ոչ կանխատեսելի: Կանխատեսելիության համար ներկայացվում են հիմնավորումներ այն մասին, որ դրանք հիմնականում կայացվում են՝ հիմնվելով արդեն կայացված նախադեպերի վրա: Մասնակի կանխատեսելիությունը բացատրվում է նրանով, որ ամբողջությամբ նույնանման փաստական հանգամանքներով գործեր չկան, հետևաբար դրանց նկատմամբ նույն իրավական կարգավորումները չեն կարող կիրառելի լինել՝ ապահովելով ամբողջական կանխատեսելիություն:

Դատարանի որոշումները համարվել են ոչ կանխատեսելի, քանի որ միայն օրենսդրական հիմքերը բավարար չեն կանխատեսելիություն ապահովելու համար:

Դատարանի որոշումները հիմնականում կանխատեսելի են

- Դատարանի որոշումները կանխատեսելի են, քանի որ դրանք արտահայտում են Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը այս կամ այն հարցի առնչությամբ: Կանխատեսելիության նման հանրային ընկալումը պայամանվորված է փաստաբանների գործունեությամբ, ովքեր ներկայացնում են նախադեպը, բայց և բողոքում, որ միատեսակ կիրառելիություն չի ապահովվել:

- Դատարանի որոշումները կանխատեսելի են, սակայն յուրաքանչյուր գործ և դրա համար կիրառելի նախադեպ ունեն իրենց առանձնահատկությունները: Քաղաքացին այդ առանձնահատկությունները կարող է չտեսնել կամ նրա համար դրանք ընկալելի չեն, այդ պատճառով էլ կանխատեսելիության վերաբերյալ նման դիրքորոշում է ձևավորվում:

Դատարանի որոշումները մասնակի կանխատեսելի են

- Դատարանի որոշումները կանխատեսելի են, եթե դրանք կայացվել են օրենքի հիման վրա, այնուամենայնիվ, բացարձակ կանխատեսելիություն հնարավոր չէ:
- Նույնանման գործեր չկան, յուրաքանչյուր գործ ունի իր փաստական հանգամանքները, հետևաբար ամբողջությամբ կանխատեսել հնարավոր չէ:

«...ուրիշ բան է, որ եթե կոնկրետ դեպքի առնչությամբ եթե կան այս-այս տվյալները, և եթե այդ ապացույցներով դատարանները իրականացրել են մեղադրական դատավճիռ, կանխատեսելի է, որ եթե համանման գործ լինի և լինեն մոտավորապես նույն ապացույցների ծավալը, ենթադրվում է, որ դատարանը կկայացնի նմանատիպ մեղադրական դատավճիռ: Դատարանների գործունեության համար դա նորմալ է, բայց կոնկրետ քննչական մինչդատական վարույթի փուլի համար, գործի հարուցման փուլում դու դեռ չգիտես այդ գործի ընթացքը ինչպիսին կլինի»:

Դատարանի որոշումները կանխատեսելի չեն

- Այն հանգամանքը, որ իրավիճակները կարգավորված են օրենքներով դեռևս չի նշանակում, որ դատարանի որոշումների կանխատեսելիությունն ապահովված է: Այդ կարգավորումները շրջանցելու, տարաբնույթ մեկնաբանությունների հիմքեր կան, որոնք էլ ամբողջական կանխատեսելիություն չեն ապահովում:
- Դատարանի որոշումները կանխատեսելի չեն, քանի որ Հայաստանում գործում է սուբյեկտիվ արդարադատությունը:

«Այսինքն՝ կանխատեսելիությունը այն տեսակետից, թե եթե ակնհայտ է, որ ինչ-որ մեկը իրենից ինչ-որ կապ ունի իշխող անձանցից որևիցե մեկի հետ, ապա այդ կանխատեսելի է, որ արդարացվելու է»:

Դ. Եզրակացություն

Դատարանի որոշումների կանխատեսելիության վերաբերյալ հանրային ընկալումն իր մեջ արտացոլում է նաև օրենքների միատեսակ կիրառելիության վերաբերյալ պատկերացումները, և բացասական պատասխանների (կանխատեսելի չլինելու տարբերակ) ավելի մեծ չափաբաժին է պարունակում: Հանրության համար կանխատեսելիության հնարավորության վրա ազդեցություն են ունենում արտաքին որոշակի գործոններ՝ կաշառակերությունը, օբյեկտիվության բացակայությունը: Այնուամենայնիվ, ինչպես օրենքների միատեսակ կիրառելիության առնչությամբ, այս դեպքում էլ ինքնագնահատման մոտեցումներով՝ դատարանի որոշումներն ընդհանուր առմամբ կանխատեսելի են: Նման դիքորոշումը մասնակիորեն պաշտպանվում է նաև մասնագիտական այլ խմբերի փաստարկներով, սակայն դրսևորվում է նաև հակադրություն: Մասնագիտական խմբերի կողմից որոշումների կանխատեսելիության համար միայն օրենսդրական հիմքերը բավարար չեն, քանի որ կիրառվում են օրենքները շրջանցելու տարբեր կարգեր: Դատարանի որոշումների կանխատեսելիության վերաբերյալ մասնագիտական խմբերն ավելի քննադատական մոտեցում են դրսևորում, ինչը վկայում է, որ հանրության ընկալումներն այս հարցի առնչությամբ առարկայագուրկ չեն:

Ե. Մոնիթորինգի մասնակիցների առաջարկությունները

Դատարանի որոշումների կանխատեսելիության առնչությամբ հանրային կարիքները պատշաճորեն հասցեագրելու համար առաջարկվում է.

- վերացնել Վճռաբեկ դատարանի որոշումների հակասությունները,
- ներդնել դատարանի որոշումների մեկնաբանությունների ներկայացման պրակտիկա,
- ներդնել և իրականացնել նույն հողվածներով կայացված որոշումների մշտադիտարկումներ և գնահատումներ,
- նպաստել դատավորների և ոլորտի մասնագետների միջև տարբեր մեկնաբանություններ առաջացնող իրավիճակների և դրա շուրջ իրավակարգավորումների շուրջ քննարկումների կայացմանը,
- վերացնել օրենսդրական այն բացերն ու թերությունները, որոնք տարամեկնաբանության տեղիք են տալիս:

6. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Դատարան դիմելու տրամադրվածությունը և վերջին մեկ տարվա փորձը

Ա. Հանրային ընկալումը

Քաղաքացիների՝ դատաիրավական համակարգի հետ առնչության փորձը և դրա արդյունքում ձևավորված վերաբերմունքը կարևոր գործոններ են դատարան դիմելու տրամադրվածության համար: Ընդհանուր վերցրած, հարցվողների մեծ մասը՝ 69,7%, դատարան դիմելուն հակված է միայն այն դեպքում, եթե խնդրի լուծման այլ տարբերակ չկա: Տոկոսային այս հարաբերակցությունը փոփոխվում է դատարանի հետ առնչվածների պարագայում՝ 75%-ը, ցանկացած իրավական խնդրի առկայության դեպքում դատարան դիմելու տրամադրվածություն ունի:

Հանրային ընկալման արդյունքներով ներկայացվում են նաև դատարան չդիմելու պատճառները, որտեղ 26,3%-ը չի հավատում, որ դատարանն արդար որոշում կկայացնի:

Պատճառներ		%
1.	Չունեի դրա համար անհրաժեշտ գումար	26,3
2.	Չէի հավատում, որ դատարանն արդար որոշում կկայացնի	26,3
3.	Չունեի դրա համար անհրաժեշտ ժամանակ	21,1
4.	Ծանոթ չէի դիմելու ընթացակարգին	10,5
5.	Ծանոթներս խորհուրդ չտվեցին դիմել	5,3
6.	Դատարան դիմելը սկզբունքորեն անընդունելի է ինձ համար	5,3
7.	Դժվարանում է պատասխանել	5,3
Ընդամենը		100

Հանրային ընկալմամբ՝ արտադատական կարգով խնդիրների կամ վեճերի լուծման հասարկության համար նախընտրելի կառույց է մարդու իրավունքների պաշտպանը, այնուհետև՝ փաստաբանը:

Կառույցներ		%
1.	Մարդու իրավունքների պաշտպան	24,0
2.	Փաստաբան	20,8
3.	Ոստիկանություն	15,7
4.	Ոչ մեկի/ոչ մի կառույցի	9,7
5.	Դատարան	9,6
6.	Որևէ հեղինակավոր անձ	5,6

7. Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ	2,6
8. ԶԼՄ-ներ	2,6
9. Դատախազություն	1,9
10. Կախված գործի բնույթից	1,3
11. Այլ ¹	,7
12. Դժվարանում է պատասխանել	5,5
Ընդամենը	100

Այստեղ կարևոր է նկատել, որ հանրությունը նախապատվություն տալով Մարդու իրավունքների պաշտպանին, նրան հիմնականում չի նույնականացրել ՀՀ օմբուդսմենի հետ, այլ այստեղ ընդհանրացրել է ցանկացած անձի կամ կազմակերպության, ով զբաղվում է մարդու իրավունքների պաշտպանությամբ:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ հասարկության մոտ 85%-ը տեղյակ չէ վեճերի լուծման գոյություն ունեցող արտադական կարգերի մասին, իսկ այն խումբը՝ մոտ 15%, որը որոշ չափով ծանոթ է դրանց, մատնացույց է անում ֆինանսական վեճերի հաշտարարին:

Բ. Ինքնագնահատման արդյունքներն ու մեկնաբանությունները

Ինքնագնահատման արդյունքում հիմնավորումներ բերվեցին հանրային այն կարծիքների համար, համաձայն որոնց քաղաքացիները չեն դիմում դատարան, քանի որ չունեն նյութական հնարավորություններ և բացակայում են մասնագիտական կարողությունները, դատական գործընթացները և երկար ժամկետները վանում են քաղաքացիներին: Արդյունքում նրանք գերադասում են վեճերի լուծման ցանկացած արտադատական կարգ, ինչպես նաև այն, որ քաղաքացիները չեն դիմում դատարան, քանի որ չեն վստահում վերջինիս:

Դատարան դիմելու համար նյութական հնարավորությունների և կարողությունների բացակայությունը, դատարանի տեղակայումը

- Դատարան դիմելու համար անհրաժեշտ է պետական տուրք վճարել, ինչպես նաև վարձատրել փաստաբանին, որի հնարավորությունը երբեմն քաղաքացիները չունեն:
- Քաղաքացիները խուսափում են դատարան դիմել, քանի որ մտածում են, որ ավելորդ ռեսուրս պետք է ծախսել՝ ժամանակ, փող:

¹ ՀՀ նախագահ, Ազգային անվտանգության ծառայություն, քաղաքապետ, վերադաս:

- Դատարան դիմելուց առաջ յուրաքանչյուր անձ գնահատում է դատարան դիմելու հետևանքով իր ծախսվող ժամանակի, նյութական կորուստների հարաբերակցությունը, այնուհետև այդ պատճառով դատարան չի դիմում:

- Բոլոր նստավայրերում չէ, որ կան մասնագիտացված դատավորներ, իսկ դատավարության մասնակիցներին, հատկապես գյուղերում բնակվողների համար, հասարակական տրանսպորտի հասանելիությունը խնդիր է: Արդյունքում ստացվում է, որ դատարանը ոչ բոլոր մարզերում է մատչելի:

Դատարանում գործընթացները ձգձգվում են, առաջանում են քաշքշուկներ, և քաղաքացիները հակված են արտադատական կարգով խնդիրները լուծել

- Դատարանում գործի քննությունը կարող է ձգձգվել, քաղաքացիներից լրացուցիչ ջանքեր պահանջել, որից քաղաքացիները խուսափում են:

- Դատարան դիմելուց առաջ քաղաքացիները փորձում են խնդիրները սկզբում արտադատարանական կարգով լուծել, որպեսզի խուսափեն գործընթացի ձգձգումներից, քաշքշուկներից: Քաղաքացիական արդարադատությունում գործերի ծանրաբեռնվածության հետևանքով գործընթացը երկար է տևում: Դրանով պայմանավորված քաղաքացիներն աշխատում են միջանձնային հարաբերություններում ինչ-որ մարդկանց դիմել, ծանոթներով, շրջապատով հարցը լուծել:

- Գոյություն ունեցող վեճերը, խնդիրները դատարանից դուրս լուծելը պայմանավորված է ազգային հատկանիշներով: Հասարակության մեջ ձևավորված կարծիք կա, որ պետք չէ ամեն ինչի համար դիմել դատարան, քանի որ դա ծայրահեղ միջոց է, այլապես ամոթ է:

- Դատարան դիմելուց առաջ քաղաքացին դիմել է փաստաբանին, փաստաբանը բացատրել է, հաշտության եզրեր են գտնվել, այսինքն՝ փաստաբանը հաշտարարի դեր է կատարել:

Դատարանի նկատմամբ վստահությունը բացակայում է

- Դատարան չդիմելու համար կարող է հիմք հանդիսանալ նաև այն հանգամանքը, որ քաղաքացին չի վստահում, որ դատարանի միջոցով իր խնդիրը լուծում կգտնի:

- Դատարանի կողմից խնդրի լուծման վստահության բացակայությունն իր մեջ ներառում է նաև իր գործի շրջանակում իր պաշտպանությունն ապահովելու համար ֆինանսական միջոցներ և կարողություններ ունենալու բացակայությունը: Եթե անձը չի

կարողանում ապահովել իր շահերի պաշտպանությունը, ապա հակված է անվստահություն դրսևորել:

✚ 69.7%-ը բնական է, որ դատարանին դիտարկում են իրենց վերջին օղակը: Իհարկե: Տեսեք, դատարանը ի՞նչն է քննում, դատարանը քննում է վեճը: Դատարանը քննում է կողմերի միջև այն վեճերը, երբ մարդը դիմել է տարբեր օղակների, մերժվել է և եկել է դատարան:

✚ Նշանակում աս, որ վարչական մարմինները շատ ավելի լավ են սկսել աշխատել: Ու են պոտենցիալ վեճերը, որ պետք աս դատարանում լուծում ստանան, ավելի ցածր օղակներում լուծում են ստացել: Ես տենց կարող եմ մեկնաբանել:

✚ ... Մեր քաղաքացիները սիրում են դիմել բարեկամներին, ծանոթներին, թաղային հեղինակություններին, վերջում, երբ այլևս ելք չկա, դիմում են դատարան:

Գ. Մասնագիտական գնահատման արդյունքներն ու մեկնաբանությունները

Առանցքային է, որ մասնագիտական խմբերում կարծիքներ հնչեցին, որ այսօր դատարան դիմողների թվի ավելացմամբ պայմանավորված կարելի է փաստել հետևյալը. մեր հասարակության մեջ բանակցային ճանապարհով խնդիրը լուծելու մշակույթը բացակայում է, և ցանկացած խնդրի համար քաղաքացիներն հակված են դատարան դիմել: Նման միտումն անգամ որոշակի մտահոգության առիթ է տալիս: Ինչպես նաև այն, որ դատարանների գործունեության ծանրաբեռնվածությունը վկայում է, որ քաղաքացիները չեն էլ փորձում իրենց հարցերը բանակցության միջոցով լուծել և դիմում են դատարան:

Մինևույն ժամանակ մասնագիտական մոտեցումների համաձայն՝ հանրության շրջանում դատարան դիմելու պատրաստակամությունն ուղղակի պայմանավորված է դատարանի գործունեության վերաբերյալ անձի իմացությամբ և ակնկալիքներով:

Դատարանի վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը

- Դատարանի գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածման պարագայում դատարան դիմողների թիվը մեծանում է: Եթե այն հիմա ցածր է, ուրեմն տեղեկատվությունը քիչ է կամ թերի:

- Դատարան դիմելու համար քաղաքացիները բավարար իրավագիտակցություն չունեն:

Դատարանը դիտարկվում է որպես խնդիրների հնարավոր լուծման վերջին օղակը

- Գրեթե բոլոր խնդիրների լուծման վերջնական որոշումը կայացնում է դատարանը, թեև սա դատարանի համար լրացուցիչ պատասխանատվություն է: Նույն կերպ՝ քաղաքացին է դիտարկում դատարանի գործունեությունը:

- Դատարանը ստեղծված է, որպեսզի լուծի քաղաքացիների խնդիրներն այն դեպքում, երբ մնացած հնարավոր միջոցներով խնդիրները լուծել այլևս հնարավոր չէ:

- Դատարանն ընկալվում է որպես վերջին հույս, հետևաբար քաղաքացիները դիմում են դատարան ծայրահեղ դեպքում, երբ այլևս խնդրի լուծման ոչ մի ելք չկա:

- Ոչ միայն Հայաստանում, այլ նաև ուրիշ երկրներում դատարան դիմում են այն դեպքում, երբ այլ տարբերակներ այլևս չկան:

✚ ... մարդը արդարություն է ուզում: Հաց էլ ունի, ջուր էլ ունի, ամեն ինչ էլ ունի, ինքը արդարություն է ուզում: Վերջակետը դատարանն է: Կամ-կամ: Դա էլ է պատասխանատվության խնդիր հենց դատավորի համար:

✚ ... Էս պատկերի դեպքում անհասկանալի է՝ քաղաքացիական գործերի թիվը ավելանում է, ոչ թե տասնյակով, հարյուրով, այլ հազարով:

Դատարանում գործընթացները ձգձգվում են, առաջանում են քաշքշուկներ, և քաղաքացիները հակված են արտադատական կարգով խնդիրները լուծել

- Կան գործեր, որոնց քննությունը դատարանում ձգվում է տարիներով, սա կաշկանդում է քաղաքացիներին դիմել դատարան:

- Դատարան դիմելուց հետո քաղաքացին հայտնվում է ընթացակարգային այլ քաշքշուկների մեջ, որի հետևանքով էլ խուսափում է դիմել դատարան:

Դատարանի նկատմամբ վստահությունը բացակայում է

- Լինում են դեպքեր, երբ վեճերի լուծման գործընթացում դատարանը որոշում է կայացնում, սակայն այդ որոշումն իրագործելը հնարավոր չէ, այդ պատճառով քաղաքացին փորձում է այլ տարբերակներ կիրառել խնդրի լուծման համար:

- Դատարանի նկատմամբ վստահությունը բացակայում է. Քաղաքացին դատարան դիմում է, երբ բոլոր օղակներն արդեն սպառված են, և բացասական որոշում ստանալով՝ անվստահություն է ձևավորվում դատարանի նկատմամբ:

- Դատարանի գործունեության նկատմամբ քաղաքացիների վստահությունը ցածր է, եթե հարցադրումն այլ կերպ լինի՝ «*եթե խնդիր էք ունենում, ինչ միջոցներով էք այն լուծում*», պատասխանը կստանանք՝ «*ծանոթ, ընկերներ, փոխադարձ համաձայնությամբ և այլն*»: Սա վկայում է անվստահության մասին:

Դ. Եզրակացություն

Այսպիսով կարելի է փաստել, որ հասարակության բերած փաստարկներն առ այն, որ անձի համար իր դատարան դիմելու իրավունքի լիարժեք իրականացման համար խոչընդոտող հանգամանքներ են՝ գումարի բացակայությունը, արդար դատական ակտի կայացման վերաբերյալ հավատի պակասը, անհրաժեշտ ժամանակի պակասը, լիովին հիմնավորվեց թե՛ մասնագիտական խմբերում, թե՛ ինքնագնահատման արդյունքներով՝ ընդգծելով որ թերևս վերջին տարիներին դատարան դիմողների թիվն ավելացել է, սակայն բազմաթիվ են այն խնդիրները, որոնք օրհասական են և պահանջում են լուծումներ:

Դատարան դիմելու տրամադրվածությունը և վերջին մեկ տարվա փորձը քննարկելիս կարծիքներ հնչեցին, որ վերջին տարիներին դատարան մուտքագրվող դիմումների թիվը շեշտակի ավելացել է, ինչը խոսում է դատարան դիմելու հանրության տրամադրվածության դրական փոփոխության մասին, իսկ չդիմելու պատճառներ բերվել են սոցիալական խնդիրները, մասնագիտական գիտելիքների պակասը, ընթացակարգերի անհասկանալի ու բարդ լինելը, ազգային մտածելակերպը և անվստահությունը դատական համակարգի կամ ընդհանուր պետական ինստիտուտների նկատմամբ: Սույն հարցի դիտարկման ժամանակ մասնագիտական խմբերում մտահոգություն հայտնվեց այն մասին, որ հանրության շրջանում գրեթե չի կիրառվում վեճերի արտադատական կարգով կամ բանակցային եղանակով լուծելու մշակույթը:

Ե. Մոնիթորինգի մասնակիցների առաջարկությունները

- Զարգացնել վեճերի այլընտրանքային լուծման արդյունավետ կարգերը:
- Հանրային արշավներ իրականացնել հասարակության շրջանում՝ լուսաբանելով վեճերի այլընտրանքային լուծման կարգերի արդյունավետությունը:
- Իրականացնել կրթական ծրագրեր հասարակության շրջանում՝ նպատակ ունենալով խթանել հանրություն – դատարան, հանրություն – քննչական մարմիններ

համագործակցությունը (հատկապես թիրախավորել վկաների ինստիտուտի զարգացումը և խոչընդոտների վերացումը):

- Հանրությանը հասանելի դարձնել տեղեկատվություն, թե որ դեպքերում և ինչ ընթացակարգով անձը կարող է դիմել դատարան:

- Խթանել իրավաբանական կլինիկաների զարգացումը:

- Իրավաբանական կրթություն տրամադրող հաստատություններում ներդնել գնահատման պարտադիր կարգ, որը պարտավորեցնում է ավարտական կուրսերի ուսանողներին հասարակական աշխատանք իրականացնել՝ տրամադրելով իրավաբանական խորհրդատվություն:

- Իրավաբանական կրթություն տրամադրող հաստատություններում ներդնել գնահատման պարտադիր կարգ, որը պարտավորեցնում է ավարտական կուրսերի ուսանողներին հասարակական աշխատանք իրականացնել՝ տրամադրելով իրավաբանական խորհրդատվություն:

- Ներդնել/զարգացնել անվճար իրավաբանական օգնության տրամադրման գործուն կարգեր նաև վարչական և քաղաքացիական գործերով:

7. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Արդարադատության արդյունավետության վերաբերյալ հանրային ընկալումներն ու ակնկալիքները պարզելու նպատակով գնահատվել են հետևյալ խնդիրները.

- ✓ որքանով են դատարանների որոշումներն արդար, հասկանալի քաղաքացիների համար, և որքանով են լուծում խնդիրը,
- ✓ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշումների բողոքարկումների թիվը և պատճառները,
- ✓ դատական համակարգի հետ առնչության փորձի գնահատական:

7.1. Որքանով են դատարանի որոշումներն արդար, հասկանալի քաղաքացիների համար և որքանով են լուծում խնդիրը

Ա. Հանրային ընկալումը

Դատական որոշումների մասին ընկալումները՝ որպես քաղաքացիների համար արդար, հասկանալի և խնդիր լուծող որոշումներ, տարբեր են երկու տարբեր խմբերում՝ հասարակության լայն շերտերի և համակարգի հետ առնչության փորձ ունեցող քաղաքացիների պատկերացումներում:

Նախ և առաջ համեմատենք երեք հատկանիշների արտահայտման մակարդակը. այն, որ դատական որոշումներն արդար են, հասկանալի և քաղաքացիների խնդիրները լուծող, հանրության ընկալմամբ հազվադեպ է հանդիպում՝ արդար՝ 57,1%, հասկանալի՝ 51,3%, խնդիրը լուծող՝ 52,2%, (տե՛ս գծապատկեր 48): Հարցվողներն ավելի շատ դժվարացել են պատասխանել՝ արդյո՞ք դատական որոշումների արդյունքում քաղաքացիների խնդիրը լուծվում է՝ 10,2%, և ավելի քիչ՝ արդյո՞ք արդար են այդ որոշումները՝ 5,7%:

Ըստ առնչություն ունեցողների տեսակետի՝ բնույթով արդար, հասկանալի և խնդիր լուծող, դատական որոշումներն առավել հազվադեպ է համարվել արդար՝ 61,7%, հասկանալի՝ 61,7%, խնդիրը լուծող՝ 58,4%, (տե՛ս գծապատկեր 49): Այս խմբի պատասխաններում հարցի մասին կարծիք չունեցողների կշիռը կրճատվում է, սակայն նրանք ևս ավելի շատ դժվարացել են

պատասխանել, թե արդյո՞ք դատական որոշումների արդյունքում քաղաքացիների խնդիրը լուծվում է՝ 6,7%, և ավելի քիչ՝ արդյո՞ք արդար են այդ որոշումները՝ 2,7%:

Որքանով են դատարանի որոշումներն արդար, հասկանալի և խնդիրը լուծող (ըստ առնչություն ունեցողների)					
Տարբերակ / Տոկոսային բաշխվածություն	Միշտ	Հաճախ	Հազվադեպ	Երբեք	Դժարանում եմ պատասխանել
Արդար	1.3%	19.5%	61.7%	14.8%	2.7%
Հասկանալի	4.0%	17.4%	61.7%	12.8%	4.0%
Խնդիրը լուծող	3.4%	18.1%	58.4%	13.4%	6.7%

Եթե ընդհանրապես հանրության ընկալումներում դատական որոշումներով ամենամեծ համամասնությունն է ստանում *երբեք հասկանալի չեն լինում*՝ 13,9%-ը (տե՛ս գծապատկեր 48), ապա առնչություն ունեցողների պարագայում՝ ամենամեծ համասնությունն ունի *երբեք արդար չեն լինում* տարբերակը՝ 14,8% (տե՛ս գծապատկեր 49):

Հարցվողների մեծ մասը կարծում է, որ դատարանների՝ արդար որոշումների կայացման համար առաջին հերթին անհրաժեշտ են դատավորներ, ովքեր կաշխատեն արդար, օրինական և օբյեկտիվ՝ 26,9%, (տե՛ս հավելված, աղյուսակ 5): Այնուհետև երկրորդ կարևոր գործոնը ևս վերաբերում է պաշտոնատար անձանց՝ այս անգամ որպես մարդկային դրական հատկանիշների կրողներ՝ ազնիվ, բարեխիղճ և այլն՝ 12%:

Երրորդ և չորրորդ տեղերը զբաղեցնող գործոնները վերաբերում են դատական համակարգի ընդհանուր գործունեությանը. առաջին դեպքում՝ առանց կոռուպցիայի, երկրորդ դեպքում՝ վերահսկող օղակների առկայությամբ, համապատասխանաբար, 11,8%, 11,3% (տե՛ս նույն տեղում): Որպես ամենաքիչ կարևորություն ունեցող գործոն համարվել է համակարգի փոփոխությունն ընդհանուր առմամբ, օրինակ՝ երդվյալ ատենակալների առկայությամբ՝ 1,2%:


Բ. Ինքնագնահատման արդյունքներն ու մեկնարանությունները


Համակարգի ծառայություն մատուցողների գնահատմամբ՝ անհամաձայնություն և հակափաստարկեր են դրսևորվում դատարանի որոշումների արդարության, հասկանալիության խնդիրների լուծելիության առնչությամբ: Ինքնագնահատման

արդյունքներով առավել մեծ խումբ է կազմում այն պնդումը, որ դատարանի որոշումներն ամբողջությամբ լուծում են խնդիրները: Դժգոհության վերաբերյալ արտահայտված կարծիքների հարաբերակցությունն, ըստ ինքնագնահատման արդյունքների, այն բաժինն է, որը սովորաբար դատարանի որոշումներով դրական լուծում չի ստանում, օրինակ՝ քաղաքացիական գործերով պարտվող կողմը, կամ քրեական գործերով՝ ամբաստանյալը կամ նրա ընտանիքի անդամները: Բացի այդ, դատարանի որոշումների պատճառաբանվածությունը մեծացել է, հետևաբար որոշումները նաև հասկանալի են քաղաքացիների համար: Հատկանշական է, որ ինքնագնահատման քննարկումները և փաստարկները, բովանդակային առումով, ավելի շատ համաձայնություն են արտահայտում հանրության ընկալման հետ՝ մեկնաբանելով նաև նման ընկալման դրդապատճառները:

Դատարանի որոշումներն արդար են

- Դատարանի որոշումներն ամբողջությամբ արդար են, ամբողջությամբ լուծում են խնդիրը, բայց քաղաքացին կարող է դժգոհ մնալ՝ ենթադրելով, որ իր խնդիրը չլուծվեց: Այն դեպքում, երբ քաղաքացին դիմում է դատարան, բայց պահանջը ճիշտ չի ձևակերպում, դատարանը չի կարող վերջինիս փոխարեն պահանջը վերաձևակերպել: Արդյունքում՝ ստացվում է, որ պահանջը չի բավարարվում:
- Դատարանի որոշումներն արդար են որոշում կայացնող յուրաքանչյուր անձի հնարավորության սահմաններում:

 Դատարանների որոշումները մենք ներկայացնում ենք քրտինքով և արդար են:

 Արդար կարա լինի նաև անարդար ակտը, եթե դա օճենքից է բխում:

Դատարանի որոշումները հասկանալի են

- Դատարանի որոշումներն ամբողջությամբ հասկանալի են քաղաքացիների համար: Հնարավոր է, որ առանձին դրույթներ անհասկանալի լինեն, բայց վճռի մասում, առավել հստակ են:
- Դատարանի որոշումները հիմնականում բավականին մանրամասն, ընդգրկուն և պատճառաբանված են: Եթե հասկանալի չեն, ուրեմն բարդ իրավական վերլուծություն է իրականացված:
- Դատարանի որոշումները միշտ հասկանալի են, պարզապես այդ հանգամանքը կախված է նաև քաղաքացու իրավագիտակցության աստիճանից:

- Դատարանի որոշումները կազմելու համար սահմանված է տեխնիկա, որը պահանջում և ապահովում է մատչելիությունը:

- ✚ *Հասկանալի լինելու մասով... Քաղաքացին պահանջում է, որպեսզի իր համար հասկանալի լինի, փաստաբանը պահանջում է, որ իր համար հասկանալի և հիմնավորված լինի, իսկ դատարանը ձգտում է, որպեսզի ակտը պատճառաբանված լինի:*
- ✚ *Ավելի արդար են, քան հինգ տարի առաջ էր, տաս տարի առաջ էր: Ավելի հասկանալի է, քան 15 տարի առաջ է: Էսօր, ամեն ինչ գրված է, թե ինչու:*

Դատարանի որոշումները լուծում են խնդիրը

- Դատարանի որոշումները լուծում են խնդիրը, ուրիշ հարց է, որ այդ լուծումը չի գոհացնում դիմումատուին:
- Խնդրի լուծման վերաբերյալ մոտեցումը խիստ սուբյեկտիվ է, քանի որ մի կողմի համար այն միշտ լուծում է խնդիրը: Այդ հարցին օբյեկտիվ պատասխան կարող է տալ վերադաս դատարանը՝ գնահատելով կիրառված լուծման օրինականությունը:

Դատարանի որոշումները հասկանալի չեն

- Դատարանի որոշումների պատճառաբանական հատվածը տեղեկություններ է պարունակում օրենքների մեկնաբանությունների վերաբերյալ, ինչը կարող է դժվար ընկալելի լինել քաղաքացու համար:
- Դատարանի որոշումների ընկալելիության աստիճանը կախված է որոշումը կազմող անձի կարողությունից: Անհրաժեշտ է առաջնորդվել այն չափանիշով, որ որոշումը կարդալու և հասկանալու է ոչ իրավաբան-մասնագետը:
- Միշտ չի, որ դատարանի որոշումները հասկանալի են, քանի որ դրանում գերակշռում է մասնագիտական լեզուն, որն ինքնին մատչելի չէ: Անհրաժեշտ է, որ դատավորը ջանքեր գործադրի այն ընկալելի դարձնելու համար:
- Որոշումների ընկալելի լինելը պայմանավորված է դրանց պատճառաբանվածությունից: Եթե որոշումները պատճառաբանված չեն, դրանք հասկանալի լինել չեն կարող:
- Արդարությունը երկու բաղադրատարր ունի՝ վեճը լուծելու վարույթի արդարություն և վեճի լուծման արդարություն: Դատարանի կողմից գործերի քննության ընթացքում

առավելապես շեշտը դրվում է վեճի լուծման արդարության վրա, որի հետևանքով արդարությունն ամբողջ ծավալով ընկալելի չի լինում:

Գ. Եզրակացություն

Դատարանի որոշումների արդարացիության, մատչելիության և վեճերի լուծման վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ քաղաքացիները դատարանի որոշումները՝ որպես իրենց խնդիրը լուծող արդյունավետ միջոց, չեն դիտարկում: Ըստ հանրության ընկալման՝ դրա համար բացակայում են արդարությունը, օբյեկտիվությունը և օրինականությունը: Ինքնագնահատման մոտեցումներով՝ դատարանի որոշումները գուցե հասկանալի չլինեն քաղաքացիներին, քանի որ կազմված են մասնագիտական լեզվով, այնուամենայնիվ, այդ որոշումներով քաղաքացիների խնդիրները լուծում են ստանում: Չի բացառվում, որ այդ լուծումները չեն գոհացնում բոլոր քաղաքացիներին, այնուամենայնիվ, դա ավելի փոքր թիվ է կազմում, քան ներկայացվել է հանրության կողմից: Հատկանշական է, որ ինքնագնահատման արդյունքներն ավելի շատ համաձայնություն են արտահայտում որոշումների հասկանալի լինելու շուրջ հանրության մոտեցումների հետ, սակայն ընդգծված ժխտում են դրանց արդարացիության և արդյունավետության վերաբերյալ մտահոգությունները:

Դ. Մոնիթորինգի մասնակիցների առաջարկությունները

- Զարգացնել դատավորի և դատավորին օժանդակող անձնակազմի կարողությունները՝ իրավական կարգերի հանրամատչելի ներկայացման առնչությամբ:
- Ապահովել վեճերի կարգավորումների համար դատավորի միատեսակ վարքագիծը՝ բացառելով ընտրողական մոտեցումը:
- Մեծացնել դատարանի որոշումների պատճառաբանվածությունը:
- Բարձրացնել խնդիրների լուծման առնչությամբ դատարանի որոշումների՝ որպես իրավական կարգավորումների արդյունավետությունը:

7.2. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշումների բողոքարկումները

Ա. Հանրային ընկալումը

Հանրության ընկալման համաձայն՝ ներկայացվում է, թե դատարանների վերջնական որոշումների որ մասն է բողոքարկվում: Հարցվողների մոտ 28%-ը կարծում է, որ բողոքարկվում են դրանց կեսը, իսկ 23.1%-ի պնդմամբ՝ բողոքարկվում է դատարանի որոշումների կեսից ավելին:

Հարցվածների 27.1%-ի կարծիքով բողոքարկվում են դատարանի որոշումների շատ քիչ մասը, իսկ մոտ 19%-ը այս հարցի առնչությամբ որևէ պատկերացում չունի:

Ընդհանուր առմամբ, ըստ հանրային ընկալման, դատարանի որոշումները բողոքարկվում են մոտ 50%-ով:

Դատարանի որոշումները վերադաս դատարան բողոքարկելու պատճառները բազմաթիվ են, սակայն հարցվողներն առանձնացրել են առաջին և երկրորդ հիմնական պատճառները (տե՛ս հավելված, գծապատկեր 89)՝

- 1) դատարաններն արդար չեն՝ 24,7%,
- 2) հավատում են, որ հնարավոր է առավել բարենպաստ որոշում կայացվի՝ 23,6%:

Այնուհետև գրեթե կիսով չափ կրճատվում է պատասխանների հաճախականությունը, սակայն կարևոր պատճառներ են համարվում նաև հետևյալները՝

- 1) բողոքարկում են, որովհետև դատարանները գործերն ամբողջությամբ չեն ուսումնասիրում՝ 12,6%,
- 2) վստահ են, որ իրական վերանայում կլինի՝ 10,4%:

Իսկ ամենաքիչը կարծում են (0,7%), որ վերադաս դատարանում ավելի հեշտ է ոչ ֆորմալ պայմանավորվածություն ձեռք բերել:

Այն, որ դատարաններն արդար չեն (1), ավելի շատ կարծում են Երևանում, այնուհետև գյուղերում, վերջում՝ մարզային քաղաքներում (համապատասխանաբար՝ 26,3%, 23,5%, 22,7%, **տե՛ս** հավելված, գծապատկեր 90): Իսկ մարզային քաղաքներում ամենաշատը հավատում են վերադաս դատարանի կողմից ավելի բարենպաստ որոշում կայացնելուն (26,4%, **տե՛ս** հավելված, նույն տեղում): Հարցի մասին կարծիք չունեցողներն ավելի շատ գյուղերի, այնուհետև՝ մարզային քաղաքների, վերջում՝ Երևանի հարցվողներն են:

Վճռաբեկ դատարանի որոշումների իրազեկման ամենաարդյունավետ միջոցը համարվում է կայքը, իսկ ոչ արդյունավետ միջոցը՝ գրքի տեսքով տպագրությունը (համապատասխանաբար՝ 35,6%, 17,1%, **տե՛ս** հավելված, գծապատկեր 91): Որպես տարբերակ՝ առաջարկվել է նաև եթերով հեռարձակելու միջոցը:

Բ. Ինքնագնահատման արդյունքներն ու մեկնաբանությունները

Ընդհանուր առմամբ՝ ինքնագնահատման արդյունքների համաձայն՝ հանրային նման ընկալման հիմնական պատճառը ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի գործունեության նկատմամբ անվստահությունն է:

Դատարանի որոշումների բողոքարկումների վերաբերյալ հանրության ընկալումը չի արտահայտում իրականությունը

- Բողոքարկվում է դատարանի որոշումների մոտ 20-30%, բայց ոչ կեսը: Եթե բողոքարկվեր դատարանի որոշումների կեսը, ապա վերաքննիչ դատարանը խիստ ծանրաբեռնված կլիներ:
- Դատական քննությունների մեջ մեծ թիվ են կազմում կողմերից մեկի բացակայությամբ քննությունները: Նման պայմաններում չի կարող բողոքարկումների թիվը մեծ լինել:

Դատարանի որոշումների բողոքարկումների վերաբերյալ հանրային ընկալումը որպես իրականության արտացոլում

- Ըստ վիճակագրական տվյալների՝ բանկերի կողմից գույքային պահանջով հայցերի դեպքում, մոտ կեսը բողոքարկվում է, քանի որ քաղաքացիներն ակնկալում են, որ վերաքննիչ դատարան դիմելով ժամանակ կշահեն, կկարողանան պարտքերը մարել և գույքը ետ ստանալ:
- Բողոքարկումների վերաբերյալ հանրային ընկալումը վկայում է, որ հանրության իրավագիտակցությունը բարձր է: Սա նաև հանրային վերահսկողության կարգ է:

Դատարանի որոշումների բողոքարկումը որպես կայացված որոշման հետ

անհամաձայնության դրսևորում

- Քաղաքացիները բողոքարկում են դատարանի որոշումները, քանի որ ակնկալում են, որ հնարավոր է առավել բարենպաստ որոշում կայացվի:
- Մարդիկ բողոքարկում են դատարանի որոշումները, քանի որ դատարանի որոշումը չի լուծում խնդիրը: Բացի այդ, քաղաքացիներն այլ մոտեցումներ են ունենում:
- Քաղաքացիները դատարանի որոշումները բողոքարկում են ներպետական դատական ատյանները սպառելու և Եվրոպական դատարան գանգատ ներկայացնելու նպատակով:

Դատարանի որոշման բողոքարկումը որպես իրավագիտակցության պակասի դրսևորում

- Հանրության կողմից ընդհանուր իրավասության դատարանի գործունեությունը համարժեքորեն չի ընկալվում: Ակնկալիքն ավելի շատ վերաբննիչ արադարադատությունից է:
- Դատարանի որոշումների բողոքարկումների վերաբերյալ հանրությունը նման կարծիք է արտահայտում, քանի որ տեղյակ չէ, թե ինչ աշխատանք է կատարվում:
- Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում քաղաքացիներն առավել պասիվ վարքագիծ են դրսևորում, քանի որ ամբողջությամբ չեն գիտակցում ընդհանուր իրավասության դատարանի աշխատանքը:
- Հանրային ընկալումն այն մասին, որ առաջին ատյանի դատարանում գործերն ամբողջությամբ չեն ուսումնասիրում, իրականությանը չի համապատասխանում, քանի որ քաղաքացիները տեղեկացված չեն աշխատանքներին ամբողջ ծավալով:

Դատարանի որոշման բողոքարկումը որպես ընթացակարգային ձևական կանոնների

պահպանման միջոց

- Քաղաքացիները բողոքարկում են դատարանի որոշումը, չնայած վստահ են, որ փոփոխություն չի լինի, բայց ակնկալում են ժամանակ շահել կամ անկալում են, որ համաներում կլինի:
- Դատարանի որոշումները կարող են մեծ քանակությամբ բողոքարկվել, բայց որոշիչը բեկանումների թիվն է՝ դա ցույց է տալիս, թե որքանով են ընդհանուր իրավասության դատարանները գործին մակերեսային մոտեցել:

- Մեղադրող կողմը, թեև համաձայն է լինում դատարանի որոշման հետ, օրինակ՝ արդարացման դատավճռի հետ, սակայն ի պաշտոնե պարտավորված է իրեն զգում բողոք բերել վերադատության կարգով, որպեսզի իր վարքագծին անգործություն չվերագրվի:

Գ. Եզրակացություն

Այսպիսով, հանրության շրջանում ձևավորված այն կարծիքը թե առաջին ատյանի դատարանի որոշումների մեծամասնությունը բողոքարկվում են վերադաս ատյաններում, աջակցություն չգտավ ինքնագնահատման արդյունքով, քանի որ ինքնագնահատման մասնակիցների զգալի մասը գտնում է, որ դատարանի որոշումների բողոքարկման վերաբերյալ հանրային ընկալումն իրականությանը չի համապատասխանում: Նման պնդումները հիմնավորվում են դատական վիճակագրական տվյալներին հղում կատարելով և ներկայացնելով պաշտոնական հաշվետվություններ:

Ավելի փոքր հատվածը համաձայնություն է հայտնում դատարանի որոշումների բողոքարկման վերաբերյալ հանրային ընկալումների հետ: Այս խումբը համաձայն է, որ քաղաքացիական իրավունքի շրջանակներում գույքային վեճերի վերաբերյալ որոշումների մոտ 50% կարող է բողոքարկվել:

Դ. Մոնիթորինգի մասնակիցների առաջարկությունները

Տե՛ս 7.3. կետի ներքո ընդհանրացված:

7.3. Դատական համակարգի հետ առնչության փորձի գնահատականը

Ա. Հանրային ընկալումը

Ընդհանուր առմամբ, դատաիրավական համակարգի հետ առնչության փորձին հարցվողներն ավելի շատ բացասական (53,2%) գնահատական են տվել, որի մեջ խիստ բացասական տարբերակը կազմել է 34,1% (**տե՛ս** գծապատկեր 11):

Ի հակադրություն՝ ընդհանուր դրական գնահատականը կազմել է 45,1%, որից միանշանակ դրական գնահատականը կազմել է 15,6%, ավելի քան երկու անգամ պակաս, քան խիստ բացասական տարբերակը, իսկ մասամբ դրական գնահատականը կազմել է 29,5%: Այսինքն,

կարող ենք փաստել, որ բացասական գնահատողներն ավելի շատ չտատանվող և հստակ վերաբերմունք են ձևավորել փորձի արդյունքում, քան դրական գնահատողները:

Դրական կամ բացասական գնահատականի ձևավորման հարցում կարևոր գործոն է հանդիսացել նաև այն կարգավիճակը, որով առնչվել է դատարանի հետ, ինչպես նաև գործը, որի շրջանակում քաղաքացին դիմել է արդարադատության կառույցներին:

Առնչության իրենց փորձը առավելապես բացասական են գնահատել տուժողի (75%) և մեղադրյալի (69,2%) կարգավիճակում հայտնված քաղաքացիները և/կամ նրանց ընտանիքի անդամները:

Առնչության փորձից առավելապես դրական տպավորություն են ստացել երրորդ անձինք (71,4%) և վկաները (66,7%), շատ քիչ առավելությամբ՝ նաև հայցվորները (52,5%):

Բ. Ինքնագնահատման արդյունքներն ու մեկնաբանությունները

Ինքնագնահատման ընթացքում ներկայացված կարծիքները վկայում էին այն մասին, որ չկան խորքային պատճառներ խիստ բացասական վերաբերմունք ձևավորելու համար, սակայն մատնանշվեցին նաև այնպիսի ոլորտներ, որոնք հիմնական դժգոհությունների և բացասական վերաբերմունքի ձևավորման պատճառ են:

Հանրային կարծիքի ձևավորման վրա ազդեցություն ունեցող (և դրական և բացասական) գործոնները

- Մեծ ազդեցություն ունի քաղաքացիների իրավագիտակցությունը և այն անձանց մասնագիտական պատրաստվածությունը, ովքեր ներկայացնում են քաղաքացիների շահերը: Այս խնդիրն առավել ընդգծվում է մրցակցային դատավարության պայմաններում, երբ կողմը պետք է որոշակի իրավագիտակցություն, իրավական գիտելիքներ դրսևորի: Այն պարագայում, երբ քաղաքացին ինչ-որ կերպ առնչվում է դատարանի հետ, սակայն իրավագիտակցության բավարար մակարդակ չունի, այդ անձի համար գործընթացը բացառապես հուզական դաշտում է ընկալվում: Բացի այդ, քաղաքացին չի հասկանում արդյոք տվյալ որոշումն իր օգտին է թե՛ ոչ, որն էլ պայմանավորված է իր ցածր իրավագիտակցությամբ:

- Դատարանի վերաբերյալ պատկերացումներն ու դատարանի իրական լիազորությունների ընկալումը քաղաքացիների մոտ դեռևս թերի է: Դատարանը

«հարկադրանքի տեղ է», որտեղ հարկադրաբար կիրառվում է օրենքը, որից քաղաքացին դժգոհ է:

- ԶԼՄ-ների միակողմանի և ոչ պրոֆեսիոնալ լուսաբանումները: Նրանք հաճախ մասնակցում են գործով նիստերին ոչ թե հանրությանն օբյեկտիվ լուսաբանում ապահովելու նպատակով, այլ կոնկրետ մի կողմի հրավերով՝ նրա իսկ շահերը լավագույնս ներկայացնելու համար:

- Քաղաքացիների հետ դատարանների առնչության գործում դատարանի գրասենյակը «դատարանի դեմքն» է: Քաղաքացին մուտքագրում է հայցադիմումը կամ այլ փաստաթուղթ գրասենյակ, միաժամանակ հետաքրքրվում է, թե նիստը երբ տեղի կունենա կամ իր խնդրանքի վերաբերյալ երբ արձագանք կստանա: Գրասենյակի աշխատողն օբյեկտիվորեն չի կարող այդ հարցերի պատասխանը տալ, սակայն շատ կարևոր է, թե գրասենյակի աշխատակիցը որքան բարեհամբույր կլինի, և ինչպես կխոսի քաղաքացու հետ:


Ինքնագնահատման արդյունքում հարցվածների մի խումբը պնդել է, որ բացակայում են օբյեկտիվ պատճառներ՝ քաղաքացիների մոտ բացասական վերաբերմունք ձևավորելու համար: Այդ կարծիքները հիմնավորվել են հետևյալ կերպ.

- Քաղաքացիների փորձի և դրա համար հիմք հանդիսացած պատճառների գնահատման համար օբյեկտիվ չափանիշներ չկան: Սա սուբյեկտիվ կարծիք է:

- Լինում են դեպքեր, երբ բացասական վերաբերմունքը դրսևորվում է օբյեկտիվորեն, բայց դա կկազմի մինչև 3%-ը: Մնացած դեպքերում, երբ քաղաքացին հաջող ելքով գործ է ունեցել, ձևավորել է դրական գնահատական, հարևանը ևս հաջող ելքով գործ ունենալու դեպքում դրական գնահատական է ձևավորել:

- Քաղաքացիները դատարան դիմում են նախատրամադրվածությամբ՝ ունենալով արդեն բացասական կարծիք: Մի դեպքում մարդիկ բողոքում են, որ իրենց ասածը ոչ ոք չի լսում, բայց լսելու պարագայում էլ նախատրամադրվածության հետևանքով չի ընկալվում:

- Դատարան դիմած յուրաքանչյուր քաղաքացի ստանում է անհրաժեշտ աջակցություն, սակայն եթե քաղաքացու պահանջը օրենքով կարգավորման ենթակա չէ, այն չի կարող բավարարում ստանալ:

 *Ինչքան վատ են մեր մասին մտածում: Մենք նաև մեր աշխատանքի դժվարությունը ցույց տալու համար ասում ենք՝ ոչ մեկը լավ հարցով դատարան չի գալիս, այսինքն՝ դատարան եկողներից բոլորն ունեն լուրջ խնդիր իրենց կյանքում:*



Էնպես չի, որ գտնում եմ, որ դա բացառապես սուբյեկտիվ ընկալման արդյունք ա, որովհետև նման տոկոսները չեմ կարծում, որ մենակ սուբյեկտիվիզմի արդյունք ա: Բայց ես կարծում եմ՝ մենք փորձում ենք ամեն ինչ անել, որ աշխատանքը շատ ավելի լավ լինի քաղաքացիների համար:

Ինքնագնահատման ժամանակ դատավորները նշել են նաև այն պատճառները, որոնք հիմք են քաղաքացիների մոտ բացասական կարծիքի ձևավորման համար: Այդպիսի պատճառներ են.

- դատարանը երբեմն թե՛ դատավարական, թե՛ նյութական նորմերը սխալ է մեկնաբանում և կիրառում, որի արդյունքում ստացվում է, որ քաղաքացին չստացավ իր հարցի բավարարումը:

- Քաղաքացիների կողմից որպես դժգոհության պատճառ բերվեց նաև գործի քննությունը ողջամիտ ժամկետում ավարտելու անհնարինությունը, պատճառաբանելով, որ դատական նիստերը հաճախակի հետաձգվում են, արդյունքում՝ կողմերը, բավականին մեծ ճանապարհ հաղթահարելով հասնում են դատարան, և կարող է՝ մյուս կողմը չի ներկայանում, կամ մյուս կողմը միջնորդում է փաստաբանի ծառայությունից օգտվել, մեղադրողը ինչ-ինչ պատճառներով չի ներկայանում: Այս ամենը կարող է դժգոհության տեղիք տալ: Բոլոր դեպքերում, քաղաքացին ցանկանում է ողջամիտ ժամկետներում հնարավորինս շուտ վերջացնել իր գործը:

- Կարծիք եղավ, որ միանշանակ դժգոհ վերաբերմունք ձևավորած անձանց 90 %-ն այն անձիք են, որ կամ պարտվել են դատարանում կամ ուղղակի այլ սոցիալական խնդիր ունեն, որում մեղավոր են գտնում, թե՛ դատարանին, թե՛ դատախազին, թե՛ քննիչին, թե՛ առհասարակ բոլորին:

- Տեսակետ հնչեց նաև, որ քաղաքացիների նկատմամբ որոշակի բացասական վերաբերմունք կա նաև դատական կորպուսի կողմից, որ քաղաքացուն փորձում են վերնից նայել, փորձում են հետը շփվել՝ որպես օբյեկտի, ոչ թե սուբյեկտի:

- Քաղաքացիները դժգոհում են հաճախ, որ իրենք չեն լսվում: Քաղաքացին ասելիք ունի, սակայն իրեն արտահայտվելու հնարավորություն չեն ընձեռում: Ըստ այդմ, երբ անձին հնարավորություն չի տրվում արտահայտվել, այդ բացասական էներգիան սկսում է դրսևորվել այլ կերպ:

Գ. Մասնագիտական գնահատման արդյունքներն ու մեկնաբանությունները

Մասնագիտական այլ խմբերի մոտեցումներում դրսևորվում են համընկումներ և ընդհանրություններ հենց խմբի ներսում, ինչպես նաև դրանք համընկնում են հանրության կարծիքի և ինքնագնահատման մոտեցումների հետ:

Մասնագիտական խմբերում առավել հաճախ հանդիպող հիմնավորումների շարքում են հետևյալ գործոնները, որոնք հանգեցնում են քաղաքացիների շրջանում բացասական վերաբերմունքի ձևավորմանը.

- գործերի քննության ժամկետները և վերջնական որոշումների կայացումը պահանջում է տևական ժամկետ, ինչը պայմանավորված է ռեսուրսների անբավարարվածությամբ և գործերի քանակի անհամաչափությամբ:

- Օրենսդրական բացերն ու անկատարության հարցերը խնդիրների լուծման համար սահմանափակ հնարավորություններ են ձևավորում:

- Դատական գործունեության մեջ որոշակի անհամաձայնություններ և անհամապատասխանություններ է դրսևորվում, որը պատճառ է բացասական գնահատականի ձևավորման համար:

- Դատական համակարգի ինստիտուտների գործունեության դժվարությունները, ընթացակարգային բարդությունները դատախիրավական համակարգի հետ առնչվող անձի մոտ առաջացնում են սթրես և բացասական զգացողության՝ անկախ բարձրացված խնդրի առնչությամբ կայացված որոշումների:

- Դրական հատկանիշների ներկայացման մշակույթը բացակայում է, և ընդգծված շեշտադրվում են բացասական երևույթները:

- Բացասական նախատրամադրվածությունը և չբավարարված, դժգոհ վերաբերմունքը գերակշռում է մոտեցումների մեջ, որն էլ պայմանավորում է քաղաքացիների կողմից երևույթների բացասական գնահատմամբ:

- Մեկ կամ մի քանի գործերով առկա փորձը և գնահատականն ընդհանրացվում և տարածվում են ընդհանուր համակարգի վրա:

Որոշ խմբերում մասնավորապես կարծիքներ հնչեցին նաև, համաձայն որի.

- Հանրության կողմից արդարադատությունն ընկալվում է բացառապես այն դեպքում, երբ իր ցանկությունը բավարարվել է, մնացած բոլոր դեպքերում քաղաքացին դժգոհ է:


- Տուժողների կրած վնասների փոխահատուցման իրական կարգերի բացակայության արդյունքում քրեական գործերով (խարդախության, հափշտակության, գողության գործեր) տուժողը միշտ դժգոհ է մնում:

- Դատաիրավական մարմինների գործունեությունը քննադատելը վերջին շրջանում «մոդայիկ» միտում է դարձել, ինչին լծվել են թե՛ ՋԼՄ-ները, թե՛ ընդդիմադիր քաղաքական գործիչները:

- Մեղադրական դատավճիռների մեծ քանակը բերում է դժգոհությունների և անվստահության մեծացմանը:

- Դատաիրավական մարմինների գործունեության շրջանակներում կա որոշակի հատված, որն անգործություն է դրսևորում կամ թույլ է տալիս ընթացակարգային խախտումներ, ինչը քաղաքացիների համար վերաբերմունքի ձևավորման հիմք է հանդիսանում:

- Նշանակված պատժի արդարացիությունը դժգոհության պատճառ է հանդիսանում:

 *Օրինակ՝ Հայկ Կյուրեղյանին 9 տարի տվել են զազային ատրճանակով ինչ-որ ակցիա անելու համար, բայց օրինակ՝ Լիսկայի կողմից ուղարկված մարդու հրազենային հարձակման համար հիմա դատավարություն է գնում:*

- Դատաիրավական համակարգի ինստիտուտների հետ առնչությունը ժամանակատար և բարդ գործընթաց է, որից մարդիկ խուսափում են, բնութագրում որպես բացասական:

- Դատաիրավական համակարգի ինստիտուտների հետ առնչության համար մասնագիտական բավարար աջակցություն չկա:

- Ընդհանուր դատաիրավական համակարգի նկատմամբ վստահության պակասը հանգեցնում է փորձի բացասական գնահատականի:

- Դատական համակարգը պետական համակարգի մաս է, և ինչպես որ քաղաքացիները վերաբերվում են պետությանը, այնպես էլ վերաբերվում են այս համակարգին: Եթե անձը պետական համակարգից դժգոհ է, այս համակարգից ևս դժգոհում է:


- Վարչա-իրավական գործերը հիմնականում կապված են լինում վարչական տույժերի հետ, որի փորձը միշտ բացասական է:

Մասնագիտական քննարկումների ժամանակ ներկայացվել են նաև այնպիսի հանգամանքներ, որոնք անկախ էլքից ունենում են ազդեցություն քաղաքացու վերաբերմունքի ձևավորման հարցում:

- Դատարանն այն միակ տեղն է, որտեղ պետական այլ մարմինների գործունեությունից դժգոհ քաղաքացին կարողանում է ամբողջությամբ արտահայտել իր դժգոհությունը, արտահայտել իր բողոքը:

- Ընդհանուր առմամբ հանրության շրջանում դատախիրավական մարմինների հետ առնչության մշակույթը բացակայում է կամ ցածր է:

- Ըստ էության քաղաքացիների գոհ-դժգոհ լինելը գրեթե հավասար է բաշխվում, քանի որ վեճի մեջ երկու կողմ կա՝ մեկը գոհ պետք է լինի, մյուսը՝ դժգոհ: Այսինքն՝ ընդհանուր առմամբ բնակչության դիրքորոշումը բացասական չէ:

 ...Երկու ճշմարտություն կա՝ մեկը մասնագիտական, մյուսը՝ ժողովրդական:

Դ. Եզրակացություն

Այսպիսով ստացվում է, որ հասարակության շրջանում դատախիրավական համակարգի նկատմամբ ձևավորված կարծիքների մեջ գերակշռում է բացասական վերաբերմունքը, ընդ որում ընդհանուր առմամբ, դատախիրավական համակարգի հետ առնչության փորձին հարցվողներն ավելի շատ բացասական (53,2%) գնահատական են տվել, որում գերակշռում են խիստ բացասական պատասխանները՝ 34,1%: Այս թվերը վկայում են հանրության շրջանում հաստատված և ձևավորված կարծիքի արտահայտման մասին, որը սակայն հիմնականում հերքվում էր ինքնագնահատման արդյունքներում: Դատական համակարգում ծառայություն մատուցողներն ավելի շատ հակված էին ենթադրելու, որ դրական վերաբերմունքի ձևավորման համար կան բոլոր անհրաժեշտ պայմանները, իսկ բացասական վերաբերմունքն ուղղակի չի բխում դատարանի գործունեությունից, այլ ավելի շատ պայմանավորված է կոնկրետ գործի էլքով կամ այն հանգամանքով որ հանրությունն ընդհանուր առմամբ դժգոհ է պետական բոլոր համակարգերից, որի անբաժանելի մաս է կազմում նաև դատական համակարգը: Միննույն ժամանակ մյուս մասնագիտական խմբերում մանրամասն վերլուծության ենթարկվեցին քաղաքացիների դժգոհ լինելու համար ծառայած հիմքերը և բերվեցին ոչ միայն լայն տարածված պատճառաբանություններ, այլ նաև մասնավոր իրավիճակներ, որոնք ազդում են հանրային կարծիքի ձևավորման վրա և որոնց բարեփոխումն ու հաղթահարումը կարող է հանգեցնել դատարանների նկատմամբ հասարակական կարծիքի բարելավմանը:

Դատական համակարգի հետ առնչության փորձը բացասական կամ դրական գնահատած մարդկանց կարծիքն, ըստ մասնագետների, պայմանավորված է առաջին հերթին կոնկրետ տվյալ անձի գործի էլքով: Հաղթող կողմը, որպես կանոն բավարարված է, պարտվողը՝ դժգոհ: Միանշանակ բացասական կարծիքը հիմնականում պատճառաբանվում է հանրության շրջանում ցածր իրավագիտակցությամբ, փոխհատուցման ինստիտուտի բացակայությամբ, գործերի քննության երկար ժամկետներով, արդարացնող դատական ակտերի սակավությամբ, նշանակվող պատժաչափի անարդարացիությամբ, անգործությամբ ու դատավարական խախտումների մեծ թիվով, ինչպես նաև ընդհանուր հանրային դժգոհ դիրքորոշմամբ: Դրական կարծիքի ձևավորման պատճառների շարքում, բացի ցանկալի էլքից, նշվում է նաև բարյացակամ վերաբերմունքը, պրոֆեսիոնալիզմը:

Ե. Մոնիթորինգի մասնակիցների առաջարկությունները

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատական մարմինների մասին կարծիք են ձևավորում նաև այն անձիք, ովքեր դատարաններ հետ երբևէ առնչություն չեն ունեցել և այդ կարծիքի ձևավորման վրա մեծապես ազդում են ՁԼՄ-ների հրապարակումները և «կողքից հայտնած կարծիքները», հասարակության մոտ ընդհանուր վերաբերմունքի և դրական նախատրամադրվածության ձևավորման նպատակով անհրաժեշտ է մշակել և արդյունավետ իրականացնել մի շարք այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են.

- Մշակել ընդհանուր PR ռազմավարություն՝ դատարանների գործունեության ճիշտ, օբյեկտիվ լուսաբանման համար:
- Վերականգնել «Իմ իրավունքը» հաղորդաշարը, որը քաղաքացիների շրջանում ոչ միայն բարձրացնում էր իրավական կրթության ու գիտակցության մակարդակը, այլ նաև նպաստում էր հանրության շրջանում դատարանի նկատմամբ հարգալից վերաբերմունքին:
- Նպաստել դատական ակտերի հասանելիության ավելացմանը, քանի որ էլեկտրոնային տիրույթը բավարար չէ հանրության պահանջարկը բավարարելու համար:

Միննույն ժամանակ կարևոր է ընդգծել, որ դատական համակարգը կարող է առավել օբյեկտիվ գնահատվել այն դեպքում, երբ այն հասկացված ու ընկալելի է հանրության համար: Հաճախ քաղաքացին անգամ չհասկանալով թե ինչ նպատակով է իրականացվում այս կամ

այն գործողությունը, եթե անգամ դա ի նպաստ իրեն է, միևնույն է խիստ բացասական վերաբերմունք է ձևավորում համակարգի նկատմամբ, ինչի բացառման համար հարկավոր է միջոցառումներ նախատեսել, որոնք կնպաստեն դատական համակարգի գործունեության վերաբերյալ ընդհանուր հասարակական գիտակցության բարձրացմանը: Մասնավորապես.

- Կրթական հաստատություններում ավելացնել ուսումնական առարկա, որը տարրական գիտելիքներ կհաղորդի քաղաքացիներին դատական համակարգի, իր հիմնական իրավունքների, դրանց պաշտպանության ներպետական մեխանիզմների մասին և այլն:

- Տպագրել տեղեկատվական թերթիկներ և բրոշուրներ, որոնք հասանելի կլինեն ցանկացած պետական հաստատությունում և կպարունակեն տեղեկատվություն այն մասին թե ով, ինչ խնդրով, ինչպես կարող է դիմել դատաիրավական համակարգի համապատասխան մարմիններին կամ վեճերի լուծման արտադատական ընթացակարգերին:

Այս շարքում ոչ պակաս կարևոր են այն խնդիրների լուծումները, որոնք ուղղակիորեն հանգեցնում են դատական համակարգի հետ առնչություն ունեցողների դժգոհությանը, որոնց ուղղությամբ հարկավոր է ձեռք առնել մի շարք օրենսդրական և ընթացակարգային բարեփոխումներ.

- Նախատեսել ֆինանսական փոխհատուցման տրամադրման արդյունավետ կարգ վկայի, տուժողի, երրորդ անձի, փորձագետի դատարան հասնելու ճանապարհաձախսի փոխհատուցման համար:

- Բարելավել և արդյունավետ դարձնել գործի նյութերի մի աստիճանից մյուսի փոխանցման կարգերը, ինչը կարող է արվել համապատասխան էլեկտրոնային համակարգի ներդրմամբ, որպեսզի բացառվեն նյութերի ու ժամանակի կորուստը:

- Ներդնել արդարացի փոխհատուցման արդյունավետ ինստիտուտ:

8. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՎԱՏԸ ԵՎ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Արդարդատություն իրականացնող ինստիտուտների նկատմամբ հանարային վստահությունը, ինչպես նաև մասնագիտական մոտեցումները գնահատվել են հետևյալ խնդիրների միջոցով.

- ✓ Որքանով է հանրությունը վստահում դատարաններին,
- ✓ Որքանով է հանրությունը դրական զարգացումներ տեսնում դատաիրավական համակարգում:

8.1. Որքանով է հանրությունը վստահում դատարանին

Ա. Հանրային ընկալումը

Հարային ընկալման արդյունքների համաձայն՝ դատարանի գործունեությանը լիովին վստահում է մոտ 4%-ը, մինչդեռ բացարձակ չի վստահում 31%-ը, մոտ 8 անգամ պակաս:

Ընդհանուր վստահության՝ 34% և անվստահության՝ 60%-ի միջև գրեթե կրկնակի տարբերություն է առկա:

Տարբերակներ	Տոկոսային բաշխվածություն
Լիովին վստահում եմ	3.6%
Ավելի շուտ վստահում եմ	28.9%
Բացարձակ չեմ վստահում	31.2%
Ավելի շուտ չեմ վստահում	28.5%
Հրաժարվում է պատասխանել	1.6%
Դժվարանում է պատասխանել	6.2%

Դատարանների նկատմամբ համեմատաբար վստահության մեծ աստիճան է առկա այն դեպքում, երբ տեղեկատվությունը ստացվել է հետևյալ աղբյուրներից. 1) դատարանի պաշտոնական կայք՝ 47,6%, 2) էլեկտրոնային տեղեկատվական կայքեր՝ 45,8%, 3) կինոնկարներ, հաղորդումներ՝ 44,4%, 4) մասնագիտական գրականություն՝ 42,9%, 5) ընկեր/բարեկամների խոսակցություններ՝ 42,1%:

Վստահության ցածր մակարդակ է առկա այն դեպքում, երբ տեղեկատվությունը ստացվում է հետևյալ աղբյուրներից 1) ռադիո՝ 22,2%, 2) տպագիր մամուլի տեղեկատվական աղբյուրների պարագայում՝ 23,4%:

Տեղեկատվության տարբեր հատկանիշների առկայության պայմաններում դատարանների նկատմամբ վստահության մակարդակը տարբեր է: Որքան տեղեկատվությունը հավաստի է, այնքան վստահության մակարդակը բարձր է՝ 59,8%: Այնուհետև վստահության համեմատաբար բարձր մակարդակ է առկա տեղեկատվության օպերատիվության՝ 58,4% և մանրամասնության՝ 54,1% դեպքերում:

Դատաիրավական համակարգի հետ **առնչություն ունեցողների** տեսակետների հետ համեմատության արդյունքում պարզ է դառնում, որ նվազում է խուսափողական պատասխանների թիվը, փոխարենը մեծանում է անվստահության մթնոլորտը 7,7%-ով: Դատական համակարգի վերաբերյալ միջինից բարձր անվստահության մթնոլորտ է ձևավորվում առաջին հերթին վերջինիս գործառնության մասին բացարձակ անտեղյակ լինելով՝ 62,2% դեպքում, սակայն այն անձանց խումբը, ովքեր լիովին տեղեկացված են դատարանի գործունեության վերաբերյալ, միննույն է արտահայտում են անվստահության բարձր աստիճան՝ 58,8%: Իրենց լիովին տեղեկացված համարող հարցվողները հստակ վերաբերմունք են արտահայտել, մինչդեռ ավելի շատ խուսափողական պատասխանները տվել են համակարգի գործունեությունից բացարձակ անտեղյակ հարցվողները:

Բ. Ինքնագնահատման արդյունքներն ու մեկնաբանությունները

Հանրային վստահության մակարդակի վերաբերյալ համակարգի ծառայություն մատուցողները մտահոգություններ չեն դրսևորում: Անվստահության հանրային գնահատման արդյունքները վերջիններիս կարծիքով ցածր չէ, քանի որ գրեթե հավասար է դատարանի որոշումներից կողմերի գոհունակության և դժգոհության բաշխվածության չափաբաժնին: Դատարանի որոշումների կեսը չի լուծում կողմերից մեկի խնդիրը, հետևաբար, օրինակ՝ պարտվող կողմը կձևավորի անվստահություն:

Ավելի փոքր խմբի մոտեցումներով հանրային վստահության մակարդակը մտահոգող է, առավել ևս, երբ համակարգում իրականացված փոփոխություններով ջանքեր են գործադրվել վստահության ձևավորման համար:

Վստահության մակարդակը մտահոգող է

- Դատարանի գործունեության նկատմամբ վստահության ցածր մակարդակի մասին տեղեկություններ են տարածում նաև լրատվամիջոցները, և անվստահությունը բացատրվում է առավել ադմկահարույց գործերի առնչությամբ կայացված որոշումներով:

Վստահության մակարդակը բարձր է

- Դատարանների գործունեության նկատմամբ վստահության մակարդակը բավարար է, եթե վստահություն չլիներ, դատարան ներկայացվող հայցերի քանակը գնալով չէր աճի:

- Այն քաղաքացիները, ովքեր դատարանի հետ առնչվել են, հասկանում են և գիտեն համակարգի մասին, նրանց վստահության մակարդակը մեծ է: Առավել ևս, այն քաղաքացիները, ովքեր իրենց վեճի լուծման համար դրական որոշում են ստացել, իսկ այն խումբը, ով չի վստահում, չի ընկալում դատարանի գործունեությունը:

Դատախազության կողմից բողոքարկումների մեծ թիվը որպես անվստահության հիմք

- Քրեական դատավարության ոլորտում ավելի մեծ թվով բողոքներ են ներկայացվում դատախազության կողմից: Սա է ցուցիչը, թե ինչու քաղաքացիները չեն վստահում դատարանին:

Դատարանի գործունեության հետ առնչությունը որպես անվստահության հիմք

- Վստահության դրսևորումը պայմանավորված է այն հանգամանքով, թե արդյոք անձն առնչություն ունեցել է դատարանի հետ: Եթե անձը չի առնչվել դատարանին, ապա նրա համար վստահության խնդիր չպետք է լինի:

Անհատի գործունեությունը որպես դատարանի նկատմամբ անվստահության հիմք

- Դատարանի գործունեության նկատմամբ վստահությունը պայմանավորված է ոչ թե համակարգի գործունեությամբ, այլ անհատի գործունեությամբ:

✚ Բսկ էն, որ վստահում ա, կախված է նրանից, թե որ դատավորի մոտ ա գնացել: Էսօր մենք չունենք համակարգային մոտեցում, մենք ունենք անհատ դատավորներ համակարգում, ովքեր իրականացնում են պատշաճ արդարադատություն:

✚կան քաղաքացիներ, որոնց մոտ դատավորը՝ սրիկայության՝ կանխավարկած է:

✚ վստահությունը գալիս ա նաև մարդկանց կենսամակարդակից. եթե մարդկանց կենսամակարդակը ցածր է, ուրեմն իրենք իրենց նկատմամբ ունեն վստահությունը ցածր:

✚ Եթե մարդիկ լավ են ապրում, կենսամակարդակը բարձր է, ու իրենք էլ նաև վճարունակ են, որովհետև որակյալ արդարադատությունը թանկ արժի էն իմաստով, որ եթե ինքը ներգրավի որակյալ պաշտպան, իր պահանջը որակյալ ձևակերպի, և դատարանն էլ դրան համապատասխան ամբողջական բավարարի իրա պահանջը, ինքը շատ զոհ կլինի:

Գ. Մասնագիտական գնահատման արդյունքներն ու մեկնաբանությունները

Մասնագիտական խմբերի մոտեցումներով ևս պաշտպանվում է ինքնագնահատման այն կարծիքը, որ դատարանի գործունեության վերաբերյալ հանրային վստահությունը բարձր է: Նման տեսակետը որպես փաստարկ հիմնականում հակված է ներկայացնելու համակարգում տեղի ունեցած բարեփոխումները: Ի հավելումն, մասնագիտական մոտեցումներով են առաջ են քաշվել այնպիսի մոտեցումներ, որոնցով դատարանի նկատմամբ վերաբերմունքի հիմնական պատճառը բացատրվել է պետական ընդհանուր համակարգի նկատմամբ անվստահությամբ, իրավագիտակցության պակասով:

Վստահության մակարդակը բարձր է

- Դատարանի գործունեության նկատմամբ վստահությունը բարձր է, այս մասին են վկայում բարեփոխումները:
- Դատարանի գործունեության նկատմամբ վստահությունը բարձր է, քանի որ դատարանում գործի քննությունը հրապարակային է ու մատչելի քաղաքացիների համար:

Պետական համակարգից ընդհանուր դժգոհությունը որպես դատարանի նկատմամբ անվստահության հիմք

- Դատարանի գործունեության նկատմամբ հանրային վստահության մակարդակը ցածր է, քանի որ քաղաքացիները պետական ընդհանուր համակարգից դժգոհ են: Այնուամենայնիվ, միշտ չէ, որ դժգոհության վրա ձևավորված այդ անվստահությունն արդարացված է:

- Դատարանի գործունեության նկատմամբ անվստահությունը պայմանավորված է երկրի ընդհանուր ներքաղաքական իրավիճակով: Հասարակության մեջ բոլոր պետական կառույցների նկատմամբ անվստահություն կա:

- Դատարանի գործունեության նկատմամբ վստահության մակարդակը պայմանավորված է սոցիալական վիճակով, որը ծնում է պետական համակարգի նկատմամբ ընդհանուր անվստահություն:

Իրավագիտակցության պակասը որպես դատարանի նկատմամբ անվստահության պատճառ

- Դատարանի գործունեությունը պարունակում է կոռուպցիոն ռիսկեր, անկախության առնչությամբ կա մեծ մտահոգություն: Սրանք հիմք են անվստահության համար: Այնուամենայնիվ, մեծ դեր է խաղում նաև քաղաքացիների ցածր իրավագիտակցությունը: Քաղաքացիները դիմում են դատարան, օրինակ՝ երբ դատարան դիմելու համար ժամկետները սպառվել են, մերժում ստանալով, դատարանի նկատմամբ բացասական վերաբերմունք են դրսևորում:

- Դատարանի գործունեության նկատմամբ վստահության ցածր մակարդակը պայմանավորված է քաղաքացիների ցածր իրավագիտակցությամբ: Օրինակ՝ անձը կատարում է հանցագործություն, որի համար դատապարտվում է 2 տարի ազատազրկման, մեկ այլ անձ նույն հանցանքի համար դատապարտվում է 5 տարի ազատազրկման՝ հաշվի առնելով մի շարք հանգամանքներ՝ նախկինում դատապարտված լինելը և այլն: Մինչդեռ, հասարակության շրջանում կարծիք է ձևավորվում, որ նույն հանցանքի համար մեկը 2 տարի է դատապարտվում, մյուսը՝ 5, ուրեմն կոռուպցիոն ռիսկեր կան:

Դ. Եզրակացություն

Այսպիսով, հանրային կարծիքի ուսումնասիրության արդյունքում արձանագրված դատարանի նկատմամբ ընդհանուր վստահության՝ 34% և անվստահության՝ 60%-ը ինքնազնահատման մասնակիցների կողմից մտահոգիչ չի համարվել, քանի որ, ըստ նրանց, այս ցուցիչը գրեթե հավասար է դատարանի որոշումներից կողմերի գոհունակության և դժգոհության բաշխվածության չափաբաժնին: Դատարանի որոշումների կեսը չի լուծում կողմերից մեկի խնդիրը, հետևաբար, օրինակ՝ պարտվող կողմը կձևավորի անվստահություն:

Մասնագիտական խմբերի մոտեցումներով ևս պաշտպանվում է ինքնագնահատման այն կարծիքը, որ դատարանի գործունեության վերաբերյալ հանրային վստահությունը բարձր է:

Ե. Մոնիթորինգի մասնակիցների առաջարկությունները

Տե՛ս 8.2. կետի ներքո ընդհանրացված:

8.2. ԴՍՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ ՎԵՐՋԻՆ 5 ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ա. Հանրային ընկալումը

Հանրային հարցումների արդյունքների համաձայն՝ հարցվողների 32%-ի ընկալմամբ դատական համակարգը վերջին հինգ տարիներում փոփոխություն չի կրել և մնացել է նույնը: Հարցվածներից 22%-ի ընկալմամբ՝ դատական համակարգի գործունեությունը բացասական փոփոխության է ենթարկվել, այսինքն՝ վատացել է:

Ընդհանուր հարցվածներից միայն 20%-ի ընկալմամբ է դատախիրավական համակարգում առկա դրական տեղաշարժ և նկատելի է բարելավում:

Ընդ որում, դրական փոփոխությունների վերաբերյալ ընկալումը մեծ տոկոս է կազմում գյուղական բնակավայրերից հարցվածների մոտ՝ գյուղական բնակչության 31,2% ընկալմամբ դատախիրավական համակարգի գործունեությունը վերջին հինգ տարիների ընթացքում բարելավել է և միայն 17.1% ընկալմամբ է այն վատթարացել:

Ի հակադրություն գյուղական համայնքների բնակչության ընկալման՝ Երևան քաղաքի և մարզային քաղաքների բնակչության ընկալմամբ վատթարացման միտումն ավելի մեծ է, քան բարելավման միտումը: Երևան քաղաքի և մարզային քաղաքների բնակչության 38%-ի ընկալմամբ դատախիրավական համակարգի գործունեությունը բարելավել է և 45%-ի ընկալմամբ՝ վատթարացել է:

Հատկանշական է, որ ընդհանուր կարծիքներից միայն առնչություն ունեցողների ընկալումը դատախիրավական համակարգի փոփոխությունների վերաբերյալ, առանձնացված տարբերակով ձևավորել է հետևյալ պատկերը:

Դատաիրավական համակարգի փոփոխության ընկալումն ըստ առնչություն ունեցողների (ընդհանուր հարցվածների 14%-ը վերջին հինգ և ավել տարիների ընթացքում առնչվել է դատարանների հետ)		
1.	Բարելավել է	23.4%
2.	Մնացել է նույնը	33.1%
3.	Վատթարացել է	23.4%
4.	Դժվարանում է պատասխանել	20%

Բ. Ինքնագնահատման արդյունքներն ու մեկնաբանությունները

Դատական համակարգում տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ ինքնագնահատման արդյունքներով գերակշռում են դրական որակական փոփոխությունների վերաբերյալ պնդումները: Նշված ժամանակահատվածում իրականացվել են թե՛ օրենսդրական, թե՛ պրակտիկ բարեփոխումներ: Օրինակ՝ դատավորի կարգավիճակի օրենսդրական ամրագրումը, իրավակիրառական պրակտիկայում նախադեպային իրավունքի զարգացման միջոցով վճռաբեկ դատարանի դերի բարձրացումը, դատարանի գործունեության թափանցիկության և հրապարակայնության մեծացումը և այլն: Առավել քիչ ներկայացված բացասական փոփոխությունների բնութագրերն ամփոփում են օրենսդրական բացերի, գործերի ծավալի մեծացմանը զուգահեռ մարդկային, նյութական, ֆինանսական և տեխնիկական ռեսուրսների անբավարարությունը և այլն:

Ինքնագնահատման արդյունքները հնարավորություն են ընձեռում գնահատել նաև դատական համակարգի փոփոխությունների վերաբերյալ հանրային ընկալումների հիմնավորումներն ու մեկնաբանություններն այն առնչությամբ, թե ինչու դրական փոփոխությունները հանրության համար ընկալելի և տեսանելի չեն:

1. Դրական փոփոխություններն ըստ ինքնագնահատման արդյունքների

Օրենսդրական դրական փոփոխություններ

- 2005 թվականի սահմանադրական փոփոխությամբ Վճռաբեկ դատարանի լիազորություններն ընդլայնվեցին՝ ձևավորելով նախադեպի վրա հիմնված իրավակիրառական պրակտիկա:

- Քրեական դատավարության և քաղաքացիական նոր օրենսգրքերի, Դատական օրենսգրքի ընդունումը բավականին դրական փոփոխություններ ապահովեցին²:

² Թեև նշված օրենսդրական փոփոխություններն ավելի վաղ են իրականացվել, այնուամենայնիվ, դրանք վերագրվում են որպես վերջին հինգ տարիների իրականացված բարեփոխումներ:

- Դատավորի կարգավիճակը ենթարկվեց իրավական փոփոխությունների՝ նպաստելով դրական զարգացումների:

Հասարակության պահանջատիրությունը և իրավագիտակցության մեծացումը

- Բնակչության պահանջները և ակնկալիքները դատարանից փոփոխվել են՝ նպաստելով դրական տեղաշարժերի:
 - Ժողովրդի իրավական գիտակցությունը, համեմատած նախկին ժամանակաշրջանի հետ, մեծացել է: Այս մասին վկայում են դատարան ներկայացվող դիմումների թիվը, բոլոր այն դեպքերում, երբ անձը գտնում է, որ իր իրավունքները խախտվել են, դիմում է դատարան՝ հույս ունենալով, որ դատարանում այն կվերականգնվի:

Իրավակիրառական պրակտիկայի դրական փոփոխությունը

- Քրեական արդարադատության ոլորտում կարգումների բարելավումը՝ նախադեպային որոշումների միջոցով (Վճռաբեկ դատարանի դերի մեծացում): Նախադեպային որոշումները, շատ դեպքերում, հնարավորություն են ընձեռում լուծումներ տալ չկարգավորված հարցերին:
 - Դատական ակտերի կանխատեսելիության մեծացում:
 - Դատական ակտերի պատճառաբանվածության մեծացում:
 - Մրցակցային դատավարության ուղղությամբ ընթացող արդյունավետ աշխատանք: Այս հանգամանքը միտված է կողմերի իրավահավասարության, զենքերի հավասարության ապահովմանը, և բացառում է որևէ կաշկանդվածություն թե՛ պետական մարմիններից, թե՛ անհատ անձանցից, թե՛ հասարակական կարծիքից:

Հրապարակայնության, թափանցիկության, դատական ակտերի հասանելիության մեծացումը


- Էլեկտրոնային արձանագրման համակարգի ներդրումը:
 - Դատական ակտերի ավելի հրապարակային հասանելիության ապահովում՝ դատական տեղեկատվական համակարգի՝ datalex.am կայքի միջոցով:
 - Դատական ծանուցումների մակարդակի բարձրացում:

Մասնագիտացվածության զարգացումը և արդարադատության որակի բարելավումը

- Աշխատանքի ծանրաբեռնվածությունը բացասական հետևանքների հետ միաժամանակ նպաստել է աշխատանքի որակի բարձրացմանը, քանի որ դատավորները ստիպված են աշխատել իրենց վրա:
- Տարբերակվել են քրեական, քաղաքացիական, վարչական գործերը և դատավորները մասնագիտացվել են, գործերի որակը բարձրացել է:
- Դատական համակարգը համալրվում է երիտասարդ կադրերով, որոնք բավականին պատրաստված են ու հենց պաշտոն ստանձնելու օրվանից կարող են ամենայն լրջությամբ ստանձնել ամենաբարդ գործը: Միաժամանակ երիտասարդներն ավելի խիզախ են, աշխատում են անկաշկանդ, անկախ ու համարձակ:
- Մասնագիտացվածության մեկ այլ դրսևորում է նաև արդարադատության ակադեմիայի ստեղծումը:

Աշխատանքային պայմանների (տեխնիկական միջոցներով հագեցվածության) բարելավումը

- Դատարանների շենքերը բարելավվել են, նոր շենքեր են կառուցվել:
- Ստեղծվել են դատավորի աշխատանքի համար բարենպաստ պայմաններ, ինչը պայմանավորված է առկա տեխնիկական հագեցվածությամբ:

 *Հայաստանում դատական համակարգը ամեն օր է փոխվում ու շատ է փոխվում: Միգուցե հանրության համար այդքան էլ տեսանելի չլինի, բայց մասնագիտական հանրության համար, օրինակ՝ փաստաբանների, դատախազության և այլնի համար, շատ է փոխվել:*

II. Դատական համակարգի գործունեության վատթարացումներն ըստ ինքնազնահատման մոտեցումների

Օրենսդրական բացասական փոփոխությունները

- Օրենսդրական բացեր դեռևս շատ կան: Օրենքներ կան, որոնք դեռ լրամշակման կարիք ունեն: Օրենսդրական դաշտում համարժեք ծավալով փոփոխություններ չեն եղել:
- Վերջին ժամանակներում դատավորների վերաբերյալ բավականին բացասական որոշումներ ընդունվեցին՝ կապված աշխատավարձի հետ: Դատավորների սոցիալական երաշխիքները խիստ նվազ են և ոչ բավարար: Հաճախ դատավորի առողջությանը վտանգ սպառնալու հարցեր են լինում, և այդ հարցերը լուծելու համար օժանդակություն չկա:

✚ «Ոչ մի փոփոխություն էլ չի եղել, գործերի քանակն է շատացել, հիմնականում կապված է բանկային գործերի հետ, ամեն դեպքում աշխատանքը շատացել է»:

✚ «Ամեն մեկս ունենում էր 350-400 գործ տարեկան, իսկ հիմա մի դատավորի մուտքը 2600 գործ, 1300 վճիռ կայացրած, 1300 վճիռ, մի հատ բաժանեք աշխատանքային օրերի»:

✚ «...իրականում մարդ չի կարող տեղավորվել, ով է տեսել 30-40 գործ լսի մեկ օրվա ընթացքում... »

✚ Ես մեկ-մեկ մտնում եմ իմ կոլեգաների սենյակը և ճիշտն ասած, վատ եմ ինձ զգում, որ տեսնում եմ, որ պատերի տակ գործերը շարած են: Անգամ սեյֆերում տեղ չունեն, որ դնեն: Դա է պրոբլեմը:

✚ Տեղի է ունենում այն, որ եթե դատավորը աշխատում է որոշակի ժամանակահատվածում, իր աշխատավարձի տոկոսները բարձրանում են, ապա որոշակի ժամանակից հետո այլևս չեն բարձրանում: Այսինքն՝ նրա աշխատած տարիները չեն խրախուսվում:

Իրավակիրառական պրակտիկայի բացասական փոփոխությունը

- Դատարան ներկայացվող գործերի քանակը ավելացել է մոտ 5-6 անգամ, սակայն մարդկային ռեսուրսները՝ դատավորներ և դատավորին օժանդակող անձնակազմ, մնացել է նույնը, ինչը ձևավորել է գերծանրաբեռնված աշխատանքային պրակտիկա: Պայմանավորված ծանրաբեռնվածությամբ՝ դատական ակտերի որակը տուժում է:

Ինչո՞ւ դատական համակարգի դրական փոփոխությունները ընկալելի/տեսանլի չեն հանրության համար

- Հանրության շրջանում կա նախատրամադրվածություն և աշխատող կառույցներին, այդ թվում նաև դատարանին, քննադատելը ներդրված սովորություն է: Պատճառն այն է, որ դատարանի գործունեության բացասական դրսևորումների ուղղությամբ մեծ քարոզչություն է տարվում, նույնիսկ այն մարդկանց կողմից, ովքեր չեն էլ առնչվել, տեղեկություններ չունեն: Արդյունքում ձևավորվում է դատարանի գործունեության նկատմամբ բացասական հանրային ընկալում:

- Քաղաքացիական հայցերով գործերի մեծ մասը վերաբերում են բռնագանձման պահանջներին, որոնք օբյեկտիվորեն ի սկզբանե մի կողմի համար առաջացնելու են

բացասական հետևանք, հետևաբար, նման որոշումների արդյունքում հանրության մի զգալի զանգված դատարանից դժգոհ է մնում, ձևավորում է բացասական վերաբերմունք:

- Քաղաքացիները դատարան դիմում են այն դեպքում, երբ այլևս որևէ հնարավորություն խնդրի կարգավորման համար չի գործում: Այլ պետական մարմինների անարդյունավետ գործունեության հետևանքով բացասական թիրախ է դառնում դատարանը:

- Երկրում օբյեկտիվ տեղեկատվության պակաս կա. բացառապես թիրախավորվում են դատարանի գործունեության բացասական դրսևորումները, դրական զարգացումները, դրական ելք ունեցող գործերը չեն լուսաբանվում: Լրատվամիջոցների ներգրավվածությունը դրսևորվում է մի կողմի նախաձեռնությամբ, և լրատվամիջոցը գալիս է դատարան պաշտպանելու կոնկրետ կողմի: Մինչդեռ, դատարանը լրատվամիջոցների հետ չի կարող հաղորդակցվել, որպեսզի պարզաբանումներ և բացատրություններ ներկայացնի:

Բացի այդ, իրավաբանորեն կրթված լրագրողները շատ քիչ են, և սա ևս խնդիրներ է առաջացնում:

- Հանրությունը դատարանի գործունեության վերաբերյալ բավարար տեղեկություն չունի: Եղածն էլ հիմնականում կենցաղային մակարդակի տեղեկատվություն է, որի հիման վրա դուրս են բերվում իրականությանը չհամապատասխանող եզրահանգումներ: Հանրությունը չի կարող օբյեկտիվ գնահատել:

....արդարությունը չի կարող դրվել քննարկման, արդարությունը չի կարող վաճառվել, արդարությունը չի կարող նվիրվել:

Գ. Մասնագիտական գնահատման արդյունքներն ու մեկնաբանությունները

Մասնագիտական խմբերի մոտեցումների շրջանակում արտահայտվում է ինքնագնահատման արդյունքներն այն մասով, որ առավել մեծ կշիռ են ստանում դատական համակարգում տեղի ունեցած դրական փոփոխությունների վերաբերյալ պնդումները: Որպես դրական փոփոխությունների դրսևորումներ են ներկայացվում օրինակ՝ դատավորի անկախության երաշխիքների մեծացման, դատարանի վարչարարության իրականացման գործում տեղի ունեցած դրական փոփոխությունները: Մասնագիտական մոտեցումները դատական համակարգի գործունեության բացասական զարգացումներ գրեթե չեն տեսնում:

Դատավորի կարգավիճակի ամրապնդումը

- Դատավորները գրեթե չունեն կաշկանդվածություն այլ պետական մարմիններից, որոնց մեջ վճռորոշ դերը ունեցել է դատախազությունը: Եթե կա նույնիսկ կաշկանդվածություն, այն չի կրում համակարգային բնույթ, այլ պայմանավորված է անձնական հատկանիշներով:

- Դատարանի նախագահի լիազորությունները նվազեցվել են՝ ապահովելով դատավորների գործունեության անկախությունը: Սա դրսևորվում է նրանում, որ դատարանի նախագահի փոխարեն գործերը մակագրվում է համակարգչային կարգով:

Իրավակիրառական պրակտիկայի դրական փոփոխությունը

- Արդարացման որոշումների թիվն ավելացել է, ինչը վկայում է, որ դատավորներն ավելի ինքնուրույն և անկախ են գործում:

Մասնագիտացվածության զարգացումը և արդարադատության որակի բարելավումը

- Երիտասարդ դատավորների համալրմամբ արդարադատության որակը բարձրացել է: Այս հանգամանքը, բացի անհատական գործերի վրա դրական ազդեցությունից, միաժամանակ, համակարգի վրա է ազդեցություն ունենում՝ խթանելով նաև մյուս դատավորների գործունեությունը:

- Մեծացել է որոշումների հիմնավորվածությունը:

Հրապարակայնության, թափանցիկության մեծացումը

- Սահմանվել է հանրային վերահսկողություն հանձինս լրատվամիջոցների, որոնք լուսաբանում են ոչ միայն առանձին գործեր, այլ նաև դատավորների գործունեությունը:

Դատական համակարգի գործունեության վատթարացումներն ըստ մասնագիտական մոտեցումների

Իրավակիրառական պրակտիկայի բացասական փոփոխությունը

- Գործերի համակարգչային մակագրության համակարգի ներդրումն ամբողջությամբ հնարավորություն չի տալիս լուծել այն խնդիրները, օրինակ՝ երբ դատավորն արձրակուրդ է գնում: Միաժամանակ, համակարգը մարզերում չի գործում:

...եթե մեղավորը արդարացվում է բնականաբար ինքը չի հավատալու արդարադատությունը, եթե անմեղն է դատապարտվում էլի չի հավատալու...

Դ. Եզրակացություն

Դատական համակարգի գործունեության փոփոխությունների գնահատման արդյունքներով խիստ առանձնանում և տարբերակված մոտեցումներ են դրսևորվում մի կողմից հանրային ընկալումների, մյուս կողմից ինքնագնահատման և մասնագիտական խմբերի մոտեցումներում: Եթե ինքնագնահատման և մասնագիտական մոտեցումներով մատնանշվում են և գերակշռում են դրական փոփոխությունները, ապա հանրային ընկալումներում՝ դրական փոփոխության հարաբերակցությունն ավելի փոքր է, և առավել մեծ է համակարգում որևէ փոփոխություն չտեսնելու հակվածությունը:

Ակնհայտ է, որ ինքնագնահատման և մասնագիտական կարծիքներով հիմնավորվող այն մոտեցումը, որ դատական համակարգում տեղի են ունեցել դրական փոփոխություններ, հանրության համար տեսանելի և ընկալելի չէ: Ձևավորված նման իրավիճակը կարող է պայմանավորված լինել մի շարք գործոններով.

- Տեղի ունեցած փոփոխությունները՝ վարքագծի և համակարգի գործելաոճի, ընդհանուր առմամբ չեն հանգեցրել կամ քիչ են հանգեցրել փոփոխության:
- Փոփոխությունների համար ներդրված լուծումները համակողմանիորեն և ամբողջ ծավալով չեն հասցեագրել համակարգի գործունեության ոլորտում դրսևորվող խնդիրները (օրինակ՝ դատավորի աշխատավարձի բարձրացմանը զուգընթաց սոցիալական ապահովության երաշխիքները չեն ամրապնդվել, դատավորի և օժանդակող անձնակազմի նյութական և տեխնիկական ապահովվածությունը չի համապատասխանեցվել աշխատանքի ծավալի մեծացմանը և այլն):

Ընդհանուր առմամբ, ըստ ուսումնասիրության ամբողջացված և համադրված արդյունքների՝ Հայաստանում դատական համակարգում տեղի ունեցած փոփոխությունները արդարադատության որակի հանրության համար տեսանելի, դրական փոփոխության չեն հանգեցրել: Ավելին, թեև ինքնագնահատման և մասնագիտական կարծիքները ներկայացնում են համակարգի դրական փոփոխությունները, այնուամենայնիվ, նույն խմբերի արտահայտած տեսակետներում բովանդակային տեսանկյունից արդարադատության որակի փոփոխության վերաբերյալ կարծիքներն ավելի փոքր մաս են կազմում կամ բացակայում են:

Ե. Մոնիթորինգի մասնակիցների առաջարկությունները

Դատարանի նկատմամբ հանրային վստահության մեծացման ուղղությամբ անհրաժեշտ է ձեռնարկել համակողմանի աշխատանքներ՝ դրանք հասցեագրելով արդարադատության

բոլոր ոլորտների առնչությամբ հանրության կարիքների ու ակնկալիքների բավարարմանը:
Այս առումով, առաջարկվում է.

- Մեծացնել դատական իշխանություն-հանրություն հաղորդակցության արդյունավետությունը՝ դրա մեջ ներառելով հանրության կողմից նույնականացված բովանդակային խնդիրները:

- Ներդնել լրատվամիջոցների հետ թիրախային և թեմատիկ աշխատանքների պրակտիկա:

- Զարգացնել դատական համակարգի ծառայություն մատուցողների կարողությունները:

- Բարձրացնել հանրության համար դատարանի որոշումների, ինչպես նաև ընթացակարգային այլ կարգավորումների կանխատեսելիությունը:

9. ԾՐԱԳՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դատարանների վերաբերյալ

1. Անկախություն

Դատական իշխանության անկախություն և բյուջեն

Ինչպես արդեն հաստատվել է, դատարանների անկախության վրա մեծ ազդեցություն է թողնում դատարանների ֆինանսավորումը և այն երկրները, որոնք ձգտում են դատարանների անկախության մեծացմանը, պետք է համապատասխան օրենսդրական և քաղաքականությանն ուղղված քայլեր ձեռնարկեն դատարանների բյուջեի պլանավորման և կառավարման համար³: Դատավորի կողմից կոնկրետ գործով որոշում կայացնելու իրավասությունը չպետք է սահմանափակվի ռեսուրսների արդյունավետ օգտագործման անհրաժեշտությամբ⁴:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դատական նոր օրենսգիրքը և դատաիրավական բարեփոխումների ծրագիրը գտնվում են մշակման փուլում, պետք է ապահովել երկու խումբ միջոցառումների իրականացումը:

- Մեծացնել դատական բյուջեն՝ հաշվի առնելով միջազգային մի շարք չափանիշներ⁵:
 - i) Դատավորին օժանդակել բավարար կարողություններով օժտված սպասարկող անձնակազմով⁶, և ձևավորել դատարանների քարտեզ՝ ըստ մարզերի դատավորների համարժեք բաշխվածությամբ⁷:
 - ii) Դատարաններին հատկացնել համարժեք ռեսուրսներ, ապահովել տեխնիկական հագեցվածությամբ՝ աշխատանքի արդյունավետությունը երաշխավորելու նպատակով⁸:

³ Տես նույն տեղում, էջ 22

⁴ CM/Rec(2010)12, կետ 34

⁵ Eastern Partnership Enhancing Judicial Reform in the Eastern Partnership Countries Working Group on “Efficient Judicial Systems” PROJECT REPORT, Strasburg 2013, էջ 9

⁶ CM/Rec(2010)12, կետ 35

⁷ Greco Eval IV Rep (2015) 1E, Adoption: 16 October 2015,

<https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806c2bd8>, էջ 28

⁸ CM/Rec(2010)12, կետ 33

- Դատական բյուջեն կազմել դատավորների մասնակցությամբ և պատշաճորեն հաշվի առնել դատարանների կարիքները:
- i) Սահմանել դատարանների տեխնիկական և նյութական կարիքների գնահատման գործընթաց մինչև դատական բյուջեի մշակումը:
- j) Ներդնել այնպիսի գործընթաց, որը խորհրդարանում դատական բյուջեի հաստատման ժամանակ ապահովում է դատավորների մասնակցությունը և հաշվի է առնում նրանց կարծիքը⁹:

Դատական իշխանության անկախությունն ու դատական իշխանության ինքնակառավարման մարմինները

Դատական իշխանության անկախության ապահովման գործում դատական ինքնակառավարման համակարգը առանցքային նշանակություն ունի¹⁰:

Համաձայն ԵԽ փորձագետների կողմից իրականացված գնահատման և ԳՐԵԿՈ-ի ուսումնասիրության, ՀՀ ներպետական օրենսդրությամբ (մինչև 2015 Սահմանադրական փոփոխությունները) Արդարադատության խորհուրդը չի դիտարկում որպես դատական իշխանության ինքնակառավարման համակարգի մաս, չնայած որ խորհրդի իրավական կարգավիճակը թույլ է տալիս հանդես գալ որպես ինքնակառավարման մարմին¹¹:

2015 թվականի Սահմանադրական փոփոխությունները այս առումով որոշ բարելավում են ապահովել, սակայն որոշ հարցեր թողնված են օրենքի կարգավորմանը: Հետևաբար, ներկայացվող առաջարկություններն առաջնային են և պետք է հաշվի առնվեն Բարձրագույն դատական Խորհրդի (Խորհուրդ) դերի և գործառույթների օրենսդրական կարգավորումների սահմանման ժամանակ:

- Հստակցնել Խորհրդի դերն ու գործառույթները, մասնավորապես գոյություն ունեցող այլ դատական ինքնակառավարման մարմինների լույսի ներքո: Հարկ

⁹ CCJE (2001) OP N°2, կետ 10.

¹⁰ Magna Carta, կետ 13

¹¹ Eastern Partnership Enhancing Judicial Reform in the Eastern Partnership Countries Working Group on Independent Judicial Systems PROJECT REPORT Judicial self-governing bodies Judges' Career, Strasburg 2013, էջ 13

կլինի հաշվի առնել Խորհրդին Ղատարանների նախագահների խորհրդի լիազորությունների փոխանցման հնարավորությունը¹²:

- Հստակեցնել Բարձրագույն դատական Խորհրդի, երկրի ղեկավարի, Արդարադատության նախարարության և Խորհրդարանի միջև փոխհարաբերությունները¹³:
- Երաշխավորել Խորհրդի անկախությունը քաղաքական ուժերից՝ բացառելով Խորհրդի գործունեության նկատմամբ Խորհրդարանի կամ գործադիր իշխանության կողմից եկող ցանկացած ճնշում¹⁴:
- Խորհրդի ոչ դատավոր անդամներին ընտրել հայտնի իրավաբանների, դասախոսների կամ հանրային հեղինակություն վայելող քաղաքացիների խմբերից: Խորհրդի նման կազմը կապահովի հանրային ներկայացվածությունն ու բազմազանությունը¹⁵:
- Ապահովել Արդարադատության խորհրդի պատշաճ ֆինանսավորում, այնպես, որ վերջինս կարողանա իր գործառույթներն արդյունավետորեն իրականացնել: Պետք է բավարար նարավորություն ընձեռնվի անկախ և ինքնուրույն գործելու համար¹⁶:
- Բոլոր այն դեպքերում, երբ օրեսդրական նախագծերը վերաբերում են դատավորների կարգավիճակին, արդարադատության իրականացմանը և բոլոր այն հարցերին, ինչը կարող է ազդել դատական իշխանության վրա, կազմակերպել խորհրդակցություն Խորհրդի հետ մինչև նախագծերի ներկայացնելը կամ հաստատելը Խորհրդարանի կողմից¹⁷:

Անկախություն և հաշվետվողականություն

Հաշվի առնելով ընթացող օրենսդրական նախագծերի և դատաիրավական բարեփոխումների ծրագրի մշակման աշխատանքները, ինչպես նաև Սահմանադրության 2015թվականի

¹² On the multiplicity of judicial self-governing bodies see Venice Commission views at CDL-AD(2002)026 Opinion on the Draft Law on Judicial Power and Corresponding Constitutional Amendments of Latvia, կետ. 11-12 էջ 64.

¹³ CCJE Opinion no.10(2007), էջ 13

¹⁴ CCJE Opinion no.10(2007), կետ 19

¹⁵ Modern management of the judiciary might also require wider contributions from members experienced in areas outside the legal field (e.g. in management, finances, IT, social sciences). See also Venice Commission standards, CDL-AD(2002)021 Supplementary Opinion on the Revision of the Constitution of Romania, կետ. 21-22.

¹⁶ CCJE Opinion no.10(2007), էջ 38

¹⁷ CEPEJ Opinion no.10(2007), կետ 87

փոփոխությունները, փորձագետները հարկ են համարում առաջարկել առավել ընդլայնված միջազգային չափանիշներ, որոնք արտացոլում են իրականացված մոնիթորինգի վեր հանած արդյունքները:

Ընդհանրապես հանրային ծառայությունների արդյունավետ և թափանցիկ կազմակերպումը, այդ թվում նաև դատական իշխանության գործունեությունը, նպաստում է հանրության վստահության բարձրացմանն ու կոռուպցիայի նվազմանը: Դատարանների գործունեության արդյունավետությունն ու բարձր որակը պետք է քննարկել միաժամանակ: Եթե նման մոտեցում չի ցուցաբերվում, ապա միշտ հանգում ենք նույն սխալին: Կենտրոնանալով միայն որակի վրա՝ հանրային վստահությունն ու հասանելիությունը վտանգվում է, քանի որ որակի մեծացմանը զուգընթաց աճում են դատական ծախսերը, մեծանում է ուշացումների հաճախականությունը: Հետևաբար, դատարանների գործունեության որակն ու արդյունավետությունը պետք է հավասարակշռվեն¹⁸:

Հաշվետվողականությունը, դատական իշխանության, ինչպես նաև իշխանության մյուս ճյուղերի համար կենսական նշանակություն ունի, քանի որ դրանց գործունեության հիմնական նպատակը հանրությանը ծառայություն մատուցելն է:

Այս առումով, հարկ է նշել նաև, որ դատարանի անկախությունն ու հաշվետվողականությունը միմյանց չեն հակասում¹⁹:

Դատարանների պարագայում «հաշվետվողականությունը» չի նշանակում, որ դատարանը ենթակա է իշխանության մյուս ճյուղերին, ինչը կարող է վտանգել դատական իշխանության սահմանադրական դերը որպես իր առջև բարձրացված հարցերն անաչառ կերպով, օրենքին համապատասխան լուծելու անկախ մարմին²⁰: Դատական իշխանության պարագայում «հաշվետվողականությունը» ենթադրում է պատճառաբանել և բացատրություններ ներկայացնել իրենց կողմից կայացված որոշումների և իրենց վարքագծի առնչությամբ²¹:

Դատարանները հաշվետու են իշխանության մյուս ճյուղերի առջև և հանրության առջև ընդհանուր առմամբ: Այստեղ դատարանները, ինչպես հանրային ծառայություն մատուցող մյուս մարմինները, տնօրինում են հանրային ֆինանսները՝ որպես հարկ վճարողների միջոցներ: Ուստի դատարանները ենթակա են «բացատրական հաշվետվողականության»

¹⁸ Eastern Partnership Enhancing Judicial Reform in the Eastern Partnership Countries Working Group on Independent Judicial Systems PROJECT REPORT Judicial self-governing bodies Judges' Career, Strasbourg 2013, էջ 13

¹⁹ Consultative Council of European Judges

²⁰ Տե՛ս CDL-AD(2005)003 Joint opinion on a proposal for a constitutional law on the changes and amendments to the Constitution of Georgia, in cooperation with OSCE/ODIHR, կէտ 101.

²¹ CCJE OPINION NO. 18 (2015), կէտ 22,23

պահանջին, ինչը ենթադրում է, որ կարող է պահանջ ներկայացվել այս կամ այն տեսակի վարքագծի համար պարզաբանումներ ներկայացնել, այս թվում նաև իրենց գործունեությունը հանրությանը ներկայացնելու տարբերակով²²:

Այս առումով անհրաժեշտ է մի շարք գործողություններ ձեռնարկել դատարանների գործունեության արտաքին հաշվետվողականությունն ապահովելու համար, ինչը կարող է ներառել.

- Հրապարակել կոնկրետ դատարանների գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցներ, որոնք հասանելի կլինեն հանրությանը:
- Իրականացնել դատարանների գործունեության հրապարակային աուդիտ:

Անկախություն և դատարանների գործունեության անհարկի միջամտություն, ազդեցություն

Փորձագետները հարկ են համարում վերստին ուշադրություն հրավիրել դատավորների անհատական անկախության և անհարկի միջամտությունից, ազատ լինելու հանգամանքի վրա:

Ընդհանուր առմամբ, դատավորը պետք է անկախ լինի հանրության հետ շփումներում կողմերի հետ, որոնց միջև առկա վեճի լուծման շուրջ աշխատում է: Դատավորը պետք է ոչ միայն անկախ և ազատ լինի օրենսդիր, գործադիր մարմնի ազդեցությունից, այլև պետք է նրա գործողությունները՝ որպես ազատ և անկախ, տեսանելի լինեն երրորդ կողմի համար: Իր պաշտոնական պարտականություններն իրացնելիս դատավորը պետք է անկախ լինի նաև իր դատավոր գործընկերներից²³:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Դատական օրենսգիրքը» և դատաիրավական բարեփոխումների ծրագիրը գտնվում են մշակման փուլում, ՀՀ կառավարությունը պետք է ձեռնարկի բոլոր միջոցներն անկախության վերաբերյալ բոլոր պահանջները և չափանիշները կիրառելու և անհատ դատավորի, դատական համակարգի գործունեության նկատմամբ ցանկացած տեսակի անհարկի միջամտությունը բացառելու համար:

²² CCJE OPINION NO. 18 (2015)

²³ Draft Universal Declaration on the Independence of Justice (“Singhvi Declaration”)

- Ներդնել արդյունավետ մեխանիզմ և համապատասխան կանոններ՝ դատավորների գործունեության անհարկի ազդեցությունն ու միջամտությունն արձանագրելու համար²⁴:
- Վերանայել դատավորի վարքագծի կանոնները՝ բացառելու դատավորի գործունեության նկատմամբ անհարկի միջամտության հնարավորությունները և սահմանել պատասխանատվություն այն դատավորների համար, որոնք ենթարկվում են նման անհարկի միջամտությունների²⁵:
- Մշակել համապատասխան քաղաքականություն՝ դատական համակարգում շահերի բախման և կոռուպցիայի բացառման համար, ինչը պետք է ներառի.
 - i) Դատավորների համար վարքագծի և էթիկայի կանոնների, դատավորի անաչառության, անկախության, շահերի բախման և կոռուպցիայի վերաբերյալ շարունակական դասընթացների իրականացում,
 - ii) Ներդնել դատավորների անհատական խորհրդակցության մեխանիզմ, որի միջոցով անհատ դատավորին նշված ոլորտների վերաբերյալ խորհրդատվություն տրամադրելու համար²⁶:
- Ընձեռել համարժեք երաշխիքներ, որոնք կբացառեն կարգապահական պատասխանատվության կիրառումը որպես դատավորի նկատմամբ ճնշում կիրառելու պրակտիկան և իրականացնել օրենսդրական համապատասխան հնարավորություններ՝ դատավորի կողմից կարգապահական պատասխանատվության որոշումները դատական կարգով բողոքարկելու համար²⁷:

²⁴ Referring to its visit to Armenia GRECO underlines that serious concerns have been raised concerning “improper influence on judges through bribes and gifts, although prohibited by law”. GRECO is noted that a particularly strong role is played by the chair of the Court of Cassation.

²⁵ Greco Eval IV Rep (2015) 1E, Adoption: 16 October 2015,

<https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806c2bd8>, էջ 43

²⁶ Greco Eval IV Rep (2015) 1E, Adoption: 16 October 2015,

<https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806c2bd8>, էջ 45

²⁷ Greco Eval IV Rep (2015) 1E, Adoption: 16 October 2015

<https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806c2bd8>, էջ 42 See also Venice Commission’s opinion on these matters, CDL-AD(2007)028 Judicial Appointments (report), կէս 25.

- Ընդունել և իրականացնել համապատասխան քաղաքականություն, որը կերաշխավորի դատավորի և դատախազի անկախ գործունեությունը և կապահովի այդ անկախության տեսանելիությունը հանրության համար²⁸:
- Ներդնել օրենսդրական համապատասխան մեխանիզմներ՝ դատավորի գործունեության անհարկի միջամտության իրականացնող անձանց պատասխանատվության ենթարկելու համար²⁹:

Անկախություն և հասարակության հետ հարաբերություն

Դատական համակարգի/անհատ դատավորների և հանրության միջև հարաբերություններն էական ազդեցություն ունեն դատարանների գործունեության նկատմամբ վստահության, հավատի համար³⁰:

Հանրային վստահությունը մեծացնելու համար հանրության հետ արդյունավետ հաղորդակցություն ապահովելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել հետևյալը.

- Դատարաններում ստեղծել տեղեկատվական և ընդունելության կենտրոններ:
- Յուրաքանչյուր վարչական շրջանի դատարանի համար շահագործել ինտերնետային կայքեր, մշակել և տարածել տպագիր նյութեր:
- Մշակել կրթական միջոցառումների օրացույց և դրա համաձայն՝ իրականացնել համապատասխան հանդիպումներ, որոնք բաց կլինեն անհատ քաղաքացիների, հանրային հետաքրքրության կազմակերպությունների, քաղաքականության մշակողների, ուսանողների համար (իրազեկության բարձրացման ծրագիր)³¹:
- Հանդես գալ լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ հաղորդակցության նախաձեռնությամբ և տեղեկատվություն փոխանցելու գործում կաշկանդված չլինել լրատվամիջոցների գործողություններից:
 - i) Պարբերաբար իրականացնել հարցումներ, ֆոկուս խմբային հանդիպումներ ոլորտի տեսաբանների, իրավաբանների և հանրության լայն շերտերի համար:

²⁸ CCJE OPINION No.12 (2009), paragraph 3; See also Venice Commission Report on European Standards as Regards the Independence of the Judicial System: Part II – The Prosecution Service, CDL-AD(2010)040, para. 66. See Rec(2000)19 of the Committee of Ministers on the Role of Public Prosecution in the Criminal Justice System, կետ 17 և 19.

²⁹ UN basic principles, paragraph 2; Recommendation No. R (94) 12, Principle I(2)(d)

³⁰ CCJE (2002) Op. N 3, կետ 27

³¹ CCJE (2005) OP N 7, կետ 16

- ii) Դատավորների և դատարանի անձնակազմի համար կազմակերպել հանրային կապերի վերաբերյալ հատուկ դասընթացներ³²:

2. Իրավահավասարություն, մրցակցություն և արդար դատական քննության այլ հատկանիշները

Թեև մրցակցային դատաքննության ապահովումը օրենսդրական մակարդակում բավականաչափ ամրագրում է ստացել, սակայն առանձնակի ուշադրության են արժանի ամրագրված նորմերի իրականացման ընթացքի արդյունավետությունն ու վերջիններիս բովանդակային պահպանությունը: Այս նպատակին հասնելու համար արդյունավետ կլինի.

- I. վերապատրաստել դատարանների աշխատակազմին³³,
- II. դատարաններում անցկացնել մշտադիտարկում և դրանց արդյունքների հիման վրա վերհանել խնդիրներ³⁴,
- III. բովանդակային դիտարկել դատական վերջնական ակտերում ապահովված կողմերի ներկայացված փաստարկների վերլուծության ու քննարկման տեսանկյունից³⁵:

Վերոնշյալ խնդիրների լուծման համար անհրաժեշտ է.

- գործնականում ապահովել դատավարության մասնակիցների հավասար մասնակցության իրավունքը, քանի որ դատարանը թեև հավասար հնարավորություններ է ընձեռում կողմերին ներկայացնելու միջնորդություններ ու հանդես գալու ելույթներով, սակայն բովանդակային դիտարկման մեջ, պաշտպանական կողմի (քրեական գործերով) և քաղաքացու (վարչական գործերով) միջնորդությունները և փաստարկները միշտ չէ, որ արտացոլվում կամ վերլուծվում են դատական վերջնական ակտերում՝ դրանով իսկ ձևական իմաստով ապահովելով կողմերի հավասարապես «խոսելու» իրավունքը, սակայն գործնականում անտեսելով նրանց հավասարապես «լսված» և «ազդեցություն ունեցող»

³² CCJE (2005) OP N 7, կետ 20

³³ http://ec.europa.eu/competition/calls/2016_judges/advice_training_providers_en.pdf, *European Parliament study "Judicial training in the EU Member States", 2011*

³⁴ https://www.coe.int/t/dghl/cooperation/cepej/series/Etudes6Suivi_en.pdf

³⁵ <http://www.courtexcellence.com/~media/Microsites/Files/ICCE/QualityBenchmarksFinlandDetailed.ashx>, http://pdc.ceu.hu/archive/00002135/01/spriedum_kvalit_EN%5B1%5D.pdf,

լինելու իրավունքը: Պատճառաբանված որոշումները ցուցադրում են կողմերին, որ նրանց խոսքը լավ է, ինչն էլ նպաստում է, որ տվյալ որոշումներն ավելի ընդունելի լինեն կողմերի համար³⁶:

- Գործնականում ապահովել իր դեմ ցուցմունք տվող վկաներին անձին հարցաքննելու իրավունքը, այդ վկաների մասնակցությունը հարցաքննությանը, քանի որ հաճախակի են այն գործերը, որոնց ընթացքում ամբողջ մեղադրանքը կառուցված է վկայի ցուցմունքի վրա, ով երբեք դատարան չի ներկայանում³⁷:

- Գործնականում ապահովել դատական նիստերին մասնակցության հավասարությունը, բացառել այն իրավիճակները, երբ դատախազի հետ լիարժեքորեն հարմարեցվում են դատաքննության օրն ու ժամը, դատախազի զանգի հիման վրա հետաձգվում է, իսկ քաղաքացու միջնորդությունները բավարարվում են կամայական սկզբունքով³⁸:

- Բարձրացնել հասարակական իրավագիտության մակարդակը, ընդլայնել տրամադրվող անվճար (պետական միջոցների հաշվին) իրավաբանական ծառայությունների որակը և ծավալը³⁹, քանի որ հատկապես վարչական գործերով, երբ դատավարությունը հազեցած է մասնագիտական նեղ տերմինաբանությամբ և շարքային քաղաքացու համար անհասկանալի ընթացակարգերով, գրեթե անհնար է դառնում անձի համար լիարժեք մասնակցությունը՝ սեփական շահերն ու իրավունքները արհեստավարժորեն ներկայացնելու միջոցով:

3. Արդարադատության կանխատեսելիություն

- Իրականացված հետազոտության արդյունքում ակնհայտ է դարձել, որ օրենքների միատեսակ կիրառման և դատարանի որոշումների կանխատեսելիության մակարդակը ոչ միայն ցածր է հանրության շրջանում, այլ նաև հենց մասնագիտական խմբերի մոտ, ում պնդմամբ օրենքներում կան մեծաթիվ բացեր, որոնց միատեսակ

³⁶ Ռույզ Թարիջան (Ruiz Torija) ընդդեմ Իսպանիայի, § 29

³⁷ 2016 թվականի նոյեմբերի 24-ին Մանուչարյանն ընդդեմ Հայաստանի գործով (դիմում no. 35688/11), 2016 թվականի նոյեմբերի 10-ին Ավետիսյանն ընդդեմ Հայաստանի գործով (դիմում no. 13479/11)

³⁸ 2016 թվականի հոկտեմբերի 27-ին Վարդանյանն ու Նանուշյանն ընդդեմ Հայաստանի գործով (դիմում no. 13479/11)

³⁹ *European Committee on Legal Co-Operation (CDCJ) Action Plan on Legal Assistance Systems* (2002), I. General Consideration... point 6.

կիրարկումը հաճախ անհնարին է, իսկ կանխատեսելիություն չի կարող լինել, քանի որ վերջինս դիտարկվել է անգամ որպես անընդունելի: Հետևաբար այս ոլորտում առաջնային է իրավական որոշակիություն և կանխատեսելիություն առարկաների ուսուցանումը սույն ծրագրի թիրախ հանդիսացող հաստատություններում, որտեղ կդասավանդվեն այն միջազգային նորմերն ու մոտեցումները⁴⁰, որոնք նախատեսված են մի շարք փաստաթղթերով ու ուղղված են արդարադատության կանխատեսելիության ստեղծմանը Հայաստանում: Կարևոր է նաև շեշտադրել և մեծացնել Վճռաբեկ դատարանի որպես նախադեպային իրավունքի զարգացնողի դերն ու նշանակությունը նշված ուսուցման ծրագրերում⁴¹:

4. Արդարադատության ծառայությունների մատչելիությունը

Հաստատված է, որ դատարան դիմելու իրավունքը պետք է լինի ավելի շատ «պրակտիկ և արդյունավետ» քան «տեսական և թվացյալ⁴²»: Որպեսզի դատարան դիմելու իրավունքը լինի արդյունավետ, պետությունները պետք է տրամադրի իրավական օգնություն, ապահովի թարգմանությամբ կամ այլ աջակցությամբ՝ անձի համար դատական հասանելիություն ապահովելու նպատակով:

⁴⁰ Claes, Erik; Devroe, Wouter; Keirsblick, Bert (2009). *Facing the limits of the law*. Springer. pp. 92–93.

⁴⁰ Kaczorowsky, Alina (2008). *European Union law*. Taylor & Francis. p. 232.

⁴⁰ [http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2012\)014-e](http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2012)014-e)

⁴⁰ The Venice Commission's Report on the Rule of Law, paragraph 44

⁴⁰ <http://tr.ebrd.com/tr12/index.php/chapter-1/predictability-of-decisions>

⁴⁰ European Court of Human Rights, case of Zsurtsev v. Russia, no. 67051/01, 27 April 2006, paragraph 48

⁴⁰ European Court of Human Rights, case of Ječius v. Lithuania, no. 34578/97, 31 July 2000, paragraph 56, case of Baranowski v. Poland, no. 28358/95, 28 March 2000, paragraphs 50-52

⁴⁰ European Court of Human Rights, case of Brumărescu v. Romania, no. 28342/95 28 October 1999, paragraph 61; case of Zsurtsev v. Russia, no. 67051/01, 27 April 2006, paragraph 48.

⁴⁰ European Court of Human Rights, case of Varnava and Others v. Turkey, nos. 16064/90, 16065/90, 16066/90, 16068/90, 16069/90, 16070/90, 16071/90, 16072/90 and 16073/90, 18 September 2009, paragraph 156

⁴⁰ European Court of Human Rights, case of Demir and Baykara v. Turkey, no. 34503/97, 12 November 2010, paragraph 153

⁴⁰ See T. Tridimas, *The General Principles of EU Law*, Second Edition, Oxford: Oxford University Press, 2006, pp. 242-257; L. Fuller, *The Morality of Law*, Revised Edition, Yale University, 1969 and the Venice Commission's Report on the Rule of Law, paragraphs 44-51

⁴¹ Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական գործերով որոշումների ընտրանի, հունվար-դեկտեմբեր 2011 Հատոր V

⁴² *Artico v. Italy*, No. 6694/74, 13 May 1980, կետ 33

Ուսումնասիրության արդյունքներով պարզվել է, որ դատարանի իրավունքի արդյունավետության համար բյուջետային հատկացումները Հայաստանում բավարար չեն: Ավելին՝ մեկ դատարանի հասնալիությունը Հայաստանում յուրաքանչյուր 100.000 բնակչի հաշվով գրեթե չի ապահովվում, ինչն ավելի փոքր է, քան սահմանված եվրոպական միջին չափանիշը⁴³:

Իրավական աջակցության համար ֆինանսական հատկացումներ

- Մշակել և իրականացնել համապատասխան քաղաքականություն, որպեսզի այն բոլոր անձինք, ովքեր չեն կարող իրենց համար ապահովել դատարանի իրավունքի իրացումը, ստանան բավարար օժանդակություն:
- Անվճար իրավական օգնության բյուջետային հատկացումներն իրականացնել հստակ մշակված չափանիշների հիման վրա, այնպես, որ անվճար իրավական օգնության կարիք ունեցողները հնարավորություն ունենան օգտվել այդ աջակցությունից, մասնավորապես՝ մարզերում և գյուղական համայնքներում⁴⁴:
- Մեծացնել դատական բյուջեն՝ հաշվի առնելով միջազգային ստանդարտները և Արևելյան գործընկերության երկրների կենսամակարդակը:
- Վերաբաշխել դատական բյուջեն այնպես, որ գերֆինանսավորված ոլորտները և թերֆինանսավորված ոլորտները հավասարակշռվեն:
- Անհրաժեշտ է, որպեսզի բարձրացվի հանրային իրազեկման ընդհանուր մակարդակը⁴⁵, որպեսզի դատարաններն ավելի հասանելի լինեն.
 - i) Կազմակերպել հետաքրքրված խմբերի այցելություններ դատարան⁴⁶, ինչպես նաև ակտիվ դասընթացներ դատական վարույթների վերաբերյալ (role playing, attending hearings, etc)⁴⁷.

⁴³ Eastern Partnership Enhancing Judicial Reform in the Eastern Partnership Countries Working Group on “Efficient Judicial Systems” PROJECT REPORT, Strasbourg 2013, http://www.coe.int/t/DGHL/cooperation/cepej/cooperation/Eastern_partnership/FINAL%20efficient%20judicial%20systems%20EN%20March%202013.pdf, էջ 10

⁴⁴ Draft Universal Declaration on the Independence of Justice (“Singhvi Declaration”), կետ 95

⁴⁵ CCJE (2005) OP No. 7, կետ 10

⁴⁶ CCJE (2005) OP No. 7, կետ 12, 13.

⁴⁷ CCJE (2005) OP No. 7, կետ 13

- Իրականացնել համապատասխան համալսարանական և դպրոցական կրթական ծրագրեր (ոչ միայն իրավագիտության ֆակուլտետի համար), որը ներառում է դատական համակարգի ընդհանուր նկարագրությունը (կարող է ներառել նաև դատավորի կողմից այց ուսանողներին):
- Դատարանները պետք է ակտիվորեն ներգրավված լինեն տեղեկատվության տարածման գործընթացում, որն ուղղված է արդարադատության հասանելիության ապահովմանը:
 - i) Հրապարակելով պարբերական հաշվետվություններ:
 - ii) Տպագրելով ձեռնարկներ քաղաքացիների համար:
 - iii) Ապահովել հասանելի ինտերնետ հարմարություններ:

Նմանատիպ տեղեկատվությունը կարող է ներառել ընթացիկ վարույթների վերաբերյալ տեղեկությունները, դատական գործընթացի սևոդոլության, դատական ծախսերի բնույթի, վեճերի այլընտրանքային լուծման մեխանիզմների վերաբերյալ տեղեկություններ, դատարանի ուղենիշային որոշումները⁴⁸:

5. Արդարադատության ծառայությունների արդյունավետություն

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն հաշվետվության շրջանակում բավականաչափ մանրամասն վեր են հանվել այն հիմնական գործոնները, որոնք արդարադատության արդյունավետության համար հանդիսանում են խոչընդոտներ, անհրաժեշտ է ներկայացնել դրանց բարելավմանն ուղղված միջազգային նորմերին ու փորձին համապատասխան միջոցառումների առաջարկություններ: Խոչընդոտող գործոններ են.

- I. դատավորների գերծանրաբեռնվածությունը,
- II. դատաքննության երկար ժամկետները,
- III. դատաքննության ընթացքին հավասար մասնակցության անհնարիությունը մասնագիտական հմտություններ չունենալու պատճառով,

⁴⁸ CCJE (2004) OP No. 6, կետ 12-15

IV. դատական ակտերի խիստ մասնագիտական, ոչ հասկանալի ու ոչ հասանելի լինելը և այլն:

Այս բոլոր խնդիրների լուծումը պայմանականորեն կարելի է բաժանել երկու հիմնական խմբերի. **Առաջին**. տեխնիկական պայմանների բարելավում և **երկրորդ**. մարդկային հմտությունների զարգացում և մեխանիզմների ներդրում կամ կատարելագործում:

Դատարանների գործունեության տեխնիկական բարելավման նպատակով առաջնային է ձեռք առնել միջոցներ, որոնք կլուծեն դատարանների ծանրաբեռնվածության խնդիրը: Դատարանների ծանրաբեռնվածության հիմնական պատճառ են հանդիսանում.

- ա) դատավորների թվաքանակի սակավությունը,
- բ) դատավարական երկարաժամկետ ընթացակարգերը,
- գ) փաստաթղթաշրջանառության դանդաղությունը,
- դ) դատարանը որպես վեճերի լուծման միակ մարմին հանդես գալը:

Դատարանների գործունեության բարելավման ուղղված Եվրոպայի խորհրդի մի շարք փաստաթղթերում առաջարկվում են վերհանված խնդիրների լուծումները, մասնավորապես.

- Դատարանների արդյունավետության բովանդակային և մանրամասն պատկեր ստանալու համար իրականացնել հետազոտություն⁴⁹, որը հիմնված է «դատարանի կատարողականի» (“court performance”) գործիքակազմի վրա, որպեսզի չափվի դատավորի գործունեության արդյունավետությունը մեթոդում նշված բանաձևով⁵⁰:

• Դատարանների գործունեության արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է ապահովել տեխնիկական միջոցներով, որոնք ներդրվում են փաստաթղթաշրջանառության, արխիվացման, փաստաթղթերի հանրային հասանելիության բարձրացման համար: Եվրոպայի խորհուրդը մի շարք իր առաջարկություններում

⁴⁹ <http://digitalcommons.law.yale.edu/cgi/viewcontent.cgi?article=1009&context=yhrdjl>

⁵⁰ Նշված ցուցիչներից յուրաքանչյուրը նախատեսված է չափելու համար արդարադատության արդյունավետության առանձին ոլորտ, մասնավորապես երբ խոսքը վերաբերում է ողջամիտ ժամկետների պահպանմանը: Նշված պահանջի բավարարման դատարանի կարողությունը կարելի է գնահատել դիտարկելով անավարտ գործերի քանակը յուրաքանչյուր տարվա ավարտին և դրանց փոփոխման դինամիկան: Մեկ այլ հիմնավոր չափորոշիչ է հանդիսանում համակարգի արդյունավետության դիտարկման համար այն ժամանակահատվածը, որը ծախսվում է մեկ գործով վերջնական ակտի կայացման համար: Չնայած կան բազմաթիվ լրացուցիչ ցուցանիշներ, որոնք կարող են օգտագործվել կոնկրետ երկրի դատարական համակարգի արդյունավետությունը գնահատելու համար, վերևում նկարագրված մեթոդն իր գործիքակազմով համարվում են ամենից հաջողը, որը տարիներ շարունակ կիրառվում է աշխարհի մի շարք երկրներում (օրինակ ԱՄՆ Կալիֆորնիա նահանգի դատարանների վերլուծության արդյունքները տես⁵⁰): Այնուամենայնիվ, նման վերլուծության իրականացման ժամանակ անհրաժեշտ է նաև հաշվի առնել տվյալ երկրի ներպետական օրենսդրական կարգավորումները, տարբեր ընթացակարգային պահանջներին և անհատական հատկանիշներ: Բացի ժամանակային ցուցիչներից արդարադատության արդյունավետության չափման համար առկա են նաև մի շարք որակական չափորոշիչներ, ինչպիսիք են. դատավորների քանակը 100.000 բնակչության համեմատությամբ, դատավորների աշխատավարձերի և դատարանների տարեկան բյուջեների վերլուծությունը (նախնական գնահատման ծախսերի); և հանրային ընկալումը (որպես վստահված աստիճան):

հրավիրում է պետությունների ուշադրությունն այն հանգամանքի վրա, որ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները հարկավոր է կիրառել արդարադատության համակարգում, ինչը կարող է ժամանակի և միջոցների խնայողության բերել:⁵¹

- Արդարադատության արդյունավետությունը խթանող հաջորդ գործոնը դատարանների ընդհանուր բեռնաթափումն է, որը հնարավոր է վեճերի այլընտրանքային լուծման մեխանիզմների կայացմամբ: Եվրոպայի խորհրդի մի շարք առաջարկություններ ուղղված են հենց հաշտարարության ինստիտուտների ներդրմանը և զարգացման միջոցով խնդիրների լուծմամբ դատարանների գործերի քանակի նվազեցմանը:⁵²

- Անհրաժեշտ է բարելավել դատարանի որոշումների հիմնավորվածությունը, ինչի մասին առավել ծավալուն և հիմնավոր վերլուծություն է ներկայացված ՄԻԵԴ նախադեպային իրավունքում⁵³, որտեղ մասնավորապես ասվում է, որ արդարադատության արդյունավետության սկզբունքի համաձայն, դատարանների որոշումներում պետք է ներկայացվեն այն համապատասխան պատճառաբանությունները, որոնց վրա հիմնված են վերջիններս⁵⁴: Ազգային դատարանները պետք է նշեն բավարար հստակությամբ այն հիմքերը, որոնց վրա խարսխվել են նրանց որոշումները, ինչը թույլ կտա կողմին բողոքարկման համար արդյունավետորեն օգտագործել ցանկացած մատչելի իրավունք⁵⁵:

- Ապահովել այն նախապայմանները⁵⁶, որոնց ապահովման պայմաններում կարելի է ունենալ որակյալ դատական որոշումներ⁵⁷: Այդ նախապայմանները ոչ միայն ներգրավված դատավորներն են անհատապես, այլ նաև այն արտաքին գործոնները, որոնք ազդում են արդարադատության իրակացման վրա, ինչպիսիք են ներպետական օրենսդրության որակը, դատական համակարգին տրամադրվող միջոցները, ինչպես նաև իրավական վերապատրաստումների որակը: Միևնույն ժամանակ ընդգծվում է, որ դատական որոշումների որակը նաև պայմանավորված է ներքին այնպիսի գործոններով, ինչպիսիք են

⁵¹ COE Recommendation (2003)15 on archiving of electronic documents in the legal sector; COE Recommendation (2003)14 on the interoperability of information systems in the justice sector; COE Recommendation (2001)3 on the delivery of court and other legal services to the citizen through the use of new technologies

⁵² COE Recommendation (98)1 on family mediation; COE Recommendation (2001)9 on alternatives to litigation between administrative authorities and private parties; Recommendation (2002)10 on mediation in civil matters;

⁵³ http://www.echr.coe.int/Documents/Guide_Art_6_criminal_ENG.pdf

⁵⁴ 2012թ. հունվար 19, Պոպովն ընդդեմ Ֆրանսիայի

⁵⁵ 1992թ. դեկտեմբերի 16, Հադջիանաստասիուն (Hadjianastassiou) ընդդեմ Հունաստանի

⁵⁶ Opinion no.11 (2008) of the Consultative Council of European Judges (CCJE) to the attention of the Committee of Ministers of the Council of Europe on the quality of judicial decisions

⁵⁷ <http://www.courtexcellence.com/~media/Microsites/Files/ICCE/CCJE.ashx>

դատավորների պրոֆեսիոնալիզմը, ընթացակարգերը, գործերի կառավարումը, դատական լսումները և դատական որոշման այլ բնութագրիչ տարրերը:

• Անհրաժեշտ է, որպեսզի դատարանի որոշումները լինեն հասկանալի և հիմնավորված: Դատական բոլոր որոշումները պետք է լինեն հասկանալի, գրված պարզ և հանրամատչելի լեզվով, ինչը կերաշխավորի, որ որոշումը ընկալելի կլինի դատավարության կողմերի և հանրության համար⁵⁸: Դատարանի որոշումները պետք է լինեն հասանելի (ընկալման առումով) ցանկացած մարդու համար: Այդ իսկ պատճառով խիստ անհրաժեշտ է, որ դատարանում կիրառվող լեզուն լինի ընկալելի, պարզ և հասկանալի:⁵⁹

6. Արդարադատություն իրականացնող ինստիտուտների նկատմամբ հավատ եվ վստահություն

Արդարադատության ինստիտուտների նկատմամբ հանրային վստահությունը և հարգանքն արդարադատության համակարգի գործունեության արդյունավետության երաշխիքներն են: Իրենց մասնագիտական գործունեության մեջ դատավորների վարքագիծը հանդիսանում է հանրության կողմից դատարանների նկատմամբ վստահության ձևավորման էական հանգամանք: Հանրային վստահության ձևավորման համար անհրաժեշտ է, որպեսզի իրականացվեն մի խումբ միջոցառումներ, որոնք կձևավորեն հանրային վստահություն կամ կկանխեն վստահության նվազմանն ուղղված վտանգը:

Անհրաժեշտ է նախ, որպեսզի ներդրվի դատարանների գործունեության մոնիթորինգի և գնահատման համակարգ, որը բաղակազմ է հինգ փուլերից. 1) կառավարման ոլորտի վերաբերյալ տվյալների հավաքագրում (բյուրոկրատական տվյալների հավաքում), 2) գործունեությունը կարգավորող իրավական դաշտի գնահատում, 3) համապատասխան ենթակառուցվածքների ձևավորում, 4) մոնիթորինգ և գնահատում 5) հաշվետվողականություն և համապատասխան գործողությունների իրականացում:

58

[https://wcd.coe.int/ViewDoc.jsp?p=&Ref=CCJE\(2005\)OP7&Sector=secDGHL&Language=lanEnglish&Ver=original&BackColorInternet=FEF2E0&BackColorIntranet=FEF2E0&BackColorLogged=c3c3c3&direct=true](https://wcd.coe.int/ViewDoc.jsp?p=&Ref=CCJE(2005)OP7&Sector=secDGHL&Language=lanEnglish&Ver=original&BackColorInternet=FEF2E0&BackColorIntranet=FEF2E0&BackColorLogged=c3c3c3&direct=true)

⁵⁹ See Conclusions of the 5th Meeting of the Presidents of European Supreme Courts, Ljubljana, 6-8 October 1999, paragraph 1

Հայաստանում իրականացվում է դատարանների գործունեության մոնիթորինգի և գնահատման համակարգի ձևավորման ուղղված միայն առաջին երկու փուլը:

Այս առնչությամբ պետք է ապահովել հետևյալ միջոցառումների համակարգը.

- Իրականացնել դատարանների գործունեության մոնիթորինգի և գնահատման համար անհրաժեշտ բոլոր հինգ փուլերը⁶⁰,
- Ձևավորել համապատասխան բաժին և զարգացնել այդ բաժնի աշխատակիցների կարողությունները դատարանների գործունեության պարբերական մոնիթորինգ և գնահատում իրականացնելու համար,

Ձևավորել համապատասխան իրավական դաշտ, մոնիթորինգի չափանիշներ: Նման չափանիշները կարող են ձևավորվել այլ դատարանների գնահատման փորձի, հանրության ակնկալիքների, եվրոպական/միջազգային հիման վրա:

Հանրության հետ երկխոսություն⁶¹

Հանրության հետ երկխոսությունը՝ միջնորդավորված, թե անմիջականորեն, վճռորոշ է դատական համակարգի նկատմամբ հանրության վստահության մեծացման համար⁶²:

Այս առնչությամբ, անհրաժեշտ է իրականացնել մի շարք պրակտիկ քայլեր դատական համակարգի նկատմամբ հանրային վստահության մեծացման համար:

- Դատարանները պետք է անմիջականորեն կապ հաստատեն լրատվամիջոցների և հանրության հետ: *Օրինակ՝* դատարանները կարող են կրթական գործառույթ իրականացնել՝ ուսանողների և դպրոցականների համար կազմակերպելով կրթական այցեր, կարող են տեղեկատվություն տրամադրել իրենց գործունեության վերաբերյալ, կարող են ակտիվորեն բացատրել, պարզաբանել իրենց որոշումները հանրության կամ լրատվամիջոցների համար՝ հանրային ընկալումները զարգացնելու և թյուրընկալումները կանխելու նպատակով:

Դատարանների նկատմամբ վստահությունը ձևավորվում է ոչ միայն լրատվամիջոցների գործունեությամբ տարածվող տեղեկատվության հաշվին, այլև դատարաններից օգտվողների՝ կողմերի, վկաների փորձի արդյունքում: Դատարանից օգտվողների վստահության խնդիրները հաղթահարելու համար առաջարկվում է հետևյալը.

⁶⁰Eastern Partnership Enhancing Judicial Reform in the Eastern Partnership Countries Working Group on “Efficient Judicial Systems” PROJECT REPORT, Strasbourg 2013, http://www.coe.int/t/DGHL/cooperation/cepej/cooperation/Eastern_partnership/FINAL%20efficient%20judicial%20systems%20EN%20March%202013.pdf, էջ 20

⁶¹ See also recommendations under “Independence and public relation”

⁶² CCJE (2015) OPINION NO. 18

- Ձևավորել այնպիսի ծրագրեր, որոնք հնարավորություն կնձեռեն ներդնել 1) դատավորների, դատավորի օժնդակող անձնակազմի համար վերապատրաստումներ, 2) տեխնիկական հնարավորություններ, 3) դատական ընթացակարգեր⁶³, ինչը կբարելավի դատարանի հետ հանրության կապերը:
- Դատարանի շենքում սահմանել ընդունելիության և տեղեկատվական կենտրոն, որը ոչ միայն կարող է օգնել դատարան դիմումատուներին, այլև օժանդակել լրատվամիջոցներին դատարանի գործունեությունն ավելի լավ հասկանալու համար: Նման աշխատանքը, որը պետք է վերահսկվի դատավորի կողմից, ուղղված է հետևյալին.
 - i) Ներկայացնել դատարանի որոշումների ամփոփագրերը լրատվամիջոցի ներկայացուցիչներին,
 - ii) Լրատվամիջոցների ներկայացուցիչներին ներկայացնել դատարանի որոշումների փաստական տվյալները,
 - iii) Հանրային հետաքրքրություն ներկայացնող դատական գործերի շուրջ կապ պահպանել լրատվամիջոցների հետ,
 - iv) Լրատվամիջոցի ներկայացուցիչների կողմից հրապարակված նյութերի վերաբերյալ տրամադրել պարզաբանումներ և փաստական շտկումներ,
- 1. Ներդնել այնպիսի հնարավորություններ (օրինակ՝ դատարանի շենքում տեղադրել էկրաններ, որի միջոցով համապատասխան տեսանյութ կներկայացվի դատարանի, դատական գործընթացների վերաբերյալ), որը մինչև դատական գործընթացը կողմերին, վկաներին տեղեկություններ կներկայացնի գործընթացի վերաբերյալ:

Թափանցիկություն

Դատարանի գործունեության թափանցիկությունն էական հանգամանք է դատական համակարգի նկատմամբ հանրային վստահության համար, ինչպես նաև քաղաքական ազդեցության վտանգի կանխման երաշխիք է⁶⁴: Այս առումով անհրաժեշտ է.

⁶³ CCJE (2005) OP No. 7

⁶⁴ CEPEJ Opinion no.10(2007), կետ 91

- Ապահովել դատավորների նշանակման, առաջխաղացման գործընթացի թափանցիկությունը՝ դատավորների նշանակման չափանիշների տարածման, նշանակումից հետո պարզաբանող տեղեկատվության տարածման միջոցով:
- Սահմանել այնպիսի գործընթաց, որի միջոցով ցանկացած հետաքրքրվող անձ հնարավորություն կունենա ստուգել ընտրության արդյունքները և հավաստիանալ, որ դատավորների նշանակման և առաջխաղացման գործում Բարձրագույն դատական խորհրդի կողմից պահպանվել են ընթացակարգային կանոնները, ընտրության չափանիշները⁶⁵:

⁶⁵ CEPEJ Opinion no.10(2007), կետ 93



ԳԼՈՒԽ II

ՀԱՆՐԱՊԵՏԱՆ ԿԱՐԻՔՆԵՐՆ ՈՒ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԸ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՑ

Մասնագիտական կարծիքի ուսումնասիրություն

1. ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ


1.1. Քննիչների անկախության երաշխիքները և դրանց բարելավումը: Նշանակման կարգը և դրա ազդեցությունն անկախության վրա

Ա. Ամփոփ տվյալներ դատարանների և դատախազության վերաբերյալ

Հանրային կարծիք: Գծապատկեր 23-ի տվյալները ցույց են տալիս, որ ընդհանուրի մեջ բավական մեծ կշիռ է կազմում այն խումբը, որը չի կարողացել *դատախրավական մարմիններին նշանակող* անձի կամ կառույցի մասին կարծիք հայտնել, ընդ որում, ավելի քիչ տեղեկացված են քննիչների նշանակման գործընթացից:

Արդեն ստացված պատասխանների մեջ տեսնում ենք ՀՀ նախագահին վերագրվող դերն ավելի շատ՝ դատավորների (29,7%) և ավելի քիչ՝ քննիչների (21,2%) նշանակման հարցում: Երկրորդ ենթադրվող ձևը հարցվողները համարել են ոչ ֆորմալ նշանակումները (17,7% դատավորների, 17,5% քննիչների, 16,8% դատախազների դեպքում, **տե՛ս** գծապատկեր 23):

Հարցը դիտարկելով համեմատության մեջ՝ տեսնում ենք, որ դատախրավական կառույցներում անդամների *նշանակման նախընտրելի ձևերի* մեջ ամենամեծ կշիռը ստանում է բաց, թափանցիկ մրցույթի միջոցով ընտրությունը, որը, ըստ հարցվողների, կերաշխավորի նրանց անկախությունը պաշտոնավարման ընթացքում (**տե՛ս** գծապատկեր 24):



Մասնագիտական կարծիք: Հանրության պատկերացումներով դատավորների նշանակման կարգին դատավորի գործունեության անկախության միջև առկա է ուղղակի կապ: Նշանակման կարգը կարող է ազդել անկախության վրա: Չնայած դատավորի նշանակման գործող կարգն ամբողջությամբ տեսանելի չէ հանրությանը, քանի որ հանրության կողմից առաջարկվող նշանակման գործընթացի ամենանախընտրելի տարբերակը թափանցիկ մրցույթի միջոցով ընտրության կազմակերպումն է: Հատկանշական է, որ ինքնագնահատման և մասնագիտական խմբերի գնահատման արդյունքներով՝ դատավորի նշանակումը հենց այդ կարգով էլ իրականացվում է, և հիմնական խնդիրը, ինչպես համակարգի մյուս բոլոր հարցերի առնչությամբ, հանրության իրավագիտակցության պակասն է, ինչով պայմանավորված հանրությունը նման մոտեցում է արտահայտում:

Մասնագիտական խմբերի և մասնավորապես՝ դատախազների կողմից մասնագիտական գնահատմամբ՝ դատախազների նշանակումն իրականացվում է բաց թափանցիկ մրցույթի ձևով, և այդ կարգը միանշանակ արդյունավետ է: Մասնագիտական խմբերի գնահատմամբ՝ ընտրությունների տարբերակը չի կարող իրագործվել, քանի որ դատախազի պաշտոնը քաղաքական պաշտոն չէ, իսկ ընտրությունների միջոցով պաշտոնի անցնելու պարագայում ստիպողաբար այն կբերվի քաղաքական դաշտ և կախյալ կդառնա հանրության կարծիքից, հանրային տրամադրվածությունը կվերաճվի խիստ կաշկանդող հանգամանքի:


Բ. Հանրության ընկալումը քննչական կոմիտեի վերաբերյալ

Դատախիրավական մարմինների անկախության վերաբերյալ հանրային ընկալումները չափվել են մի քանի ցուցիչներով՝

- ✓ դատախիրավական կառույցներում պաշտոնավարող անդամների նշանակման ձև,
- ✓ նշանակման նախընտրելի ձևը՝ որպես անդամների անկախությունն ապահովող երաշխիք,
- ✓ նշանակման մեխանիզմների ազդեցությունը դատախիրավական մարմինների անկախության վրա,

Տվյալները ցույց են տալիս, որ ընդհանուրի մեջ բավական մեծ կշիռ է կազմում այն խումբը, որը չի կարողացել դատախիրավական մարմիններին նշանակող անձի կամ կառույցի մասին կարծիք հայտնել, ընդ որում ավելի քիչ տեղեկացված են քննիչների նշանակման գործընթացից: Նրանց մեջ ավելի մեծ մաս կազմում են հարցվողները մարզային քաղաքներից (38,2%), այնուհետև գյուղերից (32,4%) և Երևան քաղաքից (13,8%) (տե՛ս հավելված, գծապատկեր 27):

Քննիչների՝ ենթադրվող և նախընտրելի նշանակումների համեմատական պատկերը



Արդեն ստացված պատասխանների մեջ տեսնում ենք՝ ՀՀ նախագահին վերագրվող դերը նշանակման հարցում դիտարկվում է ամենամեծը՝ 21,2%: Երկրորդ ենթադրվող ձևը հարցվողները համարել են ոչ ֆորմալ նշանակումները՝ 17,5%:

Հարցը դիտարկելով համեմատության մեջ՝ տեսնում ենք, որ դատաիրավական կառույցներում անդամների նշանակման նախընտրելի ձևերի մեջ ամենամեծ կշիռը ստանում է բաց, թափանցիկ մրցույթի միջոցով ընտրությունը՝ 33,3% և համայնքի բնակչության կողմից՝ 32,7%-ը, որը, ըստ հարցվողների, կերաշխավորի նրանց անկախությունը պաշտոնավարման ընթացքում:

Գ. Մասնագիտական գնահատման արդյունքներն ու մեկնաբանությունները քննչական կոմիտեի վերաբերյալ.

Բոլոր մասնագիտական խմբերի ներկայացուցիչները համակարծիք էին այն հարցի շուրջ, որ քննիչների նշանակումն արդյունավետ է բացառապես բաց, թափանցիկ մրցույթի միջոցով: Քննիչների անկախ չլինելը հիմնավորվել է հետևյալ դիտարկումներով.

- Համեմատական անցկացնելով դատաիրավական համակարգի քննարկվող երեք մարմինների միջև՝ մասնագիտական խմբերից մեկը դիրքորոշում հայտնեց, որ քննիչները օրենքի ուժով գտնվում են այնպիսի կարգավիճակում, որը կախվածություն է նախատեսում և համակարգային լիարժեք անկախությունն անհնար է ապահովել, ինչն, ըստ նույն խմբի մասնագետների, դրական է գնահատվել, քանի որ այդ հանգամանքը բարձրացնում է պատասխանավտության աստիճանը, որի արդյունքում քննիչը գիտակցում է, որ եթե ինքը սխալ թույլ տա իր աշխատանքում, ապա այն կնկատվի վերադասի կողմից և իր համար կառաջացնի անցանկալի հետևանքներ:

- Մասնագիտական խմբերից մեկում տեսակետ հայտնվեց այն մասին, որ այժմ քննչական կոմիտեն դատաիրավական համակարգի ամենից թույլ օղակն է: Թույլ՝ անկախության ապահովման և մասնագիտական պատրաստվածության տեսանկյունից: Առանցքային է, որ այս կարգավիճակը նպաստավոր է փաստաբանների համար՝ արդյունավետ պաշտպանություն իրականացնելու համար:

- Հատկանշական է, որ քննիչների անկախության սահմանափակում իրականացվում է օրենքի ուժով՝ ոչ միայն վերադասի կողմից, այլ նաև դատախազի կողմից, ում տված ցուցումների շրջանակում էլ քննիչը հաճախ քննում է գործը:

- Քննչական համակարգը «ճնշող» է, ինչը խիստ սահմանափակում է աշխատակիցների թե անկախությունը, թե գործելու ազատությունը:

- Քննչական մարմինը մասնագիտական կառույց է, որը պետք է լինի միասնական քննչական կոմիտե: Իսկ դա պետության պարտականությունն է: Պետությունը պարտավորություն ունի պայքարել հանցագործության դեմ, ինչից էլ բխում է, որ ինքն է պատասխանատու այդ պարտականության որակյալ կատարման համար: Այդ տեսանկյունից, համապատասխան որակավորումներով քննիչին աշխատանքի վերցնելն ուղղակիորեն բխում է պետության գործառույթներից:

- Մասնագիտական խմբերից մեկում անհամաձայնություն հայտնելով հանրային հարցման արդյունքների հետ/վերաբերյալ՝ տեսակետ հնչեց, որ այսօր էլ ներդրված են քննիչների ներգրավման բաց ու թափանցիկ միջոցներ, իսկ բնակչության/համայնքի կողմից ընտրության միջոցով ներգրավումը քննիչների պարագայում իսպառ անարդյունավետ է՝ հաշվի առնելով մեր երկրում քաղաքացիների վերաբերմունքը ընտրություններին:

- Ինչ վերաբերում է քննիչներին՝ բաց, թափանցիկ մրցույթի միջոցով ընտրելուն, ապա գոյություն ունի բաց մրցույթի հրավեր քննիչների թափուր աշխատատեղերի համար, որի քննությունն ընդունվում է բավականին անկախ մարմնի կողմից:

- Նշանակման համար հարկավոր է մասնագիտական գիտելիքների ստուգում, որը սակայն որևէ կերպ չի կարող իրականացվել բնակչության/համայնքի կողմից. այն պետք է իրականացվի մասնագիտական հանձնաժողովի կողմից, սակայն այստեղ շատ կարևոր է, որպեսզի ստուգվեն ոչ միայն տեսական գիտելիքները, ինչն այսօր հիմնականում արվում է, այլ նաև նշանակումից առաջ պարտադիր անցած լինեն գործնական վերապատրաստումներ, որպեսզի նշանակումից հետո քննիչն ունենա պրակտիկ փորձ ու պատրաստ լինի արդյունավետ աշխատանքի:

«... քննչական ապարատը ընդամենը կատարում է դատախազական ցուցումները և վերջ: Իրենցով պայմանավորված չէ ո՛չ գործի էլքը, ո՛չ գործի ընթացքը: Ցանկացած գործով կատարում է այն քննչական գործընթացը, որի վերաբերյալ ունեն համապատասխան ցուցումներ: ...»:

«համայնքի կողմից քննիչի ընտրության մեխանիզմն ինձ համար անհավանական է: Եթե այդպես լինի, ամբողջ տարին ընտրությունների մեջ ենք լինելու: Մեր նման փոքր երկրի համար, որտեղ բոլորն իրար ծանոթ են, ընտրությունը չի կարող լինել անաչառ, և հետո այդ մարմինը չի կարող համայնքի համար աշխատել անաչառ ու անկախ, քանի որ եթե բնակիչը նրան ընտրում է, հետևաբար նաև պետք է որոշ բաներ նաև պահանջի նրանից: Այս կարգն արդեն արդարություն և անաչառություն չի ենթադրում»:

Դ. Եզրակացություն

Սույն հարցի քննարկման արդյունքում մասնագիտական կարծիքները հիմնականում նույնական էին առ այն, որ քննիչներն իրենց գործունեության մեջ անկախ չեն՝ բերելով մի շարք հիմնավորումներ: Մասնագիտական խմբերը նաև ներկայացրել են իրենց դիտարկումներն առ այն, թե ինչը կարող է նպաստել քննիչի անկախության մեծացմանը: Սույն հարցի քննարկման ընթացքում, մասնագիտական խմբերի մասնակիցների ուշադրությունը մեծապես սևեռվեց այն հիմնախնդրի վրա, որ քաղաքացիների մոտ ձևավորվել է թյուր կարծիք այն մասին, որ երկրի նախագահը կամ գործադիր իշխանությունն ուղղակիորեն նշանակում է քննիչներին:

Ե. Մոնիթորինգի մասնակիցների առաջարկություններ

- Վերանայել օրենսդրությունը՝ բացառելով դատախազների կողմից ցուցումների միջոցով գործի ամբողջական ուղղորդումը և քննիչի անկախության սահմանափակումը,
- Ստեղծել նախապայմաններ քննիչների անկախ գործունեության համար:


1.2. Դատաիրավական համակարգի խնդիրները: Հայաստանում քննիչների գործունեության անկախության հիմնական խոչընդոտները

Ա. Ամփոփ տվյալներ դատարանների և դատախազության վերաբերյալ

Հանրային կարծիք: Դատաիրավական մարմինների անկախության խոչընդոտների վերաբերյալ հանրային ընկալումները տարբեր են երկու առանձին խմբերում՝ քաղաքացիների պատկերացումներում ընդհանուր առմամբ և այն տեսակետներում, ովքեր առնչություն են ունեցել արդարադատության համակարգի հետ: Եթե առաջին դեպքում առաջին երեք հիմնականները համարվում են 1) պատասխանատվության կարգերի թերությունները՝ 29,6%, 2) գործունեության վերահսկողության պակասը՝ 27,5%, 3) հաշվետվողականության պակասը՝ 15% (դատավորների օրինակով **տե՛ս** գծապատկեր 28), ապա առնչություն ունեցող քաղաքացիները և/կամ նրանց ընտանիքի անդամները կարծում են, որ 1-ին հիմնական խոչընդոտը գործունեության վերահսկողության պակասն է՝ 28,6%, 2-

րդը՝ պատասխանատվության կարգերի թերությունները՝ 24%, իսկ 3-րդ խոչընդոտ համարում են սոցիալական վիճակը՝ 14,9% (*տե՛ս* գծապատկեր 29): Համակարգի հետ առնչության փորձ ունեցող քաղաքացիները մոտ երկու անգամ ավելի շատ են հակված այն տեսակետին, որ դատավորների անկախ գործունեության համար խոչընդոտներ չկան (3,4% 1,8%-ի համեմատությամբ):

Դատաիրավական մարմինների անկախության խոչընդոտները




Մասնագիտական կարծիք: Դատարանների վերաբերյալ հանրային ընկալմամբ նույնականացված խնդիրներն ինքնագնահատման մոտեցումներով հիմնականում բացառվել են այն փաստարկով, որ քաղաքացիները բավարար իրավագիտակցություն չունեն, և դատավորների գործունեության անկախության խոչընդոտներ չեն կարող ներկայացնել, ավելին՝ հանրությունը չի կարող առաջարկել նաև այդ խոչընդոտների վերացման տարբերակները: Մասնագիտական այլ խմբերի կողմից բերվել են մի շարք հանգամանքներ, որոնք ազդում են դատավորների անկախության վրա: Թափանցիկ գործունեության բարելավումը կարող է նպաստել անկախության ապահովմանը: Դատավորի գործունեության անկախության վրա ազդող հիմնական գործոններն են մարդկայինը, սոցիալական երաշխիքների բացակայությունը, վերադասի ազդեցությունը, ինչպես նաև պատշաճ վերահսկողության բացակայությունը և այլն:

Դատախազների վերաբերյալ ինքնագնահատման արդյուքները պնդում են, որ նրանց անկախության որևէ խոչընդոտ գոյություն չունի, իսկ հասարակական նման դիրքորոշումը պայմանավարված է հանրային ցածր իրավագիտակցությամբ:

Բ. Հանրության ընկալումը քննչական կոմիտեի վերաբերյալ

Հանրային կարծիքի ուսումնասիրության ժամանակ քաղաքացիներին հարց էր ուղղվել առ այն, թե այսօր Հայաստանում որո՞նք են քննիչների անկախության հիմնական խոչընդոտները: Այս հարցի վերաբերյալ հանրային ընկալումներն ունեն հետևյալ պատկերը.



Առաջին երեք հիմնականները համարվում են 1) պատասխանատվության մեխանիզմների թերությունները՝ 27,6%, 2) գործունեության վերահսկողության պակասը՝ 27,3%, 3) հաշվետվողականության պակասը՝ 16,1%:

Գ. Մասնագիտական գնահատման արդյունքներն ու մեկնաբանությունները քննչական կոմիտեի վերաբերյալ

Ամփոփելով հարցման ենթարկված բոլոր մասնագիտական խմբերի կարծիքներն՝ ակնհայտ է դառնում, որ քննչական մարմնի անկախության մասին հարկավոր է խոսել 2 մակարդակներում՝ հարցը դիտարկել ինստիտուցիոնալ և յուրաքանչյուր քննիչի գործունեության անկախության տեսանկյուններից: Հետաքրքրական է, որ հանրային կարծիքը հիմնավորում չգտավ մասնագիտական խմբերի քննարկման արդյունքում, քանի որ պատասխանատվության կարգերի թերություն կամ հաշվետվողականության պակաս այս համակարգում չկա, իսկ գործունեության նկատմամբ վերահսկողության ծավալը շատ ավելին է, քանի հարկավոր է, դեռ ավելին, վերջինս անկախության հիմնական խոչընդոտներից է.

- Քննարկելով բոլոր երեք կառույցների անկախության մակարդակը՝ այդ համակարգում ամենից կախյալի դերում է քննչական կոմիտեն, քանի որ վերջինս ամեն քան համաձայնեցնում է վերադասի հետ, նա էլ՝ իր վերադասի և այլն: Սակայն այդ բուրգը

օրենսդրորեն ստեղծված համակարգ է, և անկախության մասին ինստիտուցիոնալ առումով խոսք գնալ չի էլ կարող, քանի որ վերադասի ցուցումները պարտադիր են:

- Անկախությունը բացարձակ չէ, քանի որ եթե խոսքը վերաբերում է քաղաքացիների, տուժողների հարաբերություններին, այդ դեպքում քննիչը անկախ է, իսկ եթե խոսքը վերաբերում է գերատեսչական մարմինների հետ փոխհարաբերություններին, քննիչը չի կարող անկախ լինել, քանի որ քննիչը նախ և առաջ ենթարկվում է իր անմիջական բաժնի պետին և որոշակի առումով կախվածություն ունի նաև իր ոչ անմիջական վերադասներից, քանի որ օրենսդրությամբ էլ Քննչական Կոմիտեի նախագահը վերադաս է քննչական կոմիտեի բոլոր ծառայողների համար: Հետևաբար, քննիչն ունի որոշակի գերատեսչական կախվածություն:

- Գոյություն ունի նաև դատախազական վերահսկողություն նախաքննության մարմինների գործունեության նկատմամբ: Դատախազն իր վերահսկողական գործառույթն իրականացնելիս իրավունք ունի վերահսկել քննիչի կոնկրետ որոշումները կամ ցուցում տալ քննիչին մեղադրանք ներկայացնել անձի նկատմամբ, ինչի հետ քննիչը կարող է համաձայն չլինել:

- Քննչական ապարատում աշխատող կադրերը բավականին երիտասարդ են: Այս հանգամանքը նրանք որակում են թե դրական թե բացասական, քանի որ երիտասարդներն ունեն փորձի և գիտելիքի պակաս, իսկ հաշվի առնելով նրանց ծանրաբեռնվածությունը և ժամանակի սղությունը՝ շատ քննիչներ չեն կարող բոլոր գործերն ամբողջությամբ և խորությամբ քննել, և բացի այդ զբաղվել մասնագիտական գիտելիքների կատարելագործմամբ:

- Համակարգում առկա հիմնական խոչընդոտներից են պատասխանատվության կարգերի թերությունները: Ըստ նրանց անհրաժեշտ է խիստ միջոցներ կիրառել սխալ որոշումների համար, ինչը կանխարգելիչ գործոն կհանդիսանա հետագա որոշումների կայացման համար: Միևնույն ժամանակ իրավիճակն առավել մտահոգիչ է դառնում, երբ դիտարկվում է բողոքարկման ինստիտուտը: Մասնավորապես, երբ քննիչի որոշումը բողոքարկվում է վերադասին, որքան էլ իրենք սխալ են, միևնույնն է, եթե անձի բողոքարկման ատյանը քննիչի վերադասն է, նա երբևէ չի ասի, որ իր հսկողության ներքո աշխատող քննիչը սխալ է: Ինքն է ցուցում տվողը եղել:

- Մտահոգիչ են նաև կոռուպցիոն ռիսկերն ու սոցիալական անբավարար պայմանները, սակայն աշխատավարձերի և սոցիալական երաշխիքների բարելավումը որևէ կերպ չի կարող երաշխավորել համակարգում կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը:

- Մասնավոր կարծիքների շարքում էր նաև այն տեսակետը, որ իրականում առկա է հաշվետվողականության պակաս: Օրենսդրության մակարդակում պետք է ամրագրվեր կարգ, համաձայն որի քննչական կոմիտեն հաշվետու կլիներ ԱԺ-ին՝ իր տարեկան գործունեության համար:

Դ. Եզրակացություն

Ամփոփելով կարելի է ասել, որ հիմնական խոչընդոտներ են վերահսկողությունը, ինչպես վերադասի կողմից, այնպես էլ դատախազների կողմից ցուցումներ տալը, մասնագիտական հմտությունների պակասը, կոռուպցիան, պատասխանատվության կարգերի թերությունները: Թեև ընդհանուր առմամբ բոլորն այս տեսակետի հետ համաձայն էին, սակայն հնչեց նաև տեսակետ, որ վերահսկողությունն անհրաժեշտ է, քանի որ սա պետական համակարգ է:

Ե. Մոնիթորինգի մասնակիցների առաջարկություններ

- Նպաստել քննչական կոմիտեի աշխատանքի թափանցիկության բարձրացմանը:
- Քննչական մարմիններին ապահովել առանձին շենքային պայմաններով:
- Բարելավել քննիչների մասնագիտական պատրաստվածության մակարդակը:

2. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ


2.1. Հաշվետվողականության անհրաժեշտություն և հաշվետվությունն ընդունող նախընտրելի կառույցը/անձը

Ա. Ամփոփ տվյալներ դատարանների և դատախազության վերաբերյալ

Հանրային կարծիք: Գծապատկեր 35-ի տվյալները փաստում են, որ առկա է հաշվետվողականության խիստ անհրաժեշտության բարձր մակարդակ և՛ դատավորների, և՛ դատախազների, և՛ քննիչների դեպքում (համապատասխանաբար՝ 82,5%, 82%, 82%, **տե՛ս** գծապատկեր 35): Այնուհետև անհրաժեշտության պահանջը մեղմանում է, և ընդհանուր վերցրած միայն շատ փոքր զանգվածն է կարծում, որ անհրաժեշտ չէ, որպեսզի

դատախրավական մարմինները հաշվետվու լինեն իրենց գործունեության համար (համապատասխանաբար՝ 3,7%, 3, 7%, 4%):

Հաշվետվողականության խիստ անհրաժեշտության մակարդակն ավելի է մեծանում, երբ հարցին մոտենում ենք դատախրավական մարմինների հետ առնչություն ունեցողների տեսանկյունից: Նրանք դրա անհրաժեշտությունը կարևորում են ավելի շատ դատավորների, այնուհետև՝ դատախազների, վերջում՝ քննիչների դեպքում (համապատասխանաբար՝ 86,3%, 85,1%, 84,6%, **տե՛ս** գծապատկեր 36): Այս խմբում բացակայում են հարցի մասին կարծիք չունեցողները:



Մասնագիտական կարծիք: Դատարանների վերաբերյալ համակարգի ծառայություն մատուցողների ինքնագնահատման և մասնագիտական խմբերի գնահատման արդյունքներով հանրային հաշվետվողականության նպատակահարմարությունը բացակայում է, քանի որ մի դեպքում հաշվետվողականությունը դիտարկվում է որպես դատավորի գործունեության վրա ճնշման լրացուցիչ լծակ, մյուս դեպքում՝ դրա անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ համակարգի ներսում դատավորներն արդեն հաշվետու են: Մինևույն ժամանակ, առաջ է բերվում համակարգային հաշվետվողականության ներդրման պահանջը, ինչը դիտարկվում է թե՛ դատավորի գործունեության, թե՛ համակարգի վերաբերյալ տեղեկատվության տարածման արդյունավետ միջոց:

Դատախազության հաշվետվողականության վերաբերյալ հարցը քննարկելիս վերջիններս պնդում են, որ այս պահին առկա կարգերը բավարար են, իսկ մասնագիտացված այլ խմբեր հաստատում են հանրության այն դիտարկումը, որ հաշվետվության պակաս կա, և պաշտպանում են Ազգային ժողովի առջև հաշվետու լինելու տարբերակը: Ընդ որում,

հաշվետվողականությունը պետք է ինստիտուցիոնալ դրսևորմամբ ապահովվի՝ վարչական մարմինների առջև և հանրային քննարկումների շրջանակներում:

Բ. Հանրության ընկալումը քննչական կոմիտեի վերաբերյալ


Դատաիրավական մարմինների անկախ գործունեության պահանջից զատ՝ քաղաքացիները նաև կարևորում են, որպեսզի դատավորները, դատախազները և քննիչները հաշվետու լինեն իրենց գործունեության համար: Ներքոշարադրյալ նյութը կներառի հետևյալ հարցերի վերլուծությունը՝

- ✓ հաշվետվողականության անհրաժեշտության մակարդակը,
- ✓ հաշվետու լինելու համար ենթադրվող հարցերի շրջանակը,
- ✓ հաշվետվությունն ընդունող նախընտրելի կառույցները/անձիք,
- ✓ հաշվետվողականության հաճախականությունը:

Տվյալները փաստում են, որ առկա է հաշվետվողականության խիստ անհրաժեշտության բարձր մակարդակ՝ քննիչների 82%:

Հաշվետվողականության խիստ անհրաժեշտության մակարդակն ավելի է մեծանում, երբ հարցին մոտենում ենք դատաիրավական մարմինների հետ առնչություն ունեցողների տեսանկյունից, ինչը կազմում է 84,6%:


Հաշվետվողականության անհրաժեշտություն



Հարցվողներն առաջին հերթին կարծում են, որ քննիչները պետք է հաշվետու լինեն իրենց վերադասներին՝ 39,8% (տե՛ս գծապատկեր 38):

Երկրորդ մեծ կշիռն արդեն ստանում է «հանրություն» տարբերակը: Երրորդ և չորրորդ տեղերում այդ դերակատարությունը վերագրվում է ՀՀ նախագահին և Ազգային ժողովին: Այս հարցում ԶԼՄ-ներին և համայնքի ղեկավարներին վերագրվող դերը շատ ավելի պակաս կշիռ է ստանում ընդհանուր դերակատարների համեմատությամբ:

Որոշ քաղաքացիներ՝ 1,8%, այսինքն՝ մոտավորապես 100-ից երկուսը կարծում են, որ դատաիրավական մարմինները ոչ մեկի/ոչ մի օղակի պարտավոր չեն հաշվետու լինել:



Գ. Մասնագիտական գնահատման արդյունքներն ու մեկնաբանությունները քննչական կոմիտեի վերաբերյալ

- Վերադասներին հաշվետու լինելը համարվել է ընդունելի, իսկ ինչ վերաբերում է հանրությանը հաշվետու լինելուն, ապա, ըստ մասնավոր կարծիքի, կոմիտեում լրատվական վարչություն գոյություն ունի, որը պարբերաբար լուսաբանում է քրեական գործերը, իսկ հնչեղություն ունեցող գործերի վերաբերյալ այն հարցազրույցներ է կազմակերպում, կայքում տեղադրում տեղեկատվությունը: Ուրիշ հարց է, որ հանրությունը գտնում է, որ դա բավարար չէ, որովհետև ցանկանում է իմանալ ավելին:

- Հասարակությանը հաշվետու լինելը որոշ դեպքերում, ըստ մասնավոր կարծիքի, հակասում է քննչական գործունեության գաղտնիությանը՝ նախաքննության գաղտնիքին: Նախաքննությունը որոշակի փուլում պետք է հայտնի լինի միայն որոշակի թվով անձանց, ոչ թե հանրությանը, այնինչ՝ հասարակությունը ուզում է ամեն ինչից տեղյակ լինի հենց սկզբից:

- Անդրադառնալով այն հարցին, թե ում պետք է հաշվետու լինի քննչական կոմիտեն՝ կարծիք հայտնվեց, որ կոմիտեի ձևավորումից հետո այդ ուղղությամբ բավականին լուրջ

քայլեր են արվել, սկսած նրանից, որ գոյություն ունի կոմիտեի Facekook-յան էջ, , և այդ հարթակներում պարբերաբար գործունեությունը թարմացվում է:

- Կոմիտեի մասին օրենքում ասվում է, որ Կոմիտեն իր գործունեության հետ կապված հաղորդագրություն է ներկայացնում ԱԺ նախագահին, այսինքն՝ Կոմիտեն պարբերաբար հրապարակում է իր գործունեությունը:

•

Դ. Եզրակացություն

Ամփոփելով, կարելի է ասել, որ թեև կոմիտեի կազմավորման պահից անցել է միայն 2 տարի, այն մի շարք քայլեր է ձեռնարկել իր գործունեության հաշվետվողականության բարձրացման ուղղությամբ, սակայն դրանք բավարար չեն համարվում հասարակության կողմից:

Ե. Մոնիթորինգի մասնակիցների առաջարկություններ

- Կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություններ, որի արդյունքում ՀՀ Քննչական կոմիտեի ղեկավարը ԱԺ-ին ներկայացնի տարեկան հաշվետվություն, ոչ թե հաղորդում:


3. ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Ամփոփ տվյալներ դատարանների և դատախազության վերաբերյալ

Հանրային կարծիք: Գծապատկեր 44-ի տվյալները ցույց են տալիս, որ, ըստ հարցվողների, ներկայումս դատավորների գործունեության վրա շատ ազդեցություն ունեցող կառույցների ցանկում գտնվում են դատախազությունը, նախագահի աշխատակազմը, գործադիր, ապա՝ օրենսդիր իշխանությունը (համապատասխանաբար՝ 39,9%, 37,8%, 32,3%, 31,2%, **տե՛ս** գծապատկեր 44): Չնայած մեծ է հարցի մասին կարծիք չհայտնողների կշիռը, այնուամենայնիվ, քաղաքացիների մի որոշ զանգված կարծում է, որ դատարանների գործունեության վրա վերը նշված կառույցների ազդեցությունը բացակայում է (համապատասխանաբար՝ 10,9%, 15,8%, 18,8%, 19,3%, **տե՛ս** նույն տեղում): Եվ,

ընդհակառակը, հասարակական, միջազգային կազմակերպությունների և ՁԼՄ-ների պարագայում հարցվողները մեծամասամբ համարում են, որ վերջիններս ազդեցություն չունեն դատարանների գործունեության վրա (համապատասխանաբար՝ 52,7%, 38,2%, 35,5%, **տե՛ս** նույն տեղում): Համեմատաբար շատ ազդեցություն ունեցող առաջին հերթին համարվում են ՄԿ-ները, այնուհետև՝ ՁԼՄ-ները, վերջում ՀԿ-ները (համապատասխանաբար՝ 11,9%, 10,2%, 7,2%):

Դատավորների գործունեության վրա տարբեր կառույցների ազդեցության մակարդակը




Մասնագիտական կարծիք: Ո՞ր մարմիններն ունեն առավելագույն ազդեցություն դատական համակարգի վրա հարցը զանազան մասնագիտական խմբերում ստացավ տարբերվող պատասխաններ: Այսպես՝ ինքնազանահատման արդյունքում հաստատական հնչում էր միատեսակ կարծիք առ այն, որ հանրային այն տեսակետը, թե դատախազը, երկրի նախագահը կամ գործադիր իշխանությունն ազդեցություն ունի դատական համակարգի գործունեության վրա՝ պայմանավորված է հանրության տեղեկացվածության ցածր մակարդակով, այնինչ մյուս մասնագիտական խմբերում կարծիքներ հնչեցին, որ երկրի նախագահն ազդեցություն է ունենում դատական համակարգի վրա հիմնականում քաղաքական հնչողություն ունեցող գործերով, իսկ դատախազությունն ամեն ջանք գործադրում է պաշտպանելու իր կողմից հիմնավորված մեղադրանքը «ցանկացած գնով»:

Բ. Հանրության ընկալումը քննչական կոմիտեի վերաբերյալ

Հատկանշական է, որ քննչական կոմիտեի գործունեության նկատմամբ առավելագույն ազդեցությունն, ըստ հանության, ունի դատախազությունը՝ 39,1%, ապա երկի նախագահի աշխատակազմն ու գործադիր իշխանությունը՝ համապատասխանաբար՝ 34,2% և 30,4% համամասնությամբ:

Ամենից քիչ ազդեցությունն են ունենում հասարակական կազմակերպությունները՝ 7,6%:




Գ. Մասնագիտական գնահատման արդյունքներն ու մեկնաբանությունները քննչական կոմիտեի վերաբերյալ

- Կարծիքն այս հարցի վերաբերյալ բավականին միատեսակ էր առ այն, որ քննիչների վրա ազդեցություն են ունենում վերադասն ու դատախազությունը, մասնավորապես՝ գլխավոր դատախազության ազդեցությունը քննչական մարմնի վրա առավել նկատելի է բարդ գործերով:

- Ինչ վերաբերում է միջազգային կազմակերպությունների ազդեցությանը, ապա քննիչներն ասացին, որ նրանք ունեն միայն դրական ազդեցություն, քանի որ աջակցելով այս համակարգն տեխնիկական զինամար և հաստիքների վերապատրաստմամբ: Արդյունքում թեթևանում է ծանրաբեռնվածությունն ու արագանում գործերի ընթացքը:

- ԶԼՄ-ների ազդեցությունը ևս գնահատվեց դրական, քանի որ այն փաստը, որ հանրությունն իրազեկ է որևէ գործից ավելի զգոն է պահում քննիչին, թեև քննիչների համար ցանկալի չէ հաճախակի շփումը, քանի որ արդյունքում նրանք ստիպված են լինում թողնել իրենց հիմնական գործը և լրացուցիչ աշխատանք կատարել:

- Տեսակետները խիստ հակասական են այն հարցի շուրջ, թե արդյո՞ք գործադիր ու նախագահական իշխանություններն ունեն ազդեցություն. մի հատվածը պնդում էր, որ չունեն, իսկ եթե անգամ ունեն, ապա օրենքի տառին համապատասխան (օրինակ՝ երբ պաշտպանության նախարարությունը որևէ քրեական գործով կարծիք է հայտնում), իսկ հակառակ բևեռի ներկայացուցիչները պնդում են, որ երկրի նախագահը ազդեցություն է գործում հիմնականում քաղաքական հնչեղություն ունեցող գործերով, գործադիր իշխանությունը՝ կախված այն բանից, թե ում շահերն են շոշափվում տվյալ գործի շրջանակներում: Կենցաղային մանր բոլոր խնդիրները լուծվում են ցածր՝ քննիչների մակարդակում:

 «Քրեական գործը քննում ես, ընթացքը չես կարողանում որոշել, գնում ես քննարկելու վերահսկողություն իրականացնող դատախազի մոտ, հետո քաղաքի դատախազի, հետո գլխավոր դատախազի մոտ: Այդ քննարկումների արդյունքում եթե համայնքի դատախազը ուրիշ մոտեցում ունի, համայնքի դատախազի տեղակալը՝ ուրիշ, բնականաբար համայնքի դատախազի մոտեցումն է անցնելու»: Մասնավորապես. «... ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ, կան հոդվածներ, որոնցով երբ ... քրեական գործի վարույթը կարճում է կամ կասեցվում է ինչ-որ հիմքով, այդ գործերը անցնում են եռաստիճան ստուգման մեխանիզմով: Այսինքն՝ կոնկրետ կարճման օրինականությունը ստուգվում է ոչ միայն վարչական շրջանների դատախազության կողմից, այլև գնում է նաև Երևան քաղաքի դատախազություն, վերևում էլ գլխավոր դատախազությունն է ստուգում: Եվ որպեսզի գործով որոշման օրինականությունը հաստատվի, ներքին մեխանիզմ կա, այսինքն՝ գործը կարճելուց առաջ այդ բոլոր երեք օղակներով զեկուցվում է, համաձայնության է գալիս, այսինքն՝ արդյոք բոլոր դիրքորոշումները միասնական են թե ոչ, որպեսզի գործը կարճվի, չգնա հասնի գլխավոր և վերահսկվի»:

Դ. Եզրակացություն

Ամփոփելով վերոգրյալը, հարկ է փաստել, որ մասնագիտական խմբերի քննարկումները հաստատեցին հանրային այն տեսակետը, համաձայն որի քննչական մարմինների վրա

առավելագույն ազդեցություն ունեցող մարմինը դատախազությունն է, իսկ իշխանության մյուս ճյուղերի ազդեցությունը պայմանավորված է կոնկրետ գործի բնույթով և անձնական դրդապատճառներով:

Ե. Մոնիթորինգի մասնակիցների առաջարկություններ


Տե՛ս առաջարկությունը կապված դատախազական ցուցումների բացառման մասին:

4. ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԵՏ ԱՌՆՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ա. Ամփոփ տվյալներ դատարանների և դատախազության վերաբերյալ


Հանրային կարծիք: Հարցման ենթարկված անձանցից դատաիրավական համակարգի հետ առնչության փորձ են ունեցել 14,5%-ը, որից միայն 6,9% են առնչություն ունեցել քննչական կոմիտեի հետ: Ընդհանուր առմամբ, դատաիրավական համակարգի հետ առնչության փորձ ունեցած հարցվողներն ավելի շատ բացասական (53,2%) գնահատական են տվել, որում գերակշռում են խիստ բացասական պատասխանները՝ 34,1% (*տե՛ս* գծապատկեր 11):

Դատաիրավական համակարգի հետ առնչության փորձին գնահատականը



Մասնագիտական կարծիք: Դատական համակարգի հետ առնչության փորձը բացասական կամ դրական գնահատած մարդկանց կարծիքն ըստ մասնագետների պայմանավորված է առաջին հերթին կոնկրետ տվյալ անձի ունեցած գործի էլքով: Հաղթող կողմը, որպես կանոն, բավարարված է, պարտվողը՝ դժգոհ: Միանշանակ բացասական կարծիքը հիմնականում պատճառաբանվում է հանրության ցածր իրավագիտակցությամբ, փոխհատուցման ինստիտուտի բացակայությամբ, դատավարական երկար ժամկետներով, արդարացնող դատական ակտերի սակավությամբ, նշանակվող պատժաչափի անարդարացիությամբ, անգործությամբ ու դատավարական խախտումների մեծ թիվով, ինչպես նաև ընդհանուր հանրային դժգոհ դիրքորոշմամբ: Դրական կարծիքի ձևավորման պատճառների շարքում, բացի ցանկալի էլքից, նշվում է նաև բարյացակամ վերաբերմունքը, պրոֆեսիոնալիզմը:

Բ. Հանրության ընկալումը քննչական կոմիտեի վերաբերյալ



Առանձին միայն գնահատելով քննչական կոմիտեի հետ առնչության փորձը քաղաքացիների միայն 6%-ն է այն գնահատել միանշանակ դրական, այն դեպքում, երբ 33%-ն ասել է, որ այդ փորձը միանշանակ բացասական էր:

Գ. Մասնագիտական գնահատման արդյունքներն ու մեկնաբանությունները քննչական կոմիտեի վերաբերյալ

Մասնագիտական խմբերում կայացած քննարկումների արդյունքում դուրս են բերվել այն հիմնական դրդապատճառները, որոնք, ըստ մասնագետների, հիմք են հասարակության շրջանում բացասական վերաբերմունքի ձևավորման համար.

- Որոշ իրավիճակներում քաղաքացին քննչական կոմիտեի հետ առնչության արդյունքում իր հարցի համար ստանում է դրական լուծում, սակայն այդ լուծումն ստանալու ընթացքում այնքան քաշքշուկների և ընթացակարգային երկարատև գործողությունների միջով է անցնում, որ արդյունքում, անկախ իր համար նպաստավոր ելքից, քաղաքացու ընդհանուր ընկալումը դառնում է բացասական:

- Քաղաքացիների դժգոհության պատճառ են հենց բուն ընթացակարգերը, քանի որ համաձայն օրենսդրության հաճախ են առաջանում իրավիճակներ, երբ նույն գործի շրջանակում՝ պայմանավորված դատավարական կարգավիճակի փոփոխությամբ կամ այլ հանգամանքներով, քաղաքացուն անհրաժեշտություն է առաջանում մի քանի անգամ հարցաքննել կամ հրավիրել քննչական բաժին և այլն, ինչն էլ հանգեցնում է քաղաքացու բացասական կարծիքի ձևավորմանը, չնայած այն հանգամանքին, որ դա օրենքի պահանջ է և բխում է հենց քաղաքացու շահերից:

- Այս համակարգը պետական կառույց է, և անձը ինչպես որ վերաբերվում է պետությանը, այնպես էլ վերաբերվում է այս համակարգին: Եթե մարդը պետական համակարգից դժգոհ եղավ, այս համակարգից ևս դժգոհում է:

- Անձը, հանդես գալով որպես տուժող և անհրաժեշտ իրավական կարգերի բացակայության պատճառով չստանալով փոխհատուցում, , հաճախ բացասական վերաբերմունք է ձևավորում քննչական մարմնի հանդեպ:

- Քննչական մարմինների հետ առնչվելիս քաղաքացիների մոտ երբեմն ձևավորվում է բացասական վերաբերմունք, քանի որ նրանց մասնագիտական հմտությունների մակարդակը հաճախ անբավարար է, ինչի արդյունքում նրանք ամեն քննչական գործողության իրականացումը համակարգում ու քննարկում են իրենց վերադասի հետ, թույլ են տալիս բազում սխալներ, շփոթվում կամ կաշկանդվում են իրավապաշտպանների մասնակցությունից քննչական գործողությունների իրականացման ընթացքում և այլն:

Դ. Եզրակացություն

Այսպիսով կարելի է փաստել, որ մասնագիտական խմբերը կիսում են քաղաքացիների մոտեցումը քննարկվող հարցի վերաբերյալ և ավելին ներկայացնում են ոչ միայն ընդհանուր պատճառներ, այլ նաև մասնավոր իրավիճակներ, որոնց բարելավումը կարող է նպաստել հանրության շրջանում դրական վերաբերմունքի ձևավորմանը:

Ե. Մոնիթորինգի մասնակիցների առաջարկություններ


- Նախատեսել ֆինանսական փոխհատուցման տրամադրման արդյունավետ կարգ վկայի, տուժողի, երրորդ անձի, փորձագետի դատարան հասնելու ճանապարհաձախսի փոխհատուցման համար:
- Փոխհատուցման արդյունավետ ինստիտուտի ներդրում:
- Քննիչի աշխատանքի անցնելու համար նախատեսել պարտադիր պայման՝ առնվազն 6 ամսվա պրակտիկայի առկայություն քննչական մարմիններում:

5. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ ՀԱՎԱՏԸ ԵՎ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Ամփոփ տվյալներ դատարանների և դատախազության վերաբերյալ

Հանրային կարծիք: Ըստ գծապատկեր 60–ի տվյալների՝ համեմատության մեջ լիովին վստահության բարձր (տարբերությունն աննշան է) ցուցանիշ առկա է քննչական կոմիտեի նկատմամբ, մասամբ վստահության՝ դատարանների նկատմամբ (համապատասխանաբար՝ 3,8%, 28,9%, **տե՛ս** գծապատկեր 60): Բացարձակ անվստահության բարձր ցուցանիշ՝ կրկին քննչական կոմիտեի նկատմամբ, մասամբ անվստահության՝ դատարանների նկատմամբ (համապատասխանաբար՝ 29,8%, 31,2%, **տե՛ս** նույն տեղում):


Դատաիրավական մարմինների նկատմամբ վստահությունը




Մասնագիտական կարծիք: Մասնագիտական խմբերի մոտեցումներով ևս պաշտպանվում է ինքնագնահատման այն կարծիքը, որ դատարանի գործունեության վերաբերյալ հանրային վստահությունը բարձր է: Նման տեսակետը հիմնականում հակված է ներկայացնելու համակարգում տեղի ունեցած բարեփոխումները որպես հիմնական փաստարկ: Ի հավելումս, մասնագիտական խմբերն առաջ են քաշել այնպիսի մոտեցումներ, որոնցով դատարանի նկատմամբ վերաբերմունքի հիմնական պատճառը համարվել է ընդհանուր պետական համակարգի նկատմամբ անվստահությունը, իրավագիտակցության պակասը:

Բ. Հանրության ընկալումը քննչական կոմիտեի վերաբերյալ

Ներկայացված աղյուսակում երևում է, որ քննչական կոմիտեին ավելի շատ վստահում են նախքան առնչվելը, քանի որ ընդհանուր տպավորությամբ պատասխանողների մեջ ավելի մեծ էր վստահության մակարդակը՝ 30,1%, այնինչ՝ առնչվածները առավել բացասական տրամադրվածությամբ էին:



Ստորև ներկայացված աղյուսակից ակնհայտ է դառնում, որ քննչական կոմիտեին ամենից քիչ վստահում են Շիրակի մարզում՝ 21,1%-ը, Երևանում՝ 24,1% և Լոռու մարզում 26,3%-ը: Ընդհանուր առմամբ վերցրած նկատելի է, որ վստահության աստիճանն առավել նվազ է մայրաքաղաքում՝ 24,1%, ապա մարզկենտրոններում՝ 34.5 % և գյուղերում՝ 41,2%:



Գ. Մասնագիտական գնահատման արդյունքներն ու մեկնաբանությունները քննչական կոմիտեի վերաբերյալ

Մասնագիտական խմբերում հնչած տարբեր կարծիքները հիմնականում հանգեցնում են այն եզրակացությանը որ հասարակությունը չի վստահում քննչական մարմիններին հետևյալ պատճառներից ելնելով.

- Քաղաքացիների ցածր իրավագիտակցությունը: Օրինակ՝ մասնավոր հետապնդման գործերով, երբ անձը կատարում է զգալի չափերով գողություն, որպես խափանման միջոց կալանքի միջնորդություն չի արվում, իսկ հասարակության մեջ ձևավորվում է կարծիք, որ անձը հանցանք է կատարել, բայց ազատության մեջ է՝ չիմանալով, որ օրենքը զգալի չափերով գողության համար կալանք չի նախատեսում:

- Համակարգի նկատմամբ հասարակության անվստահությունն ուղղակի պայմանավորված է արդարացման և դրական որոշումների չնչին քանակով:

- Անձը չի վստահում քննչական կոմիտեին, քանի որ գիտակցում է, որ քննչական մարմնով գրեթե ոչինչ պայմանավորված չէ: Հիմնական դերակատարումը պատկանում է դատախազությանը:

«Եթե քննչական բաժնում քննվում է 100 գործ, որից 98-ը մեղադրական եզրակացությամբ գնում է դատարան, և միայն 2-ն է կարճվում, ապա նշանակում է, որ մենք ունենք 98 դժգոհ և 2 գոհ: Այս 98 գործը գնում է դատարան, և դրանից ևս 2-ով կայացվում է դրական դատական ակտ և 96 մեղադրական դատական ակտ: Ջուտ այդ հանգամանքով է պայմանավորված»:

Դ. Եզրակացություն

Ամփոփելով կարելի է փաստել, որ մասնագետների կողմից վստահության ներկայիս ցուցանիշները բավականին դրական են գնահատվում, իսկ անվստահության հիմնական պատճառները ինչպես և դատարանների դեպքում վերագրվում են ընդհանուր պետական ինստիտուտների նկատմամբ անվստահության մակարդակին, դրական որոշումների սակավությանը և քննչական կոմիտեի ինքնուրույն գործելու պակասին:

Ե. Մոնիթորինգի մասնակիցների առաջարկություններ

- Իրականացնել քննչական կոմիտեի աշխատակազմերի վերապատրաստումներ, որոնք կնպաստեն ծառայությունների մատուցման բարելավմանը:


- Բարելավել ծանուցումների համակարգը:
- Բարելավել քննչական կոմիտեի կողմից տրամադրվող տեղեկատվության մակարդակը:
- Ապահովել յուրաքանչյուր քաղաքացու հետ անհատական աշխատանք՝ արդարադատությունը դիտարկելով որպես հանրությանը ծառայությունների մատուցում:
- Միջոցներ ձեռք առնել գործի քննության տևողության ողջամիտ ժամկետների պահպանման ուղղությամբ:
- Քննչական մարմիններում նախատեսել առանձին հարցաքննության սենյակներ, որոնցում տեղադրված լինեն տեսանկարահանող սարքեր:
- Քննչական մարմինները համալրել ճանաչման ներկայացնելու համար նախատեսված հատուկ սենյակներով, որտեղ առկա են անթափանց հայելիով բաժանված տարածք՝ ճանաչվողների տեսադաշտից դուրս ճանաչում իրականացնելու համար:
- Մշակել ՋԼՄ-ների հետ աշխատանքի ռազմավարություն, որի շրջանակում հանրային հնչեղություն ունեցող գործերի վերաբերյալ հասարակությանը կտրամադրվի անկողմնակալ, մասնագիտական և հասկանալի տեղեկատվություն:

6. ԻՐԱՎԱՀԱՎԱՍՍԱՐՈՒԹՅԱՆ, ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴԱՐ ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԱՌՈՒՄՆԵՐԸ ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ա. Ամփոփ տվյալներ դատարանների և դատախազության վերաբերյալ

Հանրային կարծիք: Գծապատկեր 45–ի տվյալները ցույց են տալիս, որ, ըստ հարցվողների գերակշիռ մասի, դատավորները և քննիչները կողմերի նկատմամբ բացարձակապես հավասար վերաբերմունք չեն դրսևորում: Իսկ եթե միավորենք նաև «ավելի շուտ չեն դրսևորում» տարբերակը, ապա կստանանք հետևյալ պատկերը. հարցվողների մոտավորապես 3/4 մասը (72,8% դատավորների, 73,8% քննիչների դեպքում, **տե՛ս** գծապատկեր 45) կարծում է, որ դատաիրավական կառույցներում չի պահպանվում իրավահավասարության սկզբունքը: Հարցվողների մեջ միայն 10-ից 2-ն է կարծում, որ հավասար վերաբերմունք է դրսևորվում դատավորների և քննիչների կողմից (19,6%՝ դատավորներ, 18,4%՝ քննիչներ): Վերջին տեսակետի կողմնակիցների կշիռը նվազում է, երբ հարցը դիտարկում ենք համակարգի հետ առնչություն ունեցողների տեսանկյունից: Առավել ևս քննիչների դեպքում առնչություն ունեցող քաղաքացիների շատ փոքր զանգված է կարծում, որ պահպանվում է իրավահավասարության սկզբունքը (9,6%՝ քննիչներ, **տե՛ս** գծապատկեր 46):

Կողմերի նկատմամբ հավասար վերաբերմունքի ապահովման մակարդակը




Մասնագիտական կարծիք: Ի տարբերություն հանրության պնդումներին՝ համակարգի ինքնազնահատողները համոզված են, որ իրավահավասարության սկզբունքը դատարանների կողմից չի խախտվում, սակայն ընթացակարգային որոշ կարգավորումներ կարող են հանրության համար նման ընկալում ձևավորելու հիմք հանդիսանալ: Սրա հիմնական

պատճառը մրցակցային դատավարությունում վիճաբանությունների և իր դիրքորոշումների ներկայացման ժամանակ կողմերի կարողությունն է: Հատկանշական է, այնուամենայնիվ, որ որ քրեական գործերի շրջանակներում դատախազության նկատմամբ տարբերակված վերաբերմունքի և այդ հիմքով իրավահավասարության սկզբունքի խախտման դրսևորումների համար ինքնագնահատման շրջանակներում հիմնականում հղում էր կատարվում անցյալում գործող պրակտիկային: Միաժամանակ, ընդգծվում էր, որ վերջին տարիներին նման պրակտիկան ևս իսպառ վերացված է: Կողմերի նկատմամբ իրավահավասարության պահպանման վերաբերյալ հանրության և համակարգի ծառայություն մատուցողների մոտեցումների տարբերությունը վկայում է, որ արդար դատական քննության իրավունքի արդյունավետ պաշտպանության համար անհրաժեշտ է լրացուցիչ ջանքեր ներդնել:

Բ. Հանրության ընկալումը քննչական կոմիտեի վերաբերյալ

Եթե միավորենք «ավելի շուտ չեն դրսևորում» տարբերակը, ապա կատանանք հետևյալ պատկերը. հարցվողների մոտավորապես 3/4 մասը՝ 73,8%-ը կարծում է, որ քննչական մարմիններում չի պահպանվում իրավահավասարության սկզբունքը: Հարցվողների մեջ միայն 10-ից 2-ն է կարծում, որ հավասար վերաբերմունք է դրսևորվում քննիչների կողմից՝ 18,4%:

Վերջին տեսակետի կողմնակիցների կշիռը նվազում է, երբ հարցը դիտարկում ենք համակարգի հետ առնչություն ունեցողների տեսանկյունից: Առավել ևս քննիչների դեպքում առնչություն ունեցող քաղաքացիների շատ փոքր զանգված է կարծում, որ պահպանվում է իրավահավասարության սկզբունքը (9,6%՝ քննիչներ, տե՛ս գծապատկեր 46):



Արդեն բովանդակություն արտահայտող պատասխանների մեջ ամենամեծ հաճախականությունը վերաբերում է գործի փաստերը ներկայացնելու հնարավորությունից զրկելու իրավիճակին (օրինակ, քննիչների դեպքում՝ 15,2%):

Գ. Մասնագիտական գնահատման արդյունքներն ու մեկնաբանությունները քննչական կոմիտեի վերաբերյալ

Քրեական դատավարության մոդելը կիսամրցակցային է, որը ենթադրում է, որ մինչդատական փուլում գործում է կողմերի անհավասարություն: Այսինքն՝ այս փուլում մեղադրող կողմը, այս դեպքում՝ քննիչը, պաշտպանության կողմի համեմատ գտնվում է առավել բարձր դիրքում, քանի որ պաշտպանության կողմը չունի այն բոլոր գործիքները, որոնցով կարող է հավաքել բավարար ապացույցներ: Քննչական մարմինների գործունեության ընթացքում, թեև քրեական դատավարության 17-րդ հոդվածը սահմանում է, որ քննիչը գործի արդարացի քննության սկզբունքից ելնելով պետք է գործի քննության ընթացքում հավաքի ինչպես մեղադրող, այնպես էլ արդարացնող ապացույցներ և այլն, բայց դատավարության օրենսգիրքը սահմանում է, որ քննիչը դատավարության սուբյեկտների շարքում գտնվում է մեղադրանքի կողմի սուբյեկտների շարքում: Ինչպես կարող է մի անձը, որը գտնվում է մեղադրանքի կողմի սուբյեկտների շարքում, հավաքել և՛ մեղադրական ապացույցները, և՛ արդարացնող ապացույցները: Տվյալ դեպքում առկա է երկատվածություն, որը խիստ համակարգային խնդիր է:

Դ. Եզրակացություն

Այսպիսով, անտարակույս է, որ նախաքննության փուլում կողմերի հավասարության կամ միջոցների/զենքերի հավասարության մասին խոսելն անգամ ավելորդ է: Գործող իրավակարգավորումը օրենսդրորեն նախատեսել է անհավասար պայմաններ կողմերի համար:

Ե. Մոնիթորինգի մասնակիցների առաջարկություններ

- Իրականացնել համապատասխան օրենսդրական փոփոխություններ, որոնց արդյունքում քննիչը կհանվի մեղադրողների ցանկից՝ ապահովելու համար հավասար մրցակցային պայմաններ գործի նախնական քննության փուլում, որի նպատակն է ոչ թե մեղադրել անձին, այլ յուրաքանչյուր գործով հավաքել ինչպես մեղադրական, այնպես էլ արդարացնող նյութեր, ապացույցներ ու փաստեր :

7. ԾՐԱԳՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քննչական կոմիտեի վերաբերյալ

Անկախություն և գործունեություն

1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քննչական կոմիտեի հարցում հիմնական խնդիրը կառուցվածքային է, այն է՝ Դատախազությունը մեծ ազդեցություն ունի ՀՀ քննչական կոմիտեի կողմից իրականացվող աշխատանքի վրա, պետք է առաջարկել, որ ընդունվի մի համակարգ, որտեղ ոստիկանությունն անկախ կլինի դատախազությունից, և պետությունն արդյունավետ միջոցներ ձեռնարկի, որպեսզի դատախազների և քննչական մարմինների միջև ապահովվի անհրաժեշտ և արդյունավետ համագործակցություն:⁶⁶
2. Ընդ որում, պետք է ապահովվի, որպեսզի քննիչներին տրամադրվի ավելի մեծ ինքնուրույնություն, ինչը ենթադրում է նաև, որ դատախազության կողմից տրված բոլոր ցուցումները լինեն գրավոր ներկայացված, ինչպես նաև քննիչն ունենա հնարավորություն պահանջել, որպեսզի փոփոխվի վերահսկող դատախազն այն դեպքերում, երբ առկա են ակնհայտ խախտումներ:⁶⁷
3. Անհրաժեշտ է պահպանել հավասարակշռություն բացառելով մի կողմից քննչական մարմինների նկատմամբ որևէ ազդեցություն կառավարության, խորհրդարանի, վերադատության, ինչպես նաև դատախազության ու հասարակության կողմից, իսկ մյուս կողմից չվնասել քննչական մարմիններում առկա սուբորդինացիոն վերահսկողությունը, ինչը կապահովի, որպեսզի քննիչներն առավել արդյունավետ իրականացնեն իրենց աշխատանքային պարտավորությունները:
4. Քննիչների նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման համար նախատեսվող ընթացակարգերը պետք է լինեն թափանցիկ և հիմնված լինեն նրանց կատարողականի վրա, ինչպես նաև ազդեցություն ունենան աշխատանքային առաջխաղացման վրա:

⁶⁶ BORDEAUX DECLARATION “JUDGES AND PROSECUTORS IN A DEMOCRATIC SOCIETY”

⁶⁷ Տե՛ս *mutatis mutandis* Venice Commission standard on this issue in the Joint Venice Commission and Directorate General of Human Rights 2013 Opinion on the Draft Law on the Public Prosecutor's Office of Ukraine and other assessments of the (draft) legal framework on the PPO of Ukraine. CDL (2013)039., paras. 60-61.

5. Հարկավոր է մշակել քննչական կոմիտեի ստորաբաժանումների և առանձին աշխատակիցների կատարողականի չափման համար ցուցանիշներ, որոնց չափման արդյունքները հասանելի կլինեն հասարակության համար:

Ոստիկանության (Քննչական կոմիտեի) և դատախազության փոխհարաբերությունները

6. Պետությունը պետք է արդյունավետ միջոցներ ձեռնարկի երաշխավորելու համար, որ դատախազը քննիչին հանձնարարություններ տալու և նրա աշխատանքի գնահատում և դրա նկատմամբ հսկողություն իրականացնելու հնարավորություն ունենա, և կարողանա կիրառել պատժամիջոցներ խախտումների համար (կամ նախաձեռնել դրանց կիրառումը):
7. Ընդհանուր առմամբ, դատախազները⁶⁸ պետք է ոստիկանական քննության օրինականության ուսումնասիրությունն իրականացնեն վերջին փուլում, երբ որոշվում է, թե արդյոք իրականացվելու է քրեական հետապնդում, թե ոչ:
8. Ի վերջո, ոստիկանության ծառայողներն առավել պատրաստակամ կլինեն կիրառելու դատախազության կողմից իրենց տրված ցուցումները, եթե դատախազության ներկայացուցիչներն իրենց մասնակցությունն ունենան նրանց վերապատրաստման գործընթացում:

Ոստիկանության և դատավորների փոխհարաբերությունները

9. Պետք է ապահովել դատավորների առավել բարձր ներգրավվածությունը քրեական գործերի մանրամասների քննարկման փուլում և ապահովել, որ դատավորները հանդիսանան անձնական ազատությունների արդյունավետ երաշխավորներ հատկապես կալանքի՝ որպես խափանման միջոցի կիրառման դեպքերում (հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախնական կալանքների թիվը հսկայական է), քանի որ դատավորներն են ապահովում մեղադրյալի իրավունքների, ինչպես նաև այն մասնակիցների իրավունքների ու ազատությունների պաշտպանված լինելու պարտավորությունը, ովքեր առնչվում են իրավունքների միջամտություն առաջացնող քննչական գործողություններին:

Կողմերի հավասարությունը և մարդու այլ իրավունքների պաշտպանությունը

10. Պետությունը պետք է ապահովի օրենքի առջև հավասարության սկզբունքի արդյունավետ կիրառումը, ինչպես նաև անմեղության կանխավարկածի սկզբունքի

⁶⁸ Rec(2000)19 of the Committee of Ministers on the Role of Public Prosecution in the Criminal Justice System

կիրառումը⁶⁹, որը հիմնարար կարևորություն ունի քրեական վարույթում, ինչպես նաև քննության ընթացքում անձանց իրավունքների պաշտպանվածությունը⁷⁰, որը նշանակում է, որ քննության ընթացում անձը «չի կարող ենթարկվել որևէ հարկադրանքի, ճնշման կամ սպառնալիքի, խոշտանգման կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի», այդ թվում բողոքների, հանրային մշտադիտարկման և անկախ քննության կարգերի ամրապնդման միջոցով⁷¹:

Հանրության վստահության բարձրացմանն ուղղված միջոցառումներ

11. Առաջարկվում է ապահովել հանցագործությունների հայտնաբերման և կանխարգելման համար մասնագիտական զարգացման առաջխաղացում, ուսումնասիրությունների կիրառում, վերլուծությունների կատարում և ռիսկի կառավարում⁷²:
12. Առաջարկվում է տարբեր աղբյուրներից հավաքել համապատասխան հուսալի տեղեկատվություն ներկայիս և ապագայի ամենասուր/ամենից էական հանցագործությունների խնդիրների հստակ և ճշգրիտ պատկերը հանրությանը ներկայացնելու համար⁷³:
13. Հարկավոր է կենտրոնանալ քննչական մարմնի օրինականության գաղափարի վրա, որը ձևավորվում է այն ընկալմամբ, որ քննչական մարմինը մարդկանց վերաբերվում է հարգանքով և արդարացիորեն⁷⁴, քանի որ երբ մարդիկ ուստիկանությանն ընկալում են որպես օրինական և պատասխանատու իրավապահ մարմին, առավել հավանական է, որ նրանք կհամագործակցեն ուստիկանության հետ անձնական բախումների ժամանակ և իրենց առօրյա կյանքում չեն խախտի օրենքը: Բացի այդ մարդիկ ավելի շատ հակված կլինեն օգնելու հսկել իրենց համայնքները, հայտնել հանցագործության մասին, բացահայտել դրանք և որպես վկա հանդես գալ հարցերում:

⁶⁹ Human Rights in the Administration of Justice: A Manual on Human Rights for Judges, Prosecutors and Lawyers

⁷⁰ Article 55 (1)(b) of the Statute of the International Criminal Court

⁷¹ Տե՛ս՝ u the CPT report on its 2015 visit to Armenia, CPT/Inf (2016) 31, paras. 9-30.

⁷² Արդարադատության համակարգի բարեփոխումների ռազմավարություն և Գործողությունների ծրագիր (գլուխ 10)

⁷³ Ոստիկանական ծառայությունը և հանցագործությունների նվազեցումները:

⁷⁴ Ոստիկանություն հանդեպ հանրային վստահության կառուցումը:

14. Պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի ընթացակարգային արդարադատության մասին ընկալումներն ամրապնդելու համար՝ կենտրոնանալով հետևյալի վրա⁷⁵.

- Չեզոքություն. թափանցիկ, կարգված որոշումների կայացումը ցույց է տալիս, որ ոստիկանության քաղաքականության իրականացումը և պրակտիկան արդար են և անկողմնակալ:
- Հարգանք. քաղաքացիների նկատմամբ հարգալից վերաբերմունքը նրանց հավաստիացնում է, որ իրենց իրավունքները հարգվում են:
- Արժանահավատություն. մարդկանց կարիքների և մտահոգությունների հանդեպ զգայունության ցուցաբերումը ցույց է տալիս, որ ոստիկանությունն անկեղծորեն փորձում է անել այն, ինչ լավագույնն է նրանց համար:

15. Պետք է պաշտպանել ՋԼՄ-ների՝ դատախազությանը քննադատելու իրավունքը, օրինակ, եթե կանխակալ կարծիք կա տեղի ունենալիք դատավարության նկատմամբ, այն պետք է բացառապես լուծվի դատարանի որոշմամբ⁷⁶:

⁷⁵ Հանրային շահի հոգեբանական գիտություն:

⁷⁶Տե՛ս *mutatis mutandis* DL-AD(2004)038, Venice Commission Opinion on the Draft Law amending the Law of Ukraine on the Office of the Public Prosecutor, para.28



ԳԼՈՒԽ III

ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐՆ ՈՒ

ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԸ

ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆԻՑ

Մասնագիտական կարծիքի

ուսումնասիրություն

1. ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ

1.1. Դատախազների նշանակման կարգը որպես նրանց անկախության երաշխիք. Դատախազների անկախության և նշանակման կարգի փոխկապվածությունը

Ա. Հանրության ընկալումը

Ինչպես դատավորների, այնպես էլ դատախազների նշանակման գործող կարգի վերաբերյալ հանրային իրազեկվածությունը համեմատաբար ցածր է, և, ըստ էության, այս գործընթացը հանրության համար տեսանելի չէ: Այս մասին վկայում է այն հանգամանքը, որ հանրային հարցման մասնակիցների մոտ 22%-ը դժվարացել է պատասխանել նշանակման կարգի վերաբերյալ հարցադրմանը: Այնուամենայնիվ, հանրության մոտ 30%-ը գտնում է, որ դատախազներին նշանակում է հանրապետության նախագահը:

Դատախազներին նշանակող/ընտրող ենթադրյալ կառույցը	
Նշանակվում են նախագահի կողմից	28.4%
Նշանակումներն արվում են ոչ ֆորմալ ձևով	16,8%
Նշանակվում են Ազգային ժողովի կողմից	14.3%
Նշանակվում են իրենց գործընկերների կողմից	10,3%
Ընտրվում են տվյալ համայնքի բնակչության կողմից	5,1%
Նշանակվում են համայնքի ղեկավարի կողմից	1.5%
Նշանակվում են կառավարության կողմից	0.6%
Դժվարանում է պատասխանել	21.7%

Հարության ընկալումների արդյունքները ցույց են տալիս, որ դատախազական կառույցներում անդամների նշանակման նախընտրելի ձևերի մեջ հանրության կողմից ամենանախընտրելի տարբերակը բաց, թափանցիկ մրցույթի միջոցով ընտրության իրականացումն է, որը, ըստ հարցվողների, կերաշխավորի նրանց անկախությունը պաշտոնավարման ընթացքում (տե՛ս գծապատկեր 24):


Դատախազների ընտրության վերաբերյալ հանրային ընկալման արդյունքներն արմատապես տարբերվում են, երբ ներկայացվում է իր կողմից նախընտրելի նշանակման/ընտրության տարբերակը: Այստեղ նախագահի կողմից նշանակվելու տարբերակը գրեթե երեք անգամ նվազում է, փոխարենը հանրությունը նշանակման գործում իրեն ավելի մեծ դեր է վերապահում՝ գտնելով, որ դատախազները պետք է նշանակվեն համայնքի բնակչության կողմից: Անհրաժեշտ է նշել նաև, որ նախընտրելի նշանակման/ընտրության կարգի պարագայում գրեթե 3,5 նվազում է «դժվարանում եմ պատասխանել» տարբերակը:

Դատախազներին նշանակող/ընտրող նախընտրելի կառույցը	
Պետք է ընտրվեն թափանցիկ մրցույթի միջոցով	34,4%
Պետք է ընտրվեն տվյալ համայնքի բնակչության կողմից	33,3%
Պետք է նշանակվեն Ազգային ժողովի կողմից	9,4%
Պետք է նշանակվեն նախագահի կողմից	8,3%
Պետք է ընտրվեն իրենց գործընկերների կողմից	5,6%
Պետք է նշանակվեն համայնքի ղեկավարի կողմից	2%
Այլ	0,7%
Դժվարանում է պատասխանել	6,4%

Բ. Մասնագիտացված խմբերի գնահատման արդյունքները

Մասնագիտական խմբերի և մասնավորապես՝ դատախազների կողմից մասնագիտական գնահատմամբ՝ դատախազների նշանակումն է բաց թափանցիկ մրցույթի ձևով, և այդ կարգը միանշանակ արդյունավետ է:

Մասնագիտական խմբերի գնահատմամբ՝ ընտրությունների տարբերակը չի կարող իրագործվել, քանի որ դատախազի պաշտոնը քաղաքական պաշտոն չէ, իսկ ընտրությունների միջոցով պաշտոնի անցնելու պարագայում ստիպողաբար կրեւիլի քաղաքական դաշտ և կախյալ կդառնան հանրության կարծիքից, հանրային տրամադրվածությունը կհանդիսանա խիստ կաշկանդող հանգամանք: Այն դեպքում, երբ դատախազն ընտրվի բնակչության կողմից, ջանքերը կկենտրոնացնի հանրային դժգոհությունները բացառող որոշումներ կայացնելու ուղղությամբ, ինչը միանշանակ ազդեցություն կթողնի աշխատանքի օրինականության վրա:

 Այս դեպքում, եթե ենթադրենք, որ համայնքի բնակչությունը պետք է ընտրի դատախազին, բնականաբար դատախազը կդառնա հասարակական «ֆիզուր», պետք է հաճելի լինի համայնքի բնակչությանը և այլն:

Մասնագիտացված խմբերի և մասնավորապես դատախազության գնահատմամբ՝ հանրության կողմից նման տարբերակի առաջադրումը պայմանավորված է դատախազության գործունեության մասին տեղեկացվածության պակասով:

Դատախազները գտնում են, որ դատախազին նշանակող և ազատող մարմինը պետք է մեկ անձ լինի, և իրենք պետք է մեկ անձից միայն ազդեցություն կրեն: Դատախազների նշանակումը պետք է իրականացվի համապատասխան մասնագիտական գիտելիքների ստուգումից հետո: Մա այն կարգն է, որն առավելագույնս ապահովում է դատախազների գործունեության անկախությունը:

1.2. Դատախազների նշանակման հանրության կողմից նախընտրելի կարգը որպես դատախազի գործունեության լիակատար անկախության երաշխիք

Ա. Հանրության ընկալումը

Հանրությունը դատախազների նշանակման կարգի ազդեցությունը գործունեության անկախության վրա գնահատելիս, հիմնականում հակված է պնդելու, որ նշանակման մեխանիզմն ազդեցություն է ունենում դատախազների գործունեության անկախության վրա: Հանրային հարցման արդյունքների համաձայն՝ 68% (միանշանակ ազդում է՝ 34% և 33,2% հանրագումար) նշանակման մեխանիզմը միանշանակ ազդում է անկախության վրա:

Ընտրության/նշանակման մեխանիզմների ազդեցության մակարդակը դատախազների անկախության վրա	
Միանշանակ ազդում են	34,3%
Որոշ չափով ազդում են	33,2%
Բացարձակ չեն ազդում	20,4%
Դժվարանում են պատասխանել	12,1%

Դատախազության գործունեության **անկախության խոչընդոտների** վերաբերյալ հանրային ընկալումները տարբեր են երկու տարբեր խմբերում՝ քաղաքացիների պատկերացումներում ընդհանուր առմամբ և այն քաղաքացիների տեսակետներում, ովքեր առնչություն են ունեցել դատախազության հետ: Առնչություն չունեցողների դեպքում առաջին երեք հիմնականները համարվում են 1) պատասխանատվության մեխանիզմների թերացումը՝ 29,2%, 2) գործունեության վերահսկողության պակասը՝ 27,1%, 3) հաշվետվողականության պակասը՝ 15,6%: Առնչություն ունեցող քաղաքացիները և/կամ նրանց ընտանիքի անդամները կարծում են, որ 1-ին հիմնական խոչընդոտը դատախազության գործունեության վերահսկողության պակասն է՝ 29,7%, 2-րդը՝ պատասխանատվության կարգերի թերությունը՝ 24%, իսկ 3-րդ խոչընդոտը՝ հաշվետվողականության պակասը՝ 13,1% (**տե՛ս** գծապատկեր 29):

Անկախության խոչընդոտները	
Պատասխանատվության կարգերի թերությունը	29.2%
Գործունեության վերահսկողության պակասը	27.1%
Հաշվետվողականության պակասը	15.6%
Սոցիալական վիճակը	12.7%
Վերադասների ազդեցությունը	2.2%
Կաշառակերությունը և այլն	1%
Խոչընդոտներ չկան	1.9%
Դժվարանում է պատասխանել	10.3%

Բ. Մասնագիտացված խմբերի գնահատման արդյունքները

Մասնագիտացված խմբերը և հատկապես դատախազությունը, գտնում է, որ հանրության կողմից նման տարբերակների առաջադրումը պայմանավորված է քաղաքացիների իրազեկվածության պակասով: Նրանց գնահատմամբ՝ դատախազության գործունեության անկախության խոչընդոտներ չկան:

2. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Հաշվետվողականության անհրաժեշտությունը եվ հաշվետվությունն ընդունող նախընտրելի կառույցը/անձը

Ա. Հանրության ընկալումը

Հանրային ընկալումների համաձայն՝ հաշվետվողականության խիստ անհրաժեշտության բարձր մակարդակ և՛ դատավորների, և՛ դատախազների, և՛ քննիչների դեպքում (համապատասխանաբար՝ 82,5%, 82%, 82%, տե՛ս գծապատկեր 35):

Հաշվետվողականության խիստ անհրաժեշտության մակարդակն ավելի է մեծանում, առնչություն ունեցողների տեսանկյունից: Նրանք դրա անհրաժեշտությունը կարևորում են դատախազների համար՝ 85,1%-ը (տե՛ս գծապատկեր 36): Այս խմբում բացակայում են հարցի մասին կարծիք չունեցողները:

Հանրության համար հաշվետվության հարցերի շրջանակը բավականին լայն է: Հարցվողների մոտ 20%-ը գտնում է, որ պետք է հաշվետվություն ներկայացնել բոլոր հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են՝ գործի ընթացքում կիրառած իրավական լուծումների, ապացույցների, արդար և ազնիվ, ոչ սխալ աշխատանքի, բաց և թափանցիկ աշխատանքի և այլն: Այնուամենայնիվ, հարցվածների 1/3-ը, մոտ՝ 36,1%-ը, դժվարացել է ներկայացնել այն հարցերի շրջանակը, որի վերաբերյալ հաշվետվություն է անհրաժեշտ:

Հանրության ընկալմամբ հաշվետվությունն անհրաժեշտ է ներկայացնել առաջինը իրենց վերադասին՝ մոտ 37%, իսկ այնուհետև հանրությանը՝ 33%:

Ում պետք է հաշվետու լինեն դատախազները	
Ոչ մեկին. ոչ մի օղակի	1,7%
Իրենց վերադասներին	34,6%
Երկրի նախագահին	11,1%
Ազգային ժողովին	9,8%
Համայնքի ղեկավարներին	1,6%
Հանրությանը	33,1%
ԶԼՄ-ներին,	2,5%
Բոլոր նշված կառույցներին	0,8%
Դժվարանում եմ պատասխանել	3,3%

Բ. Մասնագիտացված խմբերի գնահատման արդյունքները

Մասնագիտացված խմբերի և մասնավորապես դատախազների գնահատմամբ՝ հաշվետվողականության խնդիրը հասցեագրված է, քանի որ դատախազությունն իր գործունեության վերաբերյալ յուրաքանչյուր տարի հաշվետվություն է ներկայացնում Ազգային ժողովում: Դատախազության կոլեգիալ նիստերին, որին կարող են մասնակցել նաև լրավամիջոցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, վերլուծության է ենթարկվում վեցամսյա գործունեության արդյունքները: Բացի այդ, ընթացիկ, ամենօրյա գործունեության հաշվետվողականությունն ապահովվում է դռնբաց դատական նիստերի միջոցով, որտեղ հրապարակվում և ներկայացվում են մեղադրական եզրակացությունները:

Դատախազության համար վերադասին հաշվետու լինելն ընդունելի է, քանի որ ավելի կոնկրետ հասցեատեր է մատնանշվում, իսկ հանրության առջև հաշվետու լինելու պարագայում մասնագիտական տեղեկությունը չի կարող ամբողջ ծավալով ընկալվել հանրության կողմից:

Բացի այդ, դատախազները կարծում են, որ հաշվետվողականության առկա կարգից ավելի մեծ ծավալով հաշվետվողականությունը, որը կհանգեցնի նաև գործունեության կանխատեսելիությանը, կվնասի արդարադատությանը: Մամուլը կսկսի դատական գործընթացի վրա ազդեցություն ունենալ, ուստի օբյեկտիվության համար նախընտրելի է, որ ոչ մեղիան, ոչ մյուսները ազդեցություն չունենան:

Մասնագիտացված այլ խմբերը հաստատում են հանրության այն դիարկումը, որ հաշվետվության պակաս կա, և պաշտպանում են Ազգային ժողովի առջև հաշվետու լինելու տարբերակը: Ընդ որում, հաշվետվողականությունը պետք է ինստիտուցիոնալ դրսևորմամբ ապահովվի՝ վարչական մարնիների առջև և հանրային քննարկումների շրջանակներում:

3. ԴԱՏԱԽԱԶԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ: ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ ԴԻՄԵԼՈՒ

ՏՐԱՄԱԴՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐՋԻՆ ՄԵՎ ՏԱՐՎԱ ՓՈՐՁԸ

Ա. Հանրության ընկալումը

Քաղաքացիների՝ դատախազության հետ առնչության փորձը մեծ մասամբ 5 և ավելի շատ տարիների վաղեմություն ունի և հարցված քաղաքացիների 46.3%-ը վերջին հինգ և ավել տարիների ընթացքում դիմել է դատախազություն (տե՛ս գծապատկեր 8): Ընդհանուր առմամբ, դատախարական համակարգի հետ առնչության փորձին, ներառյալ դատախազությանը, հարցվողներն ավելի շատ բացասական (53,2%) գնահատական են տվել, որում գերակշռում են խիստ բացասական պատասխանները՝ 34,1% (տե՛ս գծապատկեր 11): Մինչդեռ դրական գնահատողների մեջ (45,1%) միանշանակ դրական տրամադրվածները գրեթե երկու անգամ (15,6%) քիչ են մասամբ դրական վերաբերվողներից (29,5%): Այսինքն՝ կարող ենք փաստել, որ բացասական գնահատողներն ավելի շատ չտատանվող և հստակ վերաբերմունք են ձևավորել փորձի արդյունքում, քան դրական գնահատողները:

Բ. Մասնագիտացված խմբերի գնահատման արդյունքները

Մասնագիտացված խմբերի և մասնավորապես՝ դատախազության գնահատմամբ՝ առնչություն ունեցող քաղաքացիների կեսը դրական է գնահատել, ինչը նշանակում է, որ ընդհանուր դիրքորոշումը բացասական չէ: Որպես կանոն, մի կողմը միշտ գոհ է մնում, մյուսը՝ դժգոհ: Բացի այդ, շատ ժամանակ քաղաքացին չի հասկանում արդյոք տվյալ որոշումն իր օգտին է, թե՛ ոչ: Պատճառը ցածր իրավագիտակցությունն է: Ոչ դատախազությունը, ըստ իր ներկայացուցիչների, և ոչ էլ իրավապահ այլ կառույցները լիազորություն կամ էլ համապատասխան ռեսուրսներ ունեն, որպեսզի յուրաքանչյուր դժգոհ մնացած քաղաքացուն բացատրեն, որ այդպիսի որոշում են կայացրել, և որն իր օգտին է:

4. ԾՐԱԳՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դատախազության անկախության երաշխիքները

Դատախազների անկախության ապահովման համար անհրաժեշտ է ձեռնարկել օրենսդրական և պրակտիկ համապատասխան քայլեր, որոնք կապահովեն հետևյալը.

1. Սահմանել արդյունավետ ընթացակարգեր և համապատասխան օրենսդրական հիմքեր դատախազների գործունեության նկատմամբ ազդեցությունը կամ անհարկի միջամտությունը բացառելու համար, այդ թվում նաև իշխանության մյուս ճյուղերի կողմից: Սա պետք է ներառի նաև դատախազների ներքին/անհատական անկախության պահանջների վերահաստատումը, մասնավորապես՝ գործընթաց, որով դատախազն իրավունք ունի իրեն հանձնված գործի առնչությամբ ցուցումները ստանալ գրավոր, կարող է պահանջել փոխարինել իրեն: Մինևույն ժամանակ, պետք է դիտարկել դատախազական խորհրդի կամ դատարանի գործառույթ իրականացնող այլ ակախ մարմնի ներդրումը, որին դիմելու իրավունքը տրված կլինի այն դատախազներին, ում անօրինական գործողությունների վերաբերյալ առկա է բողոք⁷⁷.
2. Վերադաս դատախազի կողմից ապահովել փոխզսպվածություն, որպեսզի մի դեպքում՝ ենթակայության մեջ գտնվող դատախազների գործունեության մեջ Կառավարության, Ազգային ժողովի, ոստիկանության կամ հանրության կողմից հնարավոր միջամտությունը բացառվի, մյուս կողմից ապահովի ենթակայության մեջ գտնվող դատախազների պարտականությունների պատշաճ իրականացումը⁷⁸:
3. Ապահովել, որպեսզի դատախազների առաջխաղացումն իրականացվի նրանց մասնագիտական կարողությունների զարգացման, փորձառության վրա հիմնված օբյեկտիվ չափորոշիչների կիրառմամբ և բացառել դատախազների նշանակման և առաջխաղացման գործընթացում կամայական որոշումների կայացումը⁷⁹: Այս առնչությամբ անհրաժեշտ կլինի բարելավել դատախազների վարքագծի և էթիկայի գնահատման իրավական կանոնները, և ներդնել դատախազի գործունեության գնահատման համակարգ: Անհրաժեշտ է դիտարկել նաև դատախազական

⁷⁷ See the Venice Commission standard on this issue in the Joint Venice Commission and Directorate General of Human Rights 2013 Opinion on the Draft Law on the Public Prosecutor's Office of Ukraine and other assessments of the (draft) legal framework on the PPO of Ukraine. CDL (2013)039., կետ 60-61.

⁷⁸ See CDL(1995)073rev., Venice Commission Opinion on the regulatory concept of the Constitution of the Hungarian Republic, բաժին 11.

⁷⁹ BORDEAUX DECLARATION "JUDGES AND PROSECUTORS IN A DEMOCRATIC SOCIETY"

ինքնակառավարման մարմին ձևավորելու հնարավորությունը, որն իրավասություն կունենա մերժել դատախազական նշանակումները, որոնք իրականացվում են կամայականորեն⁸⁰:

Իրենց գործառույթներն իրականացնելու համար դատախազներին տրամադրվող երաշխիքներ, ինքնակառավարման բարելավում

4. Ձեռնարկել համապատասխան քայլեր՝ օրենսդրական և քաղաքականության, որպեսզի դատախազները կարողանան իրականացնել իրենց մասնագիտական պարտականությունները համարժեք իրավական և կազմակերպական պայմաններում, ինչպես նաև տնօրինեն համապատասխան բյուջետային միջոցներ: Նման պայմանների ձևավորումը և որոշումների կայացումը պետք է իրականացվի դատախազների հետ համագործակցությամբ⁸¹:
5. Ամրապնդել դատախազական ինքնակառավարման մարմինների դերն ու գերծունեության արդյունավետությունը, որը դատախազության գործունեության երաշխիքներից մեկն է: Նման մարմնի գործառույթները պետք է ներառեն դատախազներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և մասնագիտական առաջխաղացման հարցերի վերաբերյալ որոշումների կայացումը՝ հիմնված օրինականության, արդյունավետության, թափանցիկության սկզբունքների վրա⁸²:

Դատախազների և հանրության հարաբերությունները

6. Սահմանել համապատասխան ընթացակարգեր, որպեսզի դատախազությունն իր գործունեությունը մատչելի ձևով հասանելի դարձնի հանրությանը և պարբերաբար հրապարակայնեցնի իր գործունեությունը՝ իր առաջնահերթությունների իրականացման հերթականությամբ⁸³: Սա վերաբերում է ոչ միայն Գլխավոր դատախազության գործունեությանը, այլև դատախազության տարածքային ստորաբաժիններին:

⁸⁰ See CDL-AD(2008)019, Venice Commission Opinion on the draft law on the Public Prosecutors' service of Moldova , կետ 44

⁸¹ Rec(2000)19 of the Committee of Ministers on the Role of Public Prosecution in the Criminal Justice System

⁸² See CDL-AD(2007)047, Venice Commission Opinion on the Constitution of Montenegro, para. 110-111

⁸³ Ibid

7. Ապահովել դատախազության գործունեության նկատմամբ անկախ վերահսկողություն⁸⁴:

Հանրային դատախազության և լրատվամիջոցների հարաբերությունները

8. Ներդնել լրատվամիջոցների հետ աշխատանքի և համագործակցության պրակտիկա, և այդ նպատակով սահմանել համապատասխան ձեռնարկներ, ուղեցույցեր թե՛ լրատվամիջոցների, թե՛ դատախազների համար⁸⁵:

Ապահովել լրատվամիջոցների կողմից դատախազության գործունեության նկատմամբ այնպիսի քննադատություն, որն, օրինակ իրավաչափ է և բացառում է նախադատելիություն առաջիկա դատավարության առնչությամբ՝ մինչև դատարանի որոշումը⁸⁶:

⁸⁴ Տե՛ս the Venice Commission standard on this issue in the Joint Venice Commission and Directorate General of Human Rights 2013 Opinion on the Draft Law on the Public Prosecutor's Office of Ukraine and other assessments of the (draft) legal framework on the PPO of Ukraine. CDL (2013)039., paras. 60-61.

⁸⁵ BORDEAUX DECLARATION "JUDGES AND PROSECUTORS IN A DEMOCRATIC SOCIETY"


⁸⁶Տե՛ս DL-AD(2004)038, Venice Commission Opinion on the Draft Law amending the Law of Ukraine on the Office of the Public Prosecutor, կետ 28

1. ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԵՏ ԱՌՆՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԸ

Քանակական ուսումնասիրությունը նպատակ ուներ բացահայտել արդարադատության տարբեր բաղադրիչների վերաբերյալ հասարակության ընկալումները: Պետք է ընդունենք, որ այդ ընկալումները կարող են տարբեր լինել՝ համակարգի հետ առնչության փորձով պայմանավորված: Օրինակ, միգուցե այն քաղաքացիները, ովքեր իրական շփում չունեն/չեն ունեցել դատարանների հետ, ավելի շատ են վստահում արդարադատությանը, քան այն քաղաքացիները, ովքեր իրական փորձառություն ունեն/ունեցել են դատարանների հետ: Այդ տարբերությունն առանձին բաղադրիչների վերլուծության ժամանակ ցույց կտանք աշխատանքի հաջորդ էջերում:

Այժմ ներկայացնենք այն արդյունքները, որոնք վկայում են արդարադատության համակարգի հետ հարցվողների անձնական և/կամ ընտանիքի անդամների երբևէ ունեցած փորձի մասին: Գծապատկեր 7-ի արդյունքները ցույց են տալիս, որ համեմատության մեջ ավելի շատ են դատարանների հետ առնչվող քաղաքացիները (14,1%), այնուհետև՝ քննչական կոմիտեի (6,9%), վերջում՝ դատախազության (3,9%): Իսկ ընդհանուր առմամբ արդարադատության համակարգի հետ երբևէ առնչություն ունեցող քաղաքացիները (նրանց ընտանիքները) կազմում են ընդհանուրի 16,5%-ը (հարցմանը մասնակցած 1060 ընտանիքներից 175 ընտանիք):


Գծ. 7. Դատաիրավական համակարգի հետ առնչությունը



Առնչության փորձի պատկերն առավել ընդգրկուն կդառնա, եթե անդրադառնանք հետևյալ հարցերին. 1) առնչության ժամանակահատվածին, 2) առնչվող անդամի կարգավիճակին, 3) խնդրին/հարցին, որի պատճառով դիմել են արդարադատության համակարգին, 4) առնչության փորձին տված քաղաքացիների գնահատականին:

Քաղաքացիների՝ արդարադատության համակարգի հետ առնչության փորձը մեծ մասամբ 5 և ավելի շատ տարիների վաղեմություն ունի (դատարան, դատախազություն, քննչական կոմիտե՝ համապատասխանաբար 36,9%, 46,3%, 37%, **տե՛ս** գծապատկեր 8): Քաղաքացիների հաջորդ մեծ զանգվածը համակարգի հետ վերջին անգամ առնչվել է մեկ տարվա ընթացքում:


Գծ. 8. Դատաիրավական մարմինների հետ առնչվելու ժամանակահատվածը



Երեք կառույցների հետ առնչվելու ժամանակահատվածները համեմատելիս տեսնում ենք, որ քննչական կոմիտեի հետ առնչության դեպքերն ավելի շատ տեղի են ունեցել վերջին մեկ տարվա ընթացքում, իսկ դատախազության հետ առնչության փորձը՝ հինգ և ավել տարի առաջ: Դատարանների դեպքում նկատում ենք, որ 1-5 տարի ժամանակահատվածում քաղաքացիների առնչության փորձը ավելի շատ է, քան մյուս երկու կառույցների դեպքում:

Հարցմանը մասնակցած քաղաքացիները և/կամ նրանց ընտանիքի անդամները ընդհանուր առմամբ ավելի շատ հանդես են եկել հայցվորի կարգավիճակում (*տե՛ս* գծապատկեր 9): Դատարանների օրինակով տեսնում ենք, որ հաջորդ մեծ զանգվածը կազմում են պատասխանող (18,1%) և մեղադրյալ (17,4%) կողմերը: Դատարանում տուժողի կարգավիճակում հայտնվել է ընդհանուրի 14,1%-ը: Կան նաև քաղաքացիներ, ովքեր դատարանների հետ առնչության այլ կարգավիճակային փորձառություն ունեն՝ երրորդ անձ, վկա, կասկածյալ և փորձագետ:


Գծ. 9. Դատաիրավական մարմինների հետ առնչվող անձի կարգավիճակը



Այս հարցը առավել արժևորվում է փոխկապվածության մեջ այն դեպքում, երբ հարցվողները գնահատում են իրենց և/կամ ընտանիքի անդամների՝ դատական համակարգի հետ առնչվելու փորձը: Գծապատկեր 10-ի արդյունքները ցույց են տալիս, որ առավելապես բացասական են գնահատել տուժողի (75%) և մեղադրյալի (69,2%) կարգավիճակում հայտնված քաղաքացիները և/կամ նրանց ընտանիքի անդամները: Դրական-բացասական գնահատականների հավասարությունը ապահովում են պատասխանող և կասկածյալ կարգավիճակներում հանդես եկող կողմերը: Իսկ առնչության փորձից առավելապես դրական


տպավորություն են ստացել երրորդ անձիք (71,4%) և վկաները (66,7%), շատ քիչ առավելությամբ՝ նաև հայցվորները (52,5%):

ԳՃ. 10. Դատարանի հետ առնչության փորձին գնահատականը՝ ըստ առնչվողի կարգավիճակի




Ընդհանուր առմամբ, դատաիրավական համակարգի հետ առնչության փորձին հարցվողներն ավելի շատ բացասական (53,2%) գնահատական են տվել, որում գերակշռում են խիստ բացասական պատասխանները՝ 34,1% (տե՛ս գծապատկեր 11.): Մինչդեռ դրական գնահատողների մեջ (45,1%) միանշանակ դրական տրամադրվածները գրեթե երկու անգամ (15,6%) քիչ են մասամբ դրական վերաբերվողներից (29,5%): Այսինքն, կարող ենք փաստել, որ բացասական գնահատողներն ավելի շատ չտատանվող և հստակ վերաբերմունք են ձևավորել փորձի արդյունքում, քան դրական գնահատողները: Կան նաև քաղաքացիներ, ովքեր դժվարացել են որևէ գնահատական տալ առնչության փորձին:

Գծ. 11. Դատախրավական համակարգի հետ առնչության փորձին գնահատականը



Դրական կամ բացասական գնահատականի ձևավորման հարցում կարևոր գործոն է հանդիսացել նաև այն խնդրի հանգամանքը, որի առնչությամբ քաղաքացին դիմել է արդարադատության կառույցներին:


Գծ. 12. Դատարանի հետ առնչության պատճառները



Դատարանների օրինակով (*տե՛ս* գծապատկեր 12.) տեսնում ենք, որ հարցվողները և/կամ նրանց ընտանիքի անդամները դատարանների հետ ավելի շատ առնչվել են քաղաքացիական իրավունքի պաշտպանության հարցերով (73,8%), որում ավելի շատ են հանդիպում գույքային, ֆինանսական վեճերը (26,8%), մոտավորապես այնքան, որքան քրեական գործերով դատարանի հետ առնչության դեպքերն են (26,2%):

Գծապատկեր 13-ի արդյունքները ցույց են տալիս, որ քրեական գործերով դատարանի հետ առնչվող քաղաքացիների կեսից ավելին՝ 56,4%-ը, միանշանակ բացասական գնահատականով է որակում առնչության փորձը (ընդհանուր բացասական վերաբերմունքը կազմում է 66,7%): Միևնույն ժամանակ, նրանց մեջ 10-ից 3-ը (30,8%) դրական է գնահատում դատական համակարգի հետ առնչության՝ սեփական և/կամ ընտանիքի անդամների փորձը: Քաղաքացիական գործերով դատարանի հետ առնչության դեպքում, ի համեմատ քրեականի, ստացել ենք ավելի դրական տրամադրվածների խումբ՝ 49,1%, սակայն բացասական գնահատողների խմբից ընդամենը 0,9%-ով են ավելի (48,2%):


ԳՃ. 13. Դատարանների հետ առնչության փորձին գնահատականը՝ ըստ առնչության պատճառի



Քանի որ հարցվողները տեղեկատվություն են տրամադրել ոչ միայն իրենց անձնական, այլ նաև ընտանիքի անդամների՝ դատաիրավական համակարգի առնչության փորձի մասին, ուստի առնչվողներին սոցիալ-ժողովրդագրական տվյալներով (սեռ, տարիք, կրթություն,

գրադվածություն) անհնար է նկարագրել: Փոխարենը ներկայացնենք արդարադատության համակարգի հետ երբևէ առնչություն ունեցողների մարզային (*տե՛ս* գծապատկեր 14.), Երևանի դեպքում՝ համայնքային պատկերը (*տե՛ս* գծապատկեր 15.):

ԳՃ. 14. Դատաիրավական համակարգի հետ առնչությունը՝ ըստ մարզերի




Քանակական հետազոտության տվյալներից պարզ է դառնում, որ արդարադատության համակարգի հետ երբևէ առնչություն ունեցողներն առաջին հերթին Երևան քաղաքի (18,6%), այնուհետև՝ մարզային քաղաքների (14,5%), վերջում՝ գյուղերի (13,5%) բնակիչներն են:

Մարզերի մեջ ամենաշատ փորձառություն ունեն Արարատի, Սյունիքի և Կոտայքի մարզերի բնակիչները (համապատասխանաբար 25%, 20%, 18%): Վերջից երեք տեղերում են գտնվում Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերը (համապատասխանաբար 7,5%, 11,1%, 11,4%):

Երևան քաղաքի համայնքների մեջ առաջին երեք տեղերում են գտնվում Էրեբունի, Քանաքեռ-Զեյթուն, Արաբկիր (համապատասխանաբար 33,3%, 25,6%, 23%), վերջից երեք տեղերում՝ Նուբարաշեն, Կենտրոն և Մալաթիա-Սեբաստիա համայնքները (համապատասխանաբար 11,4%, 11,8%, 13,6%):

Գծ. 15. Դատաիրավական համակարգի հետ առնչությունը՝ ըստ Երևան քաղաքի համայնքների



Բոլոր մարզերում, նաև Երևան քաղաքում համեմատության մեջ ավելի մեծ է դատարանների հետ առնչվողների կշիռը (*տե՛ս* հավելված, գծապատկեր 7.): Տավուշի և Գեղարքունիքի մարզերում ստացվել է միայն դատարանի, Արագածոտնի և Շիրակի մարզերում՝ միայն դատարանի և քննչական կոմիտեի, Վայոց Ձորի մարզում՝ միայն դատարանի և դատախազության հետ առնչվողների մասին տեղեկատվություն:


Ամենաշատ և ամենաքիչ փորձառություն ունեցող մարզերում արդարադատության համակարգի հետ առնչության պատմությունը տարբեր է՝

- I. **Արարատի մարզում** ավելի շատ առնչվել են դատարանների՝ 25%, այնուհետև՝ քննչական կոմիտեի և դատախազության հետ (*տե՛ս* հավելված, գծապատկեր 7.): Դատարանի հետ առնչության ժամակահատվածները տարբեր են, սակայն դեպքերի մեծ մասը (11,1%) 1-2 երկու տարվա պատմություն ունի (*տե՛ս* հավելված, գծապատկեր 8.): Հարցվողները և/կամ ընտանիքի անդամներն ամենաշատը հանդես

են եկել վկայի (16,7%), ամենաքիչը՝ տուժողի (4,8%) կարգավիճակներում (*տե՛ս* հավելված, գծապատկեր 9.): Ավելի շատ առնչություն են ունեցել քաղաքացիական գործերով դատարանի հետ, քան քրեական (*տե՛ս* հավելված, գծապատկեր 10.): Իսկ վերջում դատարանի հետ առնչության պատմությունը գնահատում են մեծամասամբ դրական՝ 70%, (*տե՛ս* գծապատկեր 16.):

II. **Գեղարքունիքի** մարզում դատարանների հետ առնչության դեպքերը 2 և ավելի շատ տարիների վաղեմություն ունեն: Առնչվող անդամները հանդես են եկել միայն հայցվորի և պատասխանողի կարգավիճակներում՝ քաղաքացիական գործերով: Դատարանի հետ առնչության պատմությունը գնահատել են հավասարապես և՛ դրական (50%), և՛ բացասական (50%):

Գծ. 16. Դատախրավական համակարգի հետ առնչության փորձին գնահատականը՝ ըստ Երևան քաղաքի և մարզերի




Ընդհանուր առմամբ, դատարանների հետ առնչության փորձը առանց բացառության դրական են գնահատել Տավուշի մարզում՝ 100% (*տե՛ս* գծապատկեր 16.): Այնուհետև դրական գնահատականները գերակշռող են Արարատի, Արմավիրի, Վայոց Ձորի և Շիրակի մարզերում (համապատասխանաբար 70%, 66,7%, 60%, 55,5%):

Ամենաբացասական գնահատականը (80%) կապվում է **Արագածոտնի** մարզի հետ, որտեղ հարցմանը մասնակցած քաղաքացիների 7,5%-ը դատարանի, իսկ 5%-ը քննչական կոմիտեի

հետ է առնչվել, ընդ որում տարբեր ժամանակաշրջաններում՝ վերջին մեկ տարվա ընթացքում և 2-3 տարի առաջ: Քննչական կոմիտեի հետ առնչության պատճառների մեջ գողության 12,5%-ը վերագրվում է այդ մարզի քաղաքացիների փորձին:

Գծ. 17. Ղատաիրավական համակարգի հետ առնչության փորձի գնահատական՝ ըստ Երևան քաղաքի վարչական շրջանների



Երևան քաղաքում կեսից շատ (59,6%) քաղաքացիների շրջանում ևս ղատաիրավական համակարգի հետ առնչությունը բացասական վերաբերմունք է ձևավորել, որտեղ առաջին երեք տեղերը զբաղեցնում են Նորք Մարաշ, Կենտրոն և Էրեբունի համայնքները: Ամենաշատ դրական գնահատականները ստացվել են Մալաթիա-Սեբաստիա և Դավիթաշեն համայնքներից (**տե՛ս** գծապատկեր 17.):


Ընդհանրացնելով վերը նշվածը՝ փաստենք, որ ղատարանների հետ առնչության խնդրի տեսակը և ղատական գործում այս կամ այն կարգավիճակով հանդես գալը կարևոր գործոններ են, որոնց հիման վրա ձևավորվում է քաղաքացու դրական կամ բացասական գնահատականը և՛ ընդհանուր առմամբ, և՛ առանձին մարզերի օրինակներով:

2. ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ՏՐԱՄԱԴՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐՋԻՆ ՄԵՎ ՏԱՐՎԱ ՓՈՐՁԸ

Քաղաքացիների՝ դատաիրավական համակարգի հետ առնչության փորձը և դրա արդյունքում ձևավորված վերաբերմունքը կարևոր գործոններ են համարվում **դատարան դիմելու տրամադրվածություն** հարցում: Ընդհանուր վերցրած, հարցվողների մեծ մասը՝ 69,7%, դատարան դիմելուն հակված է միայն այն դեպքում, եթե խնդրի լուծման այլ տարբերակ չկա (**տե՛ս** հավելված, գծապատկեր 13.): Դատական համակարգից չօգտվելու տրամադրվածություն ունեցող քաղաքացիները մոտ երկու անգամ շատ են օգտվելու պատրաստակամ քաղաքացիներից (18,2% -ը 9,4%-ի համեմատ):

Իսկ **առնչվողներ**ի օրինակով ստորև բերված գծապատկեր 18-ի տվյալները ցույց են տալիս, որ ցանկացած իրավական խնդրի առկայության դեպքում դատարան դիմելու տրամադրվածություն ունեն ավելի շատ այն քաղաքացիները, ովքեր նախորդ փորձի արդյունքները դրական են գնահատել՝ 75% (**տե՛ս** գծապատկեր 18.): Չնայած բացասական վերաբերմունքի առկայությանը՝ որոշ քաղաքացիներ (20%) ևս տրամադրված են դատարան դիմելու, եթե իրավական խնդրի առջև կանգնեն:

Գծ. 18. Դատարան դիմելու տրամադրվածությունը՝ ըստ նախորդ փորձի գնահատման




Դատական համակարգի գործառույթներից հրաժարվող քաղաքացիների մեծ մասը նախորդ փորձի արդյունքը բացասական գնահատողներն են՝ 64,1%: Չնայած դրական տպավորության

առկայությունը՝ որոշ քաղաքացիներ՝ 35,9%, այնուամենայնիվ, տրամադրված չեն խնդրի առկայության դեպքում օգտվելու դատական համակարգից:

Այլընտրանքների բացակայության պարագայում, դատարան դիմողների մեջ կեսից շատը (54,9%) վատ տրամադրվածությամբ է մոտենալու դատարանին, քանզի նախկին փորձի արդյունքում բացասական վերաբերմունք է ձևավորվել: Իսկ ովքեր չեն կողմնորոշվել այս հարցում, մեծամասամբ փորձի արդյունքում դրական վերաբերմունք (66,7%) ունեցող քաղաքացիներն են, և հավանականությունը, որ խնդրի առկայության դեպքում կդիմեն դատարան, մեծ է:

Դատարան դիմելու տրամադրվածության հարցում կարևոր գործոն է նաև վերջիններիս նկատմամբ վստահության մակարդակը (տե՛ս գծապատկեր 19.):

Գծ. 19. Դատարան դիմելու տրամադրվածությունը՝ ըստ դատարանների նկատմամբ վստահության



Ի համեմատ առնչվողների տված դրական գնահատականի՝ դատարանների նկատմամբ վստահության առկայությունը պակաս ազդեցություն ունի քաղաքացիների՝ իրավական խնդրի դեպքում դատարան դիմելու պատրաստակամության վրա (դիմելիության հավանականություն-դրական գնահատական՝ 75%, դիմելիության հավանականություն-վստահություն՝ 55%): Իսկ մերժողական դիրքորոշման պարագայում, ընդհակառակը, ավելի մեծ ազդեցություն ունի դատարանների նկատմամբ անվստահության գործոնը, քան

բացասական գնահատականը (մերժողական դիրքորոշում-անվստահություն՝ 75,1%, մերժողական դիրքորոշում-բացասական գնահատական՝ 64,1%): Այլընտրանքների բացակայության պարագայում դատարան դիմելու պատրաստականության հարցում էական տարբերություններ չեն նկատվում (դրական գնահատական՝ 54,9%, վստահություն՝ 58,5%):

Ամփոփելով վերը նշվածը՝ փաստենք, որ

- 1) Առնչության փորձի դրական կամ բացասական գնահատականը, ինչպես նաև դատարանների նկատմամբ վստահությունը կամ դրա բացակայությունը *կարևոր*, բայց *ոչ բացարձակ* գործոններ են իրավական խնդրի դեպքում քաղաքացիների՝ դատարան դիմելու տրամադրվածության հարցում:
- 2) Ի սկզբանե քաղաքացիների մոտ առկա վստահության գործոնը թույլ է փորձի արդյունքում ձևավորված դրական գնահատականի համեմատ, բայց, ընդհակառակը, քաղաքացիների մոտ առկա անվստահությունը ուժեղ գործոն է բացասական գնահատականի համեմատությամբ:

Այժմ ներկայացնենք սույն հարցի շուրջ հարցվողների դիրքորոշումները՝ ***ըստ սոցիալ-ժողովրդագրական ցուցանիշների և բնակավայրի:***

Գծապատկեր 20–ի տվյալները ցույց են տալիս հետևյալը.

- Կանայք, տղամարդկանց համեմատ, ավելի տրամադրված են իրավական խնդրի դեպքում դիմելու դատարան (իգական՝ 9,7%, արական՝ 8,9%, ***տե՛ս*** գծապատկեր 20.): Նաև ակնհայտ է, որ դատական համակարգի ծառայությունների նկատմամբ մերժողական դիրքորոշում ունեցողների մեջ տղամարդիկ են ավելի շատ՝ կանանց համեմատ (իգական՝ 15,9%, արական՝ 22,5%), ***ընդ որում***, այդ տարբերությունն ավելի մեծ է (6,6%), քան առաջինի դեպքում (0,8%):
- Իրավական խնդրի դեպքում դատարան դիմելու պատրաստականություն հայտնողների մեջ միջնակարգ կրթությամբ հարցվողներն ավելի շատ են (11%) մյուս երեք կրթական մակարդակ ունեցողների համեմատ: Բարձրագույն կրթություն ունեցողներն ավելի շատ հակված են դատարանի ծառայություններից օգտվել այլընտրանք չունենալու դեպքում:
- Տարիքային ցուցանիշի հետ փոխկապվածության պարագայում նկատում ենք, որ ինչքան փոքրանում է տարիքը, այնքան փոքրանում է մերժողական դիրքորոշում ունեցողների կշիռը (տարիքային վերին շեմից ներքին շեմ համապատասխանաբար

26,3%, 20,2%, 16,8%, 10,7%, **տե՛ս** նույն տեղում): Սկսած երիտասարդ տարիքից մինչև ավագ տարիք մեծանում է հարցի վերաբերյալ կարծիք չունեցողների թիվը:

Գծ. 20. Դատարան դիմելու տրամադրվածության սեռատարիքային և կրթական նկարագիրը




➤ Դատարան դիմելու ավելի մեծ պատրաստակամություն են հայտնել ինքնազբաղվածները, ուսանողները, որակավորում չունեցող աշխատողները

(համապատասխանաբար, 14,8%, 13%, 12, 3%, **տե՛ս** հավելված, գծապատկեր 15.): Իրավական խնդրի դեպքում դատարան դիմելու անվստահություն են ցուցաբերել (չեն դիմի դատարան) ավելի շատ կենսաթոշակատուները, գյուղացիական տնտեսությունում աշխատողներն ու գործազուրկները (համապատասխանաբար 24,3%, 22, 4%, 20, 7%, **տե՛ս** նույն տեղում):

- Հարցի մարզային վերլուծությունը հետաքրքիր նկարագիր ունի (**տե՛ս** հավելված, գծապատկեր 16.)` 1) Ցանկացած իրավական խնդրի դեպքում դատարան կդիմեն ավելի շատ Վայոց Ձորի, այնուհետև` Գեղարքունիքի և Կոտայքի մարզի բնակիչները (համապատասխանաբար 22,9%, 15%, 14%): Նաև նկատենք, որ դատարան դիմելու պատրաստակամություն հայտնողներ չկան միայն Տավուշի մարզում: 2) Դատարանների ծառայություններից չեն ուզում օգտվել ավելի շատ Արագածոտնի, Կոտայքի (այս մարզի բնակիչները հակված են ծայրահեղ պատասխանների) և Արարատի մարզերում (համապատասխանաբար 32,5%, 28%, 27,5%), ընդ որում Արարատի մարզը նաև ակնհայտորեն առաջին տեղում է հարցի մասին կարծիք չունեցողների առումով (12,5%): 3) Հարցի վերաբերյալ հետաքրքիր և գրեթե չտարբերվող դիրքորոշումներ ունեն Երևան քաղաքի և Շիրակի մարզի հարցվողները:

Վերջին մեկ տարվա ընթացքում դատարան դիմելու անհրաժեշտություն առաջացել է հարցմանը մասնակցած քաղաքացիների 4,2%-ի մոտ` մոտավոր հաշվարկներով 100-ի մեջ 4 հոգի, ընդ որում, նորից մոտավոր հաշվարկներով նրանցից երկուսը դիմել է դատարան (56,8%), երկուսը` ոչ (43,2%, **տե՛ս** գծապատկեր 21.)` չնայած այն հանգամանքին, որ չդիմողների մեջ կան այնպիսիք, ովքեր կարծում էին, որ ցանկացած իրավական խնդրի առկայության դեպքում կդիմեն դատարան` 20% (**տե՛ս** հավելված, գծապատկեր 17.): Սակայն չդիմելու միակ պատճառը հանդիսացել է արդար դատաքննության հանդեպ հավատի բացակայությունը` 100%:

ԳՑ. 21. Դատարան դիմելու անհրաժեշտությունը և փորձը



Եվ ընդհակառակը, նրանք, ովքեր կարծում էին, որ ոչ մի դեպքում չեն դիմի դատարան, անհրաժեշտության դեպքում ավելի շուտ դիմել են (57,1%), քան չեն դիմել: Իսկ նման դիրքորոշման, տվյալ դեպքում նաև չդիմելու պատճառները հստակ են՝ արդար դատաքննության հանդեպ հավատի բացակայություն՝ 66,7%, անհրաժեշտ գումարի բացակայություն՝ 33,3% (*տե՛ս* հավելված, նույն տեղում):

Իսկ, ընդհանուր առմամբ, դատարան չդիմողների⁸⁷ համար պատճառները տարբեր են՝

1. Չունեի դրա համար անհրաժեշտ գումար՝ 26,3%,
2. Չէի հավատում, որ դատարանն արդար որոշում կկայացնի՝ 26,3%,
3. Չունեի դրա համար անհրաժեշտ ժամանակ՝ 21,1%,
4. Ծանոթ չէի դիմելու ընթացակարգին՝ 10,5%,
5. Ծանոթներս խորհուրդ չտվեցին դիմել՝ 5,3%,
6. Դատարան դիմելը սկզբունքորեն անընդունելի է ինձ համար՝ 5,3 %,
7. Դժվարանում եմ պատասխանել՝ 5,3%:

Հավելվածում (*տե՛ս* հավելված, գծապատկեր 18-20) տրված է վերջին մեկ տարվա ընթացքում դատարան դիմելու անհրաժեշտության, անհրաժեշտության դեպքում դիմելիության, նաև չդիմելիության պատճառների *մարզային* նկարագիրը: Տվյալները ցույց են տալիս, որ անհրաժեշտություն ավելի շատ ունեցել են գյուղերի, այնուհետև՝ Երևանի, վերջում՝ մարզային քաղաքների բնակիչները (համապատասխանաբար, 5,9%, 4,3%, 3%, *տե՛ս* հավելված, գծապատկեր 18.): Ավելի շատ անհրաժեշտություն առաջացել է Տավուշի և

⁸⁷ Հարցվողների ընդհանուր թվի 1,8%-ը՝ 19 հոգի:


Արագածոտնի (համապատասխանաբար, 11,4%, 7,5%), իսկ անհրաժեշտության բացակայությունն առկա է Շիրակի և Վայոց Ձորի մարզերում՝ 0%: Դիմելության բարձր մակարդակ Երևան քաղաքից հետո գրանցվել է Տավուշի, Լոռվա և Արմավիրի մարզերում (համապատասխանաբար, 21,1% 15,8%, 15,8%, **տե՛ս** հավելված, գծապատկեր 19.):

Սոցիալ-ժողովրդագրական ցուցանիշների հետ փոխկապվածության վերլուծությունը բացահայտել է հետևյալը.

- **Կրթություն.** անհրաժեշտության և դիմելիության համեմատաբար բարձր մակարդակ նկատվել է միջին մասնագիտական կրթություն ունեցող հարցվողների շրջանում (անհրաժեշտություն՝ 4,5%, դիմելություն՝ 63,6%, **տե՛ս** հավելված, գծապատկեր 21.): Բարձրագույն կրթությամբ հարցվողների դեպքում, չնայած նույնչափ անհրաժեշտության, դիմելիության մակարդակը ցածր է (անհրաժեշտություն՝ 4,4%, դիմելություն՝ 52,6%): Վերջիններիս մոտ չդիմելու պատճառները բազմաթիվ են՝ ծանոթ չէի դիմելու ընթացակարգին, ծանոթներս խորհուրդ չտվեցին, չունեի համապատասխան ժամանակ և այլն (**տե՛ս** հավելված, գծապատկեր 23.):
- **Տարիք.** դատարան դիմելու անհրաժեշտության գրեթե նույնչափ մակարդակ 31-45 և 61-ից բարձր տարիքային խմբերում (համապատասխանաբար 5,1%, 5,2%), սակայն դիմելիության համեմատաբար բարձր մակարդակ վերջին խմբում՝ համապատասխանաբար 42,9%, 81,9% (**տե՛ս** հավելված, գծապատկեր 21.): 31-45 տարիքային խմբում դատարան չդիմելու պատճառները ևս բազմաթիվ են (**տե՛ս** հավելված, գծապատկեր 23.):
- **Զբաղվածություն.** 3,7% անհրաժեշտության պարագայում բացարձակ դիմելիություն (100%) ինքնազբաղվածների, կիսով չափ (50%) ուսանողների մոտ: Դատարան դիմելու անհրաժեշտության բացակայություն գյուղացիական տնտեսությամբ զբաղվածների և կենսաթոշակառուների մոտ, սակայն անհրաժեշտության դեպքում (2,6%) չդիմելու փաստ տնային տնտեսուհիների շրջանում՝ 0% (**տե՛ս** հավելված, գծապատկեր 22.): Վերջիններիս մոտ ևս չդիմելու հիմքերը բազմաթիվ են՝ սկսած անհրաժեշտ գումարի բացակայությունից մինչև հիմնավոր պատճառի չիմացություն (**տե՛ս** հավելված, գծապատկեր 23.):
- **Մեռ.** դատարան դիմելու անհրաժեշտության բարձր (5,1%), սակայն դիմելիության ցածր (52,6%) մակարդակ տղամարդկանց շրջանում՝ ի համեմատ կանանց (անհրաժեշտություն՝ 3,6%, դիմելիություն՝ 60%, **տե՛ս** գծապատկեր 22.): Սակայն

տղամարդկանց մոտ չդիմելու պատճառներն ավելի օբյեկտիվ են՝ խորհուրդ չտվեցին, արդար որոշման հանդեպ հավատի բացակայություն, անհրաժեշտ ժամանակի բացակայություն (համապատասխանաբար, 100%, 75%, 60%), քան կանանց մոտ՝ սկզբունքորեն անընդունելի քայլ, դժվարանում եմ պատճառ ասել, անհրաժեշտ գումարի բացակայություն (համապատասխանաբար 100%, 100%, 80%):

ՔՑ. 22. Մեկ տարվա ընթացքում դատարանի հետ առնչության գենդերային պատկերը



Ամփոփելով վերը նշվածը՝ փաստենք, որ ընդհանուր առմամբ, անհրաժեշտության դեպքում դատարան դիմելու ցուցանիշը միջին և միջինից բարձր (50% և բարձր) մակարդակում է՝ բացառությամբ երկու խմբերի, ովքեր ներկայացնում են 31-45 տարեկան և բարձր որակավորման մասնագետ հարցվողներին: Տնային տնտեսուհիների օրինակում դիմելիության մակարդակը հավասարվում է զրոյի՝ ոչ այնքան օբյեկտիվ պատճառներով պայմանավորված:

3. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ

Դատախիրավական մարմինների անկախության վերաբերյալ հանրային ընկալումները չափվել են մի քանի ցուցիչներով՝

4. դատախիրավական կառույցներում պաշտոնավարող անձանց նշանակման ձևը,
5. նշանակման նախընտրելի ձևը՝ որպես անդամների անկախությունն ապահովող երաշխիք,
6. նշանակման կարգերի ազդեցությունը դատախիրավական մարմինների անկախության վրա,
7. անկախության խոչընդոտներն ու անկախությանը նպաստող գործոնները,
8. անձանց պաշտոնավարման սահմանափակման դեպքերը:


Հետազոտության արդյունքում ստացված տվյալները կներկայացնենք այնպիսի հավանական գործոնների հետ փոխկապվածության վերլուծությամբ, ինչպիսիք են՝

- բնակավայրը,
- հարցվողների սեռը, տարիքը և կրթությունը,
- դատախիրավական համակարգի հետ առնչության փորձը:

Գծապատկեր 23-ի տվյալները ցույց են տալիս, որ ընդհանուրի մեջ բավական մեծ կշիռ է կազմում այն խումբը, որը չի կարողացել **դատախիրավական մարմիններում ծառայոնների նշանակող** անձի կամ կառույցի մասին կարծիք հայտնել, ընդ որում հարցվողներն ավելի քիչ տեղեկացված են քննիչների նշանակման գործընթացից: Նրանց մեջ ավելի մեծ մաս կազմում են հարցվողները մարզային քաղաքներից (38,2%), այնուհետև գյուղերից (32,4%) և Երևան քաղաքից (13,8%) (**տե՛ս** հավելված գծապատկեր 27, քննիչներ):


Արդեն ստացված պատասխանների մեջ տեսնում ենք ՀՀ նախագահին վերագրվող դերը ավելի շատ՝ դատավորների (29,7%) և ավելի քիչ՝ քննիչների (21,2%) նշանակման հարցում: Երկրորդ ենթադրվող ձևը հարցվողները համարել են ոչ ֆորմալ նշանակումները (17,7% դատավորների, 17,5% քննիչների, 16,8% դատախազների դեպքում, **տե՛ս** գծապատկեր 23):

Գծ. 23. Դատաիրավական մարմիններին նշանակող/ընտրող էնթադրյալ կառույցները



Հարցը դիտարկելով համեմատության մեջ՝ տեսնում ենք, որ դատաիրավական կառույցներում անդամների **նշանակման նախընտրելի ձևերի** մեջ ամենամեծ կշիռը ստանում է բաց, թափանցիկ մրցույթի միջոցով ընտրությունը, որը, ըստ հարցվողների, կերաշխավորի նրանց անկախությունը պաշտոնավարման ընթացքում (**տե՛ս** գծապատկեր 24): Այս տեսակետը կիսող քաղաքացիների մեծ մասը ներկայացնում են մարզային քաղաքները (37,3%), այնուհետև՝ Երևան քաղաքը (34,6%), վերջում՝ գյուղերը (30%, (**տե՛ս** հավելված գծապատկեր 28):

Գծ. 24. Դատախրավական մարմիններին նշանակող/ընտրող նախընտրելի կառույցները




Այս հարցում ՀՀ նախագահին վերագրվող դերը նվազում է 22%-ով, օրինակ դատավորների դեպքում (*տե՛ս* հավելված գծապատկեր 24): Մեծ կշիռ է (մոտ 1/3 մասը՝ 34,2%) ստանում նաև այն կարծիքը, որ դատավորները պետք է ընտրվեն տարածքի բնակչության կողմից: Մոտ 3,6 անգամ կրճատվում է հարցի մասին կարծիք չունեցողների թիվը (21,7%-ից դառնալով 6%):

Դատախրավական մարմիններում ենթադրվող և նախընտրելի նշանակումների հարցը դիտարկելով *կրթության գործոնի* հետ փոխկապվածության մեջ՝ տեսնում ենք, որ ամենաշատը բարձրագույն կրթությամբ հարցվողներն են, որ ոչ թե նշանակող կառույց կամ

անձ են առաջարկում, օրինակ, դատավորների նշանակման դերում, այլ ավելի շատ ձևն են կարևորում, օրինակ՝ ենթադրում են, որ այժմ ավելի շատ ոչ ֆորմալ ձևով են նշանակվում (45,7%), սակայն կնախընտրեին, որ ընտրությունը լիներ բաց, թափանցիկ մրցույթի միջոցով (44,6%, *տե՛ս* գծապատկեր 25):

Գծ. 25. Դատավորների ենթադրյալ և նախընտրելի նշանակման համեմատական պատկերը՝ ըստ կրթության ցուցանիշի




Հետաքրքիր են նաև այս հարցում համայնքի ղեկավարին վերագրվող կարծիքները՝ ավելի շատ միջնակարգ կրթությամբ հարցվողներն են (55,6%) ենթադրում, որ այժմ նշանակումներն արվում են համայնքի ղեկավարի կողմից, մինչդեռ նախընտրելի տարբերակ համարվում է ավելի շատ բարձրագույն կրթությամբ հարցվողների համար (54,5%):

Այս առումով, բայց մեկ այլ տարբերակի դեպքում հետաքրքիր տվյալներ են ստացվել նաև *զենդերային ցուցանիշի* հետ կապի վերլուծության արդյունքում. ավելի շատ տղամարդիկ են հակված այն տեսակետին, որ այժմ արդարադատության համակարգում նշանակումներն արվում են ոչ ֆորմալ ձևերով (21,4%), սակայն բաց թափանցիկ մրցույթի միջոցով ընտրությունը (36,9%) նախընտրելի տարբերակ է ավելի շատ իգական սեռի հարցվողների համար (*տե՛ս* հավելված, գծապատկեր 29): Տղամարդկանց համար առավել նախընտրելի է դատախիրավական մարմինների՝ տարածքի բնակչության կողմից ընտրվելը (35,2%):


Հարցվողների մոտ 1/3 մասը կարծում է, որ դատախիրավական մարմիններում *ընտրվելու կամ նշանակվելու կարգերը* միանշանակ ազդում են նրանց անկախության վրա (դատավորներ՝ 35,1%, դատախազներ՝ 34,3%, քննիչներ՝ 33,9%, *տե՛ս* գծապատկեր 26): Հարցվողների հաջորդ մեծ խումբը հակված է այն տեսակետին, որ այդ ազդեցությունը որոշ չափով է, և ոչ միանշանակ: Եվ միայն տասից երկուսն է (երեք կառույցների միջին ցուցանիշը՝ 20,6%), որ դատախիրավական մարմինների անկախության վրա այդ կարգերի ազդեցության գործոնը բացառում է: Հարցի մասին կարծիք չունեցողները ևս մեծ զանգված են կազմում:

Վերջիններիս թիվը կրճատվում է այն դեպքում, երբ նույն հարցը վերլուծում ենք երբևէ դատախիրավական համակարգի հետ *առնչություն ունեցողների* օրինակով (*տե՛ս* գծապատկեր 27): Անձնական կամ ընտանիքի անդամների առնչության փորձից ելնելով՝ հարցվողների մեծ մասը կրկին կարծում է, որ դատախիրավական մարմինների անկախության վրա միանշանակ ազդող գործոն է համարվում նրանց ընտրելու կամ նշանակելու կարգը: Գծապատկեր 27-ը նաև ցույց է տալիս, որ «դժվարանում եմ պատասխանել» տարբերակի կշռի կրճատման հաշվին մեծանում է նաև այն «որոշ չափով ազդում են» տարբերակի հանդիպման հաճախականությունը:

Գծ. 26. Ընտրության/նշանակման կարգերի ազդեցության մակարդակը դատախիզավական մարմինների անկախության վրա



Գծ. 27. Ընտրության/նշանակման կարգերի ազդեցության մակարդակը դատախիզավական մարմինների անկախության վրա՝ ըստ առնչություն ունեցողների




Բնակավայրի ցուցանիշի հետ կապի վերլուծության արդյունքում պարզվում է, որ, օրինակ՝ դատավորների դեպքում, նշանակվելու/ընտրվելու մեխանիզմը՝ որպես նրանց անկախության վրա միանշանակ ազդող գործոն, համարել են հավասարաչափ և՛ մարզային քաղաքների, և՛ գյուղերի բնակիչները (37,6%) ավելի շատ, քան Երևան քաղաքի (32,9%) (*տե՛ս* հավելված, գծապատկեր 30): Հարցին հավասարաչափ դժվարացել են պատասխանել և՛ մարզերում, և՛ Երևանում:

Սակայն ըստ հավելվածում բերված գծապատկեր 31-ի տվյալների՝ տեսնում ենք, որ հարցի մասին դժվարացել են կարծիք հայտնել ավելի շատ 18-30 *տարեկան* երիտասարդները (27,4%), այնուհետև՝ 61-ից բարձր տարիքային խմբի հարցվողները (23,4%): Երիտասարդների մեջ 10-ից 2-ը կարծում են, որ և՛ միանշանակ ազդեցություն ունի (21%), և՛ բացարձակ ազդեցություն չունի (21,2%), իսկ մեծ մասը հակված է միջին տարբերակի (30%):


Գենդերային ցուցանիշի հետ կապի վերլուծության արդյունքում կարող ենք փաստել, որ իգական սեռի ներկայացուցիչներն են ավելի շատ դժվարացել հարցի մասին կարծիք հայտնել (71,8%), այնուհետև հակված են «կարգերը որոշ չափով ազդում են» (70,6%) տարբերակին: Շատ փոքր տարբերությամբ, բայց «միանշանակ ազդում են» տարբերակը ընտրող կանայք ավելի շատ են (61%), քան «բացարձակ չեն ազդում» կարծիքը կիսողները (59,9%):

Դատաիրավական մարմինների *անկախության խոչընդոտների* վերաբերյալ հանրային ընկալումները տարբեր են երկու տարբեր խմբերում՝ քաղաքացիների պատկերացումներում ընդհանուր առմամբ և այն քաղաքացիների տեսակետներում, ովքեր առնչություն են ունեցել արդարադատության համակարգի հետ: Եթե առաջին դեպքում առաջին երեք հիմնականները համարվում են 1) պատասխանատվության կարգերի թերացումը՝ 29,6%, 2) գործունեության վերահսկողության պակասը՝ 27,5%, 3) հաշվետվողականության պակասը՝ 15% (դատավորների օրինակով *տե՛ս* գծապատկեր 28), ապա առնչություն ունեցող քաղաքացիները և/կամ նրանց ընտանիքի անդամները կարծում են, որ 1-ին հիմնական խոչընդոտը դատավորների գործունեության վերահսկողության պակասն է՝ 28,6%, 2-րդը՝ պատասխանատվության կարգերի թերացումը՝ 24%, իսկ 3-րդ խոչընդոտ համարում են սոցիալական վիճակը՝ 14,9% (*տե՛ս* գծապատկեր 29): Համակարգի հետ առնչության փորձ ունեցող քաղաքացիները մոտ երկու անգամ ավելի շատ են հակված այն տեսակետին, որ դատավորների անկախ գործունեության համար խոչընդոտներ չկան (3,4% 1,8%-ի համեմատությամբ):

Գծ. 28. Դատաիրավական մարմինների անկախության խոչընդոտները



Գծ. 29. Դատաիրավական մարմինների անկախության խոչընդոտները՝ ըստ առնչություն ունեցողների




Հաշվետվողականության պակասը՝ որպես անկախության խոչընդոտ, ավելի շատ կարևորվել է 18-30 տարեկան երիտասարդների (27,7%, *տե՛ս* հավելված, գծապատկեր 33) և բարձրագույն կրթական մակարդակ ունեցող հարցվողների կողմից՝ 46,5% (*տե՛ս* հավելված, գծապատկեր 34):


Գենդերային ցուցանիշով վերլուծության պարագայում խոչընդոտների առաջնայնությունը խախտվում է. կանանց մեջ առաջին մեծ խումբը հիմնական խոչընդոտ համարում է սոցիալական վիճակը (79,6%): Իսկ արական սեռի ներկայացուցիչների համար բոլոր խոչընդոտների կողքին առաջնային է դառնում կաշառակերության առկայությունը՝ (83,3%, *տե՛ս* հավելված, գծապատկեր 35):

Դատարանների *անկախության մեծացմանը նպաստող գործոնների* անհրաժեշտությունը երկու խմբերում՝ ընդհանուր և համակարգի հետ առնչություն ունեցողներ, էականորեն չի տարբերվում (*տե՛ս* գծապատկեր 30, 31): Երկու դեպքում էլ դատարանների անկախության մեծացման երեք հիմնական քայլերը համարվում են հետևյալները՝ 1) ձևավորել դատավորների գործունեության նկատմամբ հանրային վերահսկողություն, 2) բարելավել դատավորների պատասխանատվության կարգի արդյունավետությունը, 3) նպաստել դատավորների հաշվետվողականության բարձրացմանը: Սակայն այս հարցում ակնառուն այն է, որ առնչություն ունեցողների խմբում մոտ 2,5 անգամ կրճատվում է հարցի վերաբերյալ կարծիք չհայտնողների (դժվարացողների) թիվը (2,7%-ից դառնալով 1,1%):

Գծ. 30. Դատարանների անկախությունը մեծացնելու քայլերը




ԳՃ. 31. Դատարանների անկախությունը մեծացնելու քայլերը՝ ըստ առնչություն ունեցողների




Անկախության խոչընդոտներ - անկախությունը մեծացնող գործոններ փոխկապվածության մեջ նկատելի է (*տե՛ս* գծապատկեր 32), որ այն հարցվողները, ովքեր առաջարկում են դատավորների գործունեության նկատմամբ հանրային վերահսկողություն ձևավորել, երկու ամենամեծ խոչընդոտները համարում են պատասխանատվության կարգերի թերացումը (29,1%) և գործունեության վերահսկողության պակասը (28,1%): Նրանք, ովքեր առաջարկում են բարձրացնել դատավորների աշխատավարձը, գործունեության վերահսկողության պակասից (31,2%) հետո դատարանների անկախության երկրորդ մեծ խոչընդոտը համարել են սոցիալական վիճակը (26%):

ԳՃ. 32. Անկախության խոչընդոտներ - անկախությունը մեծացնող գործոններ փոխկապվածությունը




Դատավորների, դատախազների և քննիչների **պաշտոնավարումը սահմանափակող պատճառների** մեջ առաջին մեծ կշիռը ստացել են օրենքի և այլ իրավական ակտերի կոպիտ խախտումները (համապատասխանաբար 37%, 39,9%, 36,6% (*տե՛ս* գծապատկեր 33): Հարցվողները պաշտոնավարման սահմանափակման երկրորդ կարևոր նախապայման համարում են մարդու իրավունքների կոպիտ խախտումները դատավորների (33,7%), դատախազների (29,6%) և քննիչների (31,2%) կողմից:

ԳՃ. 33. Դատաիրավական մարմինների պաշտոնից ազատման դեպքերը



Սակայն համակարգի հետ *առնչության փորձ* ունեցող քաղաքացիների պատասխաններում ավելի մեծ կշիռ է ստանում «դատավորներին պաշտոնից ազատել մարդու իրավունքների կոպիտ խախտումների դեպքում» տարբերակը՝ 40%, (*տե՛ս* գծապատկեր 34)՝ նվազեցնելով ընդհանուր առմամբ հասարակության ընկալումներում առաջին նախապայման հանդիսացող դեպքի կարևորությունը (օրենքի և այլ իրավական ակտերի խախտումներ 34,9%):

Գծ. 34. Դատաիրավական մարմինների պաշտոնից ազատման տարբերակները՝ ըստ առնչություն ունեցողների



Երկու խմբերի համեմատության արդյունքում ևս երկու ակնհայտ տարբերություն է բացահայտվում.

- Երբ վերևում քննարկված այլ հարցերում առնչություն ունեցողների մեջ կրճատվում էր հարցի վերաբերյալ կարծիք չհայտնողների թիվը, ապա այս դեպքում նրանք ավելանում են, օրինակ՝ դատավորների դեպքում 3%-ից դառնալով 4,6%:
- Այն պարագայում, երբ ընդհանրապես քաղաքացիների համար արդարադատական համակարգում պաշտոնավարող անձանց մասնագիտական կարողությունների և գիտելիքների անհամապատասխանությունը դիտարկվում է որպես

պաշտոնավարման սահմանափակման էական նախապայման, ապա առնչության փորձ ունեցողները դրան պակաս կարևորություն են տալիս:

Ամփոփելով թեմայի վերլուծությունը՝ ներկայացնենք քաղաքացիների երեք հիմնական առաջնահերթությունները: Դատաիրավական մարմինների անկախության համար անհրաժեշտ է.

- ✚ բաց և թափանցիկ մրցույթի միջոցով պաշտոնավարման մեկնարկ,
- ✚ օրենքների և մարդու իրավունքների խախտման դեպքում պաշտոնավարման սահմանափակում,
- ✚ գործունեության նկատմամբ հանրային վերահսկողության ձևավորում:

4. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ

Դատաիրավական մարմինների անկախ գործունեության պահանջից զատ՝ քաղաքացիները նաև կարևորում են, որպեսզի դատավորները, դատախազները և քննիչները հաշվետու լինեն իրենց գործունեության համար: Ներքոչարադրյալ նյութը կներառի հետևյալ հարցերի վերլուծությունը՝

- ✓ հաշվետվողականության անհրաժեշտության մակարդակ,
- ✓ հաշվետու լինելու համար ենթադրվող հարցերի շրջանակ,
- ✓ հաշվետվությունը ընդունող նախընտրելի կառույցներ/անձիք,
- ✓ հաշվետվողականության հաճախականություն:


Ենթավերնագիրը կներառի նաև դատաիրավական մարմինների գործունեության տարբեր ոլորտների թափանցիկության առկա մակարդակի վերաբերյալ հանրային ընկալումների վերլուծությունը:

Գծապատկեր 35-ի տվյալները փաստում են, որ առկա է **հաշվետվողականության խիստ անհրաժեշտության** բարձր մակարդակ՝ և՛ դատավորների, և՛ դատախազների, և՛ քննիչների դեպքում (համապատասխանաբար 82,5%, 82%, 82%, **տե՛ս** գծապատկեր 35):


Այնուհետև անհրաժեշտության պահանջը մեղմանում է, և ընդհանուր վերցրած միայն շատ փոքր զանգվածն է կարծում, որ անհրաժեշտ չէ, որպեսզի դատաիրավական մարմինները հաշվետու լինեն իրենց գործունեության համար (համապատասխանաբար 3,7%, 3, 7%, 4%):

Հաշվետվողականության խիստ անհրաժեշտության մակարդակն ավելի է մեծանում, երբ հարցին մոտենում ենք դատաիրավական մարմինների հետ **սոնչություն ունեցողների** տեսանկյունից: Նրանք դրա անհրաժեշտությունը կարևորում են ավելի շատ դատավորների, այնուհետև՝ դատախազների, վերջում՝ քննիչների դեպքում (համապատասխանաբար 86,3%, 85,1%, 84,6%, **տե՛ս** գծապատկեր 36): Այս խմբում բացակայում են հարցի մասին կարծիք չունեցողները:

Գծ. 35. Հաշվետվողականության անհրաժեշտությունը



Գծ. 36. Արդարադատության կառույցների հաշվետվողականության անհրաժեշտությունը՝ ըստ առնչություն ունեցողների




Հարցը դիտարկելով *բնակավայրի* ցուցանիշի հետ փոխկապվածության հետ՝ պարզ է դառնում, որ՝

1) գյուղերում հարցվողներն ունեն հստակ (առանց «ղժվարանում եմ պատասխանել» տարբերակի) և միայնցից չտարբերվող դիրքորոշում երեք պաշտոնյաների վերաբերյալ,

2) մարզային քաղաքներում փոքր տարբերությամբ, բայց ավելի պահանջող են դատավորների, այնուհետև՝ դատախազների, վերջում՝ քննիչների գործունեության նկատմամբ (համապատասխանաբար 97%, 96,4%, 95,5, **տե՛ս** գծապատկեր 37),

3) Երևան քաղաքում երեք մարմինների դեպքում կարծիքների տարբերությունն աննշան է, սակայն նախորդ երկու բնակավայրերի համեմատ՝ հաշվետվողականության անհրաժեշտության մակարդակն այստեղ նվազում է (դատավորներ, դատախազներ, քննիչներ, համապատասխանաբար, 93,6%, 83,8%, 93,6%):

Գծ. 37. Դատախրավական մարմինների հաշվետվողականության անհրաժեշտությունը՝ ըստ բնակավայրի



Համեմատության մեջ հաշվետվողականության անհրաժեշտության բացարձակ և համեմատաբար բարձր մակարդակ առկա է կանանց, 2 բարձրագույն/ասպիրանտական կրթություն ունեցողների և 31-45 տարիքային խմբի հարցվողների պատասխաններում (համապատասխանաբար 95,8%, 100%, 96,7%, **տե՛ս** հավելված, գծապատկեր 36):

Աղյուսակ 2–ի տվյալները ցույց են տալիս, որ **հաշվետվողականության հարցերի** շրջանակը մեծ է և բազմազան, սակայն քաղաքացիներն ամենաշատը պահանջում են, որ դատավորները, դատախազներն ու քննիչները հաշվետու լինեն բոլոր հարցերի վերաբերյալ: Բավական մեծ զանգված են կազմում այն քաղաքացիները, ովքեր դժվարացել են հարցի վերաբերյալ կարծիք հայտնել, ընդ որում, ավելի շատ դատախազների, այնուհետև՝ քննիչների, վերջում՝ դատավորների պարագայում (համապատասխանաբար 52,9%, 52,4%, 36,1%, **տե՛ս** աղյուսակ 2): Իսկ առաջարկված կոնկրետ հարցերի մեջ ամենամեծ կշիռը ստանում է այն տարբերակը, որը վերաբերում է դատական գործի ընթացքում կիրառած կարգերին, ապացույցներին, դատական որոշումների հիմքերին (դատավորների դեպքում, օրինակ՝ 7,5%):


Աղյուսակ 2. Հաշվետվողականության հարցերի շրջանակը

Հաշվետու լինել ... վերաբերյալ	Դատա- րան	Դատախա- զություն	Քննչական կոմիտե
12. Բոլոր հարցերի	23,7	20,5	20,3
13. Գործի ընթացքում կիրառած մեխանիզմների, ապացույցների, դատական որոշումների հիմքերի	7,5	5,3	5,9
14. Արդար և ազնիվ, ոչ սխալ աշխատանքի	6,8	5,5	5,0
15. Բաց և թափանցիկ աշխատանքի	4,3	2,6	2,6
16. Հասարակությանը օգտակար լինելու, մարդկանց շահերը պաշտպանելու	4,3	2,5	2,6
17. Գործի վարման ընթացքի, սահմանված ժամկետում ավարտելու, մինչև վերջ բացահայտելու	3,0	1,6	2,0
18. Կանոնավոր, պարտաճանաչ, արդյունավետ աշխատանքի	2,3	1,3	1,3
19. Քրեական աղմկահարույց գործերի	2,1	1,3	2,0
20. Հասարակությանը իրենց իրավունքներին և պարտականություններին ծանոթացնելու	2,1	1,5	1,4
21. Օրենքների փոփոխությունների մասին հանրությանը տեղյակ պահելու	2,0	1,5	1,0
22. Վերին օղակներից չհովանավորվելու, անկախ, չծախված լինելու, կոռուպցիայի բացակայության	1,6	1,1	1,1
Դժվարանում է պատասխանել	36,1	52,9	52,4
Ոչ աղեկվատ պատասխաններ	4,2	2,5	2,3
Ընդամենը	100	100	100

Չնայած վերը նշված հարցերի բովանդակությունը մեծամասամբ ենթադրում է դատաիրավական մարմինների՝ հասարակությանը հաշվետու լինելու պահանջի առկայություն, սակայն հարցվողներն առաջին հերթին կարծում են, որ դատավորները,

դատախազները և քննիչները *պետք է հաշվետու լինեն* իրենց վերադասներին (համապատասխանաբար 34,8%, 34,6%, 39,8%, *տե՛ս* գծապատկեր 38), ընդ որում, առավել շատ՝ քննիչները:

Գծ. 38. Հաշվետվությունը ընդունող նախընտրելի կառույցները




Երկրորդ մեծ կշիռն արդեն ստանում է «հանրություն» տարբերակը, որտեղ այդ պահանջն ավելի շատ ուղղված է դատավորներին՝ 34,2%: Երրորդ և չորրորդ տեղերում այդ դերակատարությունը վերագրվում է ՀՀ նախագահին և Ազգային ժողովին: Այս հարցում ԶԼՄ-ներին և համայնքի ղեկավարներին վերագրվող դերը շատ ավելի պակաս կշիռ է ստանում ընդհանուր դերակատարների համեմատությամբ (դատավորների օրինակով ԶԼՄ-ներ՝ 2,8%, համայնքի ղեկավար՝ 2,5%):

Որոշ քաղաքացիներ (դատավորների օրինակով՝ 1,8%)՝ մոտավորապես 100-ից երկուսը կարծում են, որ դատաիրավական մարմինները ոչ մեկի/ոչ մի օղակի պարտավոր չեն հաշվետու լինել:

Անցնելով *հաշվետվողականության հաճախականության* հարցին՝ գծապատկեր 39-ից ակնհայտ է, որ հարցվողները՝ որպես ամենաօպտիմալ տարբերակ, ընտրել են

եռամսյակային հաշվետվության ձևն ավելի շատ դատախազության, այնուհետև՝ դատարանների, վերջում՝ քննչական կոմիտեի դեպքում (համապատասխանաբար 37,4%, 37,1%, 35,3%): Վերջինիս պարագայում ավելի մեծանում է յուրաքանչյուր ամիս հաշվետվություն ներկայացնելու հասարակության մոտ ձևավորված պահանջը՝ 30,4%: Կան քաղաքացիներ՝ մոտավորապես հարյուրից հինգը (օրինակ, քննչական կոմիտեի պարագայում 5%), որ հարցի վերաբերյալ կարծիք չեն հայտնել, ընդ որում, նրանց կշիռն ավելի մեծ է, քան հաշվետու լինելու համար նախընտրելի կառույցի առաջարկման դեպքում (քննիչների օրինակով, 3,3%, *տե՛ս* գծապատկեր 38):

Գծ. 39. Հաշվետվողականության հաճախականությունը



Ընդհանրացնելով դատաիրավական մարմինների հաշվետվողականության վերաբերյալ հանրային ընկալումների վերլուծությունը՝ ներկայացնենք քաղաքացիների հիմնական պահանջները՝ խիստ անհրաժեշտ է, որ դատավորները, դատախազները և քննիչները սեփական գործունեության համար հաշվետու լինեն նախ իրենց վերադասներին, այնուհետև՝ հասարակությանը: Չնայած հարցերի շրջանակը հիմնականում չի առաջարկվում մեծ թվով քաղաքացիների կողմից, սակայն վերջիններս նախընտրում են, որ հաշվետվությունները ներկայացվեն կա՛մ եռամսյակային կա՛մ ամսական կտրվածքով:

Գծապատկեր 42-ի տվյալները (*տե՛ս* հավելված, գծապատեր 42) ցույց են տալիս, որ ներկայումս դատաիրավական մարմինների գործունեությունը մեծ թվով քաղաքացիների համար հաշվետու բնույթ չի կրում: Դատարանների դեպքում, օրինակ՝ հարցվողների 45,5%-ը գտնում է, որ դատարանների գործունեությունն այսօր հաշվետու չէ քաղաքացիների համար,

24,8%՝ որոշ չափով է հաշվետու, և միայն 12,7%-ի համար է գործունեությունը հաշվետու բնույթ կրում:

Համեմատելով դատախարավական մարմինների գործունեության տարբեր հատկանիշների (մատչելիություն, հասանելիություն, թափանցիկություն, անկախություն, հաշվետվողականություն) առկայության մակարդակը՝ պարզ է դառնում, որ՝

- Դատարանների գործունեությունը քաղաքացիների համար ամենաշատը հասանելի է (18,6% «այո» պատասխաններ, դատարան, **տե՛ս** հավելված, գծապատկեր 39), և ամենաքիչը՝ թափանցիկ (7,2% «այո» պատասխաններ, դատարան, **տե՛ս** հավելված, գծապատկեր 40):

- Դատախազության և քննչական կոմիտեի դեպքում ևս հատկանիշների առումով տարբերություն չկա, սակայն տարբեր են դրանք հաճախականության տեսանկյունից՝ դատախազություն. հասանելի՝ 16,3% թափանցիկ՝ 6,4%, քննչական կոմիտե. հասանելի՝ 17,2%, թափանցիկ՝ 6,9% (**տե՛ս** հավելված, նույն տեղում):


Համեմատելով երեք կառույցների տվյալները՝ ամենահասանելին համարվում է դատարանի գործունեությունը, ամենաշատ ոչ թափանցիկը՝ դատախազության գործունեությունը: Տարբեր հատկանիշների առկայության մակարդակը գնահատելիս հարցվողներն ավելի շատ դժվարացել են դատախազության պարագայում (**տե՛ս** հավելված, գծապատկեր 38-42, դատախազություն):

Հարցվողները գնահատել են նաև դատախարավական կառույցների գործունեության թափանցիկության մակարդակը՝ ըստ երեք ոլորտների.


- 1) պաշտոնների նշանակման գործընթաց,
- 2) պաշտոններից ազատման գործընթաց,
- 3) պատասխանատվության միջոցների կիրառման գործընթաց:

Երեք կառույցների միջին և միավորված (լիովին թափանցիկ և ավելի շուտ թափանցիկ տարբերակները միավորվել են մեկ պատասխանում՝ թափանցիկ և նույնը ոչ թափանցիկի դեպքում) պատասխանների համեմատության արդյունքում պարզվում է, որ դատախարավական կառույցներում ավելի շատ թափանցիկ համարվում է պաշտոններից ազատելու գործընթացը՝ 20,3%, և ավելի շատ ոչ թափանցիկ՝ պաշտոնների նշանակման գործընթացը՝ 73,7% (**տե՛ս** գծապատկեր 40): Իսկ ամենաշատը դժվարացել են կարծիք հայտնել պատասխանատվության միջոցների կիրառման գործընթացի մասին:

Գծ. 40. Դատաիրավական կառույցների գործունեության թափանցիկության մակարդակը



Գծ. 41. Դատաիրավական կառույցների գործունեության թափանցիկության մակարդակը՝ ըստ առնչություն ունեցողների



Առնչություն ունեցողների մոտ հարցի վերաբերյալ ընկալումներն այլ են պատասխանների կշռի տեսանկյունից, քանզի հարցի մասին կարծիք չունեցողների թվի կրճատման հաշվին ավելանում է գործունեության տարբեր ոլորտները թափանցիկ

գնահատողների զանգվածը, սակայն նրանց համար ևս դատախիրավական կառույցների գործունեության մեջ ամենաշատ թափանցիկ համարվում է պաշտոններից ազատման գործընթացը՝ 24%, և ամենաշատ ոչ թափանցիկ՝ պաշտոնների նշանակման գործընթացը՝ 72,9% (*տե՛ս* գծապատկեր 41):

Դատարանների գործունեության ոլորտների *թափանցիկություն-վստահություն* փոխկապվածության արդյունքում պարզ է դառնում, որ տարբեր ոլորտների թափանցիկության ֆոնի վրա գերակայում է վստահության մթնոլորտը. դատական գործերի բաշխման կարգ՝ 51,7%, պատասխանատվության միջոցների կիրառման գործընթաց՝ 54,7%, դատավորների պաշտոնից ազատման գործընթաց՝ 58,2%, դատավորների նշանակման գործընթաց՝ 63,5% (*տե՛ս* հավելված, գծապատկեր 43): Դատախազության և քննչական կոմիտեի գործունեության բոլոր ոլորտների պարագայում ևս տրամաբանությունը նույնն է, սակայն նրանց նկատմամբ վստահության տարբեր մակարդակներով (*տե՛ս* հավելված, գծապատկեր 44-45):


Կարող ենք փաստել, որ հանրության վստահության մակարդակը մեծ է հատկապես դատախիրավական մարմինների նշանակման գործընթացի հետ կապված, այսինքն՝ համեմատության արդյունքում կարևոր գործոն համարվում է պաշտոնների նշանակման գործընթացը. ինչքան դատավորների նշանակման գործընթացը թափանցիկ է, այնքան վստահությունը վերջիններիս նկատմամբ մեծ է/կլինի:

5. ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Դատաիրավական մարմինների անկախ և հաշվետու գործունեության ապահովման հետ մեկտեղ կարևոր է, որպեսզի վերջիններին աշխատանքի նկատմամբ իրականացվի վերահսկողություն: Իսկ թե *ինչքանով է անհրաժեշտ, ինչո՞ւ և ի՞նչ օղակների միջոցով* պետք է իրականացվի այն, ցույց կտա սույն հարցերի վերաբերյալ հանրային ընկալումների վերլուծությունը:

Ըստ գծապատկեր 42–ի տվյալների՝ հարցվողների գերակշիռ մասը համարում է, որ *անհրաժեշտ է խիստ վերահսկողություն* իրականացնել դատավորների, դատախազների և քննիչների գործունեության նկատմամբ (համապատասխանաբար 85,6%, 85,2%, 85,4%, *տե՛ս* գծապատկեր 42), և միայն շատ քիչ զանգվածն է կարծում, որ վերահսկողության անհրաժեշտություն չկա (դատավորներ՝ 1,6%, դատախազներ՝ 1,6%, քննիչներ՝ 1,7%, միավորված տարբերակով՝ ավելի շուտ անհրաժեշտ չէ, բացարձակ անհրաժեշտ չէ):

ԳՃ. 42. Վերահսկողության անհրաժեշտությունը



Եթե համեմատենք հաշվետվողականության անհրաժեշտության ցուցանիշի հետ, ապա կտեսնենք, որ վերահսկողության ցուցանիշի դեպքում մոտավորապես 2,5 անգամ կրճատվել է անհրաժեշտությունը չկարևորող հարցվողների թիվը (դատավորներ, դատախազներ,

քննիչներ, հաշվետվողականությունն անհրաժեշտ չէ համապատասխանաբար, 3,7%, 3,7%, 4%, **տե՛ս** գծապատկեր 35): Այսինքն՝ այն գործողությունը, որը պետք է իրականացվի հասարակության կամ այլ կառույցների/օղակների կողմից՝ որպես դատաիրավական մարմինների արդյունավետ աշխատանքի երաշխիք, կարևորվում է ավելի շատ, քան այն գործողությունը, որի կատարող համարվում են հենց իրենք՝ դատաիրավական համակարգի պաշտոնատար անձիք:

Եթե հասարակության ընդհանուր ընկալումները համեմատենք համակարգի հետ **առնչություն ունեցողների** դիրքորոշումների հետ, ապա չնայած աննշան, սակայն տարբերություն կնկատենք վերահսկողության անհրաժեշտությունը չկարևորող զանգվածի մեծացման առումով (դատավորներ՝ 2,8%, դատախազներ՝ 3,4%, քննիչներ՝ 4%, **տե՛ս** հավելված, գծապատկեր 46):

Բնակավայրի հետ փոխկապվածության արդյունքում պարզ է դառնում, որ չնայած փոքր տարբերությամբ, սակայն վերահսկողության կարիք ավելի շատ տեսնում են գյուղերում, այնուհետև՝ Երևանում, վերջում՝ մարզային քաղաքներում (օրինակ՝ քննիչների դեպքում համապատասխանաբար 97,6%, 97%, 96,7%, **տե՛ս** հավելված, գծապատկեր 47):

Տարիք. վերահսկողության անհրաժեշտությունն ավելի շատ կարևոր է երիտասարդ, ավելի քիչ՝ ավագ սերնդի համար (համապատասխանաբար՝ 98,7%, 95,8%, **տե՛ս** հավելված, գծապատկեր 48):

Կրթություն. վերահսկելը բացարձակ անհրաժեշտություն է համարվում երկու բարձրագույն/ասպիրանտական կրթություն ունեցողների և ավելի քիչ անհրաժեշտություն՝ միջին մասնագիտական կրթություն ունեցող հարցվողների շրջանում (համապատասխանաբար՝ 100%, 95,6%, **տե՛ս** հավելված, նույն տեղում):


Գենդերային առումով կարծիքների էական տարբերություն չկա, չնայած ակնհայտ է, որ կանայք ավելի շատ են դժվարացել հարցի մասին կարծիք հայտնել:

Վերահսկողության անհրաժեշտությունը կարևորելու **նպատակները** բազմաթիվ են, սակայն առաջնահերթ, գրեթե հավասար կշիռ ստացել են այն երկու պատասխանները, որոնք վերաբերում են դատավորների, դատախազների և քննիչների աշխատանքի բնույթին, առաջին հերթին՝ արդարությանն ու օբյեկտիվությանը, երկրորդ հերթին՝ օրինականությանը (համապատասխանաբար՝ 23,5%, 22,6% **տե՛ս** գծապատկեր 43):

Հաջորդ երեք մեծ կշիռ ունեցող պատասխանները վերաբերում են ընդհանուր համակարգի արդյունավետության բարձրացմանը, մի դեպքում՝ առանց կոռուպցիայի, երկրորդ դեպքում՝

ավելի որակյալ աշխատանքին, և վերջում՝ համակարգը բարձրորդի վիճակից դուրս բերելուն (համապատասխանաբար՝ 15,4%, 13%, 7,8%, **տե՛ս** նույն տեղում):

ԳՃ. 43. Վերահսկողություն իրականացնելու նպատակները



Եթե դատախարակական մարմինների հաշվետվությունն ընդունող նախընտրելի կառույցների մեջ հանրությունը երկրորդ տեղն էր զբաղեցնում, ապա հարցվողների մեծ մասի համար **վերահսկողություն իրականացնող ամենանախընտրելի օղակ** համարվում են հանրությունը/ՀԿ-ները ավելի շատ դատավորների, այնուհետև՝ քննիչների, վերջում՝ դատախազների դեպքում (համապատասխանաբար՝ 27%, 26,9%, 26,3%, **տե՛ս** աղյուսակ 3): Հարցվողները հաջորդ երկու կարևոր վերահսկիչ մարմիններ համարում են ՀՀ կառավարությանը և նախագահին (դատավորների օրինակով համապատասխանաբար՝ 18%, 17,3%, **տե՛ս** նույն տեղում): Դատախազության՝ որպես վերահսկիչ օղակի, անհրաժեշտությունն ավելի շատ տեսնում են քննիչների (14,4%), քան դատավորների (12%) գործունեության պարագայում:

Աղյուսակ 3. Վերահսկողությունն իրականացնող նախընտրելի կառույցները/անձիք


Կառույցներ/անձիք	Դատավորներ	Դատախազներ	Քննիչներ
5. Հանրությունը/ՀԿ-ները	27,0	26,3	26,9
6. Կառավարությունը	18	17,8	18,1
7. Հանրապետության նախագահը	17,3	16,5	14,4
8. Ազգային ժողովը/պատգամավորները	14,2	15,2	13,5
9. Դատախազությունը	12,0	12,5	14,4
10. ՋԼՄ-ները	2,8	2,9	3,2
11. Այլ պատասխան ⁸⁸	1,5	1,5	2
Ոչ մեկը/ոչ մի կառույց	1,1	1,1	1,0
Դժվարանում է պատասխանել	6,1	6,2	6,5
Ընդամենը	100	100	100

Գծապատկեր 44-ի տվյալները ցույց են տալիս, որ, ըստ հարցվողների, ներկայումս դատավորների գործունեության վրա շատ ազդեցություն ունեցող կառույցների ցանկում գտնվում են դատախազությունը, նախագահի աշխատակազմը, գործադիր, ապա՝ օրենսդիր իշխանությունը (համապատասխանաբար՝ 39,9%, 37,8%, 32,3%, 31,2%, **տե՛ս** գծապատկեր 44): Չնայած մեծ է հարցի մասին կարծիք չհայտնողների կշիռը, այնուամենայնիվ, քաղաքացիների մի որոշ զանգված կարծում է, որ դատարանների գործունեության վրա վերը նշված կառույցների ազդեցությունը բացակայում է (համապատասխանաբար՝ 10,9%, 15,8%, 18,8%, 19,3%, **տե՛ս** նույն տեղում):

Եվ, ընդհակառակը, հասարակական, միջազգային կազմակերպությունների և ՋԼՄ-ների պարագայում հարցվողները մեծամասամբ համարում են, որ վերջիններս ազդեցություն չունեն դատարանների գործունեության վրա (համապատասխանաբար՝ 52,7%, 38,2%, 35,5%, **տե՛ս** նույն տեղում): Համեմատաբար շատ ազդեցություն ունեցող առաջին հերթին համարվում են միջազգային կազմակերպությունները, այնուհետև՝ ՋԼՄ-ները, վերջում ՀԿ-ները (համապատասխանաբար՝ 11,9%, 10,2%, 7,2%):

⁸⁸ Միջազգային կազմակերպություններ, Ազգային անվտանգության ծառայություն, Դատական խորհուրդ, Վերահսկիչ պալատ, մարդու իրավունքների պաշտպան, այլ վերադաս մարմիններ:

ԳՑ. 44. Դատավորների գործունեության վրա տարբեր կառույցների ազդեցության մակարդակը



Անփոփելով վերը քննարկված հարցերի վերլուծությունը՝ մեկ անգամ ևս փաստենք դատախիրավական մարմինների գործունեության նկատմամբ խիստ վերահսկողության անհրաժեշտության մասին, որը նախընտրելի է, որ իրագործվի հանրության և հանրությունը ներկայացնող ՀԿ-ների կողմից: Վերահսկողության անհրաժեշտությունը կարևորվում է հատկապես համակարգի արդար, օբյեկտիվ և օրինական գործունեությունն ապահովելու ակնկալիքով պայմանավորված:

Եթե վերահսկողությունը դրական, գործառութային նշանակություն կարող է ունենալ/ունի դատախիրավական մարմինների գործունեության համար, ապա ազդեցությունը հիմնականում բացասական, ապագործառութային է համարվում դատախիրավական համակարգի աշխատանքի համար, հատկապես, երբ խոսքը գնում է իշխանական կառույցների ունեցած ազդեցության մասին:

6. ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ, ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴԱՐ ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԱՌՈՒՄՆԵՐԸ ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Իրավահավասարությունը և մրցակցությունը արդար դատական քննության բնորոշ սկզբունքներից են: Առաջինը ենթադրում է, որ յուրաքանչյուր կողմի պետք է հնարավորություն ընձեռվի գործը ներկայացնել հավասար պայմաններում՝ հակառակորդի համեմատությամբ: Իսկ մրցակցային դատական քննության դեպքում կողմերը պետք է հնարավորություն ունենան տեղեկություններ ունենալու և մեկնաբանություններ անելու ներկայացված բոլոր ապացույցների վերաբերյալ:

Դատական համակարգի վերաբերյալ հանրային ընկալումների ուսումնասիրությունը անդրադարձել է նաև այս հարցերին, որոնց վերլուծությունը կներկայացնենք հետևյալ հերթականությամբ՝


- 1) կողմերի նկատմամբ հավասար վերաբերմունքի ապահովման մակարդակը,
- 2) անհավասար վերաբերմունքի դրսևորման իրավիճակներ,
- 3) դատական որոշումների բնութագրիչների (արդարություն, հասկանալիություն, խնդրի լուծելիություն) առկայության մակարդակը,
- 4) արդար դատական քննության երաշխիքները:

Որոշ հարցեր կքննարկենք նաև առնչություն ունեցողների տեսանկյունից, նաև ըստ բնակավայր, սեռ, տարիք, կրթություն ցուցանիշների:


Գծապատկեր 45–ի տվյալները ցույց են տալիս, որ, ըստ հարցվողների գերակշիռ մասի, դատավորները և քննիչները կողմերի նկատմամբ բացարձակապես հավասար **վերաբերմունք** չեն դրսևորում: Իսկ եթե միավորենք նաև «ավելի շուտ չեն դրսևորում» տարբերակը, ապա կստանանք հետևյալ պատկերը. հարցվողների մոտավորապես 3/4 մասը (72,8% դատավորների, 73,8% քննիչների դեպքում, **տե՛ս** գծապատկեր 45) կարծում է, որ դատաիրավական կառույցներում չի պահպանվում իրավահավասարության սկզբունքը: Հարցվողների մեջ միայն 10-ից 2-ն է կարծում, որ հավասար վերաբերմունք է դրսևորվում դատավորների և քննիչների կողմից (19,6%՝ դատավորներ, 18,4%՝ քննիչներ):

Վերջին տեսակետի կողմնակիցների կշիռը նվազում է, երբ հարցը դիտարկում ենք համակարգի հետ **առնչություն ունեցողների** տեսանկյունից: Առավել ևս քննիչների դեպքում առնչություն ունեցող քաղաքացիների շատ փոքր զանգված է կարծում, որ պահպանվում է իրավահավասարության սկզբունքը (9,6%՝ քննիչներ, **տե՛ս** գծապատկեր 46):

Գծ. 45. Կողմերի նկատմամբ հավասար վերաբերմունքի ապահովման մակարդակը




Գծ. 46. Կողմերի նկատմամբ հավասար վերաբերմունքի ապահովման մակարդակը՝ ըստ առնչություն ունեցողների



Դատավորների դեպքում կտրուկ ավելանում է «բացարձակ ոչ» (65,8% 57%-ի համեմատությամբ) տարբերակը «մասամբ ոչ», «դժվարանում եմ պատասխանել», «լիովին այո» տարբերակների կրճատման հաշվին, այսինքն՝ ավելի հստակ բացասական տպավորություն է ստեղծվում առնչության փորձի արդյունքում:

Գծ. 47. Կողմերի նկատմամբ հավասար վերաբերմունքի ապահովման մասին ընկալումները՝ ըստ բնակավայրերի



Բնակավայր. գծապատկեր 47–ի տվյալները վկայում են համեմատաբար ավելի դրական տրամադրված հասարակության խմբի մասին. գյուղերում ավելի շատ են հակված այն տեսակետին, որ դատաիրավական կառույցներում պաշտոնատար անձիք պահպանում են իրավահավասարության սկզբունքը (25,9% դատավորների, 22,4% քննիչների դեպքում, **տե՛ս** գծապատկեր 47): Մարզային քաղաքների պարագայում, չնայած ավելի շատ դժվարացել են քննիչների վերաբերյալ կարծիք հայտնել, սակայն գերակշիռ մասը կիսում է կողմերի նկատմամբ հավասար վերաբերմունքը չպահելու տեսակետը (70,6% դատավորների, 71,8% քննիչների դեպքում): Եվ ամենաշատը Երևան քաղաքում են կարծում, որ չի պահպանվում իրավահավասարության սկզբունքը դատաիրավական կառույցներում (77% դատավորների, 77,1% քննիչների դեպքում, **տե՛ս** նույն տեղում): **Մեռ.** տղամարդիկ, կանանց համեմատ, ավելի շատ են կիսում այն տեսակետը, որ հավասար վերաբերմունք չի դրսևորվում կողմերի նկատմամբ, ավելի շատ՝ քննիչների, այնուհետև՝ դատավորների կողմից (համապատասխանաբար՝ 74, 3%, 73,7% **տե՛ս** հավելված, գծապատկեր 51, 52):

Կրթություն. ըստ կրթական աստիճանի նվազման՝ փոքրանում է այն հարցվողների կշիռը, ովքեր կարծում են, որ դատավորների կողմից չի պահպանվում կողմերի նկատմամբ հավասար վերաբերմունքի սկզբունքը (համապատասխանաբար՝ 83,3%, 75,7%, 73,2%, 68,7%, **տե՛ս** հավելված, գծապատկեր 51): Քննիչների դեպքում ևս տրամաբանությունը նույնն է՝ միայն կշիռների որոշակի տարբերությամբ:

Տարիքային ցուցանիշի հետ փոխկապվածության արդյունքում հետևյալ պատկերն է ստացվել. ըստ տարիքի երիտասարդացման՝ կրճատվում է «իրավահավասարության սկզբունքը չի պահպանվում» տեսակետը կիսողների թիվը և՛ դատավորների (համապատասխանաբար՝ 77%, 75%, 72,9%, 66,4%, **տե՛ս** հավելված, գծապատկեր 51), և՛ քննիչների պարագայում (համապատասխանաբար՝ 77,5%, 76%, 73,6%, 68,3%, **տե՛ս** հավելված, գծապատկեր 52):

Այսինքն՝ ինչքան տարիների փորձը շատ, կրթության մակարդակը բարձր, բնակավայրը մեծ, այնքան կողմերի նկատմամբ անհավասարության տեսակետին հակվածություն: Նշված կանոնը չի կիրառվում գենդերային ցուցանիշի պարագայում:

Կիսելով նման տեսակետ՝ հարցվողների մեծ մասը, այնուամենայնիվ, դժվարացել է կարծիք հայտնել այն մասին, թե անհավասարությունը կոնկրետ **ինչ իրավիճակներում** է դրսևորվում, ընդ որում, ավելի շատ դժվարացել են քննիչների, ավելի քիչ՝ դատավորների դեպքում (համապատասխանաբար՝ 44,2%, 41,9%, **տե՛ս** աղյուսակ 4):

Արդեն բովանդակություն արտահայտող պատասխանների մեջ ամենամեծ հաճախականությունը վերաբերում է գործի փաստերը ներկայացնելու հնարավորությունից զրկելու իրավիճակին (օրինակ՝ դատավորների դեպքում՝ 16%, քննիչների դեպքում՝ 15,2%, **տե՛ս** նույն տեղում): Քիչ կշիռ ստացած պատասխանների դեպքում իրավիճակները փոխվում են. օրինակ՝ դատավորների պարագայում ամենաքիչը կարծում են, որ մյուս կողմի փաստաթղթերին ծանոթանալու հնարավորության դեպքում է անհավասարություն նկատվում (4,8%), իսկ քննիչների դեպքում՝ ելույթներ ունենալու հնարավորության մերժման դեպքում (5%):

Աղյուսակ 4. Կողմերի նկատմամբ անհավասար վերաբերմունքի դրսևորման իրավիճակները


Իրավիճակներ	Դատավորներ	Դատախազներ	Քննիչներ
	ը	ը	
7. Գործի փաստերը ներկայացնելու հնարավորությունից զրկելու դեպքում	16,0	12,5	15,2
8. Միայն մի կողմի հետ առանձին հանդիպման դեպքում	12,3	13,0	14,1
9. Միջնորդություններ ներկայացնելու հնարավորությունից զրկելու դեպքում	11,7	10,9	7,5
10. Ելույթներ ունենալու հնարավորության մերժման դեպքում	8,0	8,2	5,0
11. Իր գործը ներկայացնելու համար ժամանակ տրամադրելու մերժման դեպքում	5,3	6,8	7,7
12. Մյուս կողմի փաստաթղթերին ծանոթանալու հնարավորության մերժման դեպքում	4,8	4,9	6,4
Դժվարանում է պատասխանել	41,9	43,8	44,2
Ընդամենը	100	100	100

Դատական որոշումների մասին ընկալումները՝ որպես քաղաքացիների համար արդար, հասկանալի և խնդիր լուծող որոշումներ, տարբեր են երկու տարբեր խմբերում՝ հասարակության լայն շերտերի և համակարգի հետ առնչության փորձ ունեցող քաղաքացիների պատկերացումներում:


Նախ և առաջ համեմատենք երեք հատկանիշների արտահայտման մակարդակը. այն, որ դատական որոշումները արդար են, հասկանալի և քաղաքացիների խնդիրները լուծող, ավելի շատ *հազվադեպ* հանդիպող երևույթ է հանրության համար (արդար՝ 57,1%, հասկանալի՝ 51,3%, խնդիրը լուծող՝ 52,2%, **տե՛ս** գծապատկեր 48): Հարցվողներն ավելի շատ դժվարացել են պատասխանել՝ արդյոք դատական որոշումների արդյունքում քաղաքացիների խնդիրը լուծվում է՝ 10,2%, և ավելի քիչ՝ արդյոք արդար են այդ որոշումները՝ 5,7%:

Ըստ **առնչություն ունեցողների** տեսակետի՝ դատական որոշումները՝ բնույթով արդար, հասկանալի և խնդիր լուծող, առավել ևս *հազվադեպ* հանդիպող երևույթ են (համապատասխանաբար՝ 61,7%, 61,7%, 58,4%, **տե՛ս** գծապատկեր 49): Այս խմբի պատասխաններում հարցի մասին կարծիք չունեցողների կշիռը կրճատվում է, սակայն նրանք ևս ավելի շատ դժվարացել են պատասխանել՝ արդյո՞ք դատական որոշումների արդյունքում քաղաքացիների խնդիրը լուծվում է՝ 6,7%, և ավելի քիչ՝ արդյո՞ք արդար են այդ որոշումները՝ 2,7%:

Գծ. 48 . Դատական որոշումներին բնորոշ հատկանիշների առկայության մակարդակը



Գծ. 49. Դատական որոշումներին բնորոշ հատկանիշների առկայության մակարդակը՝ ըստ առնչություն ունեցողների



Համեմատության մեջ անդրադառնանք նաև մի հետաքրքիր ցուցանիշի. եթե ընդհանրապես հանրության ընկալումներում դատական որոշումներն ամենաշատը *երբեք հասկանալի չեն* լինում (13,9% *տե՛ս* գծապատկեր 48), ապա առնչություն ունեցողների պարագայում՝ ամենաշատը *երբեք արդար չեն* լինում (14,8% *տե՛ս* գծապատկեր 49):

Հարցվողների մեծ մասը կարծում է, որ դատարանների՝ *արդար որոշումների կայացման համար* առաջին հերթին անհրաժեշտ են դատավորներ, ովքեր կաշխատեն արդար, օրինական և օբյեկտիվ (26,9%, *տե՛ս* հավելված, աղյուսակ 5): Այնուհետև երկրորդ կարևոր գործոնը ևս վերաբերում է պաշտոնատար անձանց՝ այս անգամ որպես մարդկային դրական հատկանիշների կրողներ՝ ազնիվ, բարեխիղճ և այլն (12%):

Երրորդ և չորրորդ տեղերը զբաղեցնող գործոնները վերաբերում են դատական համակարգի ընդհանուր գործունեությանը. առաջին դեպքում՝ առանց կոռուպցիայի, երկրորդ դեպքում՝ վերահսկող օղակների առկայությամբ (համապատասխանաբար՝ 11,8%, 11,3%, *տե՛ս* նույն տեղում): Որպես ամենաքիչ կարևորություն ունեցող գործոն համարվել է համակարգի փոփոխությունն ընդհանուր առմամբ, օրինակ՝ երդվյալ աստենակալների առկայությամբ (1,2%):

Ամփոփելով արդար դատաքննության վերաբերյալ հանրային ընկալումների վերլուծությունը՝ մեկ անգամ ևս փաստենք, որ՝

- քաղաքացիների գերակշիռ մասի համար չի պահպանվում իրավահավասարության սկզբունքը դատաիրավական մարմիններում,
- այս տեսակետը կիսողների թիվն ավելի է մեծանում համակարգի հետ առնչություն ունեցողների խմբում, առավելապես քննիչների պարագայում,
- անհավասարությունը հատկապես դրսևորվում է գործի փաստերը ներկայացնելու ժամանակ, երբ քաղաքացիները զրկվում կամ սահմանափակ հնարավորություններ են ստանում,
- հազվադեպ է հանդիպում, որ դատական որոշումները լինեն արդար, քաղաքացիների համար հասկանալի և խնդրին լուծում տվող:
- արդար դատաքննության կարևոր երաշխիք համարվում է օրենքով, օբյեկտիվ և արդար աշխատող դատավորը:

7. ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՄԱԿԱՐԴԱԿԸ


Արդարադատության տարբեր հարցերի վերաբերյալ հանրային ընկալումների ձևավորման վրա մեծ ազդեցություն ունի այն հանգամանքը, թե քաղաքացիները ինչքանով և ինչ աղբյուրներից են տեղեկանում դատական համակարգի գործունեության մասին: Ստորև շարադրված նյութը կներառի, սակայն չի սահմանափակվի, հետևյալ հարցերի վերլուծությամբ.

- դատական համակարգի գործունեության վերաբերյալ տեղեկացվածության մակարդակը,
- դատարանների գործունեության վերաբերյալ տեղեկատվության աղբյուրները,
- տեղեկատվության հատկանիշների (օպերատիվություն, հավաստիություն, հասանելիություն, օգտակարություն, մանրամասնություն) առկայության մակարդակը,
- դատարանների գործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ տեղեկատվության հասանելիության մակարդակը,
- դատարանների գործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ տեղեկատվության անհրաժեշտությունը:

Գծապատկեր 50–ի տվյալները ցույց են տալիս, որ ընդհանուր առմամբ հարցվողների մեծ մասը՝ 63,1%, դատական համակարգի վերաբերյալ տեղեկատվության մակարդակը գնահատելիս, իրեն համարել է բացարձակ անտեղյակ: Հասարակության մոտ 1/3 մասը՝ 33,7%, որոշ չափով է տեղեկացված դատական համակարգի գործունեությունից, իսկ լիովին տեղեկացված իրեն համարում է մոտավորապես հարյուրից երեքը՝ հարցվողների 3,2%-ը:

Հարցը վերլուծելով դատական համակարգի հետ **առնչություն ունեցողների** տեսանկյունից՝ ստացել ենք հետևյալ պատկերը. գրեթե կրկնակի անգամ կրճատվել է բացարձակ անտեղյակների կշիռը, (63,1%-ից դառնալով 32,6%, **տե՛ս** գծապատկեր 50), այսինքն՝ չնայած անձնական և/կամ ընտանիքի անդամների առնչության փաստին՝ կան քաղաքացիներ, ովքեր բացարձակ անտեղյակ են համարում իրենց: Փոխարենը մոտ 3 անգամ աճել է լիովին տեղեկացվածների կշիռը (3,2%-ից դառնալով 10,9%), իսկ 23,1%-ով՝ իրենց որոշ չափով տեղեկացված համարող քաղաքացիների թիվը:

Գծ. 50. Դատական համակարգի վերաբերյալ տեղեկացվածության համեմատական պատկերը. ընդհանուր, առնչություն ունեցողներ



Հարցվողների համար դատարանների գործունեության վերաբերյալ տեղեկատվության աղբյուրները բազմաթիվ են, սակայն երեք հիմնականները համարվում են՝


- 1) հեռուստատեսությունը՝ 28,8%,
- 2) սոցիալական ցանցերը՝ 14,8%,
- 3) անձնական փորձը՝ 11,1%:

Չնայած առնչություն ունեցողների պարագայում տեղեկատվության երեք հիմնական աղբյուրները նույնն են, սակայն տեղի է ունենում ն՝ կշիռների, ն՝ առաջնայնության փոփոխություն՝

- 1) անձնական փորձ՝ 27,3%,
- 2) հեռուստատեսություն՝ 24,5%,
- 3) սոցիալական ցանցեր՝ 12,6% (*տե՛ս* գծապատկեր 51):

Որպես տեղեկատվության աղբյուր՝ վերջից երեք տեղերում են գտնվում 1) դատարանի պաշտոնական կայքը, 2) կինոնկարները, մասնագիտացված հաղորդումները, 3) ռադիոն (համապատասխանաբար՝ 2,4%, 3,1%, 3,1%): Համակարգի հետ առնչություն ունեցողների պարագայում աղբյուրները կրկին նույնն են, սակայն փոփոխված հերթականությամբ՝ 1) կինոնկարներ և մասնագիտացված հաղորդումներ, 2) ռադիո, 3) դատարանի պաշտոնական կայք (համապատասխանաբար՝ 1,1%, 2,5%, 2,9%):


Գծ. 52. Դատական համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրներ-
տեղեկացվածության մակարդակ փոխկապվածությունը



Այսինքն՝ կարող ենք հետևություն անել, որ հեռուստատեսությունը՝ որպես տեղեկատվության առաջնային աղբյուր, մասամբ տեղեկացվածության մակարդակ է ապահովում քաղաքացիների համար: Իսկ մասնագիտական գրականությունը, որը տեղեկատվական աղբյուրների մեջ 8-րդ տեղում էր գտնվում 4,8% կշռով (*տե՛ս* հավելված, աղյուսակ 6), լիովին տեղեկացվածություն ապահովող երեք միջոցներից մեկն է:

Ըստ զծապատկեր 53-ի՝ դատական համակարգի գործունեությունից բացարձակ տեղեկացված չեն ավելի շատ գյուղերում, այնուհետև մարզային քաղաքներում, վերջում՝ Երևանում (համապատասխանաբար՝ 65,9%, 62,7%, 62,5%, *տե՛ս* զծապատկեր 53):

Քձ. 53. Դատական համակարգի գործառնության վերաբերյալ տեղեկացվածության մակարդակը՝ ըստ բնակավայրի



■ Լիովին տեղեկացված եմ

■ Որոշ չափով տեղեկացված եմ

■ Բացարձակ տեղեկացված չեմ

Իրենց *բացարձակ անտեղյակ* համարող հարցվողներն առաջին հերթին Շիրակի մարզից են՝ 78,9%: Այնուհետև, համեմատաբար անտեղյակ են Տավուշի, Լոռվա, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում (համապատասխանաբար՝ 71,4%, 71,3%, 65%, 64,4%): Իրենց *լիովին տեղեկացված* համարում են Արագածոտնի մարզի, այնուհետև՝ Երևան քաղաքի հարցվողները (համապատասխանաբար՝ 7,5%, 4,3%): *Մասամբ տեղեկացված* հարցվողները հիմնականում Արմավիրի, Վայոց Ձորի և Կոտայքի մարզերից են (համապատասխանաբար՝ 55,6%, 48,6%, 40%):

Ամենաշատ տեղեկացված և ամենաշատ անտեղյակ մարզերում տեղեկատվության աղբյուրները տարբեր են.

- ✓ **Արագածոտնի** մարզում տեղեկատվության ամենամեծ և հիմնական աղբյուրը հեռուստատեսությունն է՝ 93,3%, այնուհետև՝ մասնագիտական գրականությունը՝ 6,7% (*տե՛ս* հավելված, զծապատկեր 53):
- ✓ **Շիրակի** մարզում տեղեկատվության աղբյուրները հինգն են. առաջին հերթին հեռուստատեսություն (68,4%), այնուհետև՝ էլեկտրոնային տեղեկատվական կայքեր (15,8%): Տեղեկատվության հավասարազոր (5,3% կշռով) աղբյուրներ են համարվում նաև տպագիր մամուլը, մասնագիտական գրականությունը, սոցիալական ցանցերը:


Այսինքն՝ կարող ենք ասել, որ տեղեկատվական աղբյուրների բազմազանությունը տեղեկացվածության մակարդակի սուբյեկտիվ գնահատականի վրա էական ազդեցություն չունի:

Անձնական փորձը՝ որպես տեղեկատվության կարևոր և հիմնական աղբյուր (հեռուստատեսությունից հետո) ավելի շատ համարվում է Արարատի, Լոռվա, նաև Սյունիքի մարզերում (համապատասխանաբար՝ 26,7%, 21,7%, 12,5%, *տե՛ս* հավելված, նույն տեղում):

Սոցիալ-ժողովրդագրական ցուցանիշների հետ փոխկապվածության վերլուծության արդյունքում կարող ենք փաստել, որ՝

- Դատական համակարգի գործունեության վերաբերյալ *լիովին տեղեկացված* են ավելի շատ՝ **1)** արական սեռի ներկայացուցիչները (4,3%), **2)** բարձրագույն կրթություն ունեցող հարցվողները (4,9%), **3)** 18-30 տարեկան երիտասարդները՝ 4,6% (*տե՛ս* զծապատկեր 54):
- Դատական համակարգի գործունեությունից *բացարձակ անտեղյակ* են իգական սեռի ներկայացուցիչները, և ավելի շատ միջնակարգ կրթությամբ ու ավագ սերնդի հարցվողները (համապատասխանաբար՝ 65,8%, 72,2%, 71,4%):

Գծ. 54. Դատական համակարգի վերաբերյալ տեղեկացվածության սեռատարիքային և կրթական նկարագիրը



Ավելի շատ տեղեկացված խմբերի համար տեղեկատվության աղբյուրները տարբեր են՝


- Տղամարդկանց համար տեղեկատվության առաջնային երեք աղբյուրները համարվում են ռադիոն, ընկեր/բարեկամների և ծանոթների խոսակցությունները, էլեկտրոնային տեղեկատվական կայքերը (համապատասխանաբար՝ 51,9%, 49,1% 48,2%, **տե՛ս** հավելված, գծապատկեր 56):
- Բարձրագույն կրթությամբ հարցվողների համար առաջնային են դատարանի պաշտոնական կայքը, մասնագիտական գրականությունը, էլեկտրոնային տեղեկատվական կայքերը (համապատասխանաբար՝ 90,5%, 78,6%, 69,9%, **տե՛ս** հավելված, գծապատկեր 55):

- 18-30 տարեկան երիտասարդները տեղեկատվություն ավելի շատ ստանում են մասնագիտական գրականությունից, սոցիալական ցանցերից և մասնագիտացված հաղորդումներից (համապատասխանաբար՝ 52,4%, 41,1%, 37%, **տե՛ս** հավելված, գծապատկեր 54):

Այսինքն՝ էլեկտրոնային տեղեկատվական կայքերը և մասնագիտական գրականությունը այն երկու հիմնական տեղեկատվական աղբյուրներն են, որ գոնե երկու խմբերի դեպքում լիովին տեղեկացվածության մակարդակ են ապահովում: Մինչդեռ հիշում ենք, որ տեղեկատվության առաջնային աղբյուրը հանրության լայն զանգվածի համար համարվում էր հեռուստատեսությունը:

Այժմ ներկայացնենք տեղեկատվության աղբյուրների և դատարանների նկատմամբ վստահության փոխկապվածության արդյունքները:

Գծ. 55. Դատական համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրների և դատարանների նկատմամբ վստահության փոխկապվածությունը



Գծապատկեր 55–ի տվյալները ցույց են տալիս, որ տեղեկատվության ոչ մի աղբյուր վստահության 50% և ավելի բարձր մակարդակ չի ապահովում: Բայց և այնպես,

դատարանների նկատմամբ վստահության համեմատաբար մեծ մթնոլորտ ստեղծող հինգ աղբյուրները հետևյալներն են՝ 1) դատարանի պաշտոնական կայքը, 2) էլեկտրոնային տեղեկատվական կայքերը, 3) կինոնկարները, հաղորդումները, 4) մասնագիտական գրականությունը, 5) ընկեր/բարեկամների խոսակցությունները (համապատասխանաբար՝ 47,6%, 45,8%, 44,4%, 42,9%, 42,1%, **տե՛ս** գծապատկեր 55):

Վստահության ցածր մակարդակ առկա է՝ 1) ռադիո, 2) տպագիր մամուլ տեղեկատվական աղբյուրների պարագայում (համապատասխանաբար՝ 22,2%, 23,4%):


Տեղեկատվության տարբեր հատկանիշների առկայության պայմաններում դատարանների նկատմամբ վստահության մակարդակը տարբեր է: Գծապատկեր 56-ի տվյալները փաստում են, որ որքան տեղեկատվությունը *հավաստի է*, այնքան վստահության մակարդակը բարձր է (59,8%, **տե՛ս** գծապատկեր 56): Այնուհետև վստահության համեմատաբար բարձր մակարդակն առկա է տեղեկատվության *օպերատիվության և մանրամասնության* դեպքում (համապատասխանաբար՝ 58,4%, 54,1%, **տե՛ս** նույն տեղում):

Դատախազության և քննչական կոմիտեի նկատմամբ վստահության մակարդակը ևս համեմատաբար բարձր է նույն երեք հատկանիշների առկայության պայմաններում՝ 1) հավաստիություն, 2) օպերատիվություն, 3) մանրամասնություն (դատախազություն, համապատասխանաբար՝ 61,9%, 58%, 57,1%, **տե՛ս** հավելված, գծապատկեր 57, քննչական կոմիտե, համապատասխանաբար՝ 52,8%, 51,8%, 49,2%, **տե՛ս** հավելված, գծապատկեր 58):

Իսկ դատախարական երեք կառույցների համեմատության արդյունքում պարզ է դառնում, որ տեղեկատվության հավաստիության և մանրամասնության առկայությունը վստահության համեմատաբար բարձր մակարդակ է ապահովում դատախազության նկատմամբ (61,9% և 57,1%), իսկ օպերատիվության առկայությունը՝ դատարանների նկատմամբ (58,4%):

Ընդհանուր առմամբ, դատարանների, դատախազության և քննչական կոմիտեի գործունեության վերաբերյալ տեղեկատվությանը լիովին բնորոշ է ավելի շատ *հասկանալիությունը*, ավելի քիչ՝ *օպերատիվությունը* (յուրաքանչյուր կառույցի դեպքում տարբեր կշիռներով, **տե՛ս** հավելված, գծապատկեր 59-61): Ընդհանրապես բնորոշ չէ ավելի շատ *մանրամասնությունը*, ավելի քիչ՝ *հասանելիությունը* (յուրաքանչյուր կառույցի դեպքում տարբեր կշիռներով, **տե՛ս** հավելված, նույն տեղում):


ԳՃ. 56. Դատարանների նկատմամբ վստահության և տեղեկատվության առկայության փոխկապվածությունը



Դատարանների գործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ տեղեկատվության **հասանելիության մակարդակը** վերլուծելիս պարզ է դառնում, որ հանրության համար ավելի շատ **հասանելի** համարվող երեք հարցերը վերաբերվում են՝

- դատական նիստերի և օրերի վերաբերյալ տեղեկատվությանը՝ 37,9%,
- դատարան դիմելու կանոններին՝ 37,3%,
- դատական բարեփոխումներին՝ 32% (**տե՛ս** գծապատկեր 57):

Գծ. 57. Դատարանների գործունեության վերաբերյալ տեղեկատվության հասանելիության և անհրաժեշտության համեմատական պատկերը



Հանրության համար դատարանների գործունեության տարբեր ոլորտների տեղեկատվության **պահանջը** հասանելիության համեմատ բավական մեծ է, ինչպես նաև տարբեր է հարցերի առաջնահերթության առումով: Ամենապահանջված համարվում է հետևյալ հարցերի վերաբերյալ տեղեկատվությունը՝

- դատարան դիմելու կանոնները՝ 89,6% (2,4 անգամ ավել հասանելիից),

- դատական նիստերի օրեր և ժամեր՝ 85,6% (2,3 անգամ ավել հասանելիից),
- դատավորին պատասխանատվության ենթարկել՝ 85% (3,5 անգամ ավել հասանելիից):
Դատարանների գործունեության ոլորտների մեջ հանրության համար երեք ամենաանհասանելի համարվող տեղեկատվությունը վերաբերում է՝

- դատավորի կողմից իրականացվող ծախսերին՝ 10,9%,
- դատավորի ընտանիքին՝ 15,4%,
- գործերի բաշխման մեխանիզմին՝ 21,6%:

Ամենաքիչ պահանջված համարվում է հետևյալ հարցերի վերաբերյալ տեղեկատվությունը՝

- դատավորի ընտանիք՝ 41,6% (2,7 անգամ ավելի հասանելիից),
- դատավորի կողմից իրականացվող ծախսեր՝ 67,2% (6,1 անգամ ավել հասանելիից),
- դատավորի խրախուսում՝ 71% (3,1 անգամ ավել հասանելիից):


Համադրման արդյունքում պարզ է դառնում, որ տեղեկատվության հասանելիության և անհրաժեշտության դաշտում հիմնականում համընկնում են ոլորտները՝ կշիռների մեծ տարբերությամբ: Չնայած դատավորի կողմից իրականացվող ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը քիչ պահանջված հարցերի մեջ է մտնում, սակայն հասանելի և անհրաժեշտի միջև ամենամեծ տարբերությունը՝ 6,1 անգամ ավել հասանելիից, առկա է դատարանների գործունեության տվյալ ոլորտի վերաբերյալ տեղեկատվության հարցում (**տե՛ս** նույն տեղում):

Բոլոր հարցվողների կարծիքները, համեմատելով դատական համակարգի հետ երբևէ **առնչություն ունեցողների** տեսակետների հետ, պարզ է դառնում, որ հարցերի մեծ մասի վերաբերյալ տեղեկատվությունը համեմատաբար ավելի անհրաժեշտ համարում են նրանք՝ բացառությամբ դատավորների խրախուսման և դատավորի ընտանիքի վերաբերյալ տեղեկատվության: Իսկ ամենամեծ տարբերությունն առկա է երկու հարցերի դեպքում՝

- դատարանում գործի քննության ժամկետներ՝ 8,3-ով ավել,
- դատավորի կողմից իրականացվող ծախսեր՝ 7,7%-ով ավել (**տե՛ս** գծապատկեր 58):

Այսինքն՝ կարող ենք եզրակացնել, որ համակարգի հետ առնչվող քաղաքացիները վերը նշված հարցերի վերաբերյալ տեղեկատվության պակասի հետ առավել շատ են բախվել և ներկայումս դրա առկայությունը կարևորում են առավել շատ:

Գծ. 58. Ղատարանների գործունեության տարբեր բաղադրիչների վերաբերյալ տեղեկատվության անհրաժեշտությունը. ընդհանուր, առնչություն ունեցողներ




Բնակավայրի ցուցանիշի հետ փոխկապվածության արդյունքում ստացվել է հետևյալ պատկերը.

- Ամենապահանջված (*ղատարան ղիմելու կանոնների վերաբերյալ*) և ամենաքիչ պահանջված (*ղատավորի ընտանիքի վերաբերյալ*) տեղեկատվությունը համեմատաբար առավել անհրաժեշտ են համարում գյուղերում (համապատասխանաբար՝ 95,9%, 47,6%, **տե՛ս** գծապատկեր 59): Գյուղերում՝ մյուս բնակավայրերի համեմատ, ավելի քիչ պահանջ են զգում ղատավորի նշանակման, գործերի բաշխման կարգի և ղատական նիստերի օրերի ու ժամերի վերաբերյալ տեղեկատվության հանդեպ (համապատասխանաբար՝ 83,5%, 71,2%, 82,9%, **տե՛ս** նույն տեղում):

➤ Երևան քաղաքում, մյուս երկու բնակավայրերի համեմատ, հարցվողներն առավել անհրաժեշտ են համարում միայն դատական նիստերի օրերի ու ժամերի վերաբերյալ տեղեկատվությունը, իսկ մարզային քաղաքներում, կրկին մյուս երկու բնակավայրերի համեմատ, ամենաշատ գործերի բաշխման կարգի վերաբերյալ տեղեկատվությունը:

Գծ. 59. Դատարանների գործունեության վերաբերյալ տեղեկատվության անհրաժեշտությունը՝ ըստ բնակավայրի (“այո” պատասխաններ)



Ավարտելով դատական համակարգի տեղեկացվածության վերաբերյալ հարցերի վերլուծությունը՝ փաստենք հիմնականի մասին՝

❖ Դատական համակարգի գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը միջինից ցածր մակարդակի վրա է գտնվում ընդհանուր հարցվողների, իսկ միջինից բարձր

մակարդակի վրա՝ համակարգի հետ առնչության փորձ ունեցող քաղաքացիների պարագայում:

- ❖ Տեղեկատվական աղբյուրների մեջ առաջին հորիզոնականում գտնվում է հեռուստատեսությունը, վերջինում՝ դատարանի պաշտոնական կայքը: Համակարգի հետ առնչություն ունեցողների համար տեղեկատվական աղբյուրների դերակատարությունը փոփոխվում է. առաջին տեղում՝ անձնական փորձ, վերջին տեղում՝ կինոնկարներ, մասնագիտացված հաղորդումներ:
- ❖ Հեռուստատեսությունը, չնայած հիմնական տեղեկատվական աղբյուր համարվելուն, մասամբ տեղեկացվածության մակարդակ է ապահովում: Հարցվողները դատական համակարգի վերաբերյալ լիովին տեղեկացված համարում են հատկապես անձնական փորձի առկայության դեպքում:
- ❖ Հեռուստատեսությունը, չնայած հիմնական տեղեկատվական աղբյուր համարվելուն, դատական համակարգի նկատմամբ վստահության մթնոլորտ չի ստեղծում, փոխարենը, տեղեկատվական բոլոր աղբյուրների մեջ վստահության ամենաբարձր մակարդակն ապահովում է վերջին հորիզոնականում գտնվող դատարանի պաշտոնական կայքը:

8. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՎԱՏԸ ԵՎ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի նախորդ էջերում մի քանի անգամ անդրադարձել ենք դատախիզական մարմինների նկատմամբ վստահության ցուցանիշին՝ տարբեր հարցերի հետ փոխկապվածության մեջ: Այս մասում ավելի մանրամասն կներկայացնենք հետևյալ հարցերի շուրջ ամբողջական վերլուծությունը՝

- 1) դատախիզական մարմինների նկատմամբ վստահության մակարդակը,
- 2) դատական համակարգի՝ վերջին հինգ տարիների փոփոխության վիճակը,
- 3) դատարանի մասին ասոցացիաներ:


Հետազոտության արդյունքում ստացված տվյալները կներկայացնենք այնպիսի հավանական գործոնների հետ փոխկապվածության վերլուծությամբ, ինչպիսիք են՝

- բնակավայրը,
- հարցվողների սեռը, տարիքը, կրթությունը, զբաղվածությունը,
- դատախիզական համակարգի հետ առնչության փորձը:


Ըստ գծապատկեր 60–ի տվյալների՝ համեմատության մեջ լիովին վստահության բարձր (տարբերությունն աննշան է) ցուցանիշ առկա է քննչական կոմիտեի նկատմամբ, մասամբ վստահության՝ դատարանների նկատմամբ (համապատասխանաբար՝ 3,8%, 28,9%, **տե՛ս** գծապատկեր 60): Բացարձակ անվստահության բարձր ցուցանիշ՝ կրկին քննչական կոմիտեի նկատմամբ, մասամբ անվստահության՝ դատարանների նկատմամբ (համապատասխանաբար՝ 29,8%, 31,2%, **տե՛ս** նույն տեղում):

Այսինքն՝ չնայած հաճախականությունների ոչ այնքան մեծ տարբերությանը՝ քննչական կոմիտեի նկատմամբ վստահության հարցում հարցվողներն ավելի ծայրահեղ պատասխանների են հակված: Իսկ, ընդհանուր առմամբ, քննչական կոմիտեի նկատմամբ անվստահությունն ավելի մեծ է, քան դատարանների և դատախազության նկատմամբ (համապատասխանաբար՝ 60,5%, 59,7%, 59,7%, **տե՛ս** գծապատկեր 60): Խուսափողական պատասխաններն («ո՛վ վարանում եմ պատասխանել», «հրաժարվում եմ պատասխանել») ավելի շատ վերաբերվում են քննչական կոմիտեին, այնուհետև՝ դատախազությանը, վերջում՝ դատարաններին (համապատասխանաբար՝ 9,4%, 9,1%, 7,8%):

Գծ. 60. Դատաիրավական մարմինների նկատմամբ վստահությունը



Գծ. 61. Արդարադատության կառույցների նկատմամբ վստահության մակարդակը. ընդհանուր, առնչություն ունեցողներ




Դատաիրավական համակարգի հետ *առնչություն ունեցողների* տեսակետների հետ համեմատության արդյունքում պարզ է դառնում, որ բոլոր երեք կառույցների պարագայում նվազում է խուսափողական պատասխանների թիվը (ավելի շատ դատարանների դեպքում), փոխարենը մեծանում է անվստահության մթնոլորտը դատարանների և դատախազության

դեպքում 7,7%-ով, քննչական կոմիտեի դեպքում՝ 8,6%-ով: Այսինքն՝ քննչական կոմիտեի նկատմամբ անվստահությունն աճում է ավելի մեծ տարբերությամբ՝ մնալով որպես ամենաանվստահելի դատախարակական կառույցը:

Դատական համակարգի վերաբերյալ միջինից բարձր անվստահության մթնոլորտ է ձևավորվում առաջին հերթին վերջինիս գործառնության մասին բացարձակ անտեղյակ լինելու, այնուհետև՝ լիովին տեղեկացված լինելու պայմաններում (համապատասխանաբար՝ 62,2%, 58,8%, **տե՛ս** գծապատկեր 62): Իրենց լիովին տեղեկացված համարող հարցվողները հստակ վերաբերմունք են արտահայտել, մինչդեռ ավելի շատ խուսափողական պատասխանները տվել են համակարգի գործառնությունից բացարձակ անտեղյակ հարցվողները:

Գծ. 62. Դատական համակարգի վերաբերյալ տեղեկացվածության և վստահության փոխկապվածությունը




Բնակավայր. դատարանների նկատմամբ վստահության մակարդակն ավելի բարձր է գյուղերում, ավելի ցածր՝ Երևանում (գյուղեր՝ 44,1%, Երևան՝ 25,9%, **տե՛ս** գծապատկեր 63): Երևանում մոտավորապես տաս հոգուց մեկը (9,1%) խուսափել է հարցին պատասխանել:

Դատարանների նկատմամբ միջինից բարձր վստահության մակարդակ է առկա հետևյալ մարզերում (**տե՛ս** գծապատկեր 63)՝

1. Վայոց Ձոր՝ 62,9%,
2. Կոտայք՝ 54%,
3. Արմավիր՝ 53,3%,
4. Արարատ՝ 52,5%:

Գծ. 63. Դատարանների նկատմամբ վստահության մակարդակը՝ ըստ մարզերի և Երևան քաղաքի



Դատարանների նկատմամբ անվստահությունն ավելի մեծ է հետևյալ մարզերում՝

1. Շիրակ՝ 70%,
2. Սյունիք՝ 66,7%,
3. Երևան՝ 64,8%,
4. Լոռի՝ 58,8%:

Հարցի մասին խուսափել են կարծիք հայտնել ավելի շատ Լոռիիում, Գեղարքունիքում, Երևանում և Տավուշում (համապատասխանաբար՝ 11,2%, 10%, 9,3%, 8,6%):

Դատախազության և քննչական կոմիտեի նկատմամբ ևս վստահության մակարդակն ավելի բարձր է գյուղերում, ավելի ցածր՝ Երևանում:

Դատախազության նկատմամբ միջինից բարձր վստահության մակարդակ առկա է հետևյալ մարզերում (*տե՛ս* հավելված, գծապատկեր 74)՝

- | | |
|---------------------|--------------------|
| 1. Վայոց Ձոր՝ 60%, | 3. Կոտայք՝ 52%, |
| 2. Արագածոտն՝ 52,5% | 4. Արմավիր՝ 51,1%: |

Իսկ քննչական կոմիտեի նկատմամբ միջին և միջինից բարձր վստահության մակարդակ նկատվում է հետևյալ մարզերում (*տե՛ս* հավելված, գծապատկեր 75)՝

- | | |
|----------------------|----------------------|
| 1. Վայոց Ձոր՝ 57,1%, | 3. Գեղարքունիք՝ 50%, |
| 2. Կոտայք՝ 52%, | 4. Արագածոտն՝ 50%: |


Ինչպես տեսնում ենք տվյալներից, դատաիրավական երեք կառույցների նկատմամբ վստահության ցուցանիշները տարբեր են ինչպե՛ս միմյանց հետ համեմատության մեջ, այնպե՛ս էլ մարզերի առումով:

Տարիքային ցուցանիշի հետ փոխկապվածության արդյունքում պարզ է դառնում, որ վստահության համեմատաբար բարձր մակարդակ առկա է 18-30, իսկ ցածր մակարդակ՝ 46-60 տարեկան հարցվողների շրջանում (օրինակ՝ դատավորների դեպքում համապատասխանաբար՝ 40,1%, 28,5%, *տե՛ս* հավելված, գծապատկեր 76): Երիտասարդներից հետո վստահության ավելի բարձր ցուցանիշ առկա է ավագ սերնդի ներկայացուցիչների պատասխաններում:

Դատախազության և քննչական կոմիտեի նկատմամբ վերը նշված օրինաչափությունը չի խախտվում, միայն նկատելի է կշիռների տարբերություն:

Կրթություն. ինչքան ցածր է կրթության մակարդակը, այնքան բարձր է դատաիրավական մարմինների նկատմամբ վստահության մակարդակը (օրինակ՝ դատավորների դեպքում, համապատասխանաբար՝ 38,5%, 30,9%, 28,7%, 8,3%, *տե՛ս* գծապատկեր 64): Դատախազության և քննչական կոմիտեի նկատմամբ 2 բարձրագույն/ասպիրանտական կրթություն ունեցող հարցվողների վստահության ցուցանիշը լիովին բացակայում է: Հարցի վերաբերյալ ավելի շատ խուսափողական պատասխան առկա է բարձրագույն կրթություն ունեցող հարցվողների շրջանում, առաջին հերթին քննիչների, այնուհետև՝ դատախազների, վերջում՝ դատավորների դեպքում (համապատասխանաբար՝ 12,6%, 11,7%. 10,3%):


Գծ. 64. Դատաիրավական կառույցների նկատմամբ վստահության մակարդակը՝ ըստ կրթության ցուցանիշի



Սեռ. դատաիրավական մարմիններին ավելի շատ վստահում են կանայք, քան տղամարդիկ (դատավորներ, դատախազներ, քննիչներ, համապատասխանաբար՝ 34,4%, 32,9%, 31,8%, **տե՛ս** գծապատկեր 65): Կանայք ավելի շատ են խուսափել հարցի մասին կարծիք հայտնելուց:

Զբաղվածության ցուցանիշի հետ փոխկապվածության արդյունքում պարզ է դառնում, որ, օրինակ՝ դատավորների դեպքում վստահության մակարդակն ավելի բարձր է ուսանողների, ավելի ցածր՝ անաշխատունակ հարցվողների մոտ (համապատասխանաբար՝ 48,1%, 9,1%, **տե՛ս** հավելված, գծապատկեր 77): Բացի վերջին խմբից՝ անվստահությունը համեմատաբար բարձր ցուցանիշներով արտահատվում է ինքնազբաղվածների, գործազուրկների և տնային տնտեսուհիների պատասխաններում (համապատասխանաբար՝ 66,7%, 63,5%, 62,4%, **տե՛ս** հավելված, նույն տեղում):

Գծ. 65. Դատախրավական կառույցների նկատմամբ վստահության մակարդակը՝ ըստ գենդերային ցուցանիշի



Անփոփելով վստահության ցուցանիշի վերլուծության մասը՝ փաստենք, որ՝


- ❖ Դատախրավական կառույցների նկատմամբ վստահության մակարդակը միջինից ցածր մակարդակի վրա է գտնվում՝ մոտավորապես 10-ից 3-ն են վստահում համակարգին:
- ❖ Վստահության ցուցանիշը համեմատաբար բարձր է դատավորների նկատմամբ հետևյալ խմբերի մոտ՝ 1) երիտասարդներ, 2) ուսանողներ, 3) իգական սեռի ներկայացուցիչներ, 4) միջնակարգ կրթություն ունեցող քաղաքացիներ և 5) Վայոց Ձորի մարզում:
- ❖ Անվստահության ցուցանիշը համեմատաբար բարձր է քննիչների նկատմամբ հետևյալ խմբերի մոտ՝ 1) 46-60 տարեկան քաղաքացիներ, 2) անաշխատունակ մարդկանց խումբ, 3) արական սեռի ներկայացուցիչներ, 4) ասպիրանտական կրթություն ունեցող քաղաքացիներ և 5) Շիրակի մարզում:

Դատական համակարգի գործունեությունը, ըստ հարցվողների մեծ մասի՝ 32%, մնացել է նույնը, չի փոփոխվել վերջին հինգ տարիների ընթացքում: Այնուհետև հարցվողների մեծ զանգվածը դժվարացել է հարցին պատասխանել (25,9%, **տե՛ս** գծապատկեր 66): Եվ գրեթե հավասարաչափ հաճախականությամբ արտահայտվում են «բարելավվել է», «վատթարացել

է» տարբերակները, չնայած որ վերջին տարբերակին հակված հարցվողները մի փոքր ավելին են:


Երբ հարցը դիտարկում ենք համակարգի հետ **առնչություն ունեցողների** տեսանկյունից, վերը նշված տարբերակները (բարելավվել է, վատթարացել է) հանդիպում են նույն հաճախականությամբ՝ 23,4%: Այս պարագայում փոքրանում է հարցի մասին կարծիք չունեցողների թիվը, և մոտ 1/3 մասը (33,1%) կարծում է, որ դատական համակարգի գործունեությունը վերջին 5 տարիների ընթացքում չի փոփոխվել:

ՊՑ. 66. Դատական համակարգի գործունեության փոփոխությունը. ընդհանուր, առնչություն ունեցողներ



Վերջին հինգ տարիների ընթացքում համակարգի գործունեությունն անփոփոխ է մնացել ավելի շատ՝ Երևան քաղաքի, այնուհետև՝ մարզային քաղաքների, վերջում՝ գյուղերի հարցվողների կարծիքով (համապատասխանաբար՝ 37,7%, 27,3%, 22,4%, **տե՛ս** գծապատկեր 67): «Համակարգի գործունեությունը բարելավվել է» ավելի շատ կարծում են գյուղերում, մարզային քաղաքներում և Երևանում (համապատասխանաբար՝ 31,2%, 22,1%, 15,7%):


ԳՃ. 67. Դատական համակարգի գործունեության փոփոխությունը՝ ըստ բնակավայրի



Սոցիալ-ժողովրդագրական ցուցանիշների հետ փոխկապվածության արդյունքում բացահայտվել է հետևյալը՝ համակարգի գործունեության բարելավման կողմնակից են՝ 1) հավասարապես ն՝ արական, ն՝ իգական սեռի ներկայացուցիչները, 2) միջնակարգ կրթությամբ հարցվողները, 3) 18-30 տարեկան երիտասարդները (**տե՛ս** գծապատկեր 68): Վերջին երկու խումբը ներկայացնում են նաև այն զանգվածը, որն ավելի շատ էր հակված դատական համակարգի նկատմամբ վստահության:

Վերջին հինգ տարիների ընթացքում դատական համակարգի գործունեության մեջ փոփոխություն չեն նկատել առավելապես՝ 1) տղամարդիկ, 2) երկու բարձրագույն/ասպիրանտական կրթություն ունեցող հարցվողները, 3) ավագ սերնդի ներկայացուցիչները (համապատասխանաբար՝ 33,1%, 41,7%, 34,3%, **տե՛ս** նույն տեղում):


Գծ. 68. Դատական համակարգի գործունեության փոփոխությունը. ըստ սեռ, տարիք, կրթություն և ցուցանիշների



Այժմ ներկայացնենք դատարանի մասին **սացագիաների վերլուծությունը**: Հավելվածում՝ աղյուսակ 7-ում տրված են բոլոր պատասխանները, որոնք դրական, բացասական և չեզոք պատասխանների մեծ խմբերում միավորելու արդյունքում ստացվել է հետևյալ պատկերը՝ հարցվողների մեծ մասը (37,9% **տե՛ս** գծապատկեր 69) դատարան ասելիս առաջին հերթին պատկերացնում է բացասական, վատ բան՝ բացասական պիտակավորմամբ անձիք, անօրինակություն, կոռուպցիա, խնդիր, վախ և այլն: Այնուհետև հաջորդում են դրական պատկերացումները դատարանի մասին՝ 29,9%, որը վերաբերում է

օրինականությանը, արդարությանը, կարգապահությանը և այլն: Պատասխանների մոտ ¼ մասը (24,3%) չեզոք բնույթ է կրում. սրա տակ ի նկատի ենք ունեցել դատարանի մասին պատկերացումները՝ որպես ուղղակի դատավոր, որպես շենք/դահլիճ և որպես գործընթաց/գործողություն:

ԳՃ. 69. Դատարանի մասին ասոցացիաների համեմատական պատկերը. ընդհանուր, առնչություն ունեցողներ




Համակարգի հետ **առնչություն ունեցողների** տեսանկյունից դատարանի մասին ասոցացիաներն ավելի շատ են բացասական երանգ ստանում (37,9%-ից դառնալով 45,1%, **տե՛ս** նույն տեղում): Փոխարենը փոքրանում է դրական, չեզոք, ինչպես նաև կարծիք չունեցողների կշիռը:

Դատարանի մասին բացասական ասոցացիաներն ավելի շատ ստացվել են Երևան քաղաքից, այնուհետև՝ մարզային քաղաքներից, վերջում՝ գյուղերից (համապատասխանաբար՝ 42,7%, 32,7%, 32,4%, **տե՛ս** գծապատկեր 70):

Չեզոք պատասխանների դեպքում օրինաչափությունը ևս նույնն է բնակավայրերի առումով, իսկ դրական պատասխանները, բնականաբար, նվազում են փոքր բնակավայրերից մինչև մեծ բնակավայր հերթականությամբ (գյուղեր՝ 36,5%, այլ քաղաքներ՝ 34,2%, մայրաքաղաք՝ 25,4%): Հարցին ավելի շատ դժվարացել են պատասխանել գյուղերում, ավելի քիչ՝ Երևանում:

ԳՑ. 70. Դատարանի մասին ասոցացիաները ըստ բնակավայրի



Սոցիալ-ժողովրդագրական ցուցանիշների հետ փոխկապվածության արդյունքում պարզվում է, որ դատարանի մասին դրական պատկերացումներ ավելի շատ ունեն՝

- տղամարդիկ՝ 32,8%,
- միջին մասնագիտական կրթությամբ քաղաքացիները՝ 31,7%,
- ավագ սերնդի ներկայացուցիչները՝ 35,7% (*տե՛ս* գծապատկեր 71),
- որակավորում չունեցող աշխատողները՝ 38,5% (*տե՛ս* հավելված, գծապատկեր 78):

Դատարանն ավելի շատ բացասական ասոցացիաներ է առաջացնում հետևյալ խմբերի մոտ՝


- կրկին արական սեռի ներկայացուցիչներ, ընդ որում, ավելի շատ բացասական, քան դրական՝ 40,4%,
- 2 բարձրագույն/ասպիրանտական կրթություն ունեցող քաղաքացիներ՝ 75%,
- կրկին ավագ սերնդի ներկայացուցիչներ, ընդ որում, ավելի շատ բացասական, քան դրական՝ 39%,
- սեփական բիզնես ունեցող քաղաքացիներ՝ 44,4%:

Այսինքն՝ տղամարդիկ և ավագ սերնդի ներկայացուցիչները հասարակության այն խումբն են ներկայացնում, ովքեր ավելի շատ ծայրահեղ պատկերացումներ ունեն դատարանների նկատմամբ, ընդ որում, բացասական տարբերակն ավելի մեծ հաճախականությամբ է հանդիպում:

Չեզոք պատասխանների ավելի շատ հակված են՝

- կանայք՝ 26,9%,
- բարձրագույն կրթությամբ հարցվողները՝ 27,8%
- 18-30 տարեկան երիտասարդները՝ 32,4%,
- ուսանողները՝ 42,6%:

Գծ. 71. Դատարանի մասին ասոցացիաները ըստ սեռ, տարիք, կրթություն ցուցանիշների



9. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի այս հատվածը վերաբերում է հանրային ընկալումների վերլուծությանը, մասնավորապես ստորև նշված հարցերի վերաբերյալ՝

- Ինչքանով է ապահովված պաշտպան ունենալու իրավունքը,
- Արդյո՞ք դատախրավական մարմինները պահպանում և ապահովում են անձի պաշտպան ունենալու իրավունքը,
- Ինչքանով են պահպանվում ընթացակարգային պահանջները, ժամկետները և արդյո՞ք դատական ծախսերը և պետական տուրքերը ողջամիտ են,
- Գործնականում ինչքանով է հասանելի արդարադատությունը (ընթացակարգային պահանջներ, դատաքննությունը դատարանում, դատարան դիմելու գործընթաց և այլն):


Գծապատկեր 72–ի տվյալները փաստում են, որ հարցվողների մեծ մասի կարծիքով դատախրավական մարմիններում ապահովված է պաշտպան/փաստաբան ունենալու իրավունքը, ընդ որում ավելի շատ դատարաններում, այնուհետև՝ դատախազությունում, վերջում՝ քննչական կոմիտեում (համապատասխանաբար՝ 70,3%, 66,3%, 64,1%, **տե՛ս** գծապատկեր 72):

Այնուհետև հարցվողների հաջորդ մեծ զանգվածը դժվարացել է կարծիք հայտնել հարցի մասին, իսկ շատ փոքր զանգված կարծում է, որ դատախրավական մարմիններում չի պահպանվում փաստաբան ունենալու իրավունքը, ընդ որում ավելի շատ քննչական կոմիտեում, այնուհետև՝ դատախազությունում, վերջում՝ դատարանում (համապատասխանաբար՝ 17,5%, 15,7%, 15,3%, **տե՛ս** նույն տեղում):


Համակարգի հետ **առնչության փորձ** ունեցողների պարագայում, երբ փոքրանում է հարցի մասին կարծիք չունեցողների կշիռը, դատախազության և քննչական կոմիտեի դեպքում մեծանում է այն քաղաքացիների զանգվածը, ովքեր կարծում են, որ չի ապահովվում պաշտպան ունենալու իրավունքը (դատախազություն՝ 26,8% (11,1%-ով ավել), քննչական կոմիտե՝ 23,3%՝ 8%-ով ավել): Դատարանում, ընդհակառակը, ավելանում է այն քաղաքացիների թիվը, ովքեր կարծում են, որ իրացվում է պաշտպան ունենալու իրավունքը (72,5%՝ 2,2%-ով ավել, **տե՛ս** գծապատկեր 73):

Առնչության փորձ ունեցողները հակված են ծայրահեղ, սակայն դրական պատասխանի ավելի շատ դատարանի դեպքում՝ կարծելով, որ լիովին ապահովվում է պաշտպան ունենալու իրավունքը (դատարան, լիովին ապահովված է՝ 32,2%, 14,6% և 17,8%-ի համեմատությամբ), մինչդեռ լիովին ծայրահեղ բացասական պատասխանի հակված են ավելի շատ դատախազության պարագայում (դատախազություն, բացարձակ ապահովված չէ՝ 7,3%, 2,7% և 5,5%-ի համեմատությամբ, տե՛ս գծապատկեր 73):

Գծ. 72. Պաշտպան ունենալու իրավունքի իրացումը դատաիրավական մարմիններում



Գծ. 73. Պաշտպան ունենալու իրավունքի ապահովման մակարդակը՝ ըստ առնչություն ունեցողների



Իսկ թե ինչքանով են դատաիրավական մարմինները ապահովում պաշտպան ունենալու հնարավորությունը, բանավոր բացատրությունը և գրավոր տեղեկատվությունը, ցույց կտան հավելվածում բերված գծապատկեր 80-82-ի տվյալները:

Հարցվողների ¾ մասը (75%, **տե՛ս** հավելված, գծապատկեր 80) հակված է այն տեսակետին, որ դատարանում երբեք դեմ չեն, որ անձը ներկայանա պաշտպանով, իսկ երբ հարցը վերաբերում է այդ հնարավորությունը բացատրելուն, առավել ևս գրավոր տեղեկացնելուն, այդ կշիռը փոքրանում է՝ առաջին դեպքում 4,7%-ով, երկրորդ դեպքում՝ 41%-ով, այսինքն՝ պաշտպան ունենալու իրավունքի մասին գրավոր տեղեկացնելու պրակտիկայի կիրառությունը կրճատվում է մոտ 2,2 անգամ: Այս դեպքում ոչ միայն ավելանում է բացասական պատասխանների կշիռը, այլ նաև առավելապես այն հարցվողների թիվը, ովքեր դժվարանում են հարցի մասին կարծիք հայտնել՝ 100 հոգուց մոտ 45 հոգին (44,6%) չգիտեն նման հնարավորության մասին:

Դատախազության և քննչական կոմիտեի դեպքում հարցի վերաբերյալ տեսակետները էականորեն տարբերվում են և՛ դրական պատասխանների կշռի կրճատման, և՛ կարծիք չունեցողների թվի ավելացման առումով: Օրինակ՝ դատախազությունում պաշտպանով ներկայանալու հնարավորությունն ավելի ցածր մակարդակի վրա է գտնվում, քան դատարանում, և ընդհակառակը, ավելի բարձր, քան քննչական կոմիտեում (դատարան՝ 75%, դատախազություն՝ 68,7%, քննչական կոմիտե՝ 64,1%, **տե՛ս** հավելված, գծապատկեր 80):

Օրինակ՝ պաշտպանով ներկայանալու իրավունքի մասին գրավոր տեղեկացման պրակտիկան ևս, չնայած միջինից ցածր, բայց համեմատության մեջ բարձր մակարդակի վրա է գտնվում առաջին հերթին դատարանում, այնուհետև՝ դատախազությունում, վերջում՝ քննչական կոմիտեում (համապատասխանաբար՝ 34%, 32,5%, 29,7%, **տե՛ս** հավելված, գծապատկեր 82):


Փաստաբանի գործունեության արդյունավետության մասին ևս հարցվողները հնարավորություն են ունեցել հայտնելու իրենց տեսակետները, մասնավորապես հետևյալ ուղղություններով/հարցերով՝

1. արդյո՞ք փաստաբանի աշխատանքը նպաստում է մարդու իրավունքների արդյունավետ իրացմանը,
2. արդյո՞ք փաստաբանի աշխատանքը նպաստում է մարդու իրավունքների խախտումները կանխելուն,

3. արդյո՞ք փաստաբանի ներգրավումը նպաստում է գործի ընթացքից դրական լուծում ստանալու ակնկալիքի մեծացմանը:

Նշված ուղղություններով փաստաբանի աշխատանքի արդյունավետության հաստատումը կամ ժխտումը դիտարկվում է ն՝ քաղաքացիական, ն՝ քրեական, ն՝ վարչական գործերով դատարանների օրինակով:

Գծ. 74. Փաստաբանի ներգրավման դերն իրավունքների արդյունավետ իրացման գործում՝ ըստ դատարանների տեսակի



Վերը նշված առաջին գործառույթի արդյունավետությունը հաստատվում է հարցվողների մեծ մասի կողմից առաջին հերթին քաղաքացիական գործերով, այնուհետև՝ քրեական գործերով, վերջում՝ վարչական գործերով դատարանում (համապատասխանաբար՝ 70,8%, 67,6%, 66,2%, **տե՛ս** գծապատկեր 74): Գծապատկերից երևում է, որ հարցի մասին դժվարացել են կարծիք հայտնել ավելի շատ վարչական գործերով (25,4%), ավելի քիչ՝ քաղաքացիական գործերով (21,6%) դատարանի պարագայում:

Մարդու իրավունքների խախտման կանխարգելման գործում (հարց 2) և գործի ընթացքից դրական լուծում ակնկալելու հարցում (հարց 3) փաստաբանի ներգրավման դերը ևս հարցվողների մեծ մասի կողմից հաստատվում է կրկին ավելի շատ քաղաքացիական, այնուհետև՝ քրեական, վերջում՝ վարչական գործերով դատարանում (**տե՛ս**, հավելված, գծապատկեր 83, 84): Ինչպես վերևում նշեցինք, այստեղ ևս հարցվողներն ավելի քիչ

տեղեկացված են, հետևաբար ավելի շատ են «դժվարանում եմ պատասխանել» տարբերակի հաճախականությունը վարչական գործերով դատարանի դեպքում:

Անցնելով դատարաններում ժամկետների և ծախսերի վերաբերյալ հարցերի վերլուծությանը՝ ներկայացնենք ստացված հետաքրքիր տվյալները. հարցվողների գրեթե կեսի կարծիքով՝

- դատական գործի քննությունը պետք է սկսվի դատարան դիմելուց մեկ շաբաթ հետո (48,6%, **տե՛ս** հավելված, գծապատկեր 85),
- դատարան դիմելու համար պետական տուրք չպետք է լինի, գործընթացը պետք է լինի անվճար (52,3%, **տե՛ս** հավելված, գծապատկեր 86):

Այնուհետև գրեթե հավասարաչափ երկու խմբերի են բաժանվում հարցվողները՝ կարծելով, որ


- գործի քննությունը պետք է սկսվի 1) նույն օրը և 2) մեկ ամսից (համապատասխանաբար՝ 20,7%, 21%, **տե՛ս** հավելված, նույն տեղում),
- դատարան դիմելու համար պետական տուրքը 1) պետք է կազմի 1000-5000 դրամ և 2) կախված պետք է լինի վեճի առարկայի արժեքից (համապատասխանաբար՝ 20,2%, 20,8% **տե՛ս** հավելված, նույն տեղում):

Հարցվողներն ավելի շատ դժվարացել են կարծիք հայտնել գործի քննության ենթադրվող ժամկետների (4,8%), քան դատարան դիմելու համար սահմանված տուրքի արժեքի մասին (2,9%):

Հարցվողների գերակշիռ մասը կարծում է, որ մեկ գործի տևողության ժամանակահատվածը պետք է լինի 1-3 ամիս՝ 70,3%: Այնուհետև համեմատաբար մեծ հաճախականությամբ հանդիպում է 4-6 ամիս տարբերակը՝ 15,4%: Գրեթե նույնչափ քաղաքացիներ դժվարացել են կարծիք հայտնել կամ հակված են այն տեսակետին, որ այն պետք է կախված լինի գործի բարդությունից (համապատասխանաբար՝ 5,1%, 5,3% **տե՛ս** գծապատկեր 75):

Դատական համակարգի հետ **առնչության փորձ ունեցող** քաղաքացիները գրեթե նույն տեսակետն ունեն, սակայն մյուս տարբերակների կրճատման հաշվին այս խմբի մոտ ավելանում է «մեկ գործի քննության տևողությունը պետք է լինի 1-3 ամիս» տարբերակի կշիռը (74,5% 70,3%-ի համեմատությամբ):


ԳՃ. 75. Դատարաններում մեկ գործի տևողության ենթադրվող ժամանակահատվածը. ընդհանուր, առնչություն ունեցողներ



Ըստ առնչություն ունեցողների մեծ մասի՝ դատարանը դատական քննություն իրականացնելիս «հազվադեպ» է հետևում սահմանված ժամանակացույցերին (43%, **տե՛ս** գծապատկեր 76): Այնուհետև հանդիպում են «հաճախ», «երբեք», «միշտ» տարբերակները (համապատասխանաբար՝ 28,9%, 13,4%, 7,4%, **տե՛ս** գծապատկեր 76):


Հանրության ընդհանուր պատկերացումներում տարբերակների հանդիպման հերթականությունը նույնն է, սակայն կարծիք չունեցողների թվի ավելացման պատճառով նվազում է յուրաքանչյուր տարբերակի կշիռը ընդհանուր պատասխանների մեջ (հազվադեպ, հաճախ, երբեք, միշտ՝ համապատասխանաբար՝ 35,6%, 31,6%, 8,8%, 4,8%, **տե՛ս** նույն տեղում):

Գծ. 76. Դատաքննության սահմանված ժամանակացույցերին հետևելու մակարդակը. ընդհանուր, առնչություն ունեցողներ



Դատական քննության մասին տեղեկատվության տրամադրման հարցում ևս հանրության ընդհանուր պատկերացումներն ու առնչություն ունեցող քաղաքացիների տեսակետները էականորեն չեն տարբերվում՝ երկու դեպքում էլ մեծ զանգվածի համար արդյունավետ է համարվում այն տարբերակը, որ կողմերը նամակի միջոցով տեղեկացվեն նիստի ընթացքի մասին (ընդհանուր՝ 42,5%, առնչություն ունեցողներ՝ 45,6%, *տե՛ս* գծապատկեր 77):

Գծ. 77. Դատաքննության մասին տեղեկատվության տրամադրման արդյունավետ միջոցները. ընդհանուր, առնչություն ունեցողներ




Հաջորդ արդյունավետ տարբերակը համարվում է դատարանի քարտուղարությունը, այնուհետև՝ հեռախոսազանգը, վերջում՝ համացանցը (օրինակ, առնչություն ունեցողների

դեպքում համապատասխանաբար՝ 24,2%, 16,1%, 10,7%, **տե՛ս** նույն տեղում): Նկատենք նաև, որ դատարանի քարտուղարությունում դատաքննության մասին տեղեկատվություն ստանալը պակաս (5%-ով պակաս) արդյունավետ է համարվում առնչություն ունեցողների տեսանկյունից:

Դատաիրավական կառույցների ֆիզիկական հասանելիության հարցին անդրադառնալիս՝ փաստենք, որ հարցվողների գրեթե կեսի համար՝ 51%, ամենամոտ դատարանը սեփական բնակավայրից գտնվում է 1-10 կմ հեռավորության վրա: Կան նաև այնպիսիք (22,2%), ովքեր այդ հեռավորությունը գնահատում են մինչև 1 կմ: Միայն 100-ից մեկն է այդ հեռավորությունը 20 կմ-ից ավել համարում (1,1%, **տե՛ս** գծապատկեր 78)

ԳՃ. 78. Բնակավայրից մոտակա դատարան ենթադրվող հեռավորությունը




Դատարանների՝ ամենամեծ հեռավորության վրա գտնվելու մասին՝ 20 կմ-ից ավել, կարծիք են հայտնել ավելի շատ Շիրակի մարզում (41,7%), այնուհետև հավասարաչափ Երևանում և Կոտայքում (25%), ավելի քիչ՝ Սյունիքի մարզում (8,3%, **տե՛ս** հավելված, գծապատկեր 87), իսկ ամենամոտ հեռավորության վրա գտնվելու մասին (մինչև 1 կմ), ավելի շատ Երևանում (32,3%), այնուհետև՝ Լոռվա մարզում (16,2%), իսկ ամենաքիչ՝ Կոտայքի մարզում (0,4%):

Շարունակելով արդարադատության հասանելիության վերաբերյալ հարցերի վերլուծությունը՝ ներկայացնենք կարևոր կողմնորոշիչ նշանների առկայության/բացակայության մասին հարցվողների կարծիքները, որոնք վերաբերում են դատարան դիմելու գործընթացին, ընթացակարգային և դատական քննությանը առնչվող որոշ ձևական պահանջներին:

Գծապատկեր 79–ի տվյալները ցույց են տալիս, որ՝

- 1) հարցվողների մեծ մասի համար ամենաակնառու կողմնորոշիչը համարվում է դատարանի շենքի՝ փողոցի վրա (տեսանելի վայրում) տեղակայման փաստը (60,7%),
- 2) տվյալ շենքում տեղակայված է միայն դատարանը՝ կարծում է հարցվողների 40,8%-ը,
- 3) հարցվողների մեջ 10-ից 5-ը (50,4%), փաստում է, որ ճանապարհի վրա չկա ցուցանակ, որը ցույց կտա ամենամոտ դատարանի գտնվելու վայրը,
- 4) մյուս կողմնորոշիչ նշանների առկայության մասին հարցվողների գերակշիռ մասը տեղյակ չէ, օրինակ՝ 1) դատարան դիմելու վերաբերյալ ուղեցույցի առկայություն՝ 76,4%, 2) դատարանի գրասենյակը գտնելու վերաբերյալ ուղեցույցի առկայություն՝ 75,3%, 3) նիստերի ժամանակացույցով և դատավորի անվամբ ուղեցույցի առկայություն՝ 74,4%, 4) սենյակների քարտեզի առկայություն՝ 75,7%:

Գծ. 79. Դատարաններում կողմնորոշիչ նշանների առկայությունը




Շենքը տեղակայված է փողոցի վրա՝ տեսանելի վայրում ամենաշատը փաստող երեք մարզերը հետևյալներն են՝ (**տե՛ս** գծապատկեր 80)

1. Արմավիր՝ 95,6%,
2. Արագածոտն՝ 90%,
3. Արարատ՝ 87,5%:

Իսկ Երևան քաղաքում հետևյալ շրջանները (**տե՛ս** գծապատկեր 81)՝

1. Շենգավիթ՝ 90,9%,
2. Աջափնյակ՝ 70,7%,
3. Քանաքեռ-Զեյթուն՝ 62,8%:


Գծ. 80. Կողմնորոշիչ նշանների առկայությունը՝ ըստ մարզերի



Տվյալ կողմնորոշիչի առկայության մասին ամենաքիչը փաստում են՝

- | | | |
|-------------------------------|-----------------------------|-----------------------------|
| 1. Երևանում՝ 48,2%, | 2. Շիրակում՝ 64,4%, | 3. Տավուշում՝ 65,7%: |
| 1. Իսկ Երևան քաղաքում հետևյալ | շրջաններումավիթ աշեն՝ 4,8%, | 2. Մալաթիա-Սեբաստիա՝ 12,1%, |
| | | 3. Ավան՝ 17,9%: |

ԳՑ. 81. Կողմնորոշիչ նշանների առկայությունը՝ ըստ Երևան քաղաքի վարչական շրջանների



Տվյալ շենքում տեղակայված է միայն դատարանը ավելի շատ կարծում են ստորև նշված մարզերում՝

1. Արարատ՝ 82,5%,
2. Արմավիր՝ 66,7%,
3. Կոտայք՝ 58%:

Իսկ Երևան քաղաքում հետևյալ շրջաններում՝

1. Շենգավիթ՝ 69,7%,
2. Քանաքեռ-Զեյթուն՝ 62,8%,

3. Նորք-Մարաշ՝ 55,6%:

Տվյալ կողմնորոշիչի առկայության մասին ավելի քիչ փաստում են հետևյալ մարզերում՝

1. Գեղարքունիք՝ 30%, 2. Շիրակ՝ 31,1%, 3. Երևան՝ 34,3%:

Իսկ Երևան քաղաքում հետևյալ շրջանները՝

1. Ավան՝ 3,6%, 2. Մալաթիա-Սեբաստիա՝ 7,6%, 3. Դավիթաշեն՝ 14,3%:

Ճանապարհի վրա ճուջանակների առկայության մասին ավելի շատ փաստում են՝

1. Վայոց Ձորում՝ 37,1%, 3. Տավուշում՝ 28,6%:

2. Արագածոտնում՝ 32,5%,

Երևան քաղաքում հետևյալ շրջաններում՝

1. Նորք Մարաշ՝ 61,1%, 3. Նոր Նորք և Շենգավիթ հավասարաչափ՝ 19,7%:
2. Արաբկիր՝ 23%,

Ցուցանակների առկայության մասին ավելի քիչ փաստում են՝

1. Շիրակում՝ 6,7%, 2. Լոռիում՝ 7,5%, 3. Սյունիքում՝ 8,9%:

Երևան քաղաքում՝

1. Դավիթաշենում՝ 0%,
2. Նուբարաշենում և Քանաքեռ-Զեյթունում հավասարաչափ՝ 2,3%,
3. Մալաթիա-Սեբաստիայում՝ 3%:

10. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՏԵՍԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքն ավարտենք արդարադատության կանխատեսելիության վերաբերյալ հանրային ընկալումների վերլուծությամբ, մասնավորապես, թե՛

- որքանո՞վ է վիճարկվում վերջնական որոշումը դատարանում, ինչո՞ւ:
- արդյո՞ք օրենքները կիրառվում են միասնականորեն,
- արդյո՞ք անձն ունի հնարավորություն՝ կանխատեսելու արդյունքները,
- ի՞նչ գործոնների առկայության պայմաններում է հնարավոր կանխատեսել դատական գործի ելքը:

Դատարանի վերջնական **որոշումը բողոքարկելու դեպքերի** քանակի մասին հարցվողներն ունեն շատ տարբեր տեսակետներ՝ գրեթե հավասարաչափ կշիռներով արտահայտվում են այն կարծիքները, որ վերադաս դատարան բողոքարկվում է դատարանի որոշումների շատ քիչ մասը, կեսը, կեսից ավելին (համապատասխանաբար՝ 27,1%, 27,7%, 23,1%, **տե՛ս** հավելված, գծապատկեր 88): Մոտավորապես 10-ից երկուսը (18,5%) հարցի մասին կարծիք չի հայտնել:

Դատարանի որոշումները վերադաս դատարան **բողոքարկելու պատճառները** բազմաթիվ են, սակայն հարցվողներն առանձնացրել են առաջին և երկրորդ հիմնական պատճառները՝ (**տե՛ս** հավելված, գծապատկեր 89)։

3) դատարաններն արդար չեն՝ 24,7%,

4) հավատում են, որ հնարավոր է առավել բարենպաստ որոշում կայացվի՝ 23,6%:

Այնուհետև գրեթե կիսով չափ կրճատվում է պատասխանների հաճախականությունը, սակայն կարևոր պատճառներ են համարվում նաև հետևյալները՝

3) բողոքարկում են, որովհետև դատարանները գործերն ամբողջությամբ չեն ուսումնասիրում՝ 12,6%,

4) վստահ են, որ իրական վերանայում կլինի՝ 10,4%:


Իսկ ամենաքիչը կարծում են (0,7%), որ վերադաս դատարանում ավելի հեշտ է ոչ ֆորմալ պայմանավորվածություն ձեռք բերել:

Այն, որ դատարաններն արդար չեն (1), ավելի շատ կարծում են Երևանում, այնուհետև գյուղերում, վերջում՝ մարզային քաղաքներում (համապատասխանաբար՝ 26,3%, 23,5%, 22,7%, **տե՛ս** հավելված, գծապատկեր 90): Իսկ մարզային քաղաքներում ամենաշատը հավատում են վերադաս դատարանի կողմից ավելի բարենպաստ որոշում կայացնելուն

(26,4%, **տե՛ս** հավելված, նույն տեղում): Հարցի մասին կարծիք չունեցողներն ավելի շատ գյուղերի, այնուհետև՝ մարզային քաղաքների, վերջում՝ Երևանի հարցվողներն են: Վճռաբեկ դատարանի որոշումների իրազեկման ամենաարդյունավետ միջոցը համարվում է կայքը, իսկ ոչ արդյունավետ միջոցը՝ գրքի տեսքով տպագրությունը (համապատասխանաբար՝ 35,6%, 17,1%, **տե՛ս** հավելված, գծապատկեր 91): Որպես տարբերակ՝ առաջարկվել է նաև եթերով հեռարձակելու միջոցը:

Դատարանի կողմից **օրենքների կիրառելիության** մասին հանրության պատկերացումները և այն քաղաքացիների կարծիքները, ովքեր առնչություն են ունեցել դատական համակարգի հետ, տարբեր են (**տե՛ս** գծապատկեր 82)՝ առաջին դեպքում հարցվողներն ամենաշատը կարծում են (35,9%), որ օրենքները կիրառվում են կոնկրետ իրավիճակին համապատասխան, իսկ առնչության փորձի արդյունքում քաղաքացիներն այլ կարծիք են ձևավորել՝ նրանց 41,6%-ը գտնում է, որ նույն իրավիճակում կիրառվում են տարբեր օրենքներ: Երկու խմբերի մոտ էլ նույն իրավիճակում նույն օրենքների կիրառելիության մասին տեսակետը ամենափոքր կշիռն է ստացել (ընդհանուր՝ 10,3%, առնչություն ունեցող՝ 7,4%), չնայած որ ընդհանուր առմամբ հասարակությունն ավելի դրական տրամադրվածություն ունի պատասխանի նկատմամբ (2,9%-ով ավել):


Գծ. 82. Դատարաններում օրենքների կիրառման հնարավոր իրավիճակները. ընդհանուր, առնչություն ունեցողներ



Դատական գործի վերջնական արդյունքի կանխատեսման կարևորության ու հնարավորության փոխկապվածությունը հետաքրքիր վերլուծության առիթ է ստեղծում՝


- Վերջնարդյունքը կանխատեսելու հնարավորության լրիվ բացակայության ֆոնի վրա բացարձակապես անկարևոր է դառնում կանխատեսումը ամենամեծ ցուցանիշով (երբեք հնարավոր չէ՝ 38,5%, բացարձակ կարևոր չէ՝ 23,1%, **տե՛ս** գծապատկեր 83):
- Շատ կարևորության (8,8%) ցուցանիշին ամենաշատը հանդիպում է հազվադեպ հնարավորության առկայությունը (30,7%):

Գծ. 83. Վերջնարդյունքի կանխատեսման կարևորության և հնարավորության փոխկապվածությունը



Ընդհանուր առմամբ, հարցվողների գերակշիռ մասը՝ 88,1%-ը, կարևորում է կանխատեսման գործընթացը՝ նախքան դատական գործընթաց նախաձեռնելը: Կանխատեսելու կարևորությունն ավելի է մեծանում համակարգի հետ առնչության փորձ ունեցող քաղաքացիների պատասխաններում (91,9%, **տե՛ս** գծապատկեր 84):


Գծ. 84. Դատական գործի վերջնական արդյունքի կանխատեսման կարևորությունը. ընդհանուր, առնչություն ունեցողներ



Վերջնարդյունքը կանխատեսելու հնարավորության դեպքում առնչություն ունեցողները, ի համեմատ ընդհանուր պատասխանների, ավելի մեծ տարբերությամբ հանդես են գալիս «միշտ հնարավոր է կանխատեսել դատական գործի արդյունքը» տարբերակում (տարբերությունը 1,9%, **տե՛ս** զժապատկեր 85):

Գժապատկեր 85-ի տվյալները ցույց են տալիս, որ երկու խմբերում էլ կանխատեսման հնարավորությունը ամենաշատը «հազվադեպ» հաճախականությամբ է հանդես գալիս (ընդհանուր՝ 29,6%, առնչություն ունեցող՝ 30,9%): Ամենացածր հավանականության դաշտում է գտնվում «միշտ» կանխատեսելու հնարավորությունը (ընդհանուր՝ 7,5%, առնչություն ունեցող՝ 9,4%):

Գծ. 85. Դատական գործի վերջնական արդյունքի կանխատեսման հնարավորությունը. ընդհանուր, առնչություն ունեցողներ




Վերջնական արդյունքի կանխատեսման հնարավորության և երբեք կարևոր գործոնների (*տե՛ս* հավելված, աղյուսակ 8) փոխկապվածության վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ՝

1. Կաշառակերության, ոչ ֆորմալ միջոցների կիրառման, հովանավորչության կասկածների առկայության պայմաններում ավելի շատ իրատեսական է դառնում «հազվադեպ» կանխատեսելու, այնուհետև՝ «երբեք» չկանխատեսելու հնարավորությունը/դրա բացակայությունը (համապատասխանաբար՝ 30,6%, 29,1%, *տե՛ս* հավելված, գծապատկեր 92): Հետաքրքիր է նաև, որ այս գործոնը հարցվողների որոշ մասի կարծիքով «հաճախ» (23,1%), նաև «մշտապես» (15,7%) հնարավոր է դարձնում կանխատեսման գործընթացը:
2. Ընդհակառակը, անարդարության, անօրինականության, օբյեկտիվության բացակայության պայմաններում հնարավորության կեսից շատը գրոյանում է («երբեք հնարավոր չէ»՝ 53%), իսկ հնարավորության 40%-ը հայտնվում «հազվադեպության» դաշտում:
3. Գործի ընթացքի անորոշ լինելու, չբացահայտված փաստերի ի հայտ գալու, իրավիճակային ընթացքի պայմաններում կանխատեսման գործընթացը դառնում է ավելի շատ հազվադեպ, այնուհետև՝ հաճախ հանդիպող երևույթ, իսկ վերջում՝ բացարձակապես դառնում է անհնար (համապատասխանաբար՝ 39,2%, 36,1%, 23,7%):

Մյուս գործոնների վերլուծության դեպքում ևս հետաքրքիր ցուցանիշներ են ստացվել, օրինակ՝ փաստաբանների աշխատանքի արդյունքում գործի էլքը կանխատեսելու գործընթացը «հաճախակի» հնարավոր է դառնում մեծ թվով հարցվողների կարծիքով՝ 58,3%: Դատական գործի արդյունքը կանխատեսելու հնարավորության և կարևորության մասին հասարակության **տարբեր խմբեր** տարբեր տեսակետներ ունեն՝

- Կարևորության ցուցանիշը բարձր, իսկ հնարավորության ցուցանիշը, ընդհակառակը, ցածր է իգական սեռի պատասխաններում (կարևորություն՝ 88,6% 87,3%- համեմատությամբ, հնարավորություն՝ 35,7% 37,4%-ի համեմատությամբ, **տե՛ս** զծապատկեր 86):
- Կարևորության ցուցանիշը մեծանում է կրթական մակարդակի բարձրացմանը զուգահեռ, իսկ հնարավորության ցուցանիշը, ընդհակառակը, փոքրանում ցածր կրթական մակարդակի դեպքում, չնայած որ փոքր տարբերությամբ այս օրինաչափությունը խախտում են միջին մասնագիտական կրթությամբ հարցվողները (0,9%-ով, **տե՛ս** նույն տեղում):
- Կանխատեսման գործընթացն ավելի շատ կարևոր, նաև ավելի շատ հնարավոր են համարում երիտասարդները (կարևոր՝ 91,2%, հնարավոր՝ 40,5%): Եվ, ընդհակառակը, այդ գործընթացն ավելի քիչ կարևոր և ավելի քիչ հնարավոր է դառնում ավագ սերնդի ներկայացուցիչների համար (կարևոր՝ 86,9%, հնարավոր՝ 32,4%): Կանխատեսման հնարավորության և կարևորության միջև տարբերությունն ավելի շատ ակնհայտ է երկու տարիքային խմբերի մոտ՝ 61-ից բարձր և 31-45 տարեկան (մոտ 2,7 անգամ հնարավորությունը փոքր է կարևորությունից):
- Կանխատեսման կարևորությունն ամենաբարձր ցուցանիշով առկա է սեփական բիզնես ունեցող (96,3%), իսկ կանխատեսման հնարավորությունը ամենացածր ցուցանիշով՝ գյուղացիական տնտեսությունում զբաղված քաղաքացիների պատասխաններում (28,4%, **տե՛ս** հավելված, զծապատկեր 93):
- Դատական գործի էլքի կանխատեսումն ավելի շատ կարևոր է Երևանում, այնուհետև՝ գյուղերում, վերջում՝ մարզային քաղաքներում (համապատասխանաբար՝ 92% 85,9%, 82,7%, **տե՛ս** հավելված, զծապատկեր 94): Կանխատեսման հնարավորությունը (միշտ և հաճախ տարբերակները միավորած) նույնպես համաչափ է բնակավայրերի առումով՝ ավելի շատ հնարավոր համարում են Երևանում, այնուհետև՝ գյուղերում, վերջում՝ մարզային քաղաքներում (համապատասխանաբար՝ 38,7%, 34,1%, 33,4%):


Գծ. 86. Վերջնարդյունքի կանխատեսման հնարավորության և կարևորության համեմատական պատկերը՝ ըստ սեռ, տարիք, կրթություն ցուցանիշների



Դատական գործի ելքը կանխատեսելու հարցում ենթադրվող դերակատարություն ունեցող գործոնների մեջ ամենամեծ դերը վերագրվում է ոչ ֆորմալ միջոցներ օգտագործելուն (59,8%), իսկ կանխատեսելու ամենաքիչ հնարավորությունն ապահովում է նմանատիպ գործերով վերջնական դատական ակտերն ուսումնասիրելու գործընթացը (49%, **տե՛ս** գծապատկեր 87): Առնչություն ունեցողների մոտ ևս հարցի ընկալումը չի փոխվում. «դժվարանում եմ պատասխանել» տարբերակի կշռի նվազման հետևանքով կրկին ամենակարևոր գործոնը

համարվում է ոչ ֆորմալ միջոցներ կիրառելը (66,3%), և պակաս դերակատարություն ունեցող միջոցը՝ նմանատիպ գործերով վերջնական դատական ակտեր ուսումնասիրելը (50,9%, *տե՛ս* նույն տեղում):

Գծ. 87. Վերջնական արդյունքը կանխատեսելու համար հնարավոր գործոնների դերակատարությունը. քննիչներ, առնչություն ունեցողներ



Աշխատանքի սկզբում անդրադարձել ենք, թե ինչ պայմանների առկայության դեպքում քաղաքացիները կդիմեն դատարան: Այս մասում, բացի դատարանից, հարցվողներն առանձնացնում են կոնկրետ կառույցներ, որոնց կդիմեն իրավական վեճեր առաջանալու դեպքում: Առաջին երեք հորիզոնականում են գտնվում՝

- 1) Մարդու իրավունքների պաշտպանը՝ 24%,

- 2) փաստաբանը՝ 20,8%,
- 3) ոստիկանությունը՝ 15,7%:

Վերջից երեք տեղերում են գտնվում՝

- 1) դատախազությունը՝ 1,9%
- 2) ՋԼՄ-ները՝ 2,6%,
- 3) ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակը՝ 2,6% (*տե՛ս* հավելված, աղյուսակ 9):


Առնչություն ունեցողները սեփական/կամ ընտանիքի փորձի հիման վրա կազմել են այդ կառույցների ցանկը/դրանց մերժումը՝ (*տե՛ս* հավելված, նույն տեղում)

1. Մարդու իրավունքների պաշտպան՝ 22,3% (1,7-ով քիչ ընդհանուրի համեմատությամբ),
2. ոչ մեկ/ոչ մի կառույց՝ 16,6% (6,9-ով ավել ընդհանուրի համեմատությամբ),
3. փաստաբանը՝ 15,4% (5,4-ով քիչ ընդհանուրի համեմատությամբ):

Մարդու իրավունքների պաշտպանին՝ որպես նախընտրելի կառույց, ավելի շատ համարում են՝

- գյուղերում՝ 31,8% (*տե՛ս* գծապատկեր 88),
- 31-45 տարեկան հարցվողները՝ 27,1% (*տե՛ս* հավելված, գծապատկեր 95),
- միջնակարգ կրթությամբ հարցվողները՝ 28,3% (*տե՛ս* հավելված, գծապատկեր 96),
- կանայք՝ 26,9% (*տե՛ս* հավելված, գծապատկեր 97):

ԳՃ. 88. Իրավական վեճերի դեպքում նախընտրելի կառույցների ցանկը՝ ըստ բնակավայրի



Բնակավայր. Երևան քաղաքում ամենանախընտրելի կառույցը/անձը համարվում է փաստաբանը (23,2%), վերջին տեղում գտնվում է դատախազությունը 1,3%: Այս բնակավայրում է առկա պատասխանների համեմատաբար մեծ կշիռը, որը վերաբերում է որևէ հեղինակավոր անձի դիմելու կամ ոչ մեկի/ոչ մի կառույցի չդիմելու նախընտրությանը (համապատասխանաբար, 6,6%, 10,5%, **տե՛ս** գծապատկեր 88):

Տարիք. նշանակալի տարբերությամբ փաստաբանը նախընտրելի է համարվում երիտասարդների համար (27,1% 19,8%-ի համեմատությամբ **տե՛ս** հավելված, գծապատկեր 95)

Կրթություն. նշանակալի տարբերությամբ դատախազությանն ավելի շատ նախընտրում են դիմել միջնակարգ կրթությամբ քաղաքացիները (3,7% 0,9%-ի համեմատությամբ), իսկ ՁԼՄ-ներին՝ երկու բարձրագույն/ասպիրանտական կրթություն ունեցող հարցվողները (16,7% 3,3%-ի համեմատությամբ): Վերջիններս ևս մեծ կշիռ են կազմում այն խմբում, ովքեր նախընտրում են ոչ մի կառույցի չդիմել (16,7% 10,7%-ի համեմատությամբ, **տե՛ս** հավելված, գծապատկեր 96):

Մեռ. նշանակալի տարբերությամբ ոստիկանությանը դիմել նախընտրում են ավելի շատ կանայք (17,8% 11,7%-ի համեմատությամբ), մարդու իրավունքների պաշտպանին ևս ավելի շատ կանայք, քան տղամարդիկ (26,9% 18,4%-ի համեմատությամբ): Եվ, ընդհակառակը, տղամարդիկ մեծ կշիռ ունեն ոչ մեկի/ոչ մի կառույցի չդիմողների մեջ (14,6% 7,1%-ի համեմատությամբ, **տե՛ս** հավելված, գծապատկեր 97):

Ավարտելով արդարադատության կանխատեսելիության վերաբերյալ հանրային ընկալումների վերլուծությունը՝ մեկ անգամ ևս փաստենք, որ ըստ հարցվողների՝

- Դատարաններում նույն իրավիճակում կիրառվում են տարբեր օրենքներ կամ դրանք կիրառվում են կոնկրետ իրավիճակին համապատասխան:
- Դատական որոշումների կեսը/կեսից ավելին բողոքարկվում է՝ դրանց արդարությանը չհավատալու և վերադաս դատարանի կողմից ավելի բարենպաստ որոշում ակնկալելու պատճառով:
- Դատական գործի ելքը կանխատեսելը կարևոր է հարցվողների մեծ զանգվածի համար, սակայն նրանց փոքր մասն է միայն հնարավոր համարում այդ գործընթացը:
- Վերջնարդյունքը կանխատեսելու հարցում ենթադրվող գործոնների մեջ ամենամեծ դերակատարությունը վերագրվում է ոչ ֆորմալ միջոցներ օգտագործելուն:

11. ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով իրականացված հետազոտության արդյունքները՝ նշենք հետևյալ հիմնական բացահայտումները՝

- ✚ Դատախրավական համակարգի հետ առնչության պատմությունը կարևոր դեր է կատարում քաղաքացիների տեսակետների ձևավորման հարցում, մասնավորապես, դատարանների հետ առնչության պատճառը և դատական գործում այս կամ այն կարգավիճակով հանդես գալը կարևոր գործոններ են, որոնց հիման վրա ձևավորվում է քաղաքացու դրական կամ բացասական գնահատականը: Սրանով են պայմանավորված նաև անհրաժեշտության դեպքում դատարան դիմելու տրամադրվածությունը և չդիմելու օբյեկտիվ պատճառների առկայությունը:
- ✚ Ընդհանուր առմամբ, իրավական խնդրի առկայության դեպքում դատարան դիմելու պատրաստակամություն միայն 10-ից մեկն է հայտնել, իսկ վերջին մեկ տարվա ընթացքում իրավական խնդիրների պայմաններում դիմելիության մակարդակը միջինից բարձր ցուցանիշ է գրանցել (56,8%)՝ միևնույն ժամանակ չդիմողների՝ մեծամասամբ օբյեկտիվ պատճառաբանություններով հանդերձ:
- ✚ Դատախրավական մարմինների անկախությունը մեծապես կախված է նրանց ընտրվելու կամ նշանակվելու կարգից, հետևաբար, այն երաշխավորող գործոնները դառնում են հիմնավոր և հստակ՝ 1) դատախրավական մարմինների՝ բաց և թափանցիկ մրցույթի միջոցով պաշտոնավարման մեկնարկ, 2) օրենքների և մարդու իրավունքների խախտման դեպքում պաշտոնավարման սահմանափակում, 3) գործունեության նկատմամբ հանրային վերահսկողության ձևավորում:
- ✚ Չնայած հասարակության մոտ առկա է դատախրավական մարմինների հաշվետվողականության և վերահսկողություն իրականացնելու անհրաժեշտության շատ մեծ պահանջ, սակայն, մի կողմից, չեն հստակեցվում հաշվետվողականության հարցերի շրջանակը, իսկ, մյուս կողմից, ներկայումս համակարգի վրա շատ ազդեցություն ունեցող կառույցներին (ՀՀ նախագահ, կառավարություն) կրկին վերագրվում է համակարգի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու դերը:
- ✚ Դատախրավական մարմիններում իրավահավասարության սկզբունքը մեծապես խախտվում է գործի փաստերը ներկայացնելու ժամանակ, երբ, ըստ հարցվողների, քաղաքացիները զրկվում կամ սահմանափակ հնարավորություններ են ստանում:

Նման իրավիճակում հազվադեպ է դառնում դատական որոշումների արդար, քաղաքացիների համար հասկանալի լինելու, ինչպես նաև խնդրին լուծում տալու ընկալումը:

- ✚ Չնայած դատաիրավական համակարգի՝ վերջին հինգ տարիների գործունեության փոփոխության գնահատականներում անփոփոխ մնալու (32%) և բարելավելու (20%) տեսակետները կիսում են հարցվողների կեսից ավելին, այնուամենայնիվ, համակարգի նկատմամբ վստահության մակարդակը դեռևս միջինից ցածր մակարդակի վրա է գտնվում, և գերակշռում են դատարանների նկատմամբ բացասական ասոցացիաները:
- ✚ Չնայած դատական գործի էլքը կանխատեսելը կարևորվում է մեծ զանգվածի կողմից, սակայն նրա փոքր մասն է միայն հնարավոր համարում այդ գործընթացը, քանի որ հասարակության շրջանում գերակշռում է դատարանների կողմից նույն իրավիճակում տարբեր օրենքների կիրառության մասին ընկալումը:
- ✚ Դատաիրավական համակարգի վերաբերյալ նման գնահատականները և ընկալումները ձևավորվել են հարցվողների մեծ մասի՝ համակարգից բացարձակ անտեղյակ լինելու (63,1%) պայմաններում: Չնայած տեղեկատվության աղբյուրներն այսօր բազմաթիվ են ու բազմազան, այնուամենայնիվ, առաջնային աղբյուրը մնում է հեռուստատեսությունը՝ վերջին տեղում թողնելով դատարանի պաշտոնական կայքին, որը և՛ ենթադրաբար, և՛ հարցվողների կարծիքով դատաիրավական համակարգի վերաբերյալ լիովին տեղեկացվածության և վստահության զգացողությունն առաջացնող կարևոր աղբյուրն է:

12. ՀԱՎԵԼՎԱԾ


ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 1. Հարցազրույցների թիվն՝ ըստ վարչական շրջանների/համայնքների


Համայնք	Երևանի վարչական շրջաններում/համայնքներում հարցազրույցների թիվը	Երևանի վարչական շրջաններում/համայնքներում հարցազրույցների թիվը՝ արտահայտված %-ով
Աջափնյակ	58	5,5
Ավան	28	2,6
Արաբկիր	74	7,0
Դավիթաշեն	21	2,0
Էրեբունի	24	2,3
Կենտրոն	34	3,2
Մալաթիա Սեբաստիա	66	6,2
Նուբարաշեն	44	4,2
Նորք Մարաշ	36	3,4
Նոր Նորք	66	6,2
Շենգավիթ	66	6,2
Քանաքեռ-Զեյթուն	43	4,1
Արտաշատ	25	2,4
Արմավիր	30	2,8
Աշտարակ	20	1,9
Հրազդան	40	3,8
Գավառ	15	1,4
Վանաձոր	70	6,6
Եղեգնաձոր	10	,9
Կապան	30	2,8
Իջևան	10	,9
Գյումրի	80	7,5
Դալար	15	1,4
Լուկաշին	15	1,4
Ոսկեվազ	20	1,9
Ֆանտան	10	,9
Լճաշեն	25	2,4
Արջուտ	10	,9
Մալիշկա	25	2,4
Շաքի	15	1,4
Հաղարծին	25	2,4
Լանջիկ	10	,9
Ընդամենը	1060	100

ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԵՏ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆԸ


Գծ. 1. Քննչական կոմիտեի հետ առնչության դեպքերը




Գծ. 2. Դատախազության հետ առնչության դեպքերը




Գծ. 3. Դատախազության հետ առնչության փորձի գնահատականն՝ ըստ առնչվողի կարգավիճակի




Գծ. 4. Քննչական կոմիտեի հետ առնչության փորձի գնահատականն՝ ըստ առնչվողի կարգավիճակի




Գծ. 5. Դատախազության հետ առնչության փորձի գնահատականն՝ ըստ առնչության պատճառի




Գծ. 6. Քննչական կոմիտեի հետ առնչության փորձի գնահատականն՝ ըստ առնչության պատճառի




ԳՃ. 7. Դատաիրավական համակարգի կառույցների հետ առնչություն. Երևան քաղաք և մարզեր




ԳՃ. 8. Ղատարանների հետ առնչության ժամանակահատվածը. մարզեր և Երևան քաղաք




Գծ. 9. Դատարանների հետ առնչվող անձի կարգավիճակն՝ ըստ մարզերի և Երևան քաղաքի




Գծ. 10. Դատարանների հետ առնչության պատճառներն՝ ըստ Երևան քաղաքի և մարզերի



Գծ. 11. Դատախազության հետ առնչության պատճառներն՝ ըստ Երևան քաղաքի և մարզերի




ԳՃ. 12. Քննչական կոմիտեի հետ առնչության պատճառներն՝ ըստ Երևան քաղաքի և մարզերի




ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ՏՐԱՄԱԴՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐՋԻՆ ՄԵՎ ՏԱՐՎԱ ՓՈՐՁԸ


Գծ. 13. Դատարան դիմելու անհրաժեշտության դեպքերը




Գծ. 14. Դատարան չդիմելու պատճառներն՝ ըստ նախկին փորձի գնահատման




ԳՃ. 15. Դատարան դիմելու տրամադրվածությունն՝ ըստ զբաղվածության կարգավիճակի




Գծ. 16. Դատարան դիմելու տրամադրվածությունն՝ ըստ Երևան քաղաքի և մարզերի




ԳՃ. 17. Դատարան դիմելու տրամադրվածության և գործողության համեմատությունը




Գձ. 18. Վերջին մեկ տարվա ընթացքում դատարան դիմելու անհրաժեշտությունն՝ ըստ Երևան քաղաքի և մարզերի




ԳՑ. 19. Վերջին մեկ տարվա ընթացքում դատարան դիմողներն՝ ըստ Երևան քաղաքի և մարզերի




Գծ. 20. Դատարան չդիմելու պատճառներն՝ ըստ մարզերի և Երևան քաղաքի




Գծ. 21. Դատարան դիմելու անհրաժեշտության և դիմելիության համեմատական պատկերը. տարիքային և կրթական ցուցանիշներ




Գծ. 22. Դատարան դիմելու անհրաժեշտության և դիմելիության համեմատական պատկերն՝ ըստ զբաղվածության կարգավիճակի




Գծ. 23. Դատարան չդիմելու պատճառներն՝ ըստ տարիք, կրթություն, զբաղվածություն ցուցանիշների




ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ
Գծ. 24. Դատավորների՝ ենթադրվող և նախընտրելի նշանակումների համեմատական պատկերը




Գծ. 25. Դատախազների՝ ենթադրվող և նախընտրելի նշանակումների համեմատական պատկերը



Գծ. 26. Քննիչների՝ ենթադրվող և նախընտրելի նշանակումների համեմատական պատկերը




Գծ. 27. Դատաիրավական համակարգի պաշտոնատար անձանց ենթադրյալ նշանակումներն՝ ըստ բնակավայրի




ԳՑ. 28. Դատաիրավական համակարգի պաշտոնատար անձանց նախընտրելի նշանակումներն՝ ըստ բնակավայրի




Գծ. 29. Դատավորների ենթադրյալ և նախընտրելի նշանակման համեմատական պատկերն՝ ըստ գենդերային գործոնի



Գծ. 30. Ընտրության կարգերի ազդեցությունը դատախարական մարմինների անկախության վրա՝ ըստ բնակավայրի




Գծ. 31. Ընտրության կարգերի ազդեցությունը դատավորների անկախության վրա՝ ըստ սեռ, տարիք, կրթություն ցուցանիշների




ԳՑ. 32. Դատարանների անկախության խոչընդոտները և անկախությունը
մեծացնող

քայլերն՝ ըստ բնակավայրի


■ Երևան ■ Մարզային քաղաքներ ■ Գյուղեր




Գծ. 33. Դատավորների անկախության խոչընդոտներն՝ ըստ տարիքային ցուցանիշի



ԳՃ. 34. Դատավորների անկախության խոչընդոտներն՝ ըստ կրթության ցուցանիշի




Դատավորների անկախության խոչընդոտներն՝ ըստ գենդերային ցուցանիշի



ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՑԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ

Գծ. 36. Դատավորների հաշվետվողականության անհրաժեշտությունն՝ ըստ սեռ, տարիք, կրթություն ցուցանիշների



Աղյուսակ 2. Դատաիրավական կառույցներում պաշտոնների նշանակման գործընթացի թափանցիկությունը

	Լիովին թափանցի կ	Ավելի շուտ թափանցի կ	Ավելի շուտ ոչ թափանցի կ	Բացարձա կ ոչ թափանցի կ	Դժվարանում է պատասխանե
1. Դատավորներ	2,5	14,4	34,6	39,2	9,2
2. Դատախազներ	2,1	13,7	34,1	39,6	10,6
Միջին ցուցանիշ	2,3	14,1	34,3	39,4	9,9


Աղյուսակ 3. Դատաիրավական կառույցներում պաշտոններից ազատման գործընթացի թափանցիկությունը

	Լիովին թափանցի կ	Ավելի շուտ թափանցի կ	Ավելի շուտ ոչ թափանցի կ	Բացարձա կ ոչ թափանցի կ	Դժվարանում է պատասխանե
1. Դատավորներ	2,5	19,1	32,6	36,2	9,6
2. Դատախազներ	2,6	17,9	33,3	36,1	10,0
3. Քննիչներ	2,3	16,5	32,4	37,8	11,0
Միջին ցուցանիշ	2,5	17,8	32,8	36,7	10,2

Աղյուսակ 4. Դատաիրավական կառույցներում պատասխանատվության միջոցների կիրառման գործընթացի թափանցիկությունը


	Լիովին թափանցի կ	Ավելի շուտ թափանցի կ	Ավելի շուտ ոչ թափանցի կ	Բացարձա կ ոչ թափանցի կ	Դժվարանում է պատասխանե
1. Դատավորներ	3,1	16,0	31,3	38,6	10,9
2. Դատախազներ	3,2	15,7	31,4	38,6	11,1
3. Քննիչներ	3,2	15,9	31,5	38,1	11,2
Միջին ցուցանիշ	3,2	15,9	31,4	38,4	11,1

Գծ. 37. Դատարաններում գործերի բաշխման գործընթացի թափանցիկությունը




Գծ. 38-42. Դատաիրավական մարմինների գործունեության հատկանիշների առկայությունը


Գծ. 38. Գործունեության մատչելիությունը




Գծ. 39. Գործունեության հասանելիությունը




Գծ. 40. Գործունեության թափանցիկությունը




Գծ. 41. Գործունեության անկախությունը




Գծ. 42. Գործունեության հաշվետվողականությունը




Գծ. 43. Դատարանների գործունեության ոլորտների թափանցիկություն-վստահություն փոխկապվածությունը



ԳՃ. 44. Դատախազության գործունեության ոլորտների թափանցիկություն-վստահություն փոխկապվածությունը




Գծ. 45. Քննչական կոմիտեի գործունեության ոլորտների թափանցիկություն-վստահություն փոխկապվածությունը




ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՍԲ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ


Գծ. 46. Վերահսկողության անհրաժեշտությունն՝ ըստ առնչությունն ունեցողների




Գծ. 47. Դատաիրավական մարմինների գործունեության վերահսկողության անհրաժեշտությունն՝ ըստ բնակավայրի




ԳՃ. 48. Դատաիրավական մարմինների նկատմամբ վերահսկողության անհրաժեշտությունն՝ ըստ սեռ, տարիք, կրթություն ցուցանիշների




Գծ. 49. Դատախազների գործունեության վրա տարբեր կառույցների ազդեցության մակարդակը




Գծ. 50. Քննիչների գործունեության վրա տարբեր կառույցների ազդեցության մակարդակը



ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ, ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴԱՐ ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԱՌՈՒՄՆԵՐԸ ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ
Գծ. 51. Դատավորների՝ հավասար վերաբերմունքի ապահովման մակարդակն՝ ըստ սեռ, տարիք, կրթություն և աշխատանքի տեղի



Գծ. 52. Քննիչների՝ հավասար վերաբերմունքի ապահովման մակարդակն՝ ըստ սեռ, տարիք, կրթություն և աշխատատեղի



Աղյուսակ 5. Դատական որոշումների արդարությունը երաշխավորող գործոնները
Գործոններ

%


1. Արդար, օրինական, օբյեկտիվ աշխատող դատավորներ	26,9
2. Աստվածավախ, բարեխիղճ, ազնիվ դատավորներ	12
3. Կոռուպցիայի բացակայություն	11,8
4. Վերադասների կողմից վերահսկողություն	11,3
5. Գրագետ, օրենքներին տիրապետող դատավորներ	6
6. Անկախ, «վերևներից» չճնշված դատարան	5,3
7. Հասարակության կողմից վերահսկողություն, գիտակից հասարակություն	3,6
8. Օրենքների բարեփոխում, խստացում (անդրոպովյան ռեժիմ)	2,9
9. Սեփական գործին նվիրյալ, պատասխանատու դատավորներ	2,6
10. Դատարանների բաց և թափանցիկ աշխատանք	2,4
11. Դատավորների պատժելիություն, հաշվետվողականության ապահովում	1,9
12. Դատավորների աշխատավարձի բարձրացում	1,7
13. Կողմերի (մեղադրյալների, վկաների և այլն) ձայնը լսելու կարևորություն, փաստ	1,5
14. Համակարգի փոփոխություն (երդվյալ ատենակալներ և այլն)	1,2
15. Այլ	0,2
Ոչ ադեկվատ պատասխաններ	1,2
Դժվարանում է պատասխանել	7,5
Ընդամենը	100

**ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՄԱԿԱՐԴԱԿԸ**

**Աղյուսակ 6. Դատարանների գործունեության վերաբերյալ
տեղեկատվության աղբյուրները**

Տեղեկատվության աղբյուրներ	%
1. Հեռուստատեսություն	28,8
2. Սոցիալական ցանցեր	14,8
3. Անձնական փորձ	11,1
4. Ընկերների, բարեկամների, ծանոթների փորձ	10,1
5. Էլեկտրոնային տեղեկատվական կայքեր	9,5
6. Ընկերների, բարեկամների, ծանոթների խոսակցություններ, ասեկոսեներ	6,5
7. Տպագիր մամուլ	5,4
8. Գրքեր/գեղարվեստական և մասնագիտական գրականություն	4,8
9. Ռադիո	3,1
10. Կինոնկարներ, մասնագիտացված հաղորդումներ	3,1
11. Դատարանի պաշտոնական կայք	2,4
Դժվարանում է պատասխանել	,5
Ընդամենը	100


ԳՃ. 53. Դատական համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրներն՝ ըստ բնակավայրի




Գծ. 54. Դատական համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրներն՝ ըստ տարիքային ցուցանիշի




Գծ. 55. Դատական համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրներն՝ ըստ կրթության ցուցանիշի




Գծ. 56. Դատական համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրներն՝ ըստ գենդերային ցուցանիշի




ԳՃ. 57. Դատախազության նկատմամբ վստահության և տեղեկատվության առկայության փոխկապվածությունը




Գծ. 58. Քննչական կոմիտեի նկատմամբ վստահության և տեղեկատվության առկայության փոխկապվածությունը




Գծ. 59. Դատարանների գործունեության վերաբերյալ տեղեկատվության հատկանիշները



Գծ. 60. Դատախազության գործունեության վերաբերյալ տեղեկատվության հատկանիշները




Գծ. 61. Քննչական կոմիտեի գործունեության վերաբերյալ տեղեկատվության հատկանիշները




Գծ. 62-67. Տեղեկատվության տարբեր հատկանիշների առկայության համեմատական պատկերը


Գծ. 62. Տեղեկատվության օպերատիվությունը




Գծ. 63. Տեղեկատվության հավաստիությունը/օբյեկտիվությունը




Գծ. 64. Տեղեկատվության հասանելիությունը




Գծ. 65. Տեղեկատվության մատչելիությունը/հասկանալիությունը




Գծ. 66. Տեղեկատվության օգտակարությունը



Գծ. 67. Տեղեկատվության մանրամասնությունը




Չժ. 68. Դատարանների գործունեության տարբեր բաղադրիչների վերաբերյալ տեղեկատվության հասանելիության մակարդակը




■ Լիովին հասանելի է
 ■ Ավելի շուտ հասանելի է
 ■ Ավելի շուտ հասանելի չէ
 ■ Բացարձակ հասանելի չէ
 ■ Դժվարանում է պատասխանել


Գծ. 69. Դատարանների գործունեության տարբեր բաղադրիչների վերաբերյալ տեղեկատվության անհրաժեշտությունը




Գծ. 70. Դատական համակարգի տեղեկատվության բաղադրիչների հասանելիությունն՝ ըստ բնակավայրի




Գծ. 71. Դատական համակարգի տեղեկատվության բաղադրիչների հասանելիությունն՝ ըստ բնակավայրի



Գծ. 72. Տեղեկատվության և հաշվետվողականության անհրաժեշտությունն փոխկապվածությունը (մաս 1)




ՊՃ. 73. Տեղեկատվության և հաշվետվողականության անհրաժեշտությունն փոխկապվածությունը (մաս 2)




ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՎԱՏԸ ԵՎ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Գծ. 74. Դատախազության նկատմամբ վստահության մակարդակն՝ ըստ մարզերի և Երևան քաղաքի




Գծ. 75. Քննչական կոմիտեի նկատմամբ վստահության մակարդակն՝ ըստ մարզերի և Երևան քաղաքի



Գծ. 76. Դատաիրավական կառույցների նկատմամբ վստահության մակարդակն՝ ըստ տարիքային ցուցանիշի




Գծ. 77. Դատավորների նկատմամբ վստահության մակարդակն՝ ըստ զբաղվածություն, անձնական եկամուտ ցուցանիշների




Աղյ. 7. Դատարանի մասին ասոցացիաներ. ընդհանուր, ըստ բնակավայրի

	Ընդհանուր	Երևան	Մարզային քաղաքներ	Գյուղեր
1. Անձ՝ ուղղակի դատավոր, ակնոցավոր դատավոր	5,1%	6,1%	4,5%	2,9%
2. Անձ՝ բացասական պիտակավորումով՝ հանցագործներ, իշխանավորներ և այլն	1,8%	2,5%	,9%	1,2%
3. Գործընթաց, գործողություն՝ դատ, վճիռներ, դատական նիստ, մահապատիժ և այլն	12,6%	14,6%	11,2%	8,8%
4. Վայր՝ շենքը, դահլիճը, սենյակը և այլն	6,6%	7,3%	5,8%	5,9%
5. Օրինականություն (օրենք, արդարություն, կարգապահություն, արդար վճիռ, մարդկանց պաշտպանող կառույց)	29,9%	25,4%	34,2%	36,5%
6. Անօրինականություն (անարդարություն, խաբեբայություն, սուտ, քծանք, օրենքի խախտում)	10,7%	12,1%	9,7%	7,6%
7. Կոռուպցիա (կաշառակերություն, շուկա)	7,0%	7,1%	7,3%	5,9%
8. Ոչ դրական երևույթ՝ բացասական, վատ, խնդիր	12,3%	13,4%	10,6%	11,8%
9. Վախի զգացում՝ վախ, սարսափ, խուճապ, ցավ	5,7%	6,6%	4,2%	5,3%
10. Ոչինչ, դատարան չկա	,6%	,9%	0,0%	,6%
Դժվարանում է պատասխանել	7,8%	3,9%	11,5%	13,5%
Ընդամենը	100,0%	100,0%	100,0%	100,0%

ԳՃ. 78. Դատարանի մասին ասոցացիաներն՝ ըստ զբաղվածության կարգավիճակի




Գծ. 79. Դատարանին բնորոշ ցանկալի հատկանիշները




**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ**


ԳՃ. 80. Դատախարարական մարմիններում փաստաբանով ներկայանալու հնարավորությունը




ԳՃ. 81. Դատախարարական մարմիններում փաստաբանով ներկայանալու իրավունքի իրազեկումը




Գծ. 82. Դատաիրավական մարմիններում փաստաբանով ներկայանալու իրավունքի մասին գրավոր տեղեկացումը




Գծ. 83. Փաստաբանի ներգրավման դերն իրավունքների խախտման կանխարգելման գործում՝ ըստ դատարանների տեսակի




Գծ. 84. Փաստարանի ներգրավման դերը դրական լուծում ակնկալելու հարցում՝ ըստ դատարանների տեսակի




Գծ. 85. Դատարաններում գործի քննությունը սկսելու ենթադրվող ժամկետները



Գծ. 86. Դատարան դիմելու համար սահմանված տուրքի չափը




Գծ. 87. Դատարանների հեռավորության մասին պատկերացումներն՝ ըստ Երևան քաղաքի և մարզերի




ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՏԵՍԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ


Գծ. 88. Վերադաս դատարան բողոքարկվող որոշումների քանակը




Գծ. 89. Վերադաս դատարան բողոքարկելու պատճառները



Գծ. 90. Դատարանի որոշումները բողոքարկելու պատճառներն՝ ըստ բնակավայրի




Գծ. 91. Վճռաբեկ դատարանի որոշումների իրազեկման անհրաժեշտ միջոցները




Աղյուսակ 8. Վերջնական արդյունքի կանխատեսումն ապահովող/չապահովող գործոնները

Գործոններ	%
13. Կաշառակերության, ոչ ֆորմալ միջոցների կիրառման, հովանավորչության կասկածներ/վտանգ	12,2
14. Անօրինակության, անարդարության օրինակներ, օբյեկտիվության բացակայություն	10,5
15. Գործի ընթացքի անորոշ լինել, ընթացքում չբացահայտված փաստերի ի հայտ գալ, իրավիճակային ընթացք	8,8
16. Դատարանի, դատավորների նկատմամբ անվստահություն	7,8
17. Օրենքի իմացություն	7,4
18. Օրենքին, արդարությանը հետամուտ լինել, վստահել	5,6
19. Օրենքներից, իրավական ոլորտից անտեղյակություն	2,9
20. Փաստաբանների աշխատանք	2,2
21. Անկանխատեսելի վճիռներ, անկայուն դատարան	2
22. Ի սկզբանե կանխատեսելի վճիռներ, հարցերին լուծում գտնելու անխուսափելիություն	1,3
23. Դատարանի, դատավորների առաջ անգործության զգացում	1,2
24. Օրենքների երկիմաստություն, ճկունություն	0,5
Դժվարանում է պատասխանել	37,6


Գծ. 92. Վերջնարդյունքի կանխատեսման հնարավորության և պատճառների փոխկապվածությունը



Գծ. 93. Վերջնարդյունքի կանխատեսման հնարավորության և կարևորության համեմատական պատկերն՝ ըստ զբաղվածության կարգավիճակի




Գծ. 94. Գործի վերջնական արդյունքի վերաբերյալ ընկալումներն՝ ըստ քննակազմի




**Աղյ. 9. Իրավական վեճերի դեպքում քաղաքացիների համար
նախընտրելի կառույցների ցանկ. ընդհանուր, առնչություն ունեցողներ**

	Ընդհանուր	Առնչություն ունեցող
Մարդու իրավունքների պաշտպան	24,0	22,3
Փաստաբան	20,8	15,4
Ոստիկանություն	15,7	11,4
Ոչ մեկ/ոչ մի կառույց	9,7	16,6
Դատարան	9,6	10,3
Որևէ հեղինակավոր անձ	5,6	8,6
Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ	2,6	3,4
ԶԼՄ-ներ	2,6	4
Դատախազություն	1,9	1,7
Կախված գործի բնույթից	1,3	0,6
Այլ	0,7	0,6
Դժվարանում է պատասխանել	5,5	5,1
Ընդամենը	100	100


Գծ. 95. Իրավական խնդիրների դեպքում հավանական կառույցների ցանկն՝ ըստ տարիքային ցուցանիշի



Գծ. 96. Իրավական խնդիրների դեպքում հավանական կառույցների ցանկն՝ ըստ կրթության ցուցանիշի



Գծ. 97. Իրավական խնդիրների դեպքում հավանական կառույցների ցանկն՝ ըստ գենդերային ցուցանիշի



Աղյ. 10. Արտադատական կարգի մասին տեղեկավածությունը. ընդհանուր, առնչություն ունեցողներ

	Ընդհանուր	Առնչություն ունեցող
Քաջ ծանոթ էմ	,5	1,1
Որոշ չափով ծանոթ էմ	14,9	26,9
Բացարձակ ծանոթ չեմ	84,6	72
Ընդամենը	100	100

Արտադատական կարգի մասին իմացությունը

1. Ֆինանսական համակարգի հաշտարարի գործունեությունը, որը լուծում է բանկերի հետ կապված հարցերը՝ 40,0 %:
2. Դժվարանում է պատասխանել՝ 60,0 %:

Առկա վիճակագրական կապի գործակիցները (Կրամերի V երկու փոփոխականների միջև կապի գործակից, որն ընդունում է 0-1 միջակայքում արժեքներ: Օրինակ՝ 0.331 արժեքը վկայում է երկու փոփոխականների միջև չափավոր կապի մասին)⁸⁹:

Դատաիրավական համակարգի հետ առնչության պատմությունը

- 1) «Դատաիրավական համակարգի հետ առնչության փորձին գնահատականը» և «Առնչվող անձի կարգավիճակը»՝ Կրամերի V կապի գործակիցը կազմել է 0,331:
- 2) «Դատաիրավական համակարգի հետ առնչության փորձին գնահատականը» և «Առնչության պատճառը»՝ Կրամերի V կապի գործակիցը կազմել է 0,282:
- 3) «Դատաիրավական համակարգի հետ առնչության փորձին գնահատականը» և «Մարզեր»՝ Կրամերի V կապի գործակիցը կազմել է 0,296:
- 4) «Դատաիրավական համակարգի հետ առնչության փորձին գնահատականը» և «Դատարան դիմելու տրամադրվածությունը»՝ Կրամերի V կապի գործակիցը կազմել է 0,186:
- 5) «Դատարանների նկատմամբ վստահությունը» և «Դատարան դիմելու տրամադրվածությունը»՝ Կրամերի V կապի գործակիցը կազմել է 0,164:
- 6) «Դատաիրավական համակարգի հետ առնչության փորձին գնահատականը» և «Վերջին մեկ տարում դատարան դիմողները»՝ Կրամերի V կապի գործակիցը կազմել է 0,313:
- 7) «Դատաիրավական համակարգի հետ առնչության փորձին գնահատականը» և «Դատարան չդիմելու պատճառները»՝ Կրամերի V կապի գործակիցը կազմել է 0,425:
- 8) «Վերջին մեկ տարում դատարան դիմողները» և «Տարիքը»՝ Կրամերի V կապի գործակիցը կազմել է 0,307:
- 9) «Վերջին մեկ տարում դատարան դիմողները» և «Բնակավայրի տիպը»՝ Կրամերի V կապի գործակիցը կազմել է 0,513:

⁸⁹ Կիրառելի է 2-ից ավել տարբերակներ ունեցող հարցերի, անվանական-անվանական և անվանական-կարգային սանդղակների դեպքում:

Դատական համակարգի վերաբերյալ տեղեկացվածությունը և աղբյուրները

- 1) «Դատական համակարգի վերաբերյալ տեղեկացվածությունը» և «Առնչության փորձը»՝ Կրամերի V կապի գործակիցը կազմել է 0,310:
- 2) «Դատական համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրները» և «Տարիքը»՝ Կրամերի V կապի գործակիցը կազմել է 0,205:
- 3) «Դատական համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրները» և «Սեռը»՝ Կրամերի V կապի գործակիցը կազմել է 0,220:
- 4) «Դատական համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրները» և «Կրթությունը»՝ Կրամերի V կապի գործակիցը կազմել է 0,203:
- 5) «Դատական համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրները» և «Առնչության փորձը»՝ Կրամերի V կապի գործակիցը կազմել է 0,279:
- 6) «Դատական համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրները» և «Դատական համակարգի վերաբերյալ տեղեկացվածությունը» Կրամերի V կապի գործակիցը կազմել է 0,324:

Դատարանների ֆիզիկական հասանելիությունը

«Մոտակա դատարանի գտնվելու հեռավորությունը» և «Բնակավայրի տիպը»՝ Կրամերի V կապի գործակիցը կազմել է 0,355: